

Գ. ԳԱՅԻՆՅԱՆ, Ա. ՎԱԳԱՐՇՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼԲՈՒԿԱԳՅԱՆ



11

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

12 ՌԻՍԻՔԻ ԿԵՄԻԱԿԱՆ



ՂԱԶԻՆՅԱՆ Գ., ՎԱԴԱՐՇՅԱՆ Ա., ԳՅՈՒԼԲՈՒԴԱԴՅԱՆ Ա.

# ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

11-րդ դասարան

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԳՊՐՈՅԻ  
ԲՈԼՈՐ ՀՈՍՔԵՐԻ ՀԱՍԱՐ

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ



ՀՏԳ 371.167.1:30 (075.3)  
ԳՄԴ 60 ց 72  
Ղ 173

Ղազիւնյան Գ.

Ղ 173 Հասարակագիտություն: Գասագիրք հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի համար /Գ. Ղազիւնյան, Ա. Վաղարշյան, Ա. Գյուլբուդաղյան - Եր.: Տիգրան Մեծ, 2015. - 264 էջ:

ՀՏԳ 373.167.1:30 (075.3)  
ԳՄԴ 60 ց 72

ISBN 978-99941-0-680-6

© Ղազիւնյան Գ.,  
© Վաղարշյան Ա.,  
© Գյուլբուդաղյան Ա., 2015 թ.  
© «Տիգրան Մեծ», 2015 թ.

# ԻՐԱՎՈՒՆՔԻ ՇԻՄՈՒՆՔՆԵՐ

## ԳԼՈՒԽ 1. ԻՐԱՎՈՒՆՔ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ, ՀԱՄԱԿԱՐԳԸ

### ԳՍՍ 1. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

#### 1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ

Հասարակությունը և պետությունը չեն կարող գոյատևել առանց հասարակական կյանքի կարգավորվածության: Մարդիկ ընդունակ են ինքնակառավարման և սեփական վարքագծի կարգավորման, սակայն մարդկանց համագոյակցությունը և համագործակցությունը կարիք ունեն կազմակերպական կառավարման և կարգավորման: Քանի որ մարդկանց, նրանց խմբերի միջև առկա են նաև շահերի հակասություններ, ուրեմն միայն վարքագծի ինքնակարգավորմամբ հնարավոր չէ հաստատել կարգուկանոն: Հետևաբար, հասարակության ձևավորմանը զուգընթաց կազմավորվում են նաև սոցիալական կառավարումը (օրինակ՝ պետությունը) և հասարակական նորմերի միջոցով կարգավորումը (օրինակ՝ բարոյականությունը):



**Հասարակական նորմերը նմուշային վարքագծի կանոններ են:** Սովորույթները, բարոյական և կրոնական նորմերն ընդհանուր բնույթի կանոններ են՝ ուղղված յուրաքանչյուրին և բոլորին: Օրինակ՝ սեփականության առաջացմամբ ի հայտ է եկել նաև «Մի՛ գողանա» բարոյակրոնական նորմը: Հնագույն ժամանակների մարդիկ հիմնականում պահպանում էին այս նորմը բարոյականության ուժով և կրոնական պատկառանքից ելնելով: Սակայն որոշակի պահից սեփականության դեմ ուղղված ռոնտագությունները սկսեցին շատանալ: Թագավորն իրավագործություն է տալիս փոխաբքաներին և դատավորներին՝ պատժել սեփականության իրավունքը խախտողներին: Որպեսզի վերջինները կամայականություն և կողմնակալություն չանեն, թագավորը իրապարակում է հրովարտակ. «Ուրիշի գույքի գաղտնի հափշտակությունը՝ գողությունը, պատժվում է ազատագրկմամբ»: Դրանով բարոյակրոնական նորմը վերածվում է իրավականի, որը հասցեագրված է յուրաքանչյուրին և բոլորին, ով կհայտնվի այդ նորմի գործողության տիրույթում: Այդ նորմը երաշխավորվում է պետական հարկադրանքով:


Իրավունքի նորմերի գործողության հետևանքով ամեն ոք կրում է պարտականություն՝ չկատարել իրավախախտում, իսկ պետական մարմինները ձեռք են բերում

իրավունք՝ ամեն մի իրավախախտի պատժելու: Եթե մինչ այդ իրավախախտումը բացառելու երաշխիքը հասարակական պարսավանքն էր, ապա նոր պայմաններում այդպիսի երաշխիք է պետության հարկադրանքը՝ ազատագրելունը: Պատժվելու սպառնալիքի ուժով հասարակության մեծագույն մասը ձեռնպահ է մնում հանցանք կատարելուց, իսկ այդ արարքը կատարած անձինք ենթարկվում են պատժի:

**2. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ**

Հասարակական կյանքի բոլոր մասնակիցների համար իրավունքը սահմանում է արգելված, թույլատրելի և ցանկալի վարքագիծ: Այնուհետև իրավունքը կենսագործվելով որոշակի իրավական կարգ է հաստատում հասարակության մեջ: Այդ կարգավորումն իրավունքն իրականացնում է այլ հասարակական նորմերի հետ միասնաբար: Օրինակ՝ «Մի՛ սպանիր» բարոյակրոնական նորմի հետ միասին գործում է օրենքով սահմանված պարտականությունը՝ չկատարել սպանություն, հակառակ դեպքում կկիրառվի պատիժ: Բերված օրինակից բխում են իրավունքի հետևյալ հատկանիշները:

**Իրավական կարգավորումն իրականացնում է պետությունը՝ իրավունքի նորմեր սահմանելով:** Մարդու ազատության, իրավահավասարության ապահովման կամ խախտված իրավունքները վերականգնելու համար անհրաժեշտ են երաշխիքներ և օգնություն պետության և հասարակության կողմից: Այդպիսի կարևոր երաշխիքը համապարտադիր և համահավասար օրենքի միջոցով իրավական կարգավորումն է: Օրենքները կոչված են հաստատելու իրավունքների հավասարություն, պաշտպանելու մարդկանց ազատությունը, անվտանգությունը, պայմաններ ստեղծելու նրանց ներդաշնակ համակեցության համար: Պետությունը, բացի օրենքներ սահմանելուց, հետևում է, որ դրանք կենսագործվեն: Օրինակ՝ ոստիկանությունը պաշտպանում է յուրաքանչյուրի կյանքն ու ունեցվածքը: Օրենքներում ամրագրվելու շնորհիվ վարքագծի կանոնները ձեռք են բերում հստակ, բոլորի համար պարտադիր կանոնի ուժ: Օրենքները սահմանում են նաև պատասխանատվություն նորմերի խախտման համար: Դրա կիրառման սպառնալիքը ստիպում է մարդկանց հարգել և կատարել իրավունքի նորմերը: Այդպիսով՝ օրենքները բարի ցանկություններից վերածվում են պետության կողմից երաշխավորված իրականության:



**Իրավունքի կենսագործումը երաշխավորված է պետական հարկադրանքով:** Եթե իրավունքի նորմերը չեն կենսագործվում կամավոր, ապա պետությունն իրավունքի նորմը խախտողին հարկադրում է կատարել նորմը: Հենց այս հատկանիշով է իրավունքը տարբերվում այլ սոցիալական կարգավորիչներից: Իրավունքի կենսագործման ընթացքում պետական հարկադրանքը կիրառվում է կամ ինչ-որ մեկի պաշտպանության համար, և այս դեպքում նպատակ ունի

իրավախախտողին հարկադրել կատարելու իր պարտականությունը (օրինակ՝ պատճառված վնասի հատուցում, պարտքի գանձում), կա՛մ իրավախախտին պատասխանատվության ենթարկելու համար (օրինակ՝ տուգանք, ցմահ ազատազրկում):

**Մտորումներ:** Ինչո՞ւ են մարդիկ խախտում օրենքները: Արդյոք հնարավո՞ր է այնպես անել, որ բոլոր օրենքները կատարվեն բոլորի կողմից: Ինչպե՞ս: Գրե՞ք փոքրիկ շարադրություն այդ մասին:

**Իրավունքը ձևով որոշակի նորմերի համակարգ է:** Իրավունքի նորմերի բովանդակությունն արտաքինապես ձևակերպված և ամրագրված է պաշտոնական ձևերում, օրինակ՝ օրենքներում: Որոշակիությունը դրսևորվում է նրանում, որ իրավական նորմերում հստակ արձանագրվում է, թե ինչ պայմաններում է գործում տվյալ նորմը, ինչ իրավունքներ և պարտականություններ են առաջանում այդ նորմի հիման վրա, ինչ իրավական հետևանքներ են վրա հասնում այդ նորմի չիրականացման դեպքում: Այլ սոցիալական նորմերը (օրինակ՝ բարոյական), որոշ բացառություններով հանդերձ, չունեն ձև, այսինքն՝ գտնվում են գիտակցության մեջ: Բացի այդ, դրանք գործում են շատ ընդհանուր և որոշակիությունից զուրկ նորմակազմերի տեսքով: Օրինակ՝ «Եղի՛ր ազնիվ», «Եղի՛ր բարի» բարոյական պահանջները կոնկրետ չեն: Այդ նորմերը մանրամասնորեն չեն սահմանում, թե ինչ իրադրության մեջ ով ինչպիսի վարքագիծ պետք է դրսևորի, որ այն դիտարկվի ազնիվ, բարի: Իսկ իրավունքի նորմերում այդ ամենը որոշակիորեն (հստակ) ամրագրված է:

**Այսպիսով՝ իրավունքը հասարակական հարաբերությունները կարգավորող, պետության կողմից սահմանված և պետական հարկադրանքով երաշխավորված իրավական նորմերի համակցություն է, որին հատուկ են համապարտադիրությունը, պաշտոնական ակտերում ամրագրված ձևային որոշակիությունը:**

### 3. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

**Իրավական կարգավորումն իրականացվում է բարդ համակարգի միջոցով:** Այդ համակարգի կարևորագույն տարրերն են **բնական իրավունքը, դրական (պոզիտիվ) իրավունքը և սուբյեկտիվ իրավունքը:** Իրավական կարգավորման այդ համակարգը նման է ծառի: Իրավական կարգավորման հիմքը մարդու բնույթով պայմանավորված բնական իրավունքներն են, այսինքն՝ ծառի արմատները: Բնական իրավունքներն ամրագրվում են օրենքներով: Այդպիսով՝ ձևավորվում է օրենսդրություն՝ ծառի բունը: Օրենսդրությունը երբեմն անվանում են դրական իրավունք, այսինքն՝ երևացող, օրենքներում գոյություն ունեցող: Ծառի բունը ևս երևացող է՝ ի տարբերություն արմատների: Օրենսդրության հիման վրա մեզանից ամեն մեկն ունի իրեն ընձեռված հնարավորություն (սուբյեկտիվ իրավունք), օրինակ՝ ստեղծագործելու, կրթության: Սուբյեկտիվ իրավունքները ծառի ճյուղերն են: Մեզ ընձեռված հնարավորության օգտագործման արդյունքում ձեռք բերված բարիքը, օրինակ՝ արդեն ստացած կրթությունը, ծառի պտուղն է:

Վերը բերված բնորոշումն անվանում են իրավունքի՝ նեղ իմաստով կամ նորմատիվ բնորոշում: Այն նույնացնում է իրավունքը և օրենսդրությունը: Եթե ուշադրություն դարձրեցիք, այդ բնորոշման մեջ արտացոլված չեն իրավական կարգավորման ծառի արմատները, այլ միայն բունը: Իսկ ծառն առանց արմատների ծառ չէ:

Իրավունքն ունի բնական-իրավական արմատներ, և պետք է տարբերել բնական իրավունքը (չգրված իրավունք) պետության կողմից սահմանված օրենսդրությունից (գրված իրավունք): Բոլոր մարդիկ ի ծնե օժտված են անօտարելի և անքակտելի բնական իրավունքներով: Դրանք արդյունք են բնական օրինաչափությունների և պայմանավորված են մարդու ու հասարակության բնույթով, հետևաբար՝ կախված չեն պետության կամքից: Պետության կողմից սահմանված և նորմատիվ տեքստերում շարադրված վարքագծի կանոնները պետք է բխեն բնական իրավունքից: Պետության կողմից սահմանված իրավունքի կոչումը բնական իրավունքի ապահովումն է: Ելնելով իրավունքի այս կարևոր առանձնահատկությունից՝ իրավունքը կարելի է բնորոշել նաև հետևյալ կերպ. **իրավունքը մարդու և հասարակության բնույթով պայմանավորված, անհատի ազատությունն արտահայտող, պետության կողմից սահմանված և պետական հարկադրանքով երաշխավորված, հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի համակցություն է, որին հատուկ են համապարտադիրությունը, պաշտոնական ակտերում ամրագրված ձևային որոշակիությունը:**

**Բնական-իրավական իրավահասկացողությունն ունի պատմականորեն հաստատված արժանիքներ:** Օրենքը դիտարկելով որպես բնական իրավունքի դրսևորման ձև՝ այն ի դեմս իրավունքի տեսնում է կողմնորոշիչ պետության և նրա մարմինների համար: Վերջիններս օրենքները ստեղծելիս և կիրառելիս պետք է հետևեն բնական իրավունքին, ինչը երաշխիք է, որ պետությունը չի դառնա կամայականության աղբյուր: Եթե իրավահասկացողությունը կառուցված չէ բնական իրավունքի վրա, ապա ստացվում է, որ այն, ինչ հրամայում է իշխանությունը, իրավունք է: Տարբերելով իրավունքը և օրենքը՝ նման իրավահասկացողությունն առաջ է քաշում «**ոչ իրավական օրենքի**» գաղափարը: Ժողովրդավարական երկրներում պետք է լինեն իրավական կառուցակարգեր, որոնց միջոցով մարդիկ կարող են հասնել այդ օրենքների վերացմանը կամ դրանց համապատասխանեցմանը բնական իրավունքներին, այսինքն՝ իրավահավասարությանը, ազատությանը, արդարությանը:

### Հարցեր

1. Ինչո՞ւ է անհրաժեշտ հասարակական կարգավորումը:
2. Ինչպե՞ս են սահմանվում և կենսագործվում իրավունքի նորմերը:
3. Որո՞նք են իրավական կարգավորման համահարգի փարբերը:
4. Ո՞րն է իրավունքի նորմերի կենսագործման երաշխիքը:
5. Ինչո՞ւ են իրավունքը համարում չե և որոշակիություն ունեցող կարգավորիչ:
6. Ինչո՞ւ են փարբերվում իրավունքի նեղ և լայն բնորոշումները:
7. Որո՞նք են բնական-իրավական իրավահասկացողության առավելությունները:

## ԳՍՄ 2. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐ


### 1. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Բոլոր տեսակի հասարակական կարգավորիչները, օրինակ՝ բարոյականությունը, իրենցից ներկայացնում են նորմերի ամբողջություն: Օրինակ՝ «Եղի՛ր բարի» բարոյական պահանջը մարդկանց վարքագծի կանոն է: Այսինքն՝ այդ պահանջն ապագայի համար նախատեսված կանոն է՝ ուղղված յուրաքանչյուրին և բոլորին: Այն կանոնները, որոնց հասցեատերերը կոնկրետ չեն, անվանում են նորմեր:

Իրավունքը, որպես հասարակական կարգավորիչ, ևս նորմերի ամբողջություն է, նորմեր, որոնց անվանում են իրավական: Այդ նորմերն իրավունքի համակարգի սկզբնական կառուցվածքային տարրերը, «աղյուսները», «բջիջներն» են: Եթե իրավունքն իրավական նորմերի համակցություն է, ապա իրավունքի նորմը նմուշային վարքագծի մեկ կանոն է: Այդ նորմերն իրենց արտաքին արտահայտությունն ստանում են նորմատիվ իրավական ակտերի (օրենք, հրամանագիր) հոդվածներում:

**Իրավունքի նորմը պետության սահմանած և երաշխավորած համապարտադիր, պաշտոնական ձևերում ամրագրված ու հրապարակված վարքագծի որոշակի կանոն է, որը կոչված է կարգավորելու հասարակական հարաբերությունները՝ սահմանելով դրանց մասնակիցների իրավունքները և պարտականությունները:**

Ունենալով ընդհանրություններ այլ սոցիալական նորմերի հետ՝ միաժամանակ իրավունքի նորմերն օժտված են մի շարք տարբերիչ հատկանիշներով: Այդ հատկանիշների մեծ մասը դուք արդեն գիտեք նախորդ դասից, քանի որ այն, ինչ բնութագրական է իրավունքին, բնութագրական է նաև նրա «բջիջներին»:



**Իրավունքի նորմերը կրում են օժտող-պարտադրող բնույթ:** Իրավունքի նորմը կարգավորում է հասարակական հարաբերությունները դրանց մասնակիցների իրավունքների և պարտականությունների սահմանման միջոցով: Իրավունքի նորմերը մի կողմից տրամադրում են գործողությունների ազատություն, իսկ մյուս կողմից պարտադրում են կատարել կամ չկատարել որոշակի գործողություններ: Իրա-

վական նորմը կարգավորում է սարդու կամ կազմակերպության վարքագիծը՝ սահմանելով, թե որ գործողություններն են հնարավոր, որոնք՝ արգելված, և որոնք՝ անհրաժեշտ: Օրինակ՝ հեղինակն ունի իր ստեղծագործության անձեռնմխելիության իրավունք: Դրան համապատասխանում է նորմով սահմանված՝ մյուս կողմի ինչ-որ գործողությունների կատարումից ձեռնպահ մնալու իրավական պարտականությունը: Օրինակ՝ ստեղծագործությունն օգտագործելիս արգելվում է առանց հեղինակի համաձայնության նրանում փոփոխություններ մտցնել:

**Իրավունքի նորմն ընդհանուր բնույթի վարքագծի կանոն է:** Իրավական նորմի պահանջները հասցեագրված են ոչ թե ինչ-որ կոնկրետ անձի, այլ բոլորին և յուրաքանչյուրին, ով կհայտնվի այդ իրադրության մեջ: Ի տարբերություն անհատական հարցով կարգադրությունների՝ նորմը հասցեագրված է ոչ թե առանձին անձի, այլ անձանց անորոշ շրջանակի: Բացի այդ, իրավունքի նորմի գործողությունը չի սահմանափակվում մեկանգամյա կենսագործմամբ, այլ նախատեսված է անսահմանափակ դեպքերի համար:

## 2. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Իրավունքի նորմի կառուցվածքը կարելի է արտահայտել հետևյալ ընդհանուր կանոնով. «Գտնվելով պետության տարածքում՝ անհրաժեշտ է պահպանել այդ պետության օրենքները, հակառակ դեպքում պետությունն իրավախախտի նկատմամբ կկիրառի հարկադրանք»: Իրավունքի յուրաքանչյուր նորմ սահմանում է.

- ա) ով և ինչ պայմաններում պետք է հետևի նորմին,
- բ) ինչ պետք է արվի կամ չարվի,
- գ) պետական հարկադրանքի ինչ միջոցներով է նորմը պահպանվում իրավախախտումներից:

Դրան համապատասխան առանձնացվում են նորմի երեք տարրեր. **հիպոթեզ, դիսպոզիցիա, սանկցիա** (*տե՛ս հաջորդ էջի գծապատկերը*):

**Իրավունքի նորմի կառուցվածքային տարրերը միասնական են և փոխկապակցված:** Իրավունքի նորմը կարող է կատարել իր կարգավորիչ դերը միայն բոլոր կառուցվածքային տարրերի ամկայության դեպքում: Պատկերացնենք, որ նորմում նշված չեն այն հանգամանքները, որոնց ամկայության դեպքում այն գործում է, այսինքն՝ բացակայում է հիպոթեզը: Այդպիսի նորմը չգործող է, քանի որ հայտնի չէ, թե ի՞նչ պայմաններում պետք է դեկլարվել դրանում շարադրված կանոնով: Եթե նորմում չկա դիսպոզիցիա, ապա տվյալ նորմը վերածվում է «դատարկության», կորցնում է սոցիալական նորմի որակը: Սանկցիայի բացակայությունը զրկում է նորմին իրավական որակից, քանի որ իրավունքի նորմի կարևորագույն հատկանիշը պետական հարկադրանքով երաշխավորվածությունն է:

<p><b>Իրավունքի նորմի կառուցվածքը</b></p>		<p><b>Ավագակության վերաբերյալ քրեական նորմի կառուցվածքը</b></p>
<p><b>Հիպոթեզ (ենթադրություն)</b>                      Հանգամանքները և անջանց շրջանակը, որոնց առկայության դեպքում նորմը սկսում է գործել, այսինքն՝ սուբյեկտների մոտ ծագում են իրավունքներ և պարտականություններ:</p>		<p>Եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացին, օտարերկրացին կամ քաղաքացիություն չունեցող անձը՝ լինելով մեղսունակ և հասած 14 տարեկան հասակի,</p>
<p><b>Դիսպոզիցիա (կարգադրություն)</b>                      Թուն փարքագծի կանոնն է, սուբյեկտների իրավունքների և պարտականությունների սահմանափակումը: Դրանում նշվում է, թե ինչպիսին կարող է լինել պետք է լինի կամ չպետք է լինի փարքագիծը հիպոթեզում նշված պայմանների առկայության դեպքում:</p>		<p>կարարել է <b>ավագակություն</b>՝ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակում, զուգորդված կյանքի կամ առողջության համար վրանգավոր բռնությանը կամ դրա գործադրման սպառնալիքով (փարքագծի կանոնը պարտականություն-արգելքն է՝ չկարարել ավագակություն),</p>
<p><b>Սանկցիա (հարկադրանք)</b>                      Անրագրում է պետական հարկադրանքի միջոցները, որ կարող են կիրառվել դիսպոզիցիայում նախատեսված կանոնը խախտողների նկատմամբ:</p>		<p>սպա նա կպարժվի ազատագրվմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:</p>

**Մտորումներ:** Իրավագետների կարծիքով՝ «իրավունքի նորմն առանց հիպոթեզի անիմատ է, առանց դիսպոզիցիայի՝ անհնարին, առանց սանկցիայի՝ անուժ»: Վերցրե՛ք որևէ օրենքի նորմ և օրինակով մեկնաբանե՛ք այդ միտքը:

**3. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Իրավունքի նորմերի դասակարգումը ծառայում է դրանց ավելի խորը հասկացմանը և գործնականում ճիշտ կիրառմանը: Իրավունքի նորմերի դասակարգումը կատարվում է զանազան հիմքերով, որոնցից կարևոր են հետևյալները:

**Ըստ կատարած գործառնության դերի՝ իրավունքի նորմերը բաժանվում են՝ իրավապահպան և կարգավորիչ տեսակների:** Իրավապահպան նորմերը նախատեսում են պետական հարկադրանքի ազդեցության միջոցներ իրավախախտման համար: Այդ նորմերը հաշվարկված են ոչ իրավաչափ վարքագծի համար և միշտ ունեն սանկցիա: Օրինակ՝ սեփականության իրավունքը պաշտպանելու համար օրենքը սահմանում է, որ ուրիշի գույքի գաղտնի հափշտակումը (գողությունը) պատժվում է ազատազրկմամբ: Այս նորմի ուժով մարդկանց մեծագույն մասը, վախենալով պատժվելուց, ձեռնպահ է մնում գողություն կատարելուց, իսկ նրանք, ովքեր, այնուամենայնիվ, գողանում են ուրիշի գույքը՝ խախտելով իրավական արգելքը, ենթարկվում են պատժի: Ուստի նորմի գործառնության դերը պահպանական է:

**Կարգավորիչ (իրավասահմանող)** նորմերը նախատեսում են իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքները և պարտականությունները: Դրանք հաշվարկված են իրավաչափ վարքագծի համար: Օրինակ՝ «Յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք: Առավելագույն աշխատաժամանակը, հանգստյան օրերը և ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն տևողությունը սահմանվում են օրենքով»:

**Ըստ մարդկանց վարքագծի վրա ներգործելու եղանակի՝ նորմերը լինում են իրավագործող, պարտադրող և արգելող:** Իրավագործող նորմերը հնարավորություն են տալիս կատարելու որոշակի դրական գործողություններ՝ երաշխավորված մյուս անձանց որոշակի պարտականություններով: Օրինակ՝ սոցիալական ապահովության իրավունքը, հանգստի իրավունքը, կրթության իրավունքը և այլն: **Պարտադրող** նորմերը սահմանում են պահանջվող (պարտադիր) վարքագիծ: Անձը կրում է պարտականություն՝ կատարելու որոշակի ակտիվ գործողություն: Օրինակ՝ ամեն ոք պարտավոր է մուծել օրենքով սահմանված հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները: **Արգելող** նորմերը պարտադրում են իրավահարաբերության մասնակցին չկատարել արգելված գործողությունը՝ սահմանելով նաև սանկցիան: Արգելող են քրեական օրենսգրքում ամրագրված հանցագործությունների վերաբերյալ նորմերը:

#### Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է իրավունքի նորմը:
2. Որո՞նք են իրավունքի նորմի հատկանիշները:
3. Ի՞նչ է նշանակում «իրավունքի նորմերն ունեն օժտող-պարտադրող բնույթ»:
4. Ի՞նչ կառուցվածք ունի իրավունքի նորմը:
5. Ո՞րն է դիսպոզիցիայի դերն իրավունքի նորմի կառուցվածքում:
6. Ի՞նչ է սանկցիան, և ո՞րն է նրա դերն իրավունքի նորմի կառուցվածքում:
7. Ո՞րն է իրավունքի նորմերի կառուցվածքային փարբերի կապը:
8. Ինչո՞ւմ է կայանում իրավապահպան և կարգավորիչ նորմերի փարբերությունը:

**Ինքնուրույն աշխատանք:** Կարդացե՛ք ՀՀ Սահմանադրության 2-րդ գլուխը և դո՛րս գրե՛ք իրավագործող, արգելող և պարտադրող նորմերի օրինակներ:

### ԳԱՍ 3. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ՏԱՐԵՐԸ

#### 1. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Կոնկրետ հասարակական հարաբերության որոշումը և այն կարգավորող իրավական նորմի ընտրությունը որոշակի բարդություններ են պարունակում: Իսկ ինչպե՞ս են իրավագետներն օրենսդրության ահռելի զանգվածի մեջ ընտրում և գտնում անհրաժեշտ իրավական նորմը: Դա, իհարկե, անհնարին կլիներ, եթե իրավունքն իրենից ներկայացներ իրավական նորմերի պատահական, խառնիխուռն համակցություն: Բայց իրավունքի արժանիքներից մեկն էլ այն է, որ այն նորմերի միասնական, ներքուստ համաձայնեցված և տրամաբանական համակարգ է:

**Համակարգը՝ մասերից (տարրերից) բաղկացած որոշակի ամբողջական երևույթ է:** Ինչպես ամբողջը հնարավոր չէ առանց իր բաղադրատարրերի, այնպես էլ առանձին բաղադրատարրերը համակարգից դուրս չեն կարող կատարել իրենց գործառույթները: Իրավունքը՝ որպես երևույթ, ևս համակարգ է և որպես ամբողջական կազմավորում ընդգրկում է տվյալ պետության բոլոր իրավունքի նորմերը:

**Իրավունքի համակարգին բնորոշ են այն կազմող իրավունքի նորմերի միասնությունը և համաձայնեցվածությունը, ինչպես նաև տարբերակումը տարրերի:**

**Իրավունքի միասնական համակարգը բաժանվում է փոխկապված տարրերի:** Այդ տարանջատումը պայմանավորված է հասարակական հարաբերությունների բազմազանությամբ: Վերջինիս բովանդակության ոչ միատեսակությունն էլ հենց պայմանավորում է իրավունքի համակարգի կառուցվածքային տարրերի առկայությունը: Իրավունքի համակարգի սկզբնական տարրը՝ «բջիջը», իրավունքի նորմն է, իսկ իրավունքի նորմերի տարբեր գույակցումներից ձևավորվում են նրա մյուս կառուցվածքային տարրերը: Իրավունքի համակարգի հիմնական տարրերն են **իրավական նորմերը, իրավական ինստիտուտները և իրավունքի ճյուղերը:**

#### 2. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃՅՈՒՂ. ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ



**Իրավական կարգավորման առարկա և մեթոդ:** Իրավունքի համակարգում ճյուղերը և ինստիտուտները տարբերակելու համար կիրառվում են «իրավական կարգավորման առարկա» և «իրավական կարգավորման մեթոդ» չափանիշները:

**Իրավական կարգավորման տիրույթում գտնվող հասարակական հարաբերությունները կազմում են իրավական կարգավորման առարկան:** Իրավունքի յուրաքանչյուր ճյուղ միավորում է այնպիսի իրավական նորմեր, որոնք կարգավորում են հասարակական հարաբերությունների որակապես որոշակի տեսակ: Օրինակ՝ ամուսնական և ընտանիքում առաջացող հարաբերությունները կազմում են ընտանեկան իրավունքի ճյուղի կարգավորման առարկան: Իրավունքի մի ճյուղը տարբերվում է մյուսից իր կարգավորման առարկայով:

Կարգավորման առարկան իրավունքի համակարգի տարանջատման միակ չա-

փանհիշը չէ: Նախ՝ հասարակական հարաբերությունները բավականին բազմազան են, և հիմք վերցնելով միայն այդ չափանիշը՝ ստիպված կլինենք ճանաչելու ավելի մեծ քանակով իրավունքի ճյուղերի գոյությունը: Երկրորդ՝ հաճախ միևնույն հասարակական հարաբերությունները կարգավորվում են տարբեր եղանակներով: Օրինակ՝ սեփականության հարաբերությունները կարգավորվում են իրավունքի մի քանի ճյուղերի կողմից: Այդ իսկ պատճառով կա իրավունքի համակարգի տարանջատման երկրորդ չափանիշը՝ իրավական կարգավորման մեթոդը:

**Իրավական կարգավորման մեթոդը եղանակների, հնարքների համակցություն է, որոնցով իրավունքն ազդում է որոշակի ոլորտի հասարակական հարաբերությունների վրա:** Եթե իրավական կարգավորման առարկան ցույց է տալիս, թե ինչ հասարակական հարաբերություններ են կարգավորվում, ապա իրավական կարգավորման մեթոդը՝ ինչպես, ինչ ձևով: Իրավունքի յուրաքանչյուր ճյուղին բնորոշ է իր կարգավորման մեթոդը: Կան իրավական կարգավորման երկու հակադիր մեթոդներ:

<b>Իրավական կարգավորման մեթոդի տեսակները</b>	
<p><b>ինքնավարության կամ ավտոնոմիայի մեթոդ</b></p>	<p><b>հրամայողական կամ իմպերատիվ մեթոդ</b></p>
<p>Կիրառվում է գույքային, ընկերակազմային և անասն հարաբերությունների կարգավորելիս: Այս մեթոդը հարաբերության կողմերին հնարավորություն է ընձեռում օրենքի շրջանակներում որոշել իրենց վարքագիծը միմյանց նկատմամբ: Բացի այդ, կողմերն իրավաստիքներ են: Նրանք կամավոր, փոխադարձ համաձայնությամբ միմյանց նկատմամբ որոշակի պարտականություններ են ստանձնում:</p>	<p>Կիրառվում է քրեական, վարչական և իրավունքի այլ ճյուղերում: Այս ոլորտներում հարաբերության կողմերը չունեն վարքագիծ ընկերակազմային հնարավորություն, որովհետև նորմը սահմանում է նրանց կոնկրետ իրավունքներն ու պարտականությունները: Սուբյեկտները պետք է գործեն այդ իրավունքներին ու պարտականություններին համապատասխան:</p>
 <p style="text-align: center;">«Քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս: Պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն:»</p> <p style="text-align: center;">«Քաղաքացիական օրենսգիրք հոդվածներ՝ 436, 437»</p>	 <p style="text-align: center;">«Ճեմելը կամ այլ բռնի գործողություններ կատարելը, որը չի առաջացրել առողջության կարճատև քայքայում կամ ընդհանուր աշխարհապետության անհաշտ կայուն կորուստ՝ պարտավորում է պարտավորվել, նվազագույն աշխատավարձի միջև հարյուրամասնորդի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով մինչև 1 տարի ժամկետով, կամ կալանքով մինչև 2 ամիս ժամկետով:»</p> <p style="text-align: center;">«Քրեական օրենսգիրք, հոդված՝ 118»</p>

**«Իրավունքի ճյուղ» և «ինստիտուտ» հասկացությունները:** Ճյուղն իրավունքի համակարգի ամենից խոշոր տարրն է: **Իրավունքի ճյուղն իրավական նորմերի համակցություն է, որն իրավունքի համակարգի ինքնուրույն մաս է և կարգավորում է որակապես միասեռ հասարակական հարաբերությունների ոլորտ՝ իրեն հատուկ մեթոդով:** Իրավունքի համակարգի հիմնական ճյուղերն են սահմանադրական, վարչական, էկոլոգիական, ֆինանսական, քաղաքացիական, հողային, աշխատանքային, ընտանեկան, քրեական, քրեակատարողական, քրեական դատավարության, քաղաքացիական դատավարության իրավունքները:


**Իրավական ինստիտուտն իրավունքի ճյուղի առանձնացված մասն է և կարգավորում է միասեռ հասարակական հարաբերությունների որոշակի կողմ:** Ինստիտուտը տարբերվում է իրավունքի ճյուղից ամենից առաջ կարգավորման ծավալով: Այն իրավունքի ճյուղի ներսում ավելի նեղ շրջանակի նորմեր է ընդգրկում: Միաժամանակ ինստիտուտն իրավունքի համակարգում հարաբերականորեն ինքնուրույն է: Օրինակ՝ քաղաքացիական իրավունքում գոյություն ունեն տարբեր ինստիտուտներ՝ պայմանագրային, ժառանգական և այլն:

### 3. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՅԼ ՏԱՐԵՐԸ

Իրավունքի համակարգում առանձնացնում են մաս դրա այնպիսի տարրեր, ինչպիսիք են **հանրային և մասնավոր իրավունքը, նյութական և վարույթային իրավունքը, միջազգային և ազգային իրավունքը** (տե՛ս 53-րդ դասը):

**Հանրային և մասնավոր իրավունք:** Ցանկացած երկրի իրավունքի նորմերը կոչված են կարգավորելու ու ապահովելու երկու տեսակի շահեր ու հարաբերություններ: Օրինակ՝ համընդհանուր (հանրային) շահերը, այսինքն՝ հասարակության, պետության շահերը: Այդպիսի հարաբերությունները կարգավորող նորմերը կոչվում են **հանրային իրավունք:** Օրինակ՝ սահմանադրական, քրեական, վարչական իրավունքի ճյուղերը: Մասնավոր անձանց շահերն ու հարաբերությունները կարգավորող նորմերը կազմում են **մասնավոր իրավունքը:** Օրինակ՝ քաղաքացիական, ընտանեկան իրավունքի ճյուղերը:

**Նյութական և վարույթային իրավունք:** **Նյութական նորմերը** կարգավորում են հասարակական կյանքի մասնակիցների միջև իրապես գոյություն ունեցող հարաբերությունները, օրինակ՝ առքուվաճառք, սեփականություն, անուսնություն, ընտանիք և այլն: Այս տեսանկյունից իրավունքի մի շարք ճյուղեր՝ սահմանադրական, քրեական, քաղաքացիական, կոչվում են իրավունքի նյութական ճյուղեր: **Վարույթային նորմերը** սահմանում են իրավական վեճերի լուծման, իրավախախտումների (հանցագործությունների) քննության և դատավարության կարգը, այսինքն՝ կարգավորում են գուտ ընթացակարգային հարցերը: Այդպիսիք են, օրինակ՝ քաղաքացիական դատավարության կամ քրեական դատավարության իրավունքի նորմերը (տե՛ս 18 և 19-րդ դասերը):



**Հարցեր և առաջադրանքներ**

1. Ի՞նչ է իրավունքի համահարգը:
2. Որո՞նք են իրավունքի համահարգի հիմնական ճյուղերը:
3. Ի՞նչ է իրավական կարգավորման առարկան:
4. Ի՞նչ է իրավական կարգավորման մեթոդը, և ի՞նչ մեթոդներ կան:
5. Ինչո՞վ են փարբերվում իրավունքի ճյուղերը և իրավունքի ինստիտուտները:
6. Ի՞նչ են հանրային և մասնավոր իրավունքը:
7. Ի՞նչ են նյութական և վարույթային իրավունքը:

**Ինքնուրույն աշխատանք:** Օգտվելով իրավաբանական քառարանից՝ պարզե՞ք իրավունքի հետևյալ ճյուղերի՝ սահմանադրական, վարչական, էկոլոգիական, քրեական, քրեակատարողական կարգավորման առարկան:

## ԳԱՍ 4. ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

### 1. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հնագույն ժամանակներում հասարակական կյանքը կարգավորում էին տոհմացեղային սովորույթները: Նորմ-սովորույթները բանավոր էին ու չգրված: Դրանք իրականացվում էին ներքին համոզման ուժով և ապահովվում էին հասարակական կարծիքով: Սովորույթների խախտումը հազվադեպ երևույթ էր:

Աստիճանաբար հին սովորույթները կորցրեցին իրենց կարգավորիչ դերը: Հասարակական փոփոխություններն առաջ բերեցին այնպիսի երևույթ, ինչպիսին էր մարդու անհատականացումը: Նոր մարդն անհատ էր, որ տարբերում էր իրեն և մյուսներին: Նա՝ որպես հասարակական կյանքի մասնակից, առանձնացել էր համայնքից և պահանջում էր ինքնավար գոյություն (սոցիալական ազատություն): Հնագույն ժամանակներում հնարավոր չէր իրավունք, քանի որ մարդն առանձնացված չէր համայնքից: Հասարակության խնդիրներից էր դառնում ինքնավար անձի անհատական ազատության ապահովումը: Խնդիր էր նաև ամենաթողության սանձումը: Էթնոսների խառնվելը և սպաստեց տոհմացեղային սովորույթների նշանակության կորստին, քանի որ դրանք ըստ ցեղերի տարբերակված էին:

Նոր պայմաններում սոցիալական նոր կարգավորիչն իրավունքն էր: Սկզբնական շրջանում կարգավորման համար օգտագործվում էին նախնադարյան սովորույթները: Այսպիսով՝ իրավունքի ամենահին ձևը **սովորութային իրավունքն է՝** այն սովորույթը, որ երաշխավորված էր պետական հարկադրանքով: Այսպես, հեթանոսական Հայաստանում ամուսնարնատանեկան հարաբերությունները կարգավորվում էին սովորութային իրավունքով, ըստ որի թույլատրվում էր հարճությունը, տեգոր՝ այրիացած հարսի հետ ամուսնանալը և այլն:

Իրավունքի ձևավորման գործում մեծ նշանակություն ունեին միապետների, դատավորների կայացրած դատական որոշումները: Հաճախ դրանք հիմք էին դառնում հետագայում նույնաբնույթ գործեր լուծելու համար: Այդպիսի որոշումն անվանում են **դատական նախադեպ**: Գրի հայտնագործմամբ առաջացավ իրավունքի նոր ձևը՝ **օրենքը, դատաստանագիրքը**, օրինակ՝ Համմուրայի քաղաքի օրենքները Հին Բաբելոնում: Իրավունքի պատմական երեք ձևերը՝ իրավական սովորույթը, դատական նախադեպը և օրենքը գործում են նաև մեր ժամանակներում: Փոխվել է միայն դրանց տեսակարար կշիռը:

### 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

**Իրավունքը հին և վաղմիջնադարյան Հայաստանում:** Հայաստանում սովորութային իրավունքը զանազան պատճառների ուժով գոյատևեց շատ երկար: Հայաստանի բնակչությունն ընդհուպ մինչև արաբական ներխուժումը գերազանցապես միաէթնիկ էր: Այդ պայմաններում չգրված սովորութային իրավունքն արդյունավետորեն կատարում էր իր կարգավորիչ դերը: Իրավական սովորույթները միատեսակ

ընկալվում և կատարվում էին: Այդ պատճառով Հայաստանում չգարգացավ գրի առնված իրավունքը: Կարգավորիչ նշանակություն են ունեցել հայ արքաների հրովարտակաները: Բայց քանի որ Արշակունիների օրոք թագավորական իշխանությունն արդեն ուժեղ չէր, աշխարհիկ օրենքներն այստեղ զարգացում չունեցան:

**Իրավունքը քրիստոնեական Հայաստանում:** Քրիստոնեության ընդունմամբ հայ եկեղեցին ձեռք բերեց լայն իրավասություն ոչ միայն զուտ եկեղեցական-կրոնական, այլ նաև աշխարհիկ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Դրան նպաստում էր պետության թուլությունը: Հայ եկեղեցին, ի տարբերություն հայկական պետության, միշտ եղել է խիստ կենտրոնացված: Այս պայմաններում Հայաստանում սկսեց ձևավորվել և զարգանալ կանոնական իրավունքը:

Եկեղեցական ժողովներում սահմանվում էին հատուկ խրատներ, կարգեր, որոնք պարտադիր էին քրիստոնեական համայնքների համար: Դրանք կոչվում էին կանոններ: «Կանոն» բառը հունարեն է. որը նշանակում է եղեգի ցողուն, ուղիղ փայտ, սահմանագիծ: Քրիստոնեության ընդունմամբ սովորութային իրավունքի դերը սկսեց նվազել: Օրինակ՝ ամուսնական ոլորտում եկեղեցական կանոններն արգելեցին գրեթե բոլոր սովորութային նորմերը:

Հայ միջնադարյան կանոնական իրավունքն ամփոփված է «**Կանոնագիրք հայոց**» ժողովածուի մեջ: Կանոնագիրքն առաջին անգամ կազմել է Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը VIII դարում: Հետագայում այն հարստացել է նոր կանոններով: Օրինակ՝ 1130-ական թթ. Դավիթ Վարդապետը գրում է իր «Կանոնախումբը», որն անվանում են **Ալավիկի որդի Դավթի կանոնագիրքը**:

Սիջին դարերում հայկական իրավունքին բնորոշ է դառնում օտարերկրյա աշխարհիկ օրենքների փոխառումը: Դրան հատկապես նպաստեց պետականության կորուստը V դարում: Այս ժամանակ Հայաստանը փոխառեց **Մովսիսական օրենքները**, Հին Կտակարանի միջոցով՝ Մովսեսին վերագրվող առաջին հինգ գրքերում: Հայկական եկեղեցին դրանք կիրառում էր այն չափով, ինչ չափով չէին հակասում քրիստոնեությանը: Փոխառվեց նաև «**Ասորա-հռոմեական**» դատաստանագիրքը, որը հայտնի է իր ասորական, հայկական և արաբական թարգմանություններով: Նվաճողները ևս Հայաստանում գործադրում էին իրենց իրավունքը, օրինակ՝ հռոմեաբյուզանդական օրենքները:

**Իրավունքը Հայաստանում IX-XIII դդ.:** Այս շրջանում ի հայտ են գալիս միջնադարյան հայ իրավունքի երկու հիմնական աղբյուրները՝ հայ իրավական մտքի ականավոր հուշարձանները՝ **Մ. Գոշի Դատաստանագիրքը** (1184 թ.), իսկ Կիլիկյան Հայաստանում՝ **Մ. Սպարապետի Դատաստանագիրքը** (1265 թ.):

Մ. Գոշի «Գիրք դատաստանին» առաջին աշխարհիկ օրենքների ժողովածուն էր: Գոշը Դատաստանագրքի նախաբանում նշել է դրա ստեղծման անհրաժեշտության 12 պատճառները: Մ. Գոշի դարաշրջանում Հայաստանն արդեն միաեթնիկ չէր: Մյուս կողմից՝ հասարակական կյանքը որոշակի շարժման էր ապրել, որի պատճառով սովորույթները մասամբ «արժեզրկվել» էին:

**Հայաստանի քաղաքական դրությունը և իրավունքը XIV-XVIII դդ.:** Հայկական միջնադարյան իրավունքը, որը բուռն զարգացում էր ապրում, քայքայիչ հարվածի ենթարկվեց մոնղոլների արշավանքների (XIII դ.), իսկ այնուհետ՝ պարսկական ու թուրքական գերիշխանության հաստատման հետևանքով: Հայկական անկախ պետականությունն անհետացավ պատմական թատերաբեմից: Հանրային բնույթ ունեցող հարաբերությունների ոլորտում տիրապետում էին շարիաթի նորմերը: Հայկական իրավունքը շարունակում էր իր գործողությունը հայկական համայնքների սահմաններում և միայն ընտանեկան, ժառանգական ու մի շարք այլ ոլորտներում: Այս պայմաններում հայոց իրավունքի զարգացումը դանդաղեց:

Հայրենիքում չունենալով ամուր քաղաքական հիմքեր՝ հայ իրավունքը յուրահատուկ զարգացում ապրեց հայկական գաղթավայրերում: Այսպես՝ Լեհաստանի հայ համայնքը երկար պայքարի շնորհիվ հասավ ներքին ինքնավարության: Հայերը, Մ. Գոշի «Գիրք դատաստանին» հարմարեցնելով տեղի և ժամանակի պայմաններին, թարգմանեցին լատիներեն (այնուհետև՝ լեհերեն): Լեհական Սիգիզմունդ Մեծ թագավորը 1519 թ. հաստատեց այն: **Լեհահայոց դատաստանագիրքը** կիրառվում էր Լվովի հայկական համայնքի դատարաններում մինչև XVIII դ.:

1746 թ. Աստրախանի հայերը ռուսական կայսրից իրավունք ստացան դատվել իրենց օրենքներով և սովորույթներով: Այդ պահանջմունքի բավարարման համար էլ ստեղծվեց **Աստրախանի հայերի դատաստանագիրքը**: Այն օգտագործվել է մասնավորապես Ռուսաստանի այլ հայկական գաղթօջախներում:

**Ուշմիջնադարյան հայկական պետաիրավական միտքը:** XVIII դ. անտանելի սոցիալական քաղաքականությունը՝ բարձրացված օրենքի աստիճանի, չքողարկված կրոնական խտրականությունը հայ ժողովրդին հասցրել էին ծանր վիճակի: Հայ ժողովրդի ազատագրման էր ուղղված մասնավորապես հայ իրավական միտքը, մասնավորապես՝ Ծ. Շահամիրյանի «**Որոգայթ փառացը**» (XVIII դ.): Վերջինը՝ որպես հայ ազգային-ազատագրական շարժման կազմակերպման իրավական կառուցակարգի նախագիծ, ունի մասնավորապես 521 հոդվածից բաղկացած օրենսդրական բաժին՝ ազատագրված Հայաստանի օրենքների նախագիծ:

**Իրավական կարգավորումը Հայաստանում XIX դ.:** Ռուսաստանին միացվելուց հետո կայսերական իրավունքի գործողությունն աստիճանաբար տարածվեց Արևելյան Հայաստանում: Իսկ Արևմտյան Հայաստանը շարունակում էր իր ճնշված գոյությունը Թուրքիայի իշխանության ներքո:

1863 թ. Թուրքիան Եվրոպայի և հայ համայնքի ճնշման տակ հաստատեց Հայ ազգային ժողովի կողմից ընդունված «**Հայոց ազգային սահմանադրությունը**»: Այն, չնայած իր անվանմանը, ոչ թե սահմանադրություն էր, այլ հայկական համայնքի ներքին ինքնավարության կանոնադրություն: Այդ ակտը գործեց մինչև 1896 թ. Արդուլ Համիդի կազմակերպած ջարդերը: Նրա գործողությունը վերականգնվեց 1908 թ.՝ երիտթուրքերի հեղաշրջումից հետո: 1915 թ. Հայոց եղեռնի օրերին «Ազգային սահմանադրությունը» վերջնականապես արգելվեց:



**Առաջին և Երկրորդ հանրապետությունների իրավական համակարգերը:** Առաջին հանրապետության հռչակումը նշանավորեց նոր շրջան Հայաստանի իրավունքի զարգացման մեջ: Հանրապետության գլխավոր խնդիրներից էր իրավական համակարգի կառուցումը, անհրաժեշտ օրենքների մշակումն ու ընդունումը: Այդ դժվարին տարիներին ընդունվել և գործել են բազմաթիվ օրենքներ: Սակայն ծանր պայմաններում նոր ձևավորված իրավական կարգավորումը, հանրապետական կարգերը չունեցան իրենց բնականոն պատմական զարգացումը: Դրանք ընդհատվեցին բուլղարական ամբողջատիրության և դրան համապատասխանող իրավական կարգավորման հաստատմամբ: Ամբողջատիրական իրավունքի ելակետային սկզբունքները պայմանավորված էին մարքս-լենինյան ուսմունքով, որն իրավունքը դիտում էր գործիք մի դասակարգի ձեռքին մյուսին ճնշելու համար:

Ամբողջատիրությունն ինքնին նշանակում է անհատի իրավունքների, քաղաքացիական հասարակության անկախության բացասում: Սակայն Երկրորդ հանրապետության իրավական զարգացման արդյունք են նաև իրավաբանական կրթության, իրավագիտության զարգացումը, որոնք հետագայում նախադրյալ հանդիսացան Երրորդ հանրապետության իրավական զարգացման համար: Վերջինն իրենից ներկայացնում է իրավական կարգավորման նոր տեսակ և արտացոլում է անցումն ամբողջատիրությունից քաղաքացիական հասարակության ու ինքնիշխան, իրավական, ժողովրդավարական պետության:

#### Հարցեր և առաջադրանքներ

1. *Ի՞նչ պատճառներով առաջացավ իրավունքը:*
2. *Որո՞նք են իրավունքի առաջացման պատմական շեղերը:*
3. *Ո՞րն էր Հին Հայաստանի հիմնական իրավական կարգավորիչը և ինչո՞ւ:*
4. *Ի՞նչ է կանոնական իրավունքը:*
5. *Ե՞րբ և ինչո՞ւ հայերը փոխառեցին օտարերկրյա աշխարհիկ օրենքները:*
6. *Ի՞նչ փոփոխություններ կրեց հայկական իրավունքը XVI-XVIII դդ.:*
7. *Ինչպիսի՞ն էր Առաջին հանրապետության իրավական համակարգը:*
8. *Ինչպիսի՞ն էր Երկրորդ հանրապետության իրավական համակարգը:*

**Ինքնուրույն աշխատանք:** Ուսուցչի բաշխմամբ պատրաստեք գեկուցումներ հետևյալ քեմաներով. «Մ. Գոշի դատաստանագրքի ստեղծման պատճառները», «Մ. Գոշի դատաստանագրքի աշխարհիկ օրենքները», «Մ. Գոմոստարյի դատաստանագիրքը», «Հայաստանի կառավարման ձևն ըստ «Ռրոգայթ փառաց»-ի:

## ԳԱՍ 5. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

### 1. ՍՈՅԲԱԼԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԶԵՎԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Հասարակական նորմերն ունեն երկու ձև՝ բանավոր և գրավոր: Բանավոր նորմերը գտնվում են մարդկանց գիտակցության մեջ: Օրինակ՝ հարսանեկան սովորույթներն ամրագրված չեն ինչ-որ ձևում: Այդ նորմ-սովորույթները փոխանցվում են սերնդից սերունդ դաստիարակության միջոցով: Այդպիսով՝ սոցիալական նորմերի մի մասը գոյություն ունի բանավոր: Սակայն կան նորմեր, որոնք ամրագրվում են փաստաթղթերում: Օրինակ՝ Հայ առաքելական եկեղեցու կանոնական նորմերն ամրագրված են «Հայոց կանոնագիրք» ժողովածուի մեջ: Իսկ որո՞նք են իրավունքի նորմերի գոյության ձևերը:

**Իրավունքի նորմերի գոյության և ամրագրման ձևերը կոչվում են իրավունքի աղբյուր:** Սոցիալական շատ նորմեր (օրինակ՝ բարոյական) հիմնականում ձևով որոշակի չեն, այլ գործում են գիտակցության մեջ գտնվող նորմ-սկզբունքների տեսքով: Վերջիններս շատ ավելի ընդհանուր են և գուրկ որոշակիությունից: Օրինակ՝ ինչպե՞ս պետք է մատուցվի հարգանքը քաղաքացիական շիրիմներին՝ դրանց այցելողների կողմից: Սի շարք սոցիալական նորմեր կարգավորում են այդ հարաբերությունները, սակայն այդ նորմերն ամրագրված չեն ինչ-որ ակտում, ուստի և դրանք շատ դեպքերում անորոշ են ու տարբերակելի: Շիրիմին այցելողներն իրենց հարգանքը կարող են մատուցել ցանկացած՝ իրենց կողմից նախընտրված վարքագծով: Մինչդեռ հայրենիքի ազատության և անկախության մարտերում զոհված մարտիկների հուշարձաններին և շիրիմներին պսակ դնելու համար կա զինվորական հարգանքի մատուցման հատուկ կարգ: Այդ կարգն ամրագրված է օրենքում: Միաժամանակ այն որոշակի է, որովհետև սահմանում է, թե երբ, ում հրամանով, ով և ինչպես է պսակ դնում նշված հուշարձաններին և շիրիմներին: Օրենքով ամրագրված այդ կարգը հետևյալն է. «Մոտենալով հուշարձանին (շիրիմին)՝ պատվիրակությունը պսակը վար է դնում և մեկ րոպե լռությամբ հարգում զոհվածների հիշատակը: Նվազախումբը դադարեցնում է նվազը: Լռության րոպեն անցնելուց հետո նվազախումբը կատարում է ՀՀ պետական օրհներգը: Օրհներգի ավարտից հետո պսակ դնող պատվիրակությունը հեռանում է հուշարձանից (շիրիմից) և դեմքով կանգնում դեպի անցնող պահակախումբը, իսկ պատվո պահակախումբը պահակապետի




հրամանով երթային շարասյուն է կազմում և հանդիսավոր երթով նվագախմբի հնչյունների ներքո անցնում է հուշարձանի (շիրիմի) և պսակ դնող անձանց կողքով»:

**Իրավունքի աղբյուրն այն ձևն է, որով պաշտոնապես դրսևորվում, ամրագրվում են իրավական նորմերը, և որից մենք գիտելիքներ ենք քաղում, իմանում ենք իրավունքի նորմերի բովանդակության մասին:**

Արդի աշխարհում ներպետական իրավունքի հիմնական ձևեր կամ աղբյուրներ են համարվում օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը, դատական նախադեպերը, իրավական սովորույթները, միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքները և միջազգային պայմանագրերը, կրոնական աղբյուրները՝ «սուրբ գրքերը», «տրակտատները», կանոնական իրավունքը: Օրինակ՝ մի շարք երկրներում տարածված է մահմեդական իրավունքը: Այն անվանում են «Շար» կամ «Շարիաթ»: Մահմեդական իրավունքը սահմանում է, թե ինչպես պետք է վարվի մահմեդականը՝ կրոնին համապատասխան:

Հայաստանում, բացի միջազգային իրավունքից, իրավունքի հիմնական աղբյուրը նորմատիվ իրավական ակտն է:



**2. ԻՐԱՎԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹԸ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԵՊԸ**

Սովորույթը երկար ժամանակ փաստական կիրառման հետևանքով ձևավորված վարքագծի կանոն է: Պետության կողմից որպես հասարակական հարաբերությունների կարգավորման միջոց ճանաչված սովորույթը կոչվում է իրավական: Այսինքն՝ այն իրավունքի աղբյուր է: Պետական իրավաստեղծագործության առաջին պլան մղվելուց հետո սովորութային իրավունքի նշանակալի մասը կլանվում է օրենսդրության կողմից: Վերջապես՝ սովորույթների զգալի մասը շարունակում է գործել որպես իրավական կարգավորիչ, ճիշտ է՝ շատ նեղ ոլորտում:

Արդի Հայաստանում, օրինակ՝ այդպիսին է քաղաքացիական ոլորտը, որտեղ գործարար շրջանառության սովորույթներն օրենքը ճանաչել է իրավունքի աղբյուր:

**Գործարար շրջանառության սովորույթ է համարվում ձեռնարկատիրական գործունեության որևէ բնագավառում ձևավորված և լայնորեն կիրառվող՝ օրենսդրությամբ չնախատեսված վարքագծի կանոնը:**

Քաղաքացիական հարաբերությունների ոլորտն այնքան լայն, բազմակողմ և հարուստ է, որ այն չի կարող ամբողջովին կարգավորվել նորմատիվ իրավական

ակտերով: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ օրենքը սահմանում է, այն դեպքերում, երբ քաղաքացիական հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով կամ կողմերի միջև կնքված պայմանագրով, դատարանն այդ հարաբերությունների նկատմամբ կիրառում է գործարար շրջանառության սովորույթը (իհարկե, դրանց առկայության դեպքում): Այսպիսով՝ քաղաքացիական վեճը լուծելիս դատարանն իրավունք ունի կիրառելու գործարար շրջանառության սովորույթը որպես իրավունքի նորմ: Մակայն օրենքը սահմանում է վերապահում. օրենսդրության պարտադիր դրույթներին կամ պայմանագրին հակասող գործարար շրջանառության սովորույթները չեն կիրառվում:

**Նախադեպը կոնկրետ իրավաբանական գործով այն դատական որոշումն է, որին պետությունը տալիս է համապարտադիր նշանակություն:** Գատարանի՝ կոնկրետ գործով նախկինում կայացրած որոշումն ունի իրավաբանական նորմի ուժ հետագայում նման գործեր լուծելիս: Այն՝ որպես իրավունքի աղբյուր, բնորոշ է անգլո-սաքսոնական իրավական համակարգի երկրներին, օրինակ՝ ԱՄՆ, Անգլիա: Եթե մայրցամաքային Եվրոպայում և մեզ մոտ դատարանները միայն կիրառում են իրավունքի նորմերը (օրենքները), ապա Անգլիայում, ԱՄՆ-ում դատարանը, որոշում կայացնելով, միաժամանակ իրավունք է ստեղծում: Օրինակ՝ 1966 թ. ԱՄՆ-ի գերագույն դատարանը «Միրանդան ընդդեմ Արիզոնայի» դատավարության ժամանակ ընդունեց որոշում, ըստ որի իրավապահ մարմինները որևէ անձի ձերբակալելիս կամ նրան կալանքի վերցնելիս պարտավոր են տեղյակ պահել վերջինիս հետևյալ իրավունքների մասին.

- 1) Անձը կարող է լռել:
- 2) Անձի յուրաքանչյուր խոսք դատարանում կարող է գործել ի վնաս նրա:
- 3) Անձը կարող է փաստաբան ունենալ, իսկ եթե վճարումակ չէ, ապա նրա համար կարող է փաստաբան վարձվել պետության հաշվին:

Որպեսզի մեր երկրում, օրինակ՝ ոստիկանությունն այդ կերպ գործի, դա պետք է սահմանվի օրենքով:

### 3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Բացի ազգային իրավունքից, ներպետական հասարակական հարաբերությունների կարգավորման աղբյուր կարող են լինել նաև միջազգային պայմանագրերը: XX դարում տեղի ունեցած գործընթացները հանգեցրին նրան, որ միջազգային իրավունքը կարգավորիչ նշանակություն ունեցավ ոչ միայն պետությունների միջև արտաքին քաղաքական հարաբերությունների կարգավորման համար, այլև յուրաքանչյուր պետության ներքին կյանքի կարգավորման համար: Այլ կերպ ասած, արդի միջազգային իրավունքի նորմերը ներպետական օրենսդրության կողմից ճանաչվում են որպես ազգային իրավունքի համակարգի բաղկացուցիչ մաս, այսինքն՝ ներպետական հասարակական հարաբերությունների կարգավորման աղբյուր:

Յուրաքանչյուր միջազգային պայմանագիր պարտադիր է մասնակից պետության համար և պետք է նրա կողմից բարեխիղճ կատարվի: Այդ պատճառով պետության վավերացրած միջազգային պայմանագրերը ճանաչվում են երկրի իրավական համակարգի բաղկացուցիչ մաս: Նմանօրինակ նորմեր ամրագրված են աշխարհի բազում երկրներում: Մասնավորապես, Գերմանիայի Հիմնական օրենքի համաձայն՝ «Միջազգային իրավունքի ընդհանուր նորմերը համարվում են Դաշնության իրավունքի բաղկացուցիչ մասը: Դրանք առաջնայնություն ունեն օրենքների նկատմամբ և անմիջականորեն առաջացնում են իրավունքներ ու պարտականություններ դաշնային տարածքի բնակիչների համար»: Հայաստանում ևս գործում է այս կարգը: Օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ամրագրում է միջազգային պայմանագրերի առաջնայնության սկզբունքը: Այդ սկզբունքն օրենսգրքում վերարտադրված է երկու առանձին կանոնների տեսքով:

**Առաջին.** ՀՀ միջազգային պայմանագրերը քաղաքացիական հարաբերությունների նկատմամբ կիրառվում են անմիջականորեն, բացի այն դեպքերից, երբ միջազգային պայմանագրից բխում է, որ դրա կիրառման համար պահանջվում է ներպետական ակտի հրատարակում:

**Երկրորդ.** Եթե ՀՀ միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

#### Հարցեր և առաջադրանքներ

1. *Ի՞նչ չեղում գոյություն ունեն սոցիալական նորմերը:*
2. *Ի՞նչ է իրավունքի աղբյուրը:*
3. *Որո՞նք են արդի իրավունքի աղբյուրները:*
4. *Որո՞նք են իրավունքի ներպետական աղբյուրները Հայաստանում:*
5. *Ի՞նչ է իրավական սովորույթը:*
6. *Ի՞նչ է դատական նախադեպը:*
7. *Ո՞րն է դատական նախադեպի և նորմատիվ ակտի տարբերությունը:*
8. *Ինչպե՞ս է գործում միջազգային իրավունքը Հայաստանում:*

**Ինքնուրույն աշխատանք:** Պատրաստե՛ք գեկուցում «Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը» թեմայով:

**Լուծե՛ք խնդիրը:** Երկրի ամեն մի տարածաշրջան և նույնիսկ բնակավայր ունի իրեն հատուկ սովորույթներն ու ավանդույթները: Հեռավոր, սահմանամերձ Լեռնանիստ գյուղի համայնքի ժողովը մի օր որոշեց մշակել գյուղի տարածքում հողային հարաբերությունները կարգավորող փաստաթուղթ, որը, ի տարբերություն ՀՀ հողային օրենսգրքի, հաշվի էր առնելու իրենց «գյուղի ոգին ու ավանդույթները»:

Ո՞րն է երաշխիքը, որ Լեռնանիստ գյուղում կկիրառվեն ՀՀ հողային օրենսգրքի դրույթները, այլ ոչ թե համայնքի ժողովի ընդունած ակտը:

Հայաստանի իրավական համակարգում ի՞նչ կերպ է սովորույթային կանոնը դառնում համապարտադիր, այսինքն՝ իրավունքի նորմ:

## ԳԼՈՒԽ 6. ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏ

### 1. ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏ. ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ

Նորմատիվ իրավական ակտը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավաստեղծման արդյունքում կամ հանրաքվեի միջոցով ընդունված պաշտոնական փաստաթուղթ է, որը բովանդակում է իրավունքի նորմեր: Այն իրավունքի աղբյուրի առավել կարևոր և հիմնական տարատեսակն է: Օրինակ՝ մեր իրավական համակարգում իրավունքի այլ աղբյուրները համընդհանուր նշանակություն չունեն: Դրանք, որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչ, խաղում են մասնավոր, օժանդակ կամ լրացուցիչ դեր:

**Նորմատիվ իրավական ակտն իրավաստեղծագործության արդյունք է:** Այն ստեղծվում է պետության իրավասու մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետև՝ հանրային մարմիններ) իրավաստեղծ գործունեության կամ համաժողովրդական հանրաքվեի արդյունքով: Այդ ակտը պաշտոնական փաստաթուղթ է, որն ունի պարտադիր հատկանիշներ՝ ակտի անունը (օրենք, հրամանագիր), ակտն ընդունող մարմնի անվանումը (խորհրդարան, նախագահ և այլն):

**Նորմատիվ իրավական ակտում պարունակվում են միայն իրավունքի նորմեր:** Այդ պատճառով նորմատիվ իրավական ակտերն անհրաժեշտ է տարբերել մնացած իրավական ակտերից՝ անհատական (ոչ նորմատիվ), որոնք իրավունքի աղբյուրներ չեն: Նորմատիվ իրավական ակտերում իրավունքի նորմերը խմբավորվում են ըստ որոշակի կառուցվածքային համակարգի՝ բաժիններ, գլուխներ, հոդվածներ: Նորմատիվ ակտերի կարևոր կարգավորիչ դերը նկատի ունենալով՝ դրանք օրենքով սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման: Հայաստանում այդ գրանցումն իրականացնում է արդարադատության նախարարությունը:

**Նորմատիվ իրավական ակտերի տեսակները:** Նորմատիվ ակտերը կազմում են միասնական ստորակարգված համակարգ, որի վերին աստիճանին գտնվում է օրենքը: Այդպիսով՝ ըստ իրավաբանական ուժի՝ նորմատիվ ակտերը բաժանվում են օրենքների և ենթաօրենսդրական ակտերի:

### 2. ՕՐԵՆՔՆԵՐ. ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ

Օրենքը խորհրդարանի կողմից հատուկ կարգով կամ համաժողովրդական հանրաքվեի միջոցով ընդունված նորմատիվ ակտն է, որ կարգավորում է կարևորագույն նշանակություն ունեցող հասարակական հարաբերությունները և ունի բարձրագույն իրավաբանական ուժ:

**Օրենքն ընդունվում է կամ օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի, կամ հանրաքվեի միջոցով:** Երկու դեպքում էլ օրենքն անցնում է նախապատրաստման և ընդունման հատուկ կարգ, որը սահմանված է օրենքով:

**Օրենքն օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով:** Դա նշանակում է, որ պետությունը պետք է երաշխավորի օրենքների գերակայությունը: Սահմանադրու-

թյունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին:

Օրենքներն ունեն գերակայություն, այսինքն՝ հանրապետության նախագահի, կառավարության և այլ պետական մարմինների ընդունած ակտերը պետք է համապատասխանեն օրենքներին, ընդունվում են ի կատարումն օրենքների:

**Օրենքը կարգավորում է կարևոր հասարակական հարաբերությունները: Բացառապես օրենքներով են սահմանվում՝** անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը, նրանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը և բազմաթիվ այլ հարցեր:

**Օրենքը պետք է արտահայտի իրավունքի գաղափարը, ժողովրդի կամքն ու շահերը:** Օրենքներն իրենց բովանդակությամբ պետք է համապատասխանեն արդարությանը, ազատությանը, իրավահավասարությանը, մարդասիրությանը: Հակառակ դեպքում դրանք ոչ իրավական օրենքներ են: Իրավական պետությունում կան բազմաթիվ ընթացակարգեր, որոնք երաշխիք են օրենքների իրավականությունն ապահովելու համար: Օրինակ՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը:

**Օրենքի տեսակներն են Սահմանադրությունը, օրենսգրքերը և ընթացիկ օրենքները:** Սահմանադրությունը պետության հիմնական օրենքն է:


**Օրենսգիրքը** միասնական, համակարգված, ամբողջական, ներքուստ համաձայնեցված օրենք է, որը կարգավորում է որևէ ոլորտի հասարակական հարաբերությունները: Օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը: Այլ օրենքներում և նորմատիվ այլ ակտերում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն քաղաքացիական օրենսգրքին: Այլ նորմատիվ իրավական ակտերի՝ օրենսգրքին հակասելու դեպքում կիրառվում է օրենսգիրքը:

**Ընթացիկ օրենքներում** պարունակվող իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և համապատասխան ոլորտի օրենսգրքին:

### 3. ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱԳՔՅՈՒՐ

Իրականացնելով մեր ազատասեր նախնիների սուրբ պատգամը՝ հզորացնել ու բարգավաճ դարձնել հայրենիքը, ապահովել սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը և քաղաքացիական համերաշխությունը, Հայաստանի ժողովուրդը 1995 թ. հուլիսի 5-ին հանրաքվեի միջոցով ընդունեց ՀՀ Սահմանադրությունը, որը փոփոխությունների է ենթարկվել 2005 թ.:

**Սահմանադրությունը մեր պետության ու հասարակության հիմնական օրենքն է, որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, ամրագրում է հասարակական և պետական կարգերի հիմնական սկզբունքները, մարդու և քաղաքացու հիմնական**



**իրավունքները, ազատությունները և պարտականությունները, ինչպես նաև պետական իշխանության մարմինների համակարգը:**

Մահմանադրությունը հիմնական օրենքն է կամ օրենքների օրենքը, որն ունի հիմնադիր, հիմնարար բնույթ: Այն կարելի է համարել հասարակական պայմանագիր, որն արտահայտում է ժողովրդի բարձրագույն կամքը:

Պետության, քաղաքացիական հասարակության և մարդու ազատության միջև հավասարակշռության հաստատումը Մահմանադրության ողջ իմաստն է: Մահմանադրությունը «հաշտեցնում է» մարդու իրավունքները, պետության իրավունքները և հասարակության իրավունքները՝ ապահովելով այդ երեքի շահերի համամասնությունը և հավասարակշռությունը՝ դրանով իսկ կանխելով բախումները:

**Մահմանադրությունը գերակայող աղբյուր է իրավունքի բոլոր ճյուղերի համար:** Օրինակ՝ ընտանեկան իրավունքի աղբյուրների աստիճանակարգության գագաթին վավերացված միջազգային պայմանագրերից հետո կանգնած է ՀՀ Մահմանադրությունը: Լինելով «օրենքների օրենքը»՝ այն պարունակում է նաև ընտանեկան հարաբերությունների կարգավորման հիմնարար սկզբունքներ և նորմեր: Օրինակ՝ Մահմանադրությունը հռչակում է, որ «Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդն իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք: Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս նրանք օգտվում են հավասար իրավունքներից»: Մահմանադրական այս դրույթներն ունեն բարձրագույն իրավաբանական ուժ այլ իրավական ակտերի նկատմամբ:

#### 4. ԵՆԹԱՕՐԵՆԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐ

**Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն օրենքով նախատեսված հանրային մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունած նորմատիվ ակտն է, որը հենվում է օրենքի վրա և չպետք է հակասի դրան:**

Ենթաօրենսդրական ակտերն օժտված են ավելի ցածր իրավաբանական ուժով, քան օրենքները, նրանք խարսխվում են օրենքների վրա և չեն կարող հակասել դրանց: Ենթաօրենսդրական ակտերը կոչված են կոնկրետացնելու օրենքների հիմ-

նական, սկզբունքային դրույթները: Ենթաօրենսդրական ակտերը, որպես կանոն, գործադիր իշխանության զանազան մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների ակտերն են:

Ըստ հրապարակման սուբյեկտների և գործողության ոլորտների՝ ենթաօրենսդրական ակտերը լինում են.

**1. Ընդհանուր ենթաօրենսդրական ակտեր:** Սրանք այն նորմատիվ իրավական ակտերն են, որոնց գործողությունը տարածվում է երկրի տարածքի սահմաններում զանվող բոլոր անձանց վրա: Ընդհանուր ենթաօրենսդրական ակտերի թվին են պատկանում գործադիր իշխանության բարձրագույն (կենտրոնական) մարմինների նորմատիվ ակտերը, օրինակ՝ երկրի նախագահի կամ կառավարության:

**2. Տեղական ենթաօրենսդրական ակտեր:** Սրանք տեղական ինքնակառավարման և գործադիր իշխանության տեղական մարմինների նորմատիվ իրավական ակտերն են, օրինակ՝ մարզպետարանի: Այս ակտերի գործողությունը սահմանափակված է նրանց ենթակա տարածքով:

**3. Գերատեսչական ենթաօրենսդրական ակտեր:** Այս ակտերը՝ հրամաններ, հրահանգներ, ընդունում են գործադիր որոշ մարմիններ (նախարարություններ, գերատեսչություններ): Դրանք տարածվում են միայն հասարակական հարաբերությունների սահմանափակ ոլորտի վրա (օրինակ՝ մաքսային, քանկային, տրանսպորտային և այլն):

**4. Ներկազմակերպական (յոկալ) ենթաօրենսդրական ակտեր:** Սրանք հրապարակվում են տարբեր կազմակերպությունների կողմից իրենց ներքին հարցերը կանոնակարգելու համար և տարածվում են այդ կազմակերպության անդամների վրա: Ներկազմակերպական նորմատիվ ակտերը կարգավորում են պետական և ոչ պետական հիմնարկների ու կազմակերպությունների (օրինակ՝ կուսակցությունների) գործունեության ընթացքում ծագող ամենատարբեր հարաբերությունները:

**Ենթաօրենսդրական իրավական ակտերի անհակասականության սկզբունքը:** Ստորադաս պետական մարմինների իրավական ակտերը չպետք է հակասեն վերադաս մարմինների համապատասխան ակտերին: Հակառակ դեպքում գործում է վերադաս պետական մարմնի ակտը: Եթե ենթաօրենսդրական իրավական ակտը հակասում է համապատասխան օրենսգրքին կամ այլ օրենքներին, ապա կիրառվում է օրենսգիրքը կամ համապատասխան օրենքը:

#### Հարցեր

1. Ի՞նչ է նորմատիվ իրավական ակտը:
2. Ի՞նչ է օրենքը և որո՞նք են դրա հատկանիշները:
3. Ի՞նչ է նշանակում «օրենքն ունի բարձրագույն իրավաբանական ուժ»:
4. Որո՞նք են օրենքների փասակները:
5. Ի՞նչ նշանակություն ունի Սահմանադրությունն իրավունքի ճյուղերի համար:
6. Ի՞նչ է ենթաօրենսդրական նորմատիվ ակտը:
7. Ի՞նչ սկզբունքով է կառուցված ենթաօրենսդրական ակտերի համակարգը:

## ԳԱՍ 7. ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՈՒՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

### 1. ՕՐԵՆՍԳՐԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

**Օրենսդրական գործընթացի փուլերը:** Օրենսդիր իշխանությունը մարմնավորում է Ազգային ժողովը, իսկ օրենքները օժտված են գերակայությամբ: Այդ պատճառով հատուկ նշանակություն ունի օրենսդրական գործընթացն Ազգային ժողովում: Այդ գործընթացում առանձնացվում են մի քանի փուլեր, որոնցով անցնում է օրենքը, որպեսզի ձեռք բերի իրավաբանական ուժ:

**1. Օրենսդրական նախաձեռնության փուլը:** Օրենքների նախագծերը կարող են առաջադրվել կառավարության և Ազգային ժողովի պատգամավորների կողմից: Առաջադրված նախագծի մասին եզրակացությունները ստանալուց հետո խորհրդարանի նախագահը նախագիծն ու դրա մասին եզրակացությունները ներկայացնում է Ազգային ժողովի նիստին: Քվեարկության է դրվում մտաշրջանի օրակարգում օրենսդրական նախաձեռնությունն ընդգրկելու մասին հարցը: Չայների մեծամասնություն ստանալով՝ նախագիծն ընդգրկվում է մտաշրջանի օրակարգում:

**2. Օրինագծի քննարկման և ընդունման փուլ:** Առնվազն երկու ընթերցմամբ նախագիծը քննարկվում է Ազգային ժողովի նիստում: Նման ընթացակարգն ապահովում է տարբեր քաղաքական, տնտեսական հայացքների բախումները, ժողովրդավարական ընթացակարգերի միջոցով խորհրդարանի մեծամասնության դիրքորոշումն արտահայտող օրենքների ընդունումը:

Օրենքի ընդունման փուլում օրինագիծն ամբողջությամբ դրվում է քվեարկության: Նախագիծն ընդունված է համարվում, երբ Ազգային ժողովի նիստին ներկա են պատգամավորների կեսից ավելին, և քվեարկությանը մասնակցող ներկաների մեծամասնությունը կողմ է քվեարկում:

**3. Ընդունված օրենքի՝ ՀՀ նախագահի կողմից ստորագրման և հրապարակման փուլը:** Օրենքն ուժի մեջ չի մտնում, քանի դեռ նախագահը չի ստորագրել և հրապարակել այն: Նախագահը 21 օրվա ընթացքում կարող է այն ստորագրել կամ հետ ուղարկել Ազգային ժողով՝ իր դիտողություններով և առաջարկություններով: Եթե օրենքը հետ է ուղարկվում, ապա Ազգային ժողովը միայն քննարկում է նախագահի առաջարկություններն ու առաջարկությունները: Դրանց չընդունվելու դեպքում պատգամավորներն օրենքը մեկ անգամ ևս դնում են քվեարկության: Եվ եթե օրենքը կրկին ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, ապա այն ուղարկվում է հետ՝ նախագահին: Այս դեպքում արդեն նա 5 օրվա ընթացքում պարտավոր է ստորագրել և հրապարակել օրենքը: Հրապարակվելուց հետո օրենքը մտնում է ուժի մեջ և սկսում է գործել:

**Ստորումներ:** *Ի՞նչ եք կարծում, արդյոք օրենսդրական գործընթացն արհեստականորեն բարդացված չէ: Ո՞րն է դրա պատճառը՝ ձեր կարծիքով:*

## 2. ՕՐԵՆՔՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՍՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

**Օրենքների կենսագործման անհրաժեշտությունը:** Օրենքներն ընդունվում են, որպեսզի կարգավորեն հասարակական կյանքը, նպատակային ազդեն մարդկանց կամքի ու գիտակցության վրա՝ դրդելով նրանց դրսևորելու իրենց իրավաչափորեն:

Իրավունքի նորմերի կենսագործումը տեղի է ունենում, երբ մենք **պահպանում ենք** մեր վրա դրված արգելքները (օրինակ՝ չենք կատարում հանցանք), երբ մենք **կատարում ենք** մեր պարտականությունները, երբ մենք **օգտագործում ենք** մեր սուբյեկտիվ իրավունքները (օրինակ՝ մասնակցում ենք ընտրություններին):

**«Օրենքների կիրառում» հասկացությունը:** Պետության դերն իրավական կարգավորման գործընթացում չի ավարտվում արգելքների, պարտականությունների կամ սուբյեկտիվ իրավունքների սահմանմամբ: Այն իրականացնում է նաև օրենքների կիրառում: Դա պետական գործունեության ձևերից մեկն է, երբ իրավասու մարմինը հանդես է գալիս պետության անունից՝ նրա լիազորությամբ: Օրինակ՝ իրավունքի կիրառման միջոցով վեր են հանվում իրավախախտումները, պատժվում են իրավախախտները և վերացվում են խախտման վնասակար հետևանքները:

**Օրենքների (իրավունքի նորմերի) կիրառումը հանրային մարմնի իշխանական գործունեությունն է՝ ուղղված իրավունքի նորմերի կենսագործմանը՝ կոնկրետ կենսական դեպքերի և անհատական որոշակի անձանց նկատմամբ:**

Իրավակիրառ գործունեության արդյունքն անհատական իրավական որոշման կայացումն է, որը վերաբերում է կոնկրետ կենսական դեպքին և հասցեագրվում է կոնկրետ անձանց: Օրինակ՝ դատավճռի կայացմամբ ավարտվում է պետական մարմինների գործունեությունը քրեական գործով, իսկ դատավճռով ընդունված որոշումը վերաբերում է հանցանք կատարած կոնկրետ անձին:

### **Օրենքների (իրավունքի) կիրառման փուլերը.**

*իրավունքի կիրառումը միասնական, բարդ գործընթաց է՝ կազմված զանազան փոխկապակցված հերթական գործողություններից:*

**1. Իրավաբանական գործի փաստացի հանգամանքների բացահայտում, վերլուծություն, հետազոտություն:** Օրինակ՝ կատարված հանցավոր արարքի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով բոլոր տեղեկությունների հավաքում, ամրագրում և վերջապես վերլուծություն:

**2. Հետազոտված փաստացի հանգամանքների նկատմամբ կիրառման ենթակա իրավունքի նորմի ընտրություն և վերլուծություն:** Նախորդ փուլում հավաքած տեղեկություններն արհեստավարժ իրավաբանին հնարավորություն են տալիս միանգամից կատարել կիրառվելիք նորմի ընտրությունը:

**3. Որոշման կայացում:** Նախորդ երկու փուլերը նախապարասարում են այս փուլը՝ իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից իշխանական բնույթ ունեցող որոշման ընդունումը և այն շահագրգիռ անձանց ու կազմակերպություններին հասցնելը:

### 3. ՕՐԵՆՔՆԵՐԻ ՄԵԿՆԱՔԱՆՈՒՄԸ

**Օրենքների մեկնաբանումը գործունեություն է՝ ուղղված դրանցում ամրագրված իրավական նորմերի բովանդակության պարզաբանմանը:** Մեկնաբանումն անհրաժեշտ է, որովհետև օրենքների դրույթներն ունեն վերացական բնույթ, դրանցում հաճախ օգտագործված են հատուկ եզրույթներ, երբեմն էլ տեքստն ունի թերություններ, այսինքն՝ պարզ չէ: Մեկնաբանման նպատակն է ճիշտ հասկանալ և միատեսակ կիրառել օրենքներում ամրագրված իրավական նորմերը:

**Օրենքների մեկնաբանման տեսակները:** Մեկնաբանումը լինում է պաշտոնական և ոչ պաշտոնական: **Պաշտոնական մեկնաբանումը** կատարում են օրենքով լիազորված պետական մարմինները և պաշտոնատար անձինք, և այն ունի իրավական հետևանքներ: Պաշտոնական մեկնաբանումը կատարվում է օրենքի դրույթների ամեն մի կիրառման կապակցությամբ: Սակայն անձինք իրավունք ունեն դիմելու լիազորված պետական մարմիններին պաշտոնական մեկնաբանում-պարզաբանում ստանալու համար: Դիմումի մեջ պետք է նշվի իրավական ակտի տեքստում հակասությունների, տարաբնույթ ընկալումների կամ այլ հարցերով պարզաբանում ստանալու անհրաժեշտության մասին՝ նշելով առաջադրված հարցերի իրավական հիմքերը: Պաշտոնական պարզաբանումները տրվում են դիմումն ստանալուն հաջորդող 15 օրվա ընթացքում: Նշված ժամկետում պարզաբանումը չստանալու դեպքում դիմող անձն իրավասու է իրավական ակտի պահանջներն իրականացնելիս առաջնորդվել իր ներկայացրած պարզաբանման տարբերակով:

**Ոչ պաշտոնական մեկնաբանումը** չունի պարտադիր նշանակություն, այլ կրում է խորհրդատվական բնույթ: Այդպիսի պարզաբանումներ կարող են տալ, օրինակ՝ փաստաբանները, գիտնականները:

**Իրավական ակտերի (օրենքների) լեզվական մեկնաբանման կանոններ:** Իրավական ակտերի լեզուն պետք է լինի պարզ, հստակ և մատչելի: Այդ ակտերում չի թույլատրվում հնացած և բազմիմաստ բառերի ու արտահայտությունների, պատկերավոր համեմատությունների, այլաբանությունների, չափազանցությունների, փոխաբերական իմաստով բառերի կամ արտահայտությունների, թաքնված ենթատեքստերի, ինչպես նաև անհարկի օտարալեզու տերմինների օգտագործումը: Իրավական ակտում բազմիմաստ բառ օգտագործելու դեպքում պետք է սահմանվի, թե որ իմաստով է օգտագործվում այն:

Այս պահանջները պարտադիր են իրավական ակտերի տեքստերը կազմելիս և ընդունելիս: Սակայն իրականում այդ պահանջները կարող են խախտվել: Դրա համար իրավագիտության մեջ մշակվել և կիրառվում են իրավական ակտերի մեկնաբանման որոշակի եղանակներ և կանոններ:

Իրավական ակտերի նորմերի մեկնաբանման գործընթացում կարևոր է քերականական (լեզվական) եղանակը, որի կանոններից են՝

**ա)** իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

**բ)** եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:

**գ)** եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետներով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:

**դ)** եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետներով, ինչպես նաև «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:

**ե)** եթե ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը:

**զ)** եթե ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետներով, ինչպես նաև «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը:

**է)** եթե ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «ինչպես նաև» բառերով բաժանված պայմաններով, ապա «ինչպես նաև» բառերից հետո շարադրված պայմանները համարվում են նախկին պայմանների հետ չկապված պայմաններ:

*Իրավական ակտերի մեկնաբանման այլ կանոններն ամրագրված են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում (տե՛ս [www. parliament.am](http://www.parliament.am) կամ [www. arlis.am](http://www.arlis.am) կայքերը):*

#### Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է օրենսդրական գործընթացը, և որո՞նք են դրա փուլերը:
2. Ովքե՞ր ունեն օրենսդրական նախաշնորհության իրավունք:
3. Ո՞վ է ստորագրում օրենքը և ինչպե՞ս:
4. Ի՞նչ է օրենքների կիրառումը, և որո՞նք են դրա փուլերը:
5. Ինչո՞ւ է անհրաժեշտ օրենքի մեկնաբանումը:
6. Ինչո՞վ են փարբերվում օրենքի մեկնաբանության պաշտոնական և ոչ պաշտոնական տեսակները:
7. Ինչպիսի՞ն պետք է լինի իրավական ակտերի լեզուն:
8. Օրենքների լեզվական մեկնաբանության ի՞նչ կանոններ գիտեք:

**Գրավոր աշխատանք:** ՀՀ Սահմանադրության որևէ հոդված փորձե՛ք ենթարկել քերականական (լեզվական) մեկնաբանման՝ դրանից բխեցնելով իրավական հետևանքներ:

## ԳՒՍ 8. ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### 1. ԻՐԱՎԱԶՆՓ ՎԱՐՔԱԳԻԾ ԵՎ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ

Մարդկային վարքագիծը իրավական տեսանկյունից կարող է լինել դրական և բացասական: Եթե վարքագիծը չի հակասում իրավական կանոններին, ապա այն իրավաչափ է: **Իրավաչափ է այն վարքագիծը, որը համապատասխանում է իրավունքի նորմերով սահմանված իրավական պատվիրաններին, կարգադրագրերին:** Իրավական պատվիրաններից շեղվող վարքագիծը իրավախախտում է:

Իրավաչափ վարքագիծը հանրության համար օգտակար վարքագիծ է: Որոշ դեպքերում իրավաչափ վարքագիծը կարող է հանրության համար չլինել օգտակար, սակայն բոլոր դեպքերում այն չպետք է լինի վնասակար, վտանգավոր: Հետևաբար, ըստ հանրության համար նշանակության աստիճանի՝ իրավաչափ վարքագիծը բաժանվում է **անհրաժեշտի** (օրինակ՝ բանակում ծառայելը), **ցանկալիի** (օրինակ՝ գիտական հայտնագործությունը), **թույլատրելիի** (օրինակ՝ ընտրել այլ դավանանք):

Եթե բնության օրենքները չգիտեն բացառություններ, ապա իրավաբանական օրենքները խախտվում են: Օրենսդիրը չի կարող բացառել այդպիսի խախտումները: **Իրավախախտումն իրավագործունակ անձի մեղավոր վարքագիծն է, որը հակասում է իրավունքին, վնաս է պատճառում հասարակությանը, պետությանը, անհատին և հանգեցնում է իրավական պատասխանատվության:**

**Իրավախախտումն իրավական նորմի պատվիրաններին, կարգադրագրերին հակասող վարքագիծ է:** Խախտումը կարող է լինել արգելքների չպահպանում, պարտականությունների չկատարում, իրավունքների չարաշահում: Այդ արգելքները, պարտականությունները, իրավունքները պարզ, որոշակի կերպով նշված են օրենքներում, իրավունքի այլ աղբյուրներում կամ կնքված պայմանագրերում:

**Իրավախախտումը վարքագիծ (արարք) է:** Այն արտահայտվում է գործողությամբ կամ անգործությամբ: Իրավախախտում չեն կարող լինել մտքերը, զգացումները, ապրումները, քանի դեռ դրանք չեն արտահայտվել մարդու ինչ-որ վարքագծով: **Գործողությունն ակտիվ վարքագիծ է:** Այն կարող է արտահայտվել նաև որոշակի խոսքերի արտահայտմամբ (վիրավորանքը, զրպարտությունը, կոչը՝ կատարել հակաիրավական արարքներ): **Անգործությունը** համարվում է իրավախախտում, եթե իրավունքի սուբյեկտը պետք է կատարեր իրավական նորմով նախատեսված որոշակի գործողություններ, սակայն չի կատարել (պաշտոնատար անձի անփութությունը, բժշկի կողմից հիվանդին օգնություն ցույց չտալը):

**Իրավախախտում է անձի մեղավոր վարքագիծը:** Իրավական իրադրություններում անձինք կանգնած են երկրնտրանքի առաջ: Անձն իր կամքով կարող է վարվել իրավաչափ կամ ոչ իրավաչափ: Եթե նա ընտրել է երկրորդ տարբերակը, առկա է իրավախախտում, որում անձն ունի մեղք: Եթե չկա մեղք, ուրեմն չկա իրավախախտում: **Մեղքն անձի հոգեբանական վերաբերմունքն է սեփական վարքագծի և նրա հետևանքների նկատմամբ, որում արտացոլված են նրա բացասական և**

**թեթևամիտ վերաբերմունքն իրավունքի, հասարակության և պետության շահերի, այլ անձանց իրավունքների նկատմամբ:** Տարբերվում են մեղքի երկու ձև՝ դիտավորություն և անզգուշություն:




**Գիտավորությունը** մեղքի այն ձևն է, երբ իրավախախտում կատարած անձը նախատեսում և ցանկանում է հանրորեն վտանգավոր հետևանքի առաջացումը: Օրինակ՝ գողը նախատեսում է գողությունը և ցանկանալով կատարում է այն:

**Անզգուշությունը՝** որպես մեղքի ձև, լինում է երկու տեսակի՝ ինքնավստահություն և անտարբերություն: Օրինակ՝ եթե վարորդը գիտակցաբար դուրս է գալիս երթևեկության տեխնիկապես անսարք մեքենայով՝ թեթևամտորեն հույս ունենալով խուսափել վթարից, բայց վթարը, այնուամենայնիվ, տեղի է ունենում, ապա առկա է մեղքն ինքնավստահության ձևով: Անտարբերություն է, երբ վարորդը մինչև երթևեկության դուրս գալը չի ստուգում մեքենայի տեխնիկական վիճակը, իսկ մեքենան իրականում անսարք էր, որի հետևանքով տեղի է ունենում ավտովթար:

**Իրավախախտում է իրավագործունակ անձի արարքը:** Իրավագործունակությունն օրենքով ճանաչված ընդունակությունն է գիտակցելու իր հակաիրավական արարքների նշանակությունը և դրանց համար իրավական պատասխանատվություն կրելը: Իրավագործունակության տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները տարբեր են իրավունքի զանազան ճյուղերում (*տես հաջորդ դասը*):

**Իրավախախտումը հանրության համար վտանգավոր և վնասակար է:** Հենց իր վտանգավորության ուժով է այն արգելվում պետության կողմից:



**2. ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Իրավական պատասխանատվությունն իրավախախտում կատարած անձի նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառվող պետական հարկադրանք է, որը նախատեսված է իրավական նորմի սանկցիայով: Այն պետության

արձագանքն է կատարված իրավախախտմանը: Պատասխանատվությունն արտահայտվում է մեղավորի պարսավանքով, նրա նկատմամբ որոշակի գրկանքներով, որոնք պետք է կրի մեղավոր իրավախախտն իր հասցրած վնասի դիմաց: Սեղավոր անձը չէր կրի դրանք, եթե չկատարեր իրավախախտում:

Իրավական պատասխանատվությունը հատուցում է իրավախախտման համար, որի անբարենպաստ հետևանքները կարող են լինել **անձնական** (օրինակ՝ ազատագրկում), **գույքային** (օրինակ՝ գույքի բռնագրավում, տուգանք), **կազմակերպական** (օրինակ՝ աշխատանքից ազատում), **հոգեբանական** (օրինակ՝ նախագգուշացում, նկատողություն):

**Իրավական պատասխանատվության նպատակները և գործառույթները:** Իրավական պատասխանատվությունը, անկախ նրա տեսակից, հետևում է երկու նպատակ. **1) իրավակարգի պաշտպանությունը**, այսինքն՝ իրավունքի նորմերով սահմանված կարգադրագրերի պաշտպանությունը, **2) բնակչության դաստիարակությունն** իրավունքի հարգման, օրինահպատակության ոգով: Իրավական պատասխանատվության նպատակները կոնկրետացվում են դրա գործառույթներում:

<b>Իրավական պատասխանատվության գործառույթները</b>		
<b>Ջրկող-պատժող</b> <i>Պատասխանատվությունն ամենից առաջ պետական հասցուցման միջոց է իրավախախտողի նկատմամբ, գրկանք իրավախախտման համար, հետո նոր իրավախախտումները կանխող միջոց: Այսինքն՝ կարարել են իրավախախտում՝ կրի պատասխանատվություն, գրկանք, պարիտ:</i>	<b>Կանխող-դաստիարակող</b> <i>Պատասխանատվության նպատակն է կանխել հետագա իրավախախտումներն ինչպես իրավախախտողի կողմից (հատուկ կանխում), այնպես էլ այլ անձանց կողմից (ընդհանուր կանխում): Վերջինս անվանում են նաև սարսափեցնող գործառույթ: Պատասխանատվության առավելագույն խնդիրն է իրավունքի հասցեատերերի մեջ շեղումը հարգանք այլ անձանց իրավունքների, օրենքների նկատմամբ:</i>	<b>Վերականգնող-հատուցող</b> <i>Պատասխանատվությունը խնդիր ունի վերականգնել իրավախախտման պատճառով վնասները, որքանով դա հնարավոր է: Օրինակ՝ այդպիսի գործառույթը հատուկ է գույքային պատասխանատվությանը: Հասցված նյութական վնասի գանձումն իրավախախտողից հատուցում է րոշող կողմի կրած կորուստները, վերականգնում է նրա գույքային իրավունքները:</i>

**Իրավական պատասխանատվության հիմքերը:** Իրավական պատասխանատվությունը կիրառվում է, երբ կան բավարար հիմքեր: Իրավական պատասխանատվության **փաստական հիմքն** իրավախախտումն է, օրինակ՝ կատարված հանցանքը: Եթե չկա իրավախախտում՝ որպես իրականության փաստ, ապա չի կարող լինել նաև պատասխանատվություն: Այստեղ գործում է «Չկա պատասխանատվություն առանց իրավախախտման» սկզբունքը:

Իրավական պատասխանատվության իրավաբանական հիմքերն են իրավունքի նորմը և համապատասխան պետական մարմնի իրավակիրառ ակտը: Այս դեպ-

քում գործում է «Չկա իրավախախտում առանց օրենքի» սկզբունքը: Սակայն միայն նորմը և կատարված արարքը բավարար չեն անձին պատասխանատվության ենթարկելու համար: Անհրաժեշտ է նաև պետական մարմնի իրավունքի կիրառման ակտը, օրինակ՝ դատավճիռը, որով դատարանը կիրառում է կոնկրետ ձևի և բովանդակության հարկադրանք իրավախախտի նկատմամբ: Առանց այդ ակտի բացառվում է իրավական պատասխանատվության կիրառումը:



### **Իրավական պատասխանատվության տեսակները:**

Իրավական պատասխանատվությունը լինում է քրեական, վարչական, քաղաքացիական, կարգապահական:

**Քրեական պատասխանատվությունը** կիրառվում է հանցագործության համար և ներառում է ամենից խիստ հարկադրանքի միջոցները: Նշանակման և իրականացման կարգը սահմանված է քրեական, քրեադատավարական և քրեակատարողական օրենսդրությամբ:

**Վարչական պատասխանատվությունը** կիրառվում է վարչական իրավախախտումների օրենսդրության հիման վրա: Օրինակ՝ տուգանքը ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար:

**Կարգապահական պատասխանատվությունը** կիրառվում է աշխատանքային, ուսումնական, ծառայական, զինվորական կարգապահության խախտման համար: Կարգապահական ներգործության կիրառող մարմինը և կարգապահական խախտում կատարած անձը գտնվում են վերադաս-ստորադաս կամ ենթարկվածության հարաբերություններում, օրինակ՝ հրամանատար և զինվոր, աշխատող և գործատու, իսկ վարչական պատասխանատվության դեպքերում ծառայողական ենթարկվածության հարաբերությունները բացակայում են:

**Քաղաքացիական պատասխանատվությունը** գույքային է և հիմնականում հատուցողական: Նրա նպատակն է վերականգնել խախտված գույքային իրավունքը, լրիվ հատուցել իրավախախտմամբ պատճառված գույքային վնասը (*տես ս 23-րդ դասը*):

### **Հարցեր և առաջադրանքներ**

1. **Ի՞նչ են իրավաչափ վարքագիծը և իրավախախտումը:**
2. **Որո՞նք են իրավախախտման հարկանիշները:**
3. **Ի՞նչ է մեղքը, և որո՞նք են դրա տեսակները:**
4. **Ո՞ր անջի արարքն է համարվում իրավախախտում:**
5. **Որո՞նք են իրավախախտման տեսակներն ըստ վրանգավորության աստիճանի:**
6. **Ի՞նչ է իրավական պատասխանատվությունը:**
7. **Որո՞նք են իրավական պատասխանատվության հիմքերը:**
8. **Որո՞նք են իրավական պատասխանատվության նպատակները և գործառույթները:**

**Հանրօգուտ աշխատանք:** Պատրաստե՛ք իրավահպատակության կոչող քարտզական բերրիկներ և տարածե՛ք դրանք:

## ԳԼՈՒԽ 9. ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

### 1. ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Օրինականությունը պահանջ է՝ ուղղված հասարակական կյանքի մասնակիցներին՝ ճշգրիտ և միատեսակ կատարել իրավական նորմերի պահանջները: Որպես իրավական պատասխանատվության սկզբունք այն ունի մի քանի կողմ:

**Պատասխանատվությունը վրա է հասնում հակաիրավական արարքների համար:** Այդ պահանջն ուղղված է և՛ օրենսդիրին, և՛ իրավակիրառողին: Թե ո՞ր արարքներն են համարվում իրավախախտում, ուղղակիորեն պետք է նախատեսված լինի օրենքով: Հակառակ դեպքում արարքն իրավախախտում չէ: Պատասխանատվությունը կիրառող մարմինը պետք է հետևի «Չկա իրավախախտում առանց օրենքի և պատասխանատվություն առանց իրավախախտման» պահանջին: Բացի այդ, իրավական պատասխանատվությունը կիրառվում է օրենքներով սահմանված կարգով:



**Իրավական պատասխանատվություն կարող է կրել մեղավոր և իրավագործունակ անձը:** Պատասխանատվությունը չի կարող կիրառվել ոչ իրավագործունակ անձի նկատմամբ, այսինքն՝ այնպիսի անձի, որը կատարել է իրավունքի դիրքերից պատժվող արարք, սակայն իր հոգեկան վիճակի կամ տարիքի պատճառով չի գիտակցել իր գործողությունների իմաստը: Որպես ընդհանուր կանոն՝ իրավական պատասխանատվությունը լրիվ չափով վրա է հասնում ֆիզիկական անձի չափահաս դառնալու տարիքից, այսինքն՝ 18 տարեկանից: Սակայն որոշ իրավախախտումների համար այն կիրառվում է նաև մինչև չափահաս դառնալը:

Հանցագործության համար պատասխանատվության ենթակա է այն անձը, որի 16 տարին լրացել է նախքան հանցանք կատարելը: Այս կանոնից օրենքը բացառություն է անում որոշ հանցանքների համար, որոնց հասարակական վտանգավորությունն անչափահասը կարող է գիտակցել նաև մինչև 16 տարեկան դառնալը: Օրինակ՝ սպանություն, դիտավորյալ և անզուգական ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը, մարդուն առևանգելը, գողությունը, ավազակությունը և այլն: Այս արարքների համար պատասխանատվության տարիքը 14-ն է:

Մանկահասակները, ովքեր իրենց տարիքի ուժով ի վիճակի չեն անբողջությամբ գիտակցելու իրենց գործողությունների (անգործության) վտանգավորությունը կամ ղեկավարելու դրանք, չեն կարող ենթարկվել քրեական պատասխանատվության իրենց կողմից կատարված հանրորեն վտանգավոր արարքների համար:

Քաղաքացիական իրավունքում կյանքին կամ գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնաս պատ-

ճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Օրենքով կարող է նախատեսվել վնասի հատուցում՝ վնաս պատճառողի մեղքի բացակայությամբ: Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա: Օրինակ՝ 14 տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) պատճառած վնասի համար պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չեն ապացուցում, որ վնասն իրենց մեղքով չի պատճառվել: 14-18 տարեկան անչափահասներն ինքնուրույն պատասխանատվություն են կրում իրենց պատճառած վնասի համար: Երբ նման անչափահասը վնասը հատուցելու համար չունի բավարար գույք, վնասը պետք է հատուցեն նրա ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուն, եթե չեն ապացուցում, որ վնասն իրենց մեղքով չի պատճառվել:

Կազմակերպությունների իրավական պատասխանատվությունը ծագում է որպես իրավաբանական անձ պետական գրանցման պահից:

## 2. ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՍԿՁՔՈՒՆՔԸ

**Իրավական պատասխանատվության կիրառումը պետք է լինի հիմնավորված:** Այսինքն՝ գործի հանգամանքները պետք է հաստատվեն ստուգված, հավաստի ապացույցներով: Դրա համար իրավունքի կիրառման սուբյեկտի կողմից՝ ա) պետք է վեր հանվեն գործին վերաբերող բոլոր փաստերը, բ) այդ փաստերը պետք է մանրազնին և օբյեկտիվ ուսումնասիրվեն և ճանաչվեն հավաստի, գ) բոլոր չապացուցված և կասկածելի փաստերը պետք է մերժվեն: Ընդ որում՝ արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը: Օրինակ՝ առաջադրված մեղադրանքի հիմքում չի կարելի դնել և որպես ապացույց օգտագործել բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ ձեռք բերված ցուցմունքները:

**Իրավական պատասխանատվության կիրառումը պետք է լինի անկողմնակալ:** Դա նշանակում է իրավակիրառող սուբյեկտի անաչառություն: Իրավակիրառման արդյունքում ընդունված պատասխանատվության ենթարկելու որոշումն անկողմնակալ է, եթե այն կայացված է կիրառող մարմնի հայեցողությունից չկախված չափանիշների հիման վրա, եթե այն բխում է օրենքից, ինչպես նաև իրավակիրառման ընթացքում անաչառորեն բացահայտված փաստերից: Անկողմնակալությանը նպաստում են օրենքով սահմանված բազմազան երաշխիքները: Օրինակ՝ պատասխանատվության ենթարկվող անձի պաշտպանության իրավունքը:

## 3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆԱՅՄԱՆ ՍԿՁՔՈՒՆՔԸ

Ամեն մի իրավական պատասխանատվություն պետք է անհատականացվի: Չի կարելի բոլոր իրավախախտներին «մի արշինով չափել»: Հետևաբար, պետական մարմինները, որոնք որոշում են պատասխանատվության չափը, պետք է հաշվի առնեն իրավախախտի մեղքի աստիճանը, արարքի վտանգավորության աստիճանը, իրավախախտի անձնական որակները, տարիքը, նախկինում իրավախախտումներ

կատարելը և այլն: Դրա համար օրենսդիրն իրավունքի նորմերում սահմանում է հարաբերական-որոշակի կամ այլընտրանքային սանկցիաներ:

**Հարաբերական-որոշակի սանկցիաներում** ազդեցության միջոցը սահմանված է ներքին և վերին սահմաններով, ինչը թույլ է տալիս այն կիրառել իրավախախտի անձի և կատարած արարքի հանգամանքների հաշվառմամբ: Օրինակ՝ «Ազատագրվում 3-ից մինչև 10 տարի»:

**Այլընտրանքային սանկցիան** կիրառող մարմնին հնարավորություն է տալիս ընտրելու սանկցիայի մեջ ամրագրված ներգործության միջոցներից մեկը: Օրինակ՝ «Պատժվում է ազատագրվմամբ 6 ամսից մինչև 1 տարի կամ տուգանքով»:

**Քացարձակ-որոշակի սանկցիան** պարունակում է կոնկրետ ներգործության միջոցը, սահմանափակում է պատասխանատվություն կիրառող մարմինների հայեցողությունը, սակայն տեղ չի թողնում անհատականացման համար: Օրինակ՝ «Տուգանք 100 հազար դրամ»:

#### 4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԵԿԱՆԳԱՄՅԱ ԿԻՐԱՌՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Մեկ իրավախախտման համար կարող է կիրառվել պատասխանատվություն մի-այն մեկ անգամ: Արգելում է միևնույն հանցագործության համար կրկնակի դատապարտումը: Նույն անձի վերաբերյալ նույն դեպքի առթիվ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման, ինչպես նաև քրեական հետապնդման մարմնի չվերացված որոշման առկայությունը բացառում է քրեական գործ նորոգելը, մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելը, ավելի խիստ պատիժ նշանակելը: Դա, իհարկե, չի նշանակում, որ գործի վերանայումն արգելված է: Եթե տեղեկություններ կան գործի քննության ընթացքում տեղ գտած խախտումների կամ նոր ի հայտ եկած հանգամանքների մասին, որոնք կարող էին ազդել քրեական գործի ելքի վրա, ապա այն կարող է վերանայվել, սակայն միայն հին դատավճռի կամ որոշման վերացման դեպքում:

#### 5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԳԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Պատասխանատվությունն արդյունավետ է ոչ թե դաժանությամբ ու խստությամբ, այլ անխուսափելիությամբ: Դա նշանակում է, որ վաղ թե ուշ իրավախախտում կատարած մեղավորը պետք է հայտնաբերվի, նրա մեղքը ապացուցվի, իսկ նա կրի արժանի պատիժ: Այս սկզբունքի կենսագործման երաշխիքն իրավապահպան մարմինների ձեռնահասությունն է, որոնց հիմնական խնդիրն է մեղավորներին պատասխանատվության ենթարկելը: Սակայն անխուսափելիության սկզբունքը սահմանափակված է պատասխանատվության ժամանակային կտրվածքով: Օրենքներում սահմանված են ժամկետներ, որոնց անվանում են վաղեմության ժամկետներ: Քրեական իրավունքում դա **քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետն է**, այսինքն՝ ժամկետը, որի ընթացքում կատարվում է հանցագործի որոնում: Եթե հանցագործը հայտնաբերվում է այդ ժամկետը լրանալուց հետո, ապա նրա նկատմամբ պատասխանատվություն չի կիրառվում: Օրենքի այդպիսի տրամաբանությունը հուշում է, որ առաջնայինը պատժելը չէ: Եթե հանցագործն ան-

ցած տարիների ընթացքում չի կատարել նոր իրավասխատում, ապա անցյալի արարքի համար պատժելն աննպատակահարմար է, որովհետև նա ուղղվել է: Վաղեմության ժամկետը չի տարածվում ցեղասպանության, պատերազմական հանցագործությունների վրա:

**Մտորումներ:** Համաձայն երբեք քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետի տրամաբանության հետ. մի՞թե կարելի է չբացահայտված մարդասպանին քեկուզել տարիներ հետո բացահայտելով չենթարկել պատասխանատվության:

Քաղաքացիական իրավունքում գործում է **հայցային վաղեմության ժամկետը:** Օրինակ, եթե դուք դրան եք պարտք ինչ-որ մեկին, լրացել է դրա վճարելու ժամանակը, և դուք այն չեք վերադարձրել, իսկ պարտատերն էլ պահանջ չի ներկայացրել պարտքը ստանալու համար, ապա երեք տարի անցնելուց հետո ձեզ չեն կարող ենթարկել պատասխանատվության:



*Միջնադարում խոշտանգումը ցուցմունք կորզելու օրինական միջոց էր*

Իրավական պատասխանատվությունը պետք է լինի մարդասիրական: Ոչ մի հանգամանք և իրադրություն չի կարող դառնալ մարդու արժանապատվությունը նսեմացնելու հիմք: Այդպիսի հանգամանք չի կարող լինել նաև պատասխանատվությունը, որի կիրառման ընթացքում անձն ունի մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք: «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք»:

Այս իրավունքն ուղղված է ոստիկանական մարմիններում, բանտերում և կալանավայրերում հանդիպող խոշտանգումների, նվաստացնող վերաբերմունքի կանխմանը:

#### Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչն է համարվում իրավական պատասխանատվության հիմք:
2. Ո՞ւմ նկատմամբ կարող է կիրառվել իրավական պատասխանատվությունը:
3. Ո՞ր փորձից է վրա հասնում քրեական պատասխանատվությունը:
4. Ի՞նչ է իրավական պատասխանատվության հիմնավորվածության սկզբունքը:
5. Ի՞նչ է պատասխանատվության անհատականացման սկզբունքը:
6. Ի՞նչ է պատասխանատվության մեկանգամյա կիրառման սկզբունքը:
7. Ի՞նչն է կարեոր պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը:
8. Ի՞նչ է նշանակում պատասխանատվության մարդասիրությունը:

**Հարցում շրջապատին:** Շրջապատում գտե՛ք որևէ մեկին, ով ենթարկվել է իրավական պատասխանատվության: Համառոտագրե՛ք նրա պատմությունը՝ փորձելով պարզել պատասխանատվության սկզբունքների դրսևորումը տվյալ դեպքում: Դասարանում ամփոփե՛ք արդյունքները:

## ԳԼՈՒԽ 2. ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

### ԳՐԱՍ 10. ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

#### 1. ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գատական իշխանությունը դատարաններին պատկանող բացառիկ իրավունքն է հատուկ կարգով քննել և լուծել իրավական վեճերն օրինականության, մարդու իրավունքների պաշտպանության նպատակով:

Իրավական վեճերը կարող են առաջանալ անհատների միջև (օրինակ՝ ինչ-որ մեկը պարտքով դրամ է վերցրել և չի վերադարձնում), անհատի և որևէ պետական մարմնի միջև (օրինակ՝ պետական համապատասխան մարմինը անհիմն կերպով մերժում է որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելու մասին քաղաքացու դիմումը), երկու պետական մարմինների միջև (օրինակ՝ հանրապետության նախագահն ընդունել է հրամանագիր, որը, ըստ Ազգային ժողովի, հակասում է Սահմանադրությանը) և այլն:



**Գատական իշխանության հատկանիշները:** Իշխանությունների տարանջատման համակարգում դատական իշխանության անօտարելի հատկանիշներն են անկախությունը, ինքնուրույնությունը և առանձնացվածությունը:

**Գատական իշխանության անկախությունը** նշանակում է, որ դատարաններն իրենց գործառնությունները կատարում են՝ զերծ մնալով ինչ-որ ազդեցությունից կամ ներգործությունից, ում կողմից էլ որ այն լինի: Գատարանը և դատավորները չպետք է կախված լինեն ո՛չ օրենսդիր, ո՛չ գործադիր պետական մարմիններից, կազմակերպություններից ու անհատներից, այդ թվում՝ վերադաս դատարաններից:

**Գատական իշխանությունն ինքնուրույն է:** Գատարանները գործում են առանց ինչ-որ ենթակայության, օրենքով իրենց տրված լիազորությունների հիման վրա, որոնք անհրաժեշտ են և բավարար դատական իշխանության առջև դրված խնդիրներն իրականացնելու համար: Գատարանների կայացրած որոշումները չունեն ինչ-որ մեկի հաստատման կարիքը: Օրինական ուժի մեջ մտած դատարանի որոշման կատարումը պարտադիր է բոլորի համար:

**Գատական իշխանությունն առանձնացված է:** Գատական համակարգը կազմակերպման առումով չի մտնում պետական իշխանության որևէ այլ համակարգի մեջ, չի ենթարկվում դրանցից որևէ մեկին: Դա, իհարկե, չի նշանակում, որ դատական համակարգը լրիվ մեկուսացված է այլ իշխանություններից: Օրենսդիր մարմինն ընդունում է օրենքներ, որոնց համապատասխան կազմակերպվում և գործում են դա-



տարանները: Գործադիր իշխանությունը մասնակցում է դատական կորպուսի ձևավորմանը: Հետևաբար, դատական և իշխանության այլ ճյուղերը համագործակցում են, սակայն դա իրականացվում է օրենքի շրջանակում և կառուցված է դատարանների առավել հնարավոր անկախության ապահովման վրա:

***Մտորումներ:** Ինչո՞ւ էր Շ. Լ. Մոնտեսքինս պնդում, որ չի լինի ազատություն, «եթե դատական իշխանությունը չի առանձնացված օրենսդիր և գործադիր իշխանություններից»:*

## 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

**Դատական համակարգը միմյանց հետ արդարադատության իրականացման հարաբերություններով կապված պետության բոլոր դատարանների ամբողջությունն է:** ՀՀ դատարանների ամբողջությունը բաժանվում է երկու ենթահամակարգերի: Դրանցից առաջինը Սահմանադրական դատարանն է: Մյուսի մեջ մտնում են **ընդհանուր իրավասության դատարանները**, ինչպես նաև **մասնագիտացված դատարանները**, օրինակ՝ վարչական դատարանը: Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

Ընդհանուր իրավասության դատարանների համակարգն իր հերթին բաժանված է երեք օղակների՝ առաջին, վերաքննիչ, վճռաբեկ ատյանի դատարաններ: Յուրաքանչյուր ատյանի դատարան անկախ է և գործում է Սահմանադրությամբ ու օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում:

**Դատական համակարգի տարբեր օղակները գտնվում են սերտ գործառությանի կապի մեջ:** Դատական ամեն մի գործ առաջին անգամ քննվում և լուծվում է առաջին ատյանի դատարանում: Եթե դատավարության կողմերը չեն բողոքարկել դատական ակտը, ապա այն մտնում է օրինական ուժի մեջ և կատարվում: Սակայն հնարավոր է, որ տեղի ունենան դատական սխալներ՝ օրենքի պահանջների խախտումների, օրենքը ոչ ճիշտ մեկնարանելու կամ գործի փաստական հանգամանքների անբավարար հետազոտման հետևանքով, և կայացվեն անօրինական կամ չհիմնավորված դատական ակտեր: **Դատական սխալն** օրենքի այնպիսի խախտումն է, որը կարող է ազդել գործի ելքի վրա: Օրինակ՝ ամբաստանյալին թույլ չեն տվել դատարանում ասել իր վերջին խոսքը: Դա օրենքի էական խախտում է:

Այդ պատճառով օրենքը նախատեսում է վերադաս դատարանների կողմից դատական որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգման հնարավորություն: Վերաքննիչ բողոքի առկայության դեպքում գործը ենթակա է պարտադիր քննության վերաքննիչ դատարանում: Այնուհետև դատական ակտը կարող է բողոքարկվել Վճռաբեկ դատարանում:

**Մտորումներ:** Յուրաքանչյուր գործի համար նման ընթացքի հնարավորության նախատեսումը ի՞նչ նպատակ ունի: Ինչպե՞ս դա կարող է նպաստել դատական ակտերի օրինականությանն ու հիմնավորվածությանը:

### 3. ՍԵՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱԲԱՆ

Սահմանադրական դատարանի առաքելությունը սահմանադրական արդարադատության իրականացումն է: Այն կազմված է ինն անդամից, որոնցից հինգին Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ նշանակում է Ազգային ժողովը, իսկ չորսին՝ հանրապետության նախագահը:

**Սահմանադրական դատարանը պետական մարմինների համակարգում հատուկ տեղ է զբաղեցնում:** Իշխանությունների տարանջատումը ենթադրում է ոչ միայն զանազան պետական մարմինների միջև օրենսդիր, գործադիր, դատական գործառույթների բաշխում, այլ նաև նրանց միջև հավասարակշռություն այն հաշվով, որ դրանցից ոչ մեկը չկարողանա ստանալ գերիշխանություն մյուսի նկատմամբ: Այդ հավասարակշռությունն իրագործվում է պետական մարմինների «հակակշռող և զսպող լիազորությունների» միջոցով: Այդ գործում հատուկ դեր է կատարում Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը, մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանությունը:

**Սահմանադրական դատարանի հիմնական լիազորությունը սահմանադրական վերահսկողությունն է:** Նա որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հանրապետության նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների սահմանադրականության, այսինքն՝ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը: Այս հարցով Սահմանադրական դատարան կարող են դիմել հանրապետության նախագահը, խորհրդարանի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը, կառավարությունը:

Սահմանադրական դատարանը մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը: Այդ հարցով դատարան են դիմում հանրապետության նախագահը, Ազգային ժողովը:

Սահմանադրական դատարան կարող են դիմել նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ պահանջելով, որ դատարանը ստուգի ինչ-որ պետական մարմնի որևէ նորմատիվ ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, եթե այդ ակտը խախտում է նրանց սահմանադրական իրավունքները:

Սահմանադրական դատարան կարող են դիմել նաև դատարանները և գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով:

Եթե դատարանը վերը նշված գործերի քննության արդյունքում գտնի, որ համապատասխան ակտերը հակասում են Սահմանադրությանը, ապա նա իր որոշմամբ կարող է այդ ակտը կամ դրա մի մասը ճանաչել իրավական ուժը կորցրած:

**Սահմանադրական դատարանը կարևոր դերակատարություն ունի մարդու իրավունքների պաշտպանության գործում:** Եթե տեղի է ունեցել մարդու սահմանադրական որևէ իրավունքի կամ ազատության խախտում, և օտագործելով դատական պաշտպանության բոլոր միջոցները՝ մարդը չի կարողացել վերականգնել իր խախտված իրավունքը, ապա նա կարող է դիմել այդ դատարան: Սակայն միայն մեկ պայմանով. անհատը պետք է հիմնավորի, որ իր գործով կայացված դատարանի վերջնական ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասահմանադրական են: Սահմանադրական դատարանը գործը նորից և անբողջությամբ չի քննում, այլ միայն ստուգում է կիրառված օրենքի սահմանադրականությունը: Եթե կիրառված օրենքը հակասում է Սահմանադրությանը և խախտում մարդու սահմանադրական իրավունքները, ապա դատարանն իր որոշմամբ կարող է այդ օրենքը կամ դրա մի մասը ճանաչել իրավական ուժը կորցրած:

Մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության հարցով Սահմանադրական դատարան կարող է դիմել նաև մարդու իրավունքների պաշտպանը:

**Սահմանադրական դատարանը լուծում է Սահմանադրությամբ սահմանված վեճերը:** Օրինակ՝ հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերը: Այդ հարցով դատարան կարող են դիմել հանրապետության նախագահը, Ազգային ժողովը, պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը:

Սահմանադրական դատարանը լուծում է հանրապետության նախագահի և խորհրդարանի պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը: Այդ հարցով դատարան կարող են դիմել հանրապետության նախագահի և պատգամավորության թեկնածուները:

Սահմանադրական դատարանն անհաղթահարելի կամ վերացած է ճանաչում հանրապետության նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտները: Այդ հարցով դատարան կարող են դիմել նախագահի թեկնածուները:

**Մտորումներ:** *Ի՞նչ է նշանակում «թեկնածուի համար անհաղթահարելի խոչընդոտ» արտահայտությունը: Ի՞նչ է այդ խոչընդոտի առկայությունը համարվում հիմք ընտրական գործընթացը վերսկսելու համար:*

**Սահմանադրական դատարանի եզրակացությունները:** Որոշակի դեպքերում համապատասխան դիմումի առկայությամբ Սահմանադրական դատարանը տալիս է եզրակացություններ: Այդ դեպքերն են՝

- հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին՝ Ազգային ժողովի դիմումով:
- հանրապետության նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին՝ կառավարության դիմումով:
- համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին՝ կառավարության դիմումով:
- Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև նրա

նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ: Այս հարցով դատարան կարող են դիմել հանրապետության նախագահը, Ազգային ժողովը:

Եթե Սահմանադրական դատարանի եզրակացությունը բացասական է, ապա հարցը դուրս է գալիս իրավասու մարմնի քննությունից:

**Սահմանադրական դատարանը որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:** Եթե կուսակցությունները խախտում են օրենքները, ապա հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, կառավարության դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը կարող է որոշում կայացնել կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:

**Կասեցնել** կուսակցության գործունեությունը նշանակում է նրան արգելել իրականացնել օրենքներով նախատեսված իր իրավունքները որոշակի ժամկետով: **Արգելել** նշանակում է ընդհանրապես չթույլատրել նրա գործունեությունը:

*Մտորումներ:* Ի՞նչ էր կարծում, ինչո՞ւ են կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին որոշման ընդունումը վերապահել Սահմանադրական դատարանին, այլ ոչ թե ընդհանուր իրավասության դատարաններին:

Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի ամկայության դեպքում: Այն որոշումները և եզրակացություններն ընդունում է դիմում ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օր հետո: Այդ որոշումները վերջնական են, վերանայման ենթակա չեն և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

### Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է դատական իշխանությունը:
2. Ի՞նչ է դատական համակարգը, և ինչպիսի՞ն է դրա կառույցը Հայաստանում:
3. Ի՞նչ են ընդհանուր իրավասության դատարանները, և որո՞նք են դրա օղակները:
4. Ի՞նչ է Սահմանադրական դատարանը:
5. Ի՞նչ է սահմանադրական վերահսկողությունը:
6. Ի՞նչ դեր ունի Սահմանադրական դատարանը մարդու իրավունքների պաշտպանության գործում:
7. Ո՞ր դեպքերում է Սահմանադրական դատարանը փալիս եզրակացություններ:

**Ինտերնետային այցելություն:** Այցելե՛ք Սահմանադրական դատարանի [www.concourt.am](http://www.concourt.am) կայքը և ծանոթացե՛ք նրա գործունեությանը, կառուցվածքին, ընդունած որոշումներին:

**Պարտադիր ինքնուրույն աշխատանք:** Միբեյի՝ աշակերտներ, 16-րդ դասն այրնտրանքային է, և տարբերակներից մեկը սահմանադրական դատախաղ է: Այդ դասը արդյունավետ անցկացնելու համար այսօր ուղղակի ընթերցե՛ք այն, որպեսզի հաջորդ դասին կարողանաք կատարել դասի տարբերակի ընտրություն: Եթե դուք ընտրել եք դատախաղը, ապա 12 և 13-րդ դասերին ուսուցչի օգնությամբ կատարե՛ք դերաբաշխումները և ըստ հրահանգների նախապատրաստվե՛ք սահմանադրական դատարանի նիստի անցկացմանը:

## ԴԱՍ 11. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

### 1. «ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

**Առաջին ատյանի դատարան է այն դատարանը, որը լիազորված է տվյալ գործով հիմնական համարվող հարցերով ըստ էության որոշումներ ընդունել:**

Այդ դատարանների համակարգը բաղկացած է երկու օղակից՝

- ընդհանուր իրավասության դատարաններ,
- մասնագիտացված վարչական դատարան:

Դատարանների իրավասությանը ենթակա բոլոր գործերն առաջին անգամ քննվում են առաջին ատյանի դատարաններում: Առաջին ատյանի դատարանները ըստ էության քննում են քաղաքացիական, քրեական և վարչական բոլոր գործերը, իրականացնում են օրենքով իրենց վերապահված այլ լիազորություններ:

Քրեական գործերով դրանք հանցանք կատարած անձանց մեղավոր ճանաչելու, նրանց նկատմամբ պատիժ նշանակելու, հանցանք չկատարած անձանց անպարտ ճանաչելու և արդարացնելու հարցերն են: Դատարանի քրեական գործի դատական քննության հետևանքով կայացրած որոշումը կոչվում է **դատավճիռ**:

Քաղաքացիական գործի էությունը սովորաբար կազմում են հարուցված հայցի ապացուցվածության կամ չապացուցվածության մասին և դրանցից յուրաքանչյուրի իրավական հետևանքների մասին հարցերը: Քաղաքացիական գործի դատական քննության հետևանքով կայացրած որոշումը կոչվում է **վճիռ**: Վճիռ է կոչվում նաև վարչական գործով կայացված որոշումը:



**Լրացուցիչ նյութ:** Դատարանի և դատավորի անկախությունը կյանքի կոչելու համար օրենքը սահմանում է մի շարք երաշխիքներ: Օրինակ՝ դրա համար կարևոր է նրանց նյութական և սոցիալական ապահովվածությունը: Այս առումով օրենքները սահմանում են դատավորների գործունեության

նյութական (օրինակ՝ բարձր աշխատավարձ), սոցիալական (օրինակ՝ ծառայողական բնակարանի իրավունք) և այլ երաշխիքներ:

Դատավորի անփոփոխելիությունը երաշխիք է նրա անկախության համար: Դատավորները պետք է ազատ լինեն այն մտավախությունից, թե կարող են կորցնել իրենց պաշտոնը, եթե հաշվի չառնեն ինչ-որ պաշտոնյայի կամ անձանց ինչ-որ խմբի միջնորդությունները: Հետևաբար, դատավորը պաշտոնավարում է մինչև 65 տարին լրանալը: Արգելվում է նրան առանց իր գրավոր համաձայնության փոխադրել աշխատանքի այլ դատարան: Դատավորի լիազորությունները դադարում են միայն Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով:

## 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՏՈՒԹՅԱՆ ԳԱՏԱՐԱՆՆԵՐ

Ընդհանուր իրավասության դատարանների համակարգը կառուցելիս օրենսդիրը փորձել է դատարաններն առավելապես մոտեցնել բնակչությանը, ապահովել արդարադատության մատչելիությունը, դատարանների տարածքային առավել հասանելիությունը:



Հայաստանում որպես ընդհանուր իրավասության դատարաններ հանդես են գալիս Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզային դատարանները: Թվով դրանք փասնյոթն են: Յուրաքանչյուր մարզում գործում է առաջին աստիճանի մեկ դատարան, որի դատական փարածքը փվյալ մարզի փարածքն է: Բացառություն են Արարատի և Վայոց ձորի մարզերը, որոնցում գործում է մեկ ընդհանուր դատարան: Դատավորների թիվը կախված է փարածքի բնակչության և գործերի քանակից:

**Ընդհանուր իրավասության դատարանների լիազորությունները:** Այս դատարանները քննում են դատական բոլոր գործերը, բացառությամբ վարչական դատարանի իրավագործությանը վերապահված գործերի: Այսպիսով՝ ընդհանուր իրավասության դատարանն իր դատական տարածքում քննում է քաղաքացիական և քրեական բոլոր գործերը: Սակայն այս դատարանը քրեական գործերով իրականացնում է նաև մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն: Օրինակ՝ օրենքով սահմանված կարգով լուծում է կալանավորման, բնակարանի խուզարկության թույլտվության, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հարցեր:

Ընդհանուր իրավասության դատարանը գործը քննում է միանձնյա: Այդ դատարանի գործունեությունը ղեկավարում և կազմակերպում է դատարանի նախագահը: Նա պարտավոր է խստիվ պահպանել դատավորների անկախության սկզբունքը:

**Ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ վերաքննիչ դատարաններում:** Օրենքով սահմանված վերաքննիչ բողոքարկման ժամկետն անցնելու կամ դատավարության մասնակցի կողմից այն առանց հարգելի պատճառների բաց թողնելու դեպքում այդ դատական ակտը չի կարող բողոքարկվել Վճռաբեկ դատարանում:

### 3. ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

**Մասնագիտացված դատարան:** Դատարանը համարվում է մասնագիտացված, եթե նա քննում և լուծում է օրենքով իր իրավագործությանը վերապահված հատուկ գործերը: Ընդհանուր դատարաններն այդպիսի գործեր քննել չեն կարող: Աշխարհում առավել տարածված են զինվորական, տնտեսական (առևտրային), անչափահասների, վարչական գործերով մասնագիտացված դատարանները: Այդ դատարանների ստեղծումն ունի երկու շարժառիթ՝ ընդհանուր դատարանների բեռնաթափումը և դատավորների նեղ մասնագիտացումը, ինչը բարձրացնում է ձեռնահաստիքյան աստիճանը: Արդյունքում բարձրանում է նաև գործերի քննության և լուծման որակը: Հայաստանի դատական համակարգում մասնագիտացված է վարչական դատարանը: Այս դատարանը քննում և լուծում է օրենքով իր իրավասությանը վերապահված վարչական գործերը: Որևէ այլ դատարան նման գործեր քննել չի կարող:

Վարչական դատարանը հանրապետությունում մեկն է և որպես մասնագիտացված դատարան առաքելություն ունի առաջին ատյանի կարգով ըստ էության քննել և լուծել օրենքով նախատեսված բոլոր վարչական գործերը:

**Վարչական գործ:** Այս գործի առանձնահատկությունն այն է, որ վեճի կողմերից մեկը գործադիր իշխանության կամ տեղական ինքնակառավարման մարմին է: Օրինակ՝ քաղաքացու և գյուղապետարանի միջև առաջացել է վեճ՝ քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական հողամասի առիթով: Գյուղապետարանը կայացրել է որոշում՝ քաղաքացու հողամասի հարկերը չմուծելու պատճառով հօգուտ գյուղապետարանի օտարելու մասին: Քաղաքացին պետք է դիմի վարչական դատարան:

**Վարչական դատարանի կառուցվածքը:** Վարչական դատարանը միասնական կառույց ունեցող դատարան է՝ կազմված դատարանի նախագահից և 19 դատավորներից: Այն առանձին կառուցվածքային միավորներ չունի:

Վարչական դատարանի դատական տարածքը Հայաստանի Հանրապետության տարածքն է: Վարչական դատարանի կենտրոնական նստավայրը գտնվում է Երևան քաղաքում: Որպեսզի դատարանը մոտ լինի բնակչությանը, օրենքը սահմանում է, որ վարչական դատարանն ունենա այլ նստավայրեր մարզերում:

Վարչական դատարանի վճիռները վերաքննության ենթակա չեն: Դրանք կարող են բողոքարկվել միայն վճռաբեկության կարգով, այսինքն՝ վարչական գործերով վարչական դատարանի դատական ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը կարող է ստուգել միայն Վճռաբեկ դատարանը:

**Վարչական դատարանում գործերի քննության դատական կազմը:** Վարչական դատարանում գործերն առաջին անգամ ըստ էության քննվում են միանձնյա: Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում որոշակի բարդ բնույթի գործեր առաջին անգամ ըստ էության քննվում են կոլեգիալ:

Եթե վարչական գործն ըստ էության լուծող դատական ակտը բեկանվել է Վճռա-

բեկ դատարանում, ապա այդ գործը վարչական դատարանում քննվում է կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով:

**Մտորումներ:** *Ճիշտ եք համարում դատական գործերի միանձնյա քննությունը: Արդյո՞ք արդարադատության շահերը չեն թելադրում բոլոր գործերը քննել կոլեգիալ:*

#### 4. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԳԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱԿՏԵՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Յուրաքանչյուր գործ առաջին անգամ քննվում և լուծվում է առաջին ատյանի դատարանում: Եթե վճիռը կամ դատավճիռը դատավարության կողմերը չեն բողոքարկել, ապա այն մտնում է օրինական ուժի մեջ: Վերաքննիչ բողոքի առկայության դեպքում գործը ենթակա է պարտադիր քննության վերաքննիչ դատարանում: Այնուհետև վճիռը կամ դատավճիռը կարող է վերանայվել Վճռաբեկ դատարանում:

**Գատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:** Գատարանի կայացրած ակտերը օրինական ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո: Վերաքննիչ բողոք բերելուց հետո դատական այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելը կասեցվում է:

Մտնելով օրինական ուժի մեջ դատական ակտերը սկսում են գործել ամբողջովին և դրսևորել իրենց բոլոր որակները՝ **անհերքելիությունը, բացառիկությունը, անվիճարկելիությունը, կատարողականությունը, պարտադիրությունը:**

**Մտորումներ:** *Օգտագործելով իրավական նորմերի լեզվական մեկնաբանման եղանակը՝ փորձե՞ք մեկնաբանել ընդգծված հասկացությունները՝ դրանցից բխեցնելով նաև իրավական հետևանքները:*

Օրենքը սահմանում է դատական ակտի՝ օրինական ուժի մեջ մտնելու կանոնները: Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո: Այս կանոնից նախատեսված են որոշ բացառություններ: Օրինակ՝ ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերով ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:


#### Հարցեր

1. Ո՞ր դատարանն են անվանում առաջին ատյանի դատարան:
2. Ի՞նչ հատուցվածք ունի առաջին ատյանի դատարանների համակարգը:
3. Որո՞նք են ընդհանուր իրավասության դատարանները:
4. Ի՞նչ է վարչական դատարանը, և ի՞նչ գործեր է այն քննում:
5. Ի՞նչ կազմով է վարչական դատարանը քննում վարչական գործերը:
6. Ի՞նչ է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:
7. Որո՞նք են դատական ակտի ուժի մեջ մտնելու օրենսդրական կանոնները:

## ԴԱՍ 12. ՎԵՐԱՔՆՆԻՉ ԵՎ ՎՃՈՒՐԵԿ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ

### 1. ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

**Վերաքննիչ դատարանները վերանայում են առաջին ատյանի դատարանների դատական ակտերը:** Վերաքննիչ դատարանը ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերը վերանայելու միջոցով ստուգում է դրանց արդարացիությունը, օրինականությունը և հիմնավորվածությունը: Վերաքննության հնարավորությունը բարձրացնում է ստորին ատյանի դատարանների պատասխանատվությունն իրենց կայացրած ակտերի համար: Բացի այդ, նվազագույնի են հասցվում դատական սխալները: Հետևաբար, վերաքննիչ դատարաններն ավելի արդյունավետ են դարձնում մարդու իրավունքների դատական պաշտպանությունը:



Հայաստանում գործում են **վերաքննիչ քաղաքացիական դատարանը** և **վերաքննիչ քրեական դատարանը**: Դրանց դատական տարածքը ՀՀ ամբողջ տարածքն է, իսկ նստավայրը գտնվում է Երևանում:

Վերաքննիչ բողոքը, որպես կանոն, բերվում է դատարանի՝

օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի դեմ: Վերաքննիչ դատարանը վերանայում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը: Միջանկյալ դատական ակտերը վերաքննիչ դատարանը վերանայում է միայն օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում:

**Վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք:** Առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն՝

- ա) գործին մասնակցող անձինք,
- բ) դատախազը՝ օրենքով նախատեսված դեպքերում,
- գ) գործի քննությանը չմասնակցած այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող ակտ:

Վերաքննիչ բողոք բերելիս այդ անձինք պետք է պահպանեն վերաքննիչ բողոք բերելու ժամկետները: Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը: Բացառություն են այն դեպքերը, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի: Երբ գործն ըստ էության լուծող դատական ակտերը հրապարակման պահից դատավորի կողմից հայտարարվել են օրինական ուժի մեջ մտած, այդ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

Առաջին աստանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը կարող է ընդունվել քննության բացառիկ դեպքերում: Օրինակ՝ երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, կամ առկա են նոր երևան եկած, կամ նոր հանգամանքներ:

Վերաքննիչ բողոք բերող անձինք պետք է ունենան վերաքննիչ բողոք բերելու հիմքեր: Օրենքով սահմանված այդ հիմքերից է **դատական սխալը**, այսինքն՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, ինչպես նաև **նոր երևան եկած** կամ **նոր հանգամանքները**:

Քաղաքացիական գործերով նախատեսված են վերաքննիչ բողոք բերելու սահմանափակումներ: Եթե կողմերն առաջին աստանի դատարանում կնքել են վերաքննության իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնություն, ապա այդպիսի կողմի ներկայացրած վերաքննիչ բողոքը ենթակա է քննության միայն մյուս կողմի համաձայնության դեպքում: Բացի այդ, գույքային պահանջով քաղաքացիական գործերով վերաքննիչ բողոքը ենթակա է քննության, եթե տվյալ գործով վեճի առարկայի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը:

**Վերաքննիչ դատարանում գործի քննության կարգը և որոշումները:** Վերաքննիչ դատարանում գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված բողոքները քննվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով: Այլ դատական ակտերի դեմ բերված բողոքները վերաքննիչ դատարանի դատավորը քննում է միանձնյա:

Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը կարող է մերժել վերաքննիչ բողոքը, ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարել վերաքննիչ բողոքը, քաղաքացիական գործով հաստատել կողմերի հաշտության համաձայնությունը և այլն:

## 2. ՎՃՈՎՐԵԿ ԴԱՏԱԲԱՆ

**Վճռաբեկ դատարանը բարձրագույն դատական մարմին է:** Այն բողոքի հիման վրա վերանայում է ստորին դատարանների դատական ակտերը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից: Սակայն, ի տարբերություն վերաքննիչի, այս դատարանը սահմանափակվում է հետևյալ հարցերի պարզաբանմամբ. արդյոք ճիշտ է կիրառվել օրենքը, գործի քննության կարգի խախտում թո՞ւյլ է տրվել, թե՞ ոչ: Վճռաբեկ դատարանի նպատակն է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը: «Բարձրագույն մարմին» արտահայտությունը չի ենթադրում կառավարչական ենթակայություն, այլ որ նրա որոշումները վերջնական են:

**Վճռաբեկ դատարանի կառուցվածքը:** Վճռաբեկ դատարանը կազմված է Վճռաբեկ դատարանի նախագահից, պալատների նախագահներից և դատավորներից: Վճռաբեկ դատարանն ունի երկու պալատ.

- քրեական պալատ,
- քաղաքացիական և վարչական պալատ:

Վճռաբեկ դատարանի պալատում գործերը քննվում են կոլեգիալ: Դատարանի նստավայրը գտնվում է Երևանում, իսկ դատական տարածքը ՀՀ տարածքն է:

**Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք:** Վճռաբեկ դատարանում գործի քննության հիմքը վճռաբեկ բողոքի առկայությունն է: Վճռաբեկ դատարանում բողոքարկելու իրավունք ունեն՝ ա) գործին մասնակցող անձինք, բ) գլխավոր դատախազը և նրա տեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Անձը չի կարող դատական ակտերը բողոքարկել Վճռաբեկ դատարանում, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել այդ ակտը վերաքննիչ դատարանում: Բացառություն են կազմում այն ակտերը, որոնք վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չեն: Բացի այդ, անձը կարող է վճռաբեկ բողոք բերել դատական ակտի՝ միայն իր համար անբարենպաստ մասի դեմ:

**Վճռաբեկ բողոք բերելու հիմքերը:** Այդպիսի հիմքեր են. ա) գործին մասնակցող անձանց նյութական կամ դատավարական իրավունքների խախտումը, բ) նոր երևան եկած կամ նոր հանգամանքները: Հետևաբար, բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում պետք է նշի, թե որոնք են գործի վերանայման հիմքերը:

**Գործին մասնակցող անձանց նյութական կամ դատավարական իրավունքների խախտումն** այն դեպքերն են, երբ ստորին ատյանի դատարանները սխալ են կիրառել, օրինակ՝ քրեական օրենսգրքի կամ էլ քրեական դատավարության օրենսգրքի նորմերը, և դրանով իսկ խախտվել են ամբաստանյալի իրավունքները: Օրինակ՝ գործի հիմքում դրված է օրենքի խախտումով ձեռք բերված ապացույցը կամ, ասենք, ամբաստանյալին թույլ չեն տվել ասել իր վերջին խոսքը և այլն:

**Նոր երևան եկած հանգամանքը** գործի հետ առնչվող այնպիսի հանգամանք է, որը գործն առաջին ատյանի դատարանում քննելիս հայտնի չի եղել դատարանին: Օրինակ՝ քաղաքացիական գործն առաջին ատյանում քննելիս պատասխանողը



*Միջնադարում անարդար դատավորին  
մաշկագերծ էին անում*

դատարանում բացատրություն էր տվել, որ ինքն իսկապես պայմանագիր է կնքել հայցվորի հետ, բայց պայմանագրի գումարը 50.000 դրամ էր, այլ ոչ թե 500.000: Դատարանը նշանակել էր ձեռագրաբանական փորձաքննություն, և փորձագետը եզրակացություն էր տվել, որ պայմանագրի վրա կեղծումներ չկան: Սակայն մեկ տարի հետո պարզվել է, որ տվյալ փորձագետը տվել է մի քանի կեղծ եզրակացություն, որոնցից մեկն էլ այդ պայմանագրին էր վերաբերում:

**Վճռաբեկ բողոք բերելու ժամկետները:** Քրեական գործերով վճռաբեկ բողոքը կարող

է բերվել վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ՝ այդ ակտը ստանալու պահից 15-օրյա ժամկետում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Քաղաքացիական և վարչական գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտը բողոքարկելու դեպքերի: Միջանկյալ դատական ակտը կարող է բողոքարկվել այն ստանալու պահից 15-օրյա ժամկետում, եթե օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:

**Վճռաբեկ դատարանում գործի քննության կարգը և որոշումները:** Գործի քննության ժամանակ Վճռաբեկ դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Վարույթ ընդունված վճռաբեկ բողոքները Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը քննում է պալատի նախագահի և առնվազն հինգ դատավորի կազմով, իսկ քրեական պալատը՝ պալատի նախագահի և առնվազն երեք դատավորի կազմով: Վճռաբեկ դատարանի որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է նիստին ներկա դատավորների մեծամասնությունը:

Վճռաբեկ դատարանը, քննելով գործը, կայացնում է որոշում: Նրա որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

**Լրացուցիչ նյութ:** Գատավորը և Սահմանադրական դատարանի անդամը չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իրենց պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

#### Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է վերաքննիչ դատարանը:
2. Ովքե՞ր իրավունք ունեն վերաքննիչ բողոք բերել:
3. Ի՞նչ ժամկետներում է հնարավոր վերաքննիչ բողոք բերել:
4. Որո՞նք են վերաքննիչ բողոք բերելու հիմքերը:
5. Ի՞նչ է Վճռաբեկ դատարանը, և ի՞նչ կառուցվածք ունի այն:
6. Ովքե՞ր իրավունք ունեն վճռաբեկ բողոք բերելու:
7. Որո՞նք են վճռաբեկ բողոք բերելու հիմքերը:
8. Որո՞նք են վճռաբեկ բողոք բերելու ժամկետները:

**Ինտերնետային աղբյուրներ:** Այցելե՛ք [www.court.am](http://www.court.am) կայքը և ծանոթացե՛ք վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների գործունեությանը, կառուցվածքին, ընդունած որոշումներին:

### ԴԱՍ 13. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ


«Արդարադատություն» նշանակում է «արդար դատ», դատարանի գործունեություն, որն իրականացվում է իրավունքին ու արդարությանը համապատասխան: **Արդարադատությունը իրականացնում է միայն դատարանը՝ օրենսդրական պահանջների ու ընթացակարգի խստագույն պահպանմամբ, և ուղղված է դատական գործեր քննելուն և լուծելուն:**

Ոչ մի այլ պետական մարմին կամ կազմակերպություն իրավագոր չէ իրականացնելու արդարադատություն: Օրինակ՝ ոչ ոք չի կարող հանցագործության համար մեղավոր ճանաչվել և ենթարկվել պատժի այլ կերպ, քան դատարանի դատավճռով: Դատարանի լիազորությունների յուրացումը որևէ մեկի կողմից պատժվում է:

#### **Արդարադատությունն իրականացվում է օրենքով սահմանված եղանակներով:**

Դատարաններն արդարադատություն իրականացնելիս քննում և լուծում են սահմանադրական, քաղաքացիական, վարչական և քրեական գործեր: Օրինակ՝ քրեական արդարադատությունն արտահայտվում է դատական նիստերում հանցանքների վերաբերյալ գործեր քննելու, հանցանք կատարած անձանց մեղավոր ճանաչելու, նրանց նկատմամբ պատիժ նշանակելու, հանցանք չկատարած անձանց անպարտ ճանաչելու և արդարացնելու միջոցով:

**Արդարադատության սկզբունքները ելակետային, առանցքային դրույթներ են, որոնք դրված են դատավարական գործունեությունը կարգավորող օրենքների հիմքում:** Դրանց օրենսդրական ամրագրումը, ինչպես նաև պահպանումը դատական գործունեության ընթացքում նպատակամղված են դատարանների անկողմնակալության, անկաշառության, անկախության ապահովմանը, դատավարության բոլոր մասնակիցների իրավունքների երաշխավորմանը:



«Եվ արդ, այս ամենից ելնելով, հույժ կարևոր է, որ դատավորները լինեն իմաստուններ՝ ուսման և հանգստի մեջ, որպեսզի Աստուծո կամքը կատարողներ լինեն և՛ հոգևորների, և՛ մարմնավորների համար, որպեսզի դատաստանները ճշմարիտ կատարեն, նաև լինեն քարեմիտներ, որ ոչ երես առնեն և ոչ էլ հարկ համարեն ամաչել»:

Մ. Գոշ «Գիրք դատարանի»

**Մտորումներ:** Դատավորների անկողմնակալության, անկախության ապահովման գործում կարևոր դեր են խաղում դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները և նրանց նշանակման կարգը: Դրանք կոչված են լուծելու երկու խնդիր: Առաջին՝ նպաստել, որպեսզի դատավոր դառնան արհեստավարժ և ազնիվ մարդիկ, երկրորդ՝ ապահովել նրանց անկախությունը նշանակողից: Ի՞նչ պահանջներ կատաջարկեիք դատավորների թեկնածուներին և ինչո՞ւ: Փորձեք գրել փոքրիկ շարադրանք «Ժնչպիսի՞ն պետք է լինի դատավորը» թեմայով:

**Գատական պաշտպանության իրավունք:** Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Այդ իրավունքը յուրաքանչյուր մարդու համար, ում իրավունքը խախտվել է, կամ ում մեղադրում են հանցանքի կատարման մեջ, ապահովում է իր գործի արդարացի քննություն դատարանի կողմից:

**Արդարադատությունն իրականացվում է օրենքով նախատեսված վարույթային ընթացակարգով:** Այդ ընթացակարգերը կարծես թե նման են թատերականացված, երբեմն ավելորդ թվացող հանդիսավորությունների: Սակայն այդ գործողությունները կատարվում են դատական որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը երաշխավորելու համար: Հենց դրանով է կարևոր արդարադատության՝ որպես գործունեության, մանրամասն կարգավորումն օրենքով: Օրենքները կարգավորում են նիստերի նախապատրաստման և անցկացման բոլոր էական հարցերը, մասնավորապես՝ դատավորների կազմը, նիստերին մասնակցող անձանց շրջանակը և նրանց իրավունքներն ու պարտականությունները, դատավարական գործողությունների կատարման և՛ հերթականությունը, և՛ ամեն մեկի կարգը, դատական որոշումների տեսակներն ու դրանց կայացման կարգը և այլն:

Գատարանի կայացրած որոշումները համարվում են անօրինական և ենթակա են բեկանման կամ փոփոխման, եթե դատարանը խախտել է օրենքը:

**Գատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին:** Ոչ օրենսդիր մարմինը, ոչ կառավարությունը և ոչ էլ նախագահն իրավունք չունեն միջամտելու դատարանի գործունեությանը կամ որևէ ձևով ազդեցություն ունենալու դատարանի որոշումների վրա: Ավելին՝ արդարադատությունն իրականացնելիս դատարանը զերծ պետք է լինի անհատների, կազմակերպությունների, կուսակցությունների, ՋԼՄ-ների և ընդհանրապես որևէ մարմնի կամ անձի ազդեցությունից: Գատավորը ոչ մի պարտավորություն չունի բացատրություններ տալու իր կայացրած որոշումների վերաբերյալ: Գատարանը ղեկավարվում է միայն օրենքով: Գատարանի կողմից կայացրած որոշումները պետք է լինեն օրինական, արդարացի, հիմնավորված: Որևէ մեկի միջամտությունն արդարադատությունն իրականացնելու դատավորի գործունեությանն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

**Մտորումներ:** Որպես կանոն, ցանկացած վեճում նրա կողմերը փորձում են ամեն գնով հասնել հաղթանակի: Վեճն արդար լուծելու երաշխիքը դատարանի և դատավորի անկախությունն ու անկողմնակալությունն է: ՀՀ Սահմանադրությունն արգելում է դատավորին զբաղվել այլ գործունեությամբ կամ քաղաքականությամբ: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ: Ինչպե՞ս դրանք կարող են ազդել դատավորի անկախության և անաշտության վրա: Ի՞նչ կլինեք, եթե դատավորներն ունենային այլ պաշտոններ:

**Բոլորը հավասար են օրենքի ու դատարանի առջև:** Բոլորն առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով: Դատարանները նախապատվություն չպետք է տան ինչ-որ մարմինների, անձանց, դատավարությանը մասնակցող կողմերի՝ ելնելով նրանց պետական, սոցիալական, սեռային, ռասայական, ազգային, լեզվական հատկանիշներից, քաղաքական պատկանելիությունից կամ ծագումից, գույքային և պաշտոնական դրությունից, բնակության վայրից, ծննդավայրից, համոզմունքներից և օրենքով չնախատեսված այլ հիմքերից:

**Դատարանում գործի քննությունը մրցակցային է:** Անկախ և անկողմնակալ դատարանի առջև, որը գործը լուծողն է, հանդես եկող կողմերը փաստարկում են իրենց դիրքորոշումը: Նրանք իրավահավասար են, այսինքն՝ իրենց իրավունքների պաշտպանության համար օժտված են հավասար իրավունքներով:



**Ֆեմիդան** արդարադատության համընդհանուր ճանաչում գտած խորհրդանիշն է: Այն հին հունական «իրավունքի և օրինական կարգի» աստվածուհին էր: Արդի Ֆեմիդան, որպես խորհրդանիշ, վեհ, արժանապատիվ կին է, որը հազել է մանրիս, չախ շեռքում պահում է կշեռքը, աջում՝ սուրբ, իսկ աչքերը փակված են կապուցով: **Կշեռքը** խորհրդանշում է չափը և արդարությունը: Արդարադատության կշեռքով չափվում են բարին ու չարը, մեղավորությունն ու անմեղությունը: Արդարադատությունը ենթադրում է արարքի նշգրիտ կշռում: **Սուրբ** խորհրդանշում է հոգևոր ուժը, հաստիքները: Ֆեմիդայի շեռքում այն ազդարարում է պատիժ, հաստիքներ, նախազգուշացում: **Աչքակապն** աստվածուհու աչքերին խորհրդանշում է անաչառությունը: Դատարարը չի նայում վիճող կողմերին, նրանց գույքային և սոցիալական տարբերություններին, այլ լսելով երկու կողմերին՝ փորք է փայխ փաստերին և նշմարությանը: **Մանրիսն** հանդիսավոր ծիսակարգային հագուստ է, որ խորհրդանշում է հոգևորությունը, արարողակարգը:

**Դատարանում գործի քննությունը հրապարակային է և բաց:** Դատական նիստին կարող է ներկա գտնվել 16 տարին լրացած յուրաքանչյուր անձ: Հրապարակայնությունը հասարակական հսկողության տակ է դնում դատավարության մասնակիցների գործողությունները: Հանրությունը, լինելով ներկա դատական նիստերին, գնահատում է դատարանի գործունեությունը: Դատարանի թույլ տված ամեն մի խախտում անմիջականորեն նկատվում է ներկաների կողմից: Հրապարակայնությունը նաև երաշխավորում է դատավորի անկախությունը, իսկ ամբաստանյալին՝ առանց կաշկանդվելու արտահայտել իր դիրքորոշումը: Այն ունի մեծ դաստիարակչական նշանակություն ներկաների համար:

Հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ դրա մի մասում կարող է արգելվել: Օրինակ՝ եթե դմբաց նիստը սպառնում է ընտանեկան գաղտնիքի հրապարակմանը, ապա դատավարության կողմի միջնորդությամբ դատարանը կարող է անցկացնել դմբակ նիստ: Սակայն դա-

տարանի վերջնական որոշումները բոլոր դեպքերում հայտարարվում են հրապարակայնորեն: Հրապարակայնության անհիմն սահմանափակումն օրենքի էական խախտում է և հիմք դատական վերջնական որոշման բեկանման համար:

**Գատավարության լեզուն հայերենն է:** ՀՀ-ում պետական լեզուն հայերենն է: Հետևաբար, պետությունը պարտավոր է իրականացնել պետական հոգատարություն հայոց լեզվի՝ ըստ ամենայնի գարգացման նկատմամբ և ապահովել նրա գործածությունը պետական ու հասարակական մարմիններում, մշակութային, կրթադաստիարակչական և այլ կազմակերպություններում ու հիմնարկներում: Դրան համապատասխան օրենքը սահմանում է, որ դատավարությունը տարվում է հայերեն: Գատական գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց մախրնտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Թարգմանիչ կարող է հանդես գալ գործով չշահագրգռված այն անձը, ով ազատորեն տիրապետում է դատավարության լեզվին և այն լեզվին, որից կատարվում է թարգմանությունը: Թարգմանիչ է համարվում նաև համրի նշանները հասկացող և խուլի հետ նշաններով բացատրվելու ունակ անձը: Օրենքով նախատեսված դեպքերում գործին մասնակցող և հայերենին չտիրապետող անձանց համար թարգմանչի ծառայություններն ապահովվում են պետության հաշվին:

**Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու իրավունք:** Այս իրավունքն ունի բարոյական հիմքեր: Ոչ ոք պարտավոր չէ վկայել (ցուցմունք տալ) իր, ամուսնու և մերձավոր ազգականների դեմ: Օրինակ՝ անձը, ում քրեական գործը քննող մարմինն առաջարկում է հայտնել կամ տրամադրել հանցանք գործելու մեջ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների մեղավորությունը հիմնավորող տեղեկություններ կամ նյութեր, իրավունք ունի հրաժարվել այդ պահանջները կատարելուց: Մերձավոր ազգականների շրջանակի մեջ մտնում են ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ եղբայրները և քույրերը, պապը, տատը, թոռները, ամուսնու ծնողները, զավակի ամուսինը:

**Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը:** Ամեն մի գործի վարույթի ընթացքում թույլատրվում է օգտագործել միայն այն փաստական տվյալները, որոնք ձեռք են բերվել օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ: Օրենքի խախտմամբ ձեռք բերված են այն ապացույցները, որոնք, օրինակ՝ ձեռք են բերվել բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ:

### Հարցեր

1. Ի՞նչ է արդարադատությունը, և որո՞նք են դրա սկզբունքները:
2. Ի՞նչ դեր է խաղում մրցակցության սկզբունքը դատավարությունում:
3. Ի՞նչ նշանակություն ունի հրապարակայնությունը գործի քննության համար:
4. Ո՞ր դեպքերում կարող է սահմանափակվել գործի հրապարակային քննությունը:
5. Ի՞նչ նշանակություն ունի դատավարության լեզվի սկզբունքը:
6. Ովքե՞ր և ինչո՞ւ են ազատվում ցուցմունք տալու պարտականությունից:
7. Գատական գործի վարույթում ո՞ր ապացույցների օգտագործումն է արգելվում:

## ԳԱՍ 14. ՓԱՍՏԱԲԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

### 1. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

**Յուրաքանչյուր որ ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք:** Քանի որ իրավական հարցերում ամեն ոք չէ, որ կարող է կողմնորոշվել, որովհետև դա իմացության հատուկ ոլորտ է, մարդը պետք է հնարավորություն ունենա ստանալու իրավաբանական օգնություն: Այդ իրավունքի երաշխիքը պետությունից անկախ գործող փաստաբանական ծառայությունն է:

**Փաստաբանական ծառայությունը ոչ կառավարական հատուկ կազմակերպություն է, որն իրավաբանական օգնության միջոցով իրականացնում է մարդու իրավունքների խախտումների կանխումը, դրանց պահպանման համար երաշխիքների ստեղծումը, կենսագործման ճանապարհին եղած արգելքների վերացումը:**

Իրավական օգնությունը շատ անհրաժեշտ է հատկապես քաղաքացիների ու կազմակերպությունների համար: Կարող եք մտածել, որ փաստաբանն անհրաժեշտ է միայն դատարանում: Իհարկե, դա այդպես է, բայց ոչ ամբողջովին: Ցանկալի է, որ փաստաբանի ծառայությունից օգտվեք շատ ավելի վաղ՝ մինչև դատարան հասնելը:

Եթե խախտվել են ձեր իրավունքները, և դուք անորոշության մեջ եք, լավ փաստաբանը կօգնի ձեզ պաշտպանել դրանք: Եթե ձեր գործը հասել է դատարան, և դուք ստիպված եք մյուս կողմի հետ ձեր հարաբերությունները պարզել դատարանում, ապա առանց փաստաբանի օգնության դուք կարող եք գործը լրիվ տանուլ տալ, նույնիսկ եթե ճիշտ լինեք (օրինակ՝ անհրաժեշտ ապացույցներ չհավաքելու պատճառով): Իհարկե, փաստաբանական ծառայությունները վճարովի են, սակայն պետք է հաշվի առնել նաև ասացվածքը. «Ժլատը կրկնակի է վճարում»: Բացի այդ, օրենքով սահմանված դեպքերում փաստաբանական օգնությունն անվճար է:

### 2. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

**Փաստաբանական պալատը փաստաբաններին միավորող անկախ, ինքնակառավարվող կազմակերպություն է:** Այն կոչված է ապահովել նրանց արդյունավետ գործունեությունը, իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը: Հաստատանում կարող է կազմավորվել միայն մեկ փաստաբանական պալատ, որին պետք է անդամակցեն բոլոր փաստաբանները:

**Փաստաբան է այն անձը, ով ստացել է փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր, փաստաբանների պալատի անդամ է և տվել է երդում:** Փաստաբանն իրավական հարցերով անկախ խորհրդատու է: Նա իրավունք ունի ներկայացնելու կամ պաշտպանելու վստահողի շահերը հանրային մարմիններում, ոչ պետական կազմակերպություններում:

Փաստաբանական գործունեությամբ զբաղվելու համար անձը պարտավոր է

դառնալ Փաստաբանների պալատի անդամ և ունենալ արտոնագիր, որը տալիս է Փաստաբանների պալատը: Արտոնագիր կարող է ստանալ անձը, ով ունի բարձրագույն իրավաբանական կրթություն կամ իրավաբանի գիտական աստիճան և իրավաբանի առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ, հանձնել է որակավորման քննություն և ստացել է համապատասխան վկայագիր:

**Հանրային պաշտպանությունը:** Փաստաբանական ծառայության համար վճարի չափն ու կարգը որոշվում են փաստաբանի և վստահորդի միջև կնքված գրավոր պայմանագրով: ՀՀ փաստաբանների պալատն ունի Հանրային պաշտպանի գրասենյակ, որը կազմված է գրասենյակի ղեկավարից, նրա երկու օգնականներից և հանրային պաշտպաններից: Հանրային պաշտպանները կոչված են պետության կողմից հատկացվող միջոցների հաշվին անվճարունակ անձանց ցույց տալ իրավաբանական օգնություն քաղաքացիական և քրեական գործերով: Օրինակ՝ ալիմենտի գանձման վերաբերյալ գործերով:

### 3. ՓԱՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

**Փաստաբանն իրականացնում է իրավաբանական խորհրդատվություն, տալիս է բացատրություններ իրավական հարցերով:** Սովորաբար մարդիկ դիմում են փաստաբանին, երբ չգիտեն, թե ինչպես ճիշտ վարվել, ինչպես ապահովագրել իրենց գույքն ապագայի «փորձանքներից», երբ ուզում են իմանալ, թե արդյոք իրենց գործողությունները չեն հակասում օրենքներին, երբ դժգոհ են իրենց պայմանագրային գործընկերներից և գտնում են, որ նրանք ճիշտ չեն: Մի խոսքով, երբ անհրաժեշտ է տեղեկություն իրավունքի հարցերով: Հենց դրա համար է փաստաբանը, որը վստահորդի դիմումով իրականացնում է խորհրդատվություն:

Լինում են դեպքեր, երբ կիրառվող օրենքները հայտնի են, սակայն դրանք հասկացվում են տարբեր կերպ: Օրինակ՝ վնաս պատճառելուց բխող պարտավորություններից մեկն էլ «առավել վտանգի աղբյուրով» պատճառած վնասն է: Ի՞նչ է նշանակում դա: Ահա այս դեպքում փաստաբանը վստահորդին տալիս է մեկնաբանություններ:


Ցավոք, ոչ բոլորն է, որ տիրապետում են օրենսդրական ահռելի նյութին, թեկուզ հենց դրա ֆիզիկական իմաստով, այսինքն՝ չունեն դրանց տեքստերը: Բայց հաճախ վիճող կողմերը բանավոր վկայակոչում են օրենքները: Որպեսզի «հակառակորդին» ապացուցեք, որ նա անօրինական է գործում, փաստաբանը կարող է ձեզ տալ նաև գրավոր խորհրդատվություն՝ քաղվածքներ օրենսդրությունից:

**Փաստաբանը կազմում է դիմումներ, բողոքներ և այլ իրավական փաստաթղթեր:** Այդպիսի խնդրանքով նրան դիմում են մարդիկ, ովքեր գտնում են, որ իրենց իրավունքները խախտված են:



Եթե ձեր հուզմունքը շարադրեք դիմումի կամ բողոքի մեջ, ապա դա դժվար թե օգնի ձեզ: Անհրաժեշտ է իրավաբանորեն հիմնավոր փաստարկներ և ապացույցներ: Փաստաբանը, օրինակ, կազմելով հայցադիմում, կօգնի դուրս թողնել գործին չվերաբերող տեղեկատվությունը: Նա օգնում է փաստարկները համակարգել, հստակ և որոշակի շարադրել պահանջը, որն ուղղված է պատասխանողին: Նա պարտադիր պետք է լուծի ապացույցների, ինչպես նաև հայցադիմումին կից փաստաթղթերի հարցը: Իհարկե, դուք անձամբ կարող եք փորձել կազմել փաստաթուղթը (օրինակ՝ պայմանագիրը, կտակը և այլն): Սակայն հետագայում վեճի դեպքում կպարզվի, որ հնարավոր չէ լրիվ պաշտպանել ձեր իրավունքը, քանի որ, ասենք, պայմանագրում դուք չեք նախատեսել նախավճարը:

**Փաստաբանն իրականացնում է ներկայացուցչություն դատարանում և այլ կազմակերպություններում:** Դատավարական կարգերը, դրանց նրբությունները գիտեն միայն իրավագետները: Դատավարական իրավունքների խախտումները (օրինակ՝ դատարանը հայցվորին հնարավորություն չի տվել առարկել պատասխանողին վերջինիս ելույթից հետո) կարող են հանգեցնել ջանքերի փլուզման, բերել պարտության դատարանում: Սովորական մահկանացուները հաճախ չգիտեն այդ կանոնները կամ էլ դրանց չեն տալիս մեծ նշանակություն: Բացի այդ, դատական գործընթացում շատ են իրավական եզրույթները, որոնք անհասկանալի են, ինչպես օտար լեզուն: Նման դեպքերում անհրաժեշտ է փաստաբան, որպեսզի ձեզ օգնի կողմնորոշվել դատական «խորամանկ խաչմերուկներում» և հաղթել:



**Մատրումներ:** Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էր Մ. Գոչը այդպես մտածում: Կարելի՞ է արդյոք նրա մտքեցումն ընդունելի համարել մեր օրերում:

**Փաստաբանը մասնակցում է նախաքննությանը և դատական քննությանը քրեական գործերով:** Այս ոլորտում նրա մասնակցությունը կարող է լինել տարբեր կարգավիճակներում՝ տուժողի և այլ անձանց ներկայացուցիչ, պաշտպան:

**Պաշտպանն** այն փաստաբանն է, որ քրեական գործով վարույթում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրան ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով: Կան դեպքեր, երբ պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, իսկ մնացածում պաշտպան հրավիրելը մեղադրյալի իրավունքն է: Պաշտպանի մասնակցությունը սկսվում է դեռ գործի նախնական քննության պահից: Այս գործընթացում նրա խնդիրներն են՝ օգնել պաշտպանյալին իրավական հարցերով և դիտելով քննության ընթացքը՝ վեր հանել օրինականության խախտումները, հասնել դրանց վերացման: Պաշտպանի խնդիրն է նաև իր պաշտպանյալին ներկայացնել դրական լույսի տակ, ուշադրություն հրա-

վիրել նրա դրական կողմերի վրա, հանցագործության պատճառների ու պայմանների վրա: Պաշտպանը գիտի, թե որ հանգամանքները և ինչպես ներկայացնել:

Եթե ամբաստանյալը և նրա պաշտպանը վերցնում են անմեղության և արդարացման ապացուցման ուղղությունը, ապա փաստաբանի դերը բարձրանում է: Այս դեպքում անհրաժեշտ է լրացուցիչ ապացույցների հավաքում և դրանք ներկայացնելու «դատավարական խորամանկություն», որն ամեն մեկին հասու չէ:

#### 4. ՓԱՏԱԲԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԸ

Իրավագետի մասնագիտության յուրահատկությունը բարձր պահանջներ է ներկայացնում նրա կրթական, գործնական և բարոյական որակներին: Իրավագետի առաքելությունն է իրականացնել մարդու իրավունքների, հանրության շահերի պաշտպանության շնորհակալ գործը, լինել իրավունքի և իրական կյանքի գիտակ, բարոյապես կայուն մարդ: Ազնվությունը, անկաշառությունը, սկզբունքայնությունը, քաղաքացիական արիությունը, արդարացիությունը, ցանկացած իրավաբանի, ինչպես նաև փաստաբանի անքակտելի որակներն են: Իրավագետին ներկայացվող այս ընդհանուր պահանջներն ու պատվիրանները փաստաբանական ոլորտում դարձել են օրենսդրական սկզբունքներ կամ մասնագիտական էթիկայի կանոններ: Դրանց մեջ հատկապես կարևոր է փաստաբանների անկախության սկզբունքը:

Փաստաբանի պատշաճ գործունեության անհրաժեշտ պայմանը մասնագիտական անկախությունն է ամեն տեսակ ազդեցություններից, ճնշումներից, ինչպես նաև իր անհատական շահերից: Փաստաբանը պարտավոր է դիմագրավել իր անկախության դեմ ուղղված ամեն մի ոտնձգությանը, դրսևորել արիություն և սկզբունքայնություն մասնագիտական պարտավորությունները կատարելիս, հաստատել իր իրավունքները մինչև վերջ և դրանք արդյունավետորեն ծառայեցնել հայցվորի շահերին: Փաստաբանը դատարանին, այլ պետական մարմիններին, երրորդ անձանց կամ վստահորդին հաճոյանալու համար չպետք է գնա իր անկախությանը դիպչող փոխզիջումների, եթե դրանք չեն համընկնում հայցվորի շահերի հետ և խոչընդոտում են նրան պատշաճ իրավաբանական օգնություն ցույց տալուն:

Փաստաբանը չպետք է զբաղվի իրեն այլ անձանցից նյութական կամ բարոյական կախման մեջ դնող կամ որևէ այլ կերպ փաստաբանի մասնագիտական գործունեության ազատ և անկախ իրականացմանը խոչընդոտող գործունեությամբ:

#### Հարցեր

1. Ի՞նչ է փաստաբանական ծառայությունը:
2. Ո՞րն է փաստաբանության դերը:
3. Ի՞նչ է Փաստաբանական պալատը, և ո՞րն է նրա խնդիրը:
4. Ո՞վ կարող է դառնալ փաստաբան:
5. Ի՞նչ է հանրային պաշտպանությունը, և ո՞րն է դրա խնդիրը:
6. Որո՞նք են փաստաբանական գործունեության հիմնական տեսակները:
7. Ո՞րն է փաստաբանի անկախության սկզբունքի նշանակությունը:

## ԳԱՍ 15. ԳԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### 1. ԳԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

**Դատախազությունն այլ պետական մարմիններից անկախ գործող, միասնական կենտրոնացված համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:** Նրան հանրապետության նախագահի առաջարկությամբ նշանակում է Ազգային ժողովը՝ 6 տարի ժամկետով:

ՀՀ դատախազությունը կազմված է գլխավոր դատախազությունից, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզային դատախազություններից, կենտրոնական զինվորական, ինչպես նաև կայազորների զինվորական դատախազություններից՝ ըստ զինված ուժերի տեղաբաշխման (*տե՛ս www.genproc.am կայքը*):

Դատախազության հիմնական կոչումը մասնակցությունն է քրեական դատավարությանը, այսինքն՝ հանցագործության կապակցությամբ հարուցված գործի վարույթին: Դատախազության առջև դրված խնդիրներն արդյունավետ լուծելու համար այն կազմակերպվում և գործում է յուրահատուկ սկզբունքների հիման վրա:

**Դատախազությունը միասնական կենտրոնացված համակարգ է,** որը ղեկավարում է գլխավոր դատախազը: Նա վերադաս է բոլոր դատախազների նկատմամբ, և նրա հրամանները, ցուցումները պարտադիր են բոլոր դատախազների համար: Կենտրոնացվածության սկզբունքին չի հակասում դատախազի դատավարական ինքնուրույնությունը: Դատախազը՝ որպես դատավարության սուբյեկտ, գործում է օրենսդրությամբ նախատեսված կարգով և իր ներքին համոզմամբ:

**Դատախազության անկախությունն ունի արտաքին կողմ,** այսինքն՝ դատախազությունն անկախ է այլ պետական մարմիններից: Ներքուստ այն կառուցված է ծառայողական ենթակայության սկզբունքի վրա: Դատախազության անկախության երաշխիքներ են՝ դատախազության գործունեությանը միջամտելու անթույլատրելիությունը, դատախազի պահանջների կատարման պարտադիր լինելը, դատախազների անձեռնմխելիությունը, ապաքաղաքականացվածությունը, դատախազների նյութական և սոցիալական ապահովվածությունը և այլ երաշխիքները:

### 2. ԳԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Դատախազությունը հարուցում է քրեական հետապնդում,** այսինքն՝ իրականացնում է գործողություններ, որոնք նպատակ ունեն բացահայտել հանցանք կատարած անձին, ապացուցել նրա մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ապահովել այդ անձի նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառումը: Օրինակ՝ կարող է որոշում ընդունել ինչ-որ մեկին, որ կասկածվում է հանցանք կատարելու մեջ, առաջադրել մեղադրանք: Եթե բացակայում են դրա հիմքերը, ապա դատախազը որոշում է քրեական հետապնդումը դադարեցնել:

**Գատախազությունը հսկողություն է իրականացնում քրեական գործով նախնական քննության օրինականության նկատմամբ:** Հետաքննիչների և քննիչների կողմից օրենքի խախտումները, քննությունը սխալ ուղիով տանելու դեպքերը բացառելու նպատակով դատախազն իրավունք ունի ցուցումներ տալ հետաքննիչին և քննիչին, կայացնել որոշումներ, ներկայացնել միջնորդագրեր:

**Գատախազությունը դատարանում պաշտպանում է մեղադրանքը:** Անմեղության կանխավարկածի սկզբունքի համաձայն՝ ամբաստանյալի մեղավորության ապացուցման պարտականությունը դրված է մեղադրող կողմի (դատախազի, տուժողի) վրա: Եթե դատախազը դատարանում հրաժարվում է մեղադրանքից, ապա դատարանը կայացնում է արդարացնող դատավճիռ:

**Գատախազությունը պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարանում:** Եթե նա գտնում է, որ առկա են բավարար հիմքեր պետության շահերի պաշտպանության հայց հարուցելու համար, ապա իրավունք ունի մինչև հայց հարուցելը նախազգուշացնելու պետության շահերին վնաս հասցրած անձին վնասը կամովին հատուցելու մասին: Հակառակ դեպքում նա դիմում է դատարան:

**Գատախազությունը բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները:** Եթե դատախազը գտնում է, որ այդ ակտերն անօրինական, անարդարացի և անհիմն են, ապա նա կարող է վերադաս դատարան բողոք բերել դրանց դեմ: Գատարանների օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը կարող են բողոքարկել դատական քննությանը մասնակցած դատախազը կամ վերադաս դատախազը: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք կարող են բերել գլխավոր դատախազն ու նրա տեղակալները:

**Գատախազությունն իրականացնում է հսկողություն պատիժների, հարկադրանքի այլ միջոցների կիրառման նկատմամբ:** Պատիժ են համարվում քրեական պատժատեսակները, իսկ հարկադրանքի այլ միջոց է ազատությունից զրկման (ձերբակալում, կալանավորում), ինչպես նաև հատուկ ծառայությունների կողմից ֆիզիկական ուժ, հրազեն կամ հատուկ միջոցների գործադրումը: Ուստի դատախազական հսկողությունը կարևոր երաշխիք է այն անձանց իրավունքների պաշտպանության ապահովման համար, ում նկատմամբ կիրառվել է պատիժ կամ հարկադրանքի այլ միջոցներ: Գատախազն իրավունք ունի ցանկացած ժամանակ անարգել այցելելու այն բոլոր վայրերը, որտեղ պահվում են ազատությունից զրկված անձինք: Խախտումներ հայտնաբերելիս դատախազը միջնորդում է վերացնել խախտումը, իրավունք ունի կասեցնելու իրավախախտ ակտի գործողությունը: Նա պարտավոր է անհապաղ ազատելու ազատությունից զրկելու վայրերում, ինչպես նաև այդ վայրերի տուգանային և կարգապահական մեկուսարաններում ապօրինի պահվող անձանց:

**Գատախազությունը կարող է դիմել Սահմանադրական դատարան՝** դատախազության վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով:

### 3. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ԵՎ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ոստիկանությունը գործադիր իշխանության համակարգի պետական կառավարման մարմին է, որն իր առջև դրված խնդիրներն իրականացնելիս ունի օրենքով սահմանված հարկադրանք կիրառելու իրավունք:

Ոստիկանությունը միասնական կենտրոնացված համակարգ է, որը ղեկավարում է ՀՀ ոստիկանության պետը: Վերջինիս պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ (տե՛ս [www.police.am](http://www.police.am) կայքը):

**Ոստիկանության խնդիրները:** Ոստիկանության խնդիրներն այն արդյունքներն են, որոնց պետք է հասնի ոստիկանությունն իր գործունեությամբ:

**1. Ոստիկանությունը պարտավոր է ապահովել և պահպանել մարդու անվտանգությունն օրենքով նախատեսված դեպքերում:** Անձի դեմ ուղղված հանցանքները զգալի տեղ են զբաղեցնում հանցավորության կառուցվածքում: Ոստիկանության առաջնահերթ խնդիրն անձի կյանքի և առողջության, իրավունքների, ազատությունների պաշտպանությունն է հակաիրավական այլ ոտնձգություններից:

**2. Ոստիկանությունը պարտավոր է իրականացնել հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականում, կանխում և խափանում:** Նա ձեռնարկում է դրանց կատարմանը նպաստող պատճառների և պայմանների վերացման միջոցներ: Նա կարող է հանրային մարմիններ և կազմակերպություններ ներկայացնել իրավախախտումների կատարման պատճառների ու դրանց նպաստող պայմանների վերացմանն ուղղված միջնորդագրեր ու առաջարկություններ:

**3. Ոստիկանության խնդիրներից է հայտնաբերել և բացահայտել հանցագործությունները, քրեական գործով կատարել նախնական քննություն:** Ոստիկանության կառուցվածքում ստեղծվում են հանցագործությունների դեմ պայքարի ստորաբաժանումներ, որոնք ձեռնարկում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, կատարում են անհետաձգելի քննչական գործողություններ, հետախուզում են հանցանք կատարած անձանց, ինչպես նաև ապահովում են հանցագործությամբ պատճառված վնասի հատուցումը:

**4. Ոստիկանությունը կատարում է հասարակական կարգի և անվտանգության պահպանություն:** Ոստիկանությունը պարտավոր է ապահովել հասարակական կարգի պահպանությունը փողոցներում, զբոսայգիներում և այլ հասարակական վայրերում: Իր իրավասության սահմաններում ոստիկանությունն օժանդակում է պատգամավորներին, հանրային մարմինների պաշտոնատար անձանց, կազմակերպությունների ներկայացուցիչներին, եթե խոչընդոտներ են հարուցվում նրանց օրինական գործունեությանը, կամ վտանգված են նրանց կյանքը, առողջությունը, գույքը, պատիվն ու արժանապատվությունը: Ծանապարհային ոստիկանությունն ապահովում է երթևեկության անվտանգությունը:

**5. Ոստիկանությունն իրականացնում է սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանություն:** Նա պարտավոր է պայքարել սեփականության դեմ ուղղված իրավախախտումների դեմ, պաշտպանելու այն ամեն տեսակ հակաիրավական գործողություններից: Ոստիկանությունը պարտավոր է ապահովել գտնված և ոստիկանություն հանձնված փաստաթղթերի, իրերի, թանկարժեք և այլ գույքի պահպանությունը, միջոցներ ձեռնարկել դրանք օրինական տերերին վերադարձնելու ուղղությամբ:

#### 4. ԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐԳԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔ

Այս սկզբունքին համապատասխան օրենքը սահմանում է, որ ոստիկանությունը՝

- հակաիրավական ոտնձգություններից պաշտպանում է մարդու կյանքն ու առողջությունը, այլ իրավունքները, սեփականությունը և օրինական շահերը.
- չպետք է ձեռնարկի անձի արժանապատվությունը նվաստացնող միջոցներ.
- անձի իրավունքները սահմանափակում է օրինական հիմքերով.
- պարտավոր է ապահովել ձերբակալված կամ կալանավորված անձանց իրավական օգնություն ստանալու իրավունքը.
- անձի իրավունքների սահմանափակման ցանկացած դեպքում պարտավոր է պարզաբանել սահմանափակման հիմքերը և նրան հնարավորություն ընձեռել ծանոթանալու այն փաստաթղթերին կամ նյութերին, որոնք անմիջականորեն առնչվում են նրա իրավունքներին.
- ձերբակալվածների խնդրանքով նրանց հարազատներին տեղյակ պահել նրանց գտնվելու վայրի մասին, միջոցներ ձեռնարկել նրանց բժշկական և այլ օգնություն ցույց տալու, ինչպես նաև ձերբակալման կամ կալանավորման կապակցությամբ անձի կամ նրա ընտանիքի անդամների կյանքին, առողջությանը, գույքին սպառնացող վտանգը վերացնելու ուղղությամբ.
- իրավասու չէ հավաքել, պահել, օգտագործել և տարածել մարդու անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություններ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

#### Հարցեր

1. *Ի՞նչ մարմին է դադարախազությունը:*
2. *Ի՞նչ սկզբունքներով է կազմակերպված դադարախազությունը:*
3. *Ինչպիսի՞ն է դադարախազության մարմինների համակարգը Հայաստանում:*
4. *Որո՞նք են դադարախազության սահմանադրական լիազորությունները:*
5. *Ի՞նչ մարմին է ոստիկանությունը, և ի՞նչ կառուցվածք ունի դրա համակարգը:*
6. *Որո՞նք են ոստիկանության խնդիրները:*
7. *Ինչպի՞ս է դրսևորվում մարդու իրավունքների հարգանքի սկզբունքը ոստիկանության գործունեության մեջ:*

## ԳԱՍ 16. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

### 1. ԿԱՏԱՐԵՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ աշակերտներ, այս դասը նախատեսված է այլընտրանքային տարբերակով: Պայմանավորված ձեր դպրոցի գտնվելու վայրով, ինչպես նաև ձեր նախասիրություններով՝ դուք կարող եք դասն անցկացնել կամ հրավերք (կամ այցելություն) կազմակերպելով, կամ էլ դատախազով:

Առաջին տարբերակի ընտրության դեպքում դուք պետք է դասարան հրավիրեք ձեր մինչ այժմ սովորած դասերի հետ կապված մասնագետներից որևէ մեկին (դատավոր, դատախազ, քննիչ, ոստիկան, փաստաբան)՝ իրենց գործունեությունը մեկնաբանելու, սեփական գիտելիքներով ու փորձով ձեզ հետ կիավելու համար:

Եթե դուք ունեք հնարավորություն և ցանկություն, շատ ավելի լավ կլիներ հետևելով «Լավ է մեկ անգամ տեսնել, քան հարյուր անգամ լսել» ասացվածքին կազմակերպել այցելություն: Որպես այցելվաչք կարող եք ընտրել համապատասխան մարմնի նստավայր (դատարան, դատախազություն, ոստիկանություն, քննչական ծառայություն) կամ էլ փաստաբանական գրասենյակ:



Չինական մի ասացվածք կա՝ «Ասա ինձ, ես կմոռանամ: Տույց տուր ինձ, ես կկարողանամ հիշել: Թույլ տուր ինձ անել, և դա կդառնա ընդմիշտ իմը»: Հետևելով ասացվածքի խորհրդին, որպես դասի կազմակերպման երկրորդ տարբերակ նախատեսված է դատախազը: Դուք պետք է նախապատրաստեք և անցկացնեք դատական նիստ, որի ընթացակարգը և հրահանգները տրվում են ստորև:

### 2. ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱԲԱՆԻ ՆԻՍՏ

10-րդ դասից դուք արդեն գիտեք, թե ինչ է Սահմանադրական դատարանը: Ի տարբերություն այլ դատարանների, այս դատարանը քննում է ոչ թե փաստեր, լսում վկաներին, այլ ստուգում է որևէ նորմատիվ ակտի սահմանադրականությունը, այսինքն՝ Սահմանադրությանը համապատասխանելը: Դատավորները լսելով երկու կողմերի իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրության սկզբունքների և նորմերի, ինչպես նաև վիճարկվող նորմատիվ ակտի մեկնաբանությունները, ընդունում են որոշում՝ ակտի սահմանադրական կամ հակասահմանադրական լինելու մասին:

### ԳԱՏԱՐԱՆԻ ՆԻՍՏԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՏՄԱՆ ԵՎ ԱՆՅԿԱՅՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Առաջին քայլը, որ դուք պետք է անեք, գործի (կամ վիճարկվող նորմատիվ ակտի) ընտրությունն է: Կարող եք վերցնել Սահմանադրական դատարանի պրակտիկայից որևէ գործ կամ հորինել ինչ-որ օրենքի տեքստ և դարձնել քննարկման առարկա: Մենք առաջարկում ենք վեճի առարկա դարձնել ձեր դասագրքի 183 էջում գրված ՀԽՍՀ 1922 թ. Սահմանադրության դրույթները:


Այս տարբերակի ընտրության դեպքում այդ դրույթները դառնում են վիճարկվող օրենք: Դիմող կողմը պետք է հետազոտի և հիմնավորի, թե ՀՀ գործող Սահմանադրության որ հոդվածներին է հակասում այդ օրենքը, իսկ պատասխանողը՝ այսինքն՝ օրենքն ընդունած կողմը պետք է բերի պաշտպանական հակափաստարկներ: Կողմերը, ինչպես նաև դատարանը, որոշումներ կայացնելիս փաստարկներ են բերում՝ ելնելով միջազգային պայմանագրերից, Սահմանադրության և օրենքների դրույթներից, մարդու իրավունքների սկզբունքներից: Կարելի է առաջ քաշել ցանկացած փաստարկ, որը հնարավոր է համոզիչ հիմնավորել:

2. Նախապես կատարեք դերերի բաշխումները՝ զույգ թվով դատավորներ (նրանցից մեկը լինելու է նիստի քարտուղար), երկու կողմերը (2-3 հոգի կամ էլ ամբողջ դասարանով բաժանվեք 2 խմբի): Բոլորին հանձնարարեք ուսումնասիրելու վիճարկվող ակտը, իրենց վերաբերող հրահանգները:

3. Նիստի օրը դասարանի նստարանների դիրքը հարմարեցրեք դատական նիստի անցկացմանը:

4. Բոլոր դերակատարներն ունենալով վիճարկվող ակտի տեքստը՝ պետք է կարդան, քննարկեն և վեր հանեն գործի հանգամանքները՝ պարզելով իրենց համար հետևյալ հարցերը. ի՞նչ է տեղի ունեցել այս գործում, ովքե՞ր են մասնակցում գործին որպես դիմող և պատասխանող, ինչ նորմատիվ իրավական ակտ է վիճարկվում դատարանում, Սահմանադրության որ հոդվածներին են վերաբերում վիճարկվող ակտի դրույթները:

5. Դատական նիստը սկսվում է քարտուղարի հայտարարությամբ գործի լսումները սկսելու մասին: Այնուհետև նիստի նախագահողը խոսքը տալիս է կողմերից որևէ մեկին: Ամեն կողմի ելույթից հետո դատավորները կարող են հարցեր տալ կողմերին: Յուրաքանչյուր կողմին հատկացվում է 5 րոպե: Դրանից հետո կողմերը կարող են իրար դիմել հարցերով (2 րոպե): Այնուհետև դատարանի նախագահը



ամեն կողմին 2 ռուպե տևողությամբ եզրափակիչ խոսքի իրավունք է տալիս: Վերջում դատավորները, տեղում խորհրդակցելով, կայացնում են որոշում և հրապարակում այն:

**6.** Դատական նիստն ավարտելուց հետո ամբողջ դասարանով անցկացրեք քննարկում դատական նիստի ընթացքի և ընդունված որոշման շուրջ:

### ՀՐԱՎԱՆՔՆԵՐ ԳԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Դատավորների տնային աշխատանքի խնդիրն է գործի լուծմանին նախապատրաստվելը: Դրա համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը:

- Վերլուծեք գործը, համեմատեք վիճարկվող ակտը և Սահմանադրությունը, վեր հանեք իրավաբանական խնդիրը, փորձեք կանխագուշակել կողմերի փաստարկները:
- Գրի առեք ամեն կողմին տրվելիք երեքական հարց, որոնք կօգնեն ավելի ճիշտ լուծելու գործը և բաշխեք դրանք դատարանի անդամների միջև՝ նիստի ժամանակ հարցադրումներ անելու համար:
- Ընտրեք նախագահ և քարտուղար: Նախագահը վարում է նիստը, իսկ քարտուղարը գրառում է կողմերի փաստարկները: Նիստի ընթացքի և կանոնակարգի պահպանումը նախագահի խնդիրն է: Քարտուղարը քվեարկությանը չի մասնակցում:

### ԳԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԽՆԳԻՐՆԵՐԸ ԳԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԺԱՄԱՆԱԿ

- Քարտուղարը հայտարարում է դատական նիստը սկսվելու մասին. «Ուտքի, դատարանն է գալիս»:
- Դատարանը զբաղեցնում է իր տեղը: Նախագահը հայտարարում է. «Խնդրում եմ նստել: Այսօրվա դատական նիստում լսվում է ... (գործի անվանումը), գործը լսվում է դատարանի հետևյալ կազմով՝ նախագահ՝ ... (Ա.Ա.), դատավորներ՝ ... (Ա.Ա.): Քարտուղարում է ... (Ա.Ա.):»:
- Նախագահող. «Խոսքը տրվում է դիմող կողմի (օրինակ՝ ինչ-որ իրավապաշտպան կազմակերպության) ներկայացուցչին»: Այնուհետև նախագահողը գործում է նիստի ընդհանուր կանոնակարգին համապատասխան:
- Նիստի վերջում նախագահողը հայտարարում է. «Գործի լուծմանը ավարտված են: Դատարանն անցնում է խորհրդակցության»:
- Երբ դատարանի որոշումը պատրաստ է, քարտուղարը հայտարարում է. «Խնդրում եմ կանգնել»:
- Դատական նիստի ընթացքին և կարող են հարցեր տալ կողմերին՝ ձեռք բարձրացնելու միջոցով դիմելով նախագահին:
- Դատավորների խորհրդակցության ժամանակ նրանք ազատորեն կարող են արտահայտել իրենց կարծիքը: Վերջում դատարանի նախագահը կազմակերպում

է քվեարկություն: Որոշումն ընդունվում է ձայների մեծամասնությամբ: Նրանք կարող են ունենալ տարբերվող՝ հատուկ կարծիք և գրավոր կցել դա դատարանի որոշմանը:

### ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

- Վերլուծեք գործը (համեմատեք վիճարկվող ակտը և Սահմանադրությունը, վեր հանեք իրավաբանական խնդիրը, հակառակորդ կողմի հնարավոր փաստարկները), մշակեք ձեր դիրքորոշումը հիմնավորող փաստարկներ, որոնք դատարանին կքվան համոզիչ:
  - Ձեր փաստարկները նախապատրաստելիս մտածեք հետևյալ հարցերի շուրջ.
    - ա) ի՞նչ որոշում է ձեզ պետք,
    - բ) փորձեք կանխագուշակել մյուս կողմի փաստարկները և պատասխանել դրանց,
    - գ) ձեզ անհրաժեշտ որոշման համար ո՞ր փաստարկներն են ամենից համոզիչ, ինչո՞ւ,
    - դ) ի՞նչ հարցեր կարող է տալ դատարանը:
- Նախապատրաստեք հարցեր հակառակորդ կողմին տալու համար:
- Սիմյանց միջև կատարեք դերաբաշխում՝ սկզբնական զեկուցող, դատավորների հարցերին պատասխանողներ, մյուս կողմից հարցեր տվողներ, եզրափակիչ խոսքով հանդես եկողներ:

### ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆԱԲԿՈՒՄ

Գատախաղի մասնակիցները դուրս գալով իրենց դերից՝ կատարում են արդյունքների ամփոփում, վերլուծություն, ինքնագնահատում և մասնակիցների գործողությունների մեկնաբանում: Խորհուրդ ենք տալիս սկսել ինքնագնահատականից, հետո նոր անցնել այլ մասնակիցների գործողությունների գնահատմանը, մեկնաբանությանը:

**Պարտադիր աշխատանք:** Սիրելի՛ աշակերտներ, գործնական դասերը սրանով չեն ավարտվում: 20-րդ դասը ևս գործնական է: Այդ դասին դուք պետք է վարեք բանակցություններ և կնքեք համաձայնություն: Որպեսզի կարողանաք վարել հաջող բանակցություններ, անհրաժեշտ է այսօրվանից նախապատրաստվել: Խնդրում ենք կարդալ 20-րդ դասի նյութերը, որոշել վիճելի խնդիրը և կատարելով դերաբաշխում, նախապատրաստվել բանակցային գործընթացին՝ տնային աշխատանքի հրահանգներին համապատասխան:

### ԳԱՍ 17. ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

## ԴԱՍ 18. ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ (ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ)

### 1. ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Քրեական գործը հարուցվում է հանցագործության փաստով: Քանի որ հանցանքները պատժվում են, ապա հանցագործները մեծամասամբ փորձում են այն կատարել գաղտնի, որպեսզի խուսափեն պատժից: Հետևաբար, օրինակ՝ ամեն մի գողության դեպքում առաջանում է խնդիր՝ պարզել, թե ում գույքն է գողացվել, ով է գողացել և ինչպիսի պատիժ պետք է նշանակվի մեղավորի նկատմամբ: Ահա այս խնդրի լուծման համար ամեն մի հանցագործության փաստով հարուցվում է քրեական գործ, և սկսվում է քննությունը: Այդ իսկ պատճառով այն անվանում են քրեական վարույթ (դատավարություն): Քրեական գործերի քննության կարգը կարգավորում է **քրեական դատավարության օրենսգիրքը** (*տե՛ս [www.arls.am](http://www.arls.am) կայքը*):

**Քրեական դատավարության խնդիրները:** Պետությունը պարտավոր է պայքարել հանցագործությունների դեմ: Բայց այդ պայքարը պետք է կատարվի ժողովրդավարական ընթացակարգի պահպանմամբ: Ուստի վարույթ իրականացնող մարմինները պարտավոր են յուրաքանչյուր քրեական գործով ձեռնարկել բոլոր միջոցները, որպեսզի նրանց գործունեության արդյունքում՝

- 1) հանցանք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի.
- 2) ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չմեղադրվի և չդատապարտվի.
- 3) ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների այլ սահմանափակման:

**Քրեական դատավարության մասնակիցները և նրանց գործառույթները:** Քրեական դատավարության մասնակիցների միջև դերերի բաշխումը կառուցված է մրցակցության սկզբունքով: Յուրաքանչյուրն իր վրա դրված պարտականությանը կամ իր շահերին համապատասխան կատարում է որոշակի գործառույթ:

**Սեղադրանքի գործառույթն** իրականացնում է մեղադրող կողմը (օրինակ՝ դատախազը, տուժողը, տուժողի օրինական ներկայացուցիչը): Նա առաջ է քաշում անձի մեղավորության հարցը և դատարանի առաջ ապացուցում այդ:

**Պաշտպանության գործառույթն** իրականացնում են կասկածյալը, մեղադրյալը (ամբաստանյալը), նրանց պաշտպանը, օրինական ներկայացուցիչը, որոնց գործունեությունն ուղղված է մեղադրվողի շահերի պաշտպանությանը, առաջադրված մեղադրանքն ամբողջությամբ կամ մասամբ հերքելուն, պատասխանատվությունը թեթևացնող կամ իսպառ բացառող հանգամանքները վեր հանելուն:

**Գործի քննության և լուծման գործառույթն** իրականացնում են հետաքննության մարմինը, քննիչը, անկողմնակալ և անկախ դատարանը: Վերջինին վերապահված է անձին հանցագործության մեջ մեղավոր ճանաչելու իրավագործությունը: Դատարանը հանդես չի գալիս որևէ կողմում և պաշտպանում է իրավունքի շահերը:

Սեղադրող և պաշտպանող կողմերն իրենց դիրքորոշումը հիմնավորելու և ապացուցելու համար ունեն հավասար իրավունքներ: Բացի այդ, քրեական դատավարու-

թյանը մասնակցում են չչահագրգռված անձինք՝ ընթերական, թարգմանը, մասնագետը, փորձագետը, վկան, վկայի օրինական ներկայացուցիչը: Վերջիններս կոչված են նպաստելու քրեական դատավարության իրականացմանը:

**Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք:** Այդ իրավունքին թղթակցում է քրեական վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագիրը սահմանում է. «Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի ամրվազն հետևյալ իրավունքները. ա) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն ծանուցվելու ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին. բ) բավականաչափ ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար. գ) պաշտպանել իրեն անձամբ կամ իր կողմից ընտրված դատապաշտպանի միջոցով կամ, եթե բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայությունների դիմաց վճարելու համար, ունենալ անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը. դ) հարցաքննել իր դեմ ցուցմունքներ տվող վկաներին կամ իրավունք ունենալ, որ այդ վկաները հարցաքննության ենթարկվեն, նաև իրավունք ունենալ կանչելու ու հարցաքննելու իր վկաներին նույն այն պայմաններով, ինչ որ իր դեմ ցուցմունք տված վկաները. ե) օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով»:



## 2. ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Քրեական գործերը միանգամից դատարան չեն հասնում: Ամեն անգամ հանցանքի կատարման մեջ մեղադրյալի մեղքը պետք է ապացուցվի: Հետևաբար, քրեական գործը մինչև դատարան հասնելն անցնում է մինչդատական փուլերով, որոնցում քննիչը դատախազի հսկողության տակ բազմակողմանիորեն քննում է գործը՝ նախապատրաստելով այն դատական քննության համար:

Քրեական դատավարության փուլերն են.

**1. Քրեական գործի հարուցման փուլ:** Սա վարույթի սկզբնական և բոլոր գործերի համար պարտադիր փուլն է: Քրեական գործի հարուցումը թույլատրվում է միայն անհրաժեշտ **առիթների** և **հիմքերի** առկայության դեպքում: Քրեական գործի հարուցման առիթներն օրենքով թվարկված այն աղբյուրներն են, որոնք տեղեկություններ են բովանդակում հանցագործության մասին: Օրինակ՝ լրատվամիջոցների հաղորդումներն ինչ-որ դեպքի մասին: Քրեական գործի հարուցման փուլի խնդիրն է պարզել, թե հանցագործությունների վերաբերյալ ստացված տվյալներում կան

արդյոք բավարար հիմքեր քրեական հետապնդում սկսելու համար: Օրենքով նախատեսված առիթների առկայության դեպքում հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարզում են գործ հարուցելու հիմքերը և կայացնում են քրեական գործի հարուցումը մերժելու, հանցագործության մասին հաղորդումն ըստ ենթակայության ուղարկելու կամ քրեական գործ հարուցելու մասին որոշում:

**2. Նախաքննության փուլ:** Հարուցված քրեական գործը անցնում է նախաքննության փուլ, որը կատարում է քննիչը: Դրա խնդիրն է բացահայտել հանցագործությունը և հայտնաբերել այն կատարող անձին, ապացուցել նրա մեղքը: Դրա համար օրենքով նախատեսված քննչական գործողությունների օգնությամբ ձեռք են բերվում անհրաժեշտ ապացույցներ: Քրեական գործով որպես **ապացույցներ** թույլատրվում են՝ կասկածյալի կամ մեղադրյալի, տուժողի և վկայի, դատապարտյալի ցուցմունքները, փորձագետի եզրակացությունը, իրեղեն ապացույցները, քննչական և դատական գործողությունների արձանագրությունները և այլ փաստաթղթերը:

Բոլոր քրեական գործերով նախաքննությունը պարտադիր է: Քննության նյութերը դատարանի համար ընդամենը մեղադրական ենթադրություններ են և ենթակա են մանրակրկիտ ստուգման: Այդ պատճառով այն կոչվում է նախաքննություն:

Նախաքննությունը կարող է ավարտվել գործը դատախազի միջոցով դատարան ուղարկելով կամ գործը կարճելու մասին որոշում կայացնելով: **Գործը կարճելու մասին որոշում** է կայացվում, եթե չի ապացուցվել հանցավոր դեպքը կամ անձի մեղավորությունը: Երբ քննիչը ձեռք բերված ապացույցների գնահատման արդյունքում համոզվում է, որ հանցավոր արարքն առկա է, և մեղադրյալը մեղավոր է դրա կատարման մեջ, ապա նա դատախազի միջոցով գործն ուղարկում է դատարան:

**3. Դատական նիստի նախապատրաստման և դատական քննության փուլերը:** Ավարտելով նախաքննությունը՝ գործը դատախազի՝ որպես պետական մեղադրողի միջոցով ներկայացվում է դատարան: Դատարանը գործն ընդունում է իր վարույթը, կատարում է նախապատրաստական գործողություններ և ընդունում է որոշում դատական քննություն (դատական նիստ) նշանակելու մասին:

Նիստում դատավորը նախ **ամբաստանյալին** (մեղադրյալ, որի գործը դրված է դատական նիստի) պարզաբանում է նրան ներկայացված մեղադրանքը և հարցնում է՝ ինքն իրեն մեղավոր ճանաչո՞ւմ է, թե՞ ոչ: Այնուհետև դատարանը, լսելով կողմերի կարծիքը, որոշում է ապացույցների հետազոտման կարգը: Հետո հարցաքննվում են ամբաստանյալը (ամբաստանյալն իրավունք ունի ցուցմունքներ չտալ, և դա չի կարող մեկնաբանվել ի վնաս իրեն), վկաները, դատավարության այլ մասնակիցները: Հարցաքննությունից հետո դատարանը քննության է առնում գործում եղած իրեղեն ապացույցներն ու փաստաթղթերը: Դատաքննությունն ավարտելուց հետո դատարանն անցնում է դատական վիճաբանություններին, որոնց մասնակիցներն են պետական մեղադրողը (դատախազը), տուժողը, պաշտպանը: Դրանից հետո դատավորը վերջին խոսքի իրավունք է տալիս ամբաստանյալին: Վերջին խոսքը լսելուց հետո դատարանը հեռանում է առանձին սենյակ, որտեղ և

կայացնում է դատավճիռը՝ գնահատելով ապացույցներն իր ներքին համոզմամբ: Այնուհետև դատավճիռը հրապարակվում է դատարանի դահլիճում:

**Գատավճռի տեսակները:** Գատարանը, քննելով և լուծելով կոնկրետ քրեական գործը, կայացնում է դատավճիռ: Գատավճիռը կարող է լինել **արդարացնող կամ մեղադրական:** Գատավճռում իրենց վերջնական լուծումն են ստանում հետևյալ հարցերը. տեղի ունեցե՞լ է անբաստանյալին մեղսագրվող արարքը, մեղավո՞ր է անբաստանյալն արարքի կատարման մեջ, պե՞տք է արդյոք նրա նկատմամբ կիրառել քրեական պատիժ, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ պատիժ, ի՞նչ ժամկետով և այլն:

### 3. ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԻՐԱՎՈՂ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Քրեական դատավարության պատշաճ ընթացքն ապահովելու համար օրենքը նախատեսում է որոշակի հարկադրանքի միջոցների կիրառում: Դրանց մի մասը կոչվում են **խափանման միջոցներ** և կիրառվում են քրեական գործերով վարույթի ընթացքում կասկածյալի կամ մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով:

**Ձերբակալում և կալանավորում:** Օրենքը նախատեսում է ազատությունից զրկում, երբ առկա է հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցանքի կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով: Այս հիմքով քրեական դատավարությունում կիրառվում են ձերբակալումը և կալանավորումը:

**Ձերբակալումն** անձին արգելանքի վերցնելն է, նրան վարույթն իրականացնող մարմին բերելը՝ համապատասխան վայրում արգելանքի տակ պահելու համար: Ձերբակալվածին բերելուց հետո կազմվում է արձանագրություն և այդ մասին հայտարարվում է նրան: Եթե ձերբակալված անձը 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման:

**Կալանավորումն** անձին օրենքով նախատեսված տեղերում կալանքի տակ պահելն է, որը կիրառվում է դատարանի որոշմամբ՝ համապատասխան միջնորդության հիման վրա:

**Գրավ:** Մեղադրյալին կալանքից ազատելու համար որոշակի դեպքերում կիրառվում է գույքի գրավադրում: Եթե մեղադրյալը թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից, ապա դատարանը դատախազի միջնորդությամբ որոշում է ընդունում գրավը պետության եկամուտ դարձնելու մասին:

**Բերման ենթարկելը:** Առանց հարգելի պատճառների կանչով չներկայացած կասկածյալը, մեղադրյալը, վկան, տուժողը վարույթն իրականացնող մարմնի պատճառաբանված որոշմամբ կարող են բերման ենթարկվել:

**Խուզարկություն:** Խուզարկությունը գործի համար նշանակություն ունեցող առարկաների ու փաստաթղթերի որոնման և վերցնելու գործողություն է: Քննիչը խուզարկություն է կատարում, երբ բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ որևէ շենքում կամ այլ տեղ, կամ որևէ անձի մոտ գտնվում են հանցագործության գործիքներ,

հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ ու փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար: Խուզարկություն կարող է կատարվել նաև հետախուզվող անձանց, ինչպես նաև դիակները հայտնաբերելու համար:

Օրենքը տարբերում է **շենքի կամ այլ տեղի խուզարկությունը**, բնակարանի խուզարկությունը, անձնական խուզարկությունը: Առաջինը կատարվում է միայն քննիչի՝ խուզարկություն կատարելու մասին որոշման հիման վրա: **Բնակարանի խուզարկությունը** կատարվում է միայն դատարանի որոշմամբ: **Անձնական խուզարկությունը** կարող է կատարվել նաև առանց այդ մասին որոշում կայացնելու: Անձնական խուզարկությունը կարող է կատարվել քննիչի կողմից՝ խուզարկվողի հետ նույն սեռի ընթերականների և մասնագետի մասնակցությամբ:



Խուզարկությունը կատարվում է ընթերականների մասնակցությամբ, որոնց աչքի առաջ պետք է կատարվեն որոնումները: Դրան կարող է մասնակցել մասնագետը, որը կոչված է քննիչին տեխնիկական օգնություն ցուցաբերելու: Խուզարկության ողջ ընթացքն արձանագրվում է:

Խուզարկությունը կատարվում է ընթերականների մասնակցությամբ, որոնց աչքի առաջ պետք է կատարվեն որոնումները: Դրան կարող է մասնակցել մասնագետը, որը կոչված է քննիչին տեխնիկական օգնություն ցուցաբերելու: Խուզարկության ողջ ընթացքն արձանագրվում է:

### Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է քրեական դատավարությունը:
2. Որո՞նք են քրեական դատավարության խնդիրները:
3. Ի՞նչ խնդիրն են բաժանվում քրեական դատավարության մասնակիցները:
4. Ի՞նչ իրավունքներ ունեն կասկածյալը և մեղադրյալը:
5. Որո՞նք են քրեական գործի հարուցման փուլի խնդիրները:
6. Ապացույցների ի՞նչ տեսակներ կան քրեական դատավարությունում:
7. Ինչպե՞ս է ավարտվում նախաքննությունը:
8. Ինչո՞ւ է դատական քննությունը դատավարության կենտրոնական փուլը:
9. Հարկադրանքի ի՞նչ միջոցներ են կիրառվում քրեական դատավարությունում:

**Լուծե՛ք խնդիրը:** Ոստիկանները շուկայում, գողության փորձ կատարելիս, ձեռքակալում են 2 երիտասարդների և բերման են ենթարկում ոստիկանություն: Բաժնի պետը, զրուցելով նրանց հետ, հայտարարում է, որ նրանց նկատմամբ նշանակում է պատիժ՝ ազատազրկում 2 ամիս ժամանակով:

Կարո՞ղ էր արդյոք ոստիկանության բաժնի պետն ընդունել նման որոշում: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:

Ի՞նչ փուլերով պետք է անցնի յուրաքանչյուր քրեական գործ, և ո՞վ կարող է նշանակել քրեական պատիժ:

Հիմնավորե՛ք պատասխաններն իրավաբանորեն:

## ԳԱՍ 19. ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### 1. ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

**Քաղաքացիական գործ:** Երկու քաղաքացիներ կնքել են փոխառության պայմանագիր՝ գրավոր ձևով: Պայմանագրով կողմերից մեկը՝ փոխատուն, մյուս կողմին՝ փոխառուին, վեց ամիս ժամկետով պարտք է տվել 500.000 դրամ: Վեց ամիսը լրանալուց հետո փոխառուն հրաժարվում է վերադարձնել պարտքը: Ի՞նչ պետք է անի փոխատուն: Նա իրավունք ունի քաղաքացիական դատավարության կարգով դիմելու փոխառուի բնակության վայրի առաջին ատյանի դատարան: Դրա համար նա կազմում է անհրաժեշտ ձևի հայցադիմում և կից փաստաթղթերով (պայմանագրի օրինակը և այլն) ներկայացնում է դատարան:

*Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի առաջին արյանի դատարանի նախագահ Հովհաննես Սուքիասյանին  
Հայցվոր՝ Գեորգ Նազարյանից, ք. Երևան, 0049, Խանջյան 45, բն. 1  
Պատասխանող՝ Հրանտ Ավետիսյան, ք. Երևան, 0049, Սարյան 21, բն. 6  
500000 (հինգ հարյուր հազար) դրամի պահանջի մասին*

#### ՀԱՅՑԱԳԻՄՈՒՄ

2014 թ. օգոստոսի 12-ին պատասխանող Հրանտ Ավետիսյանը մեր միջև կնքված փոխառության պայմանագրով ինձանից պարտք է վերցրել հինգ հարյուր հազար դրամ և պարտավորվել է այն վերադարձնել 2015 թ. օգոստոսի 12-ին: Նշված ժամկետում պատասխանողը պարտքը չի վերադարձրել: Իմ առաջարկին՝ վերադարձնելու պարտքը կամովին, նա պատասխանել է մերժումով:

#### ԽՆԳՐՈՒՄ ԵՄ

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880 հոդվածի համաձայն՝ պատասխանող Հրանտ Ավետիսյանից իմ օգտին բռնագանձել պայմանագրով նախատեսված հինգ հարյուր հազար դրամ պարտքը և դատական ծախսերը՝ 20000 դրամ:

Կից ներկայացնում եմ՝

1. Հայցադիմումի պատճենը:

2 Մեր միջև կնքված հասարակ գրավոր ձևի պայմանագրի բնօրինակը:

3. Պետական տուրքը վճարելու մասին անդորրագիրը: *20 օգոստոսի, 2015 թ.*

Քաղաքացիական են համարվում նաև ընտանեկան, աշխատանքային վեճերով գործերը, պատվի և արժանապատվության պաշտպանության վերաբերյալ գործերը և այլն: Քաղաքացիական գործերի քննության կարգը սահմանում է **քաղաքացիական դատավարության օրենսգիրքը** (*տե՛ս [www.artis.am](http://www.artis.am) կայքը*):

**Դատարանի կողմից քաղաքացիական գործեր հարուցելու հիմքը հայցադիմումն է:** Վերևի օրինակում հայցադիմում ներկայացնողը կոչվում է **հայցվոր**, իսկ փոխառուն՝ **պատասխանող**: Դատարանը կայացնում է հայցադիմումն ընդունելու մասին որոշում՝ նշելով գործի քննության ժամանակը և այլն: Այդ մասին տեղեկացվում են կողմերը և դատավարության այլ մասնակիցները: Նշանակված օրը դատական նիստում տեղի է ունենում գործի քննությունը:

**Գործի ըստ էության քննության կարգը:** Դատավորը դատավարության մասնակիցներին բացատրում է նրանց իրավունքները և պարտականությունները: Այնուհետև նա պարզում է, թե արդյոք հայցվորը պնդում է իր պահանջները, պատասխանողն արդյոք ընդունում է հայցվորի պահանջները, կողմերը չեն ուզում կնքել հաշտության համաձայնություն: Եթե այդպիսի ցանկություն չկա, ապա դատարանը որոշում է ապացույցների հետազոտման հաջորդականությունը և անցնում է դրանց հետազոտմանը: Դատարանը պարտավոր է գործի բոլոր ապացույցները հետազոտել անմիջականորեն՝ ծանոթանալ գրավոր ապացույցներին, զննել իրեղեն ապացույցները, լսել փորձագետների եզրակացությունները, վկաների և գործին մասնակցող անձանց ցուցմունքները:

Բոլոր ապացույցները հետազոտելուց հետո նախագահողը գործին մասնակցող անձանց հարցնում է, թե նրանք արդյոք չեն ցանկանում ներկայացնել լրացուցիչ նյութեր՝ դրանք հետազոտելու միջնորդությամբ: Եթե այդպիսիք չկան, նախագահողը հայտարարում է գործի քննությունն ավարտված, ինչպես նաև վճռի հրապարակման վայրն ու ժամանակը:

**Քաղաքացիական գործով դատարանը կայացնում է վճիռ:** Դատարանի վճիռը հրապարակվում է գործի քննությունն ավարտելուց հետո՝ 15 օրվա ընթացքում: Վճիռ կայացնելիս դատարանը գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել և որոնք չեն պարզվել, տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, ինչպես նաև հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը: Բերված օրինակի դեպքում վճիռը սահմանում է, որ պատասխանողից 500.000 դրամ պետք է բռնագանձվի հօգուտ հայցվորի: Եթե պատասխանողը կամավոր չի կատարում վճիռը, ապա այն կարող է կատարվել հարկադրաբար:

**Քաղաքացիական գործերով վճիռների բողոքարկումը:** Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը, ստանալով բողոքը, կայացնում է որոշում՝ այն իր վարույթն ընդունելու մասին, որում նշվում են գործի քննության ժամանակը և վայրը: Այդ որոշումն ուղարկվում է գործին մասնակցող անձանց: Վերաքննիչ բողոք բերած անձն իրավունք ունի հետ վերցնել բողոքը, մինչև վերաքննիչ դատարանը կսկսի գործի քննությունը: Գործի կրկնակի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանը կայացնում է վճիռ, որն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճռաբեկ բողոք բերած անձը բողոքում պետք է նշի, թե օրենքի որ նորմերն են խախտվել կամ սխալ կիրառվել, կամ որոնք են նոր երևան եկած հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը (*վերհիշե՛ք դատ 12-ից, էջ 50*):

## 2. ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

**Վարչական գործ:** Վարչական գործերի կողմերից մեկը գործադիր իշխանության կամ տեղական ինքնակառավարման մարմինն է: Օրինակ՝ քաղաքացու և գյուղապետարանի միջև առաջացել է վեճ՝ քաղաքացուն սեփականության իրա-

վունքով պատկանող հողամասի ամիթով: Գյուղապետարանը կախացրել է որոշում՝ քաղաքացու հողամասը հոգուտ գյուղապետարանի օտարելու մասին: Ի՞նչ կարող է անել քաղաքացին: Օրենքը նրան հնարավորություն է տալիս դիմելու դատարան, եթե հիմքեր կան ենթադրելու, որ գյուղապետարանի որոշումը հակասում է օրենքին, և խախտվել է քաղաքացու երաշխավորված իրավունքը: Գործին ընթացք տալու համար քաղաքացին դիմում է ներկայացնում դատարան՝ նշելով, թե որ մարմինը, երբ, ինչ որոշում է ընդունել, և քաղաքացու որ իրավունքն է խախտվել: Դիմումին կցվում է վիճարկվող ակտի կամ դրա որևէ մասի պատճենը: Բերված օրինակում քաղաքացին հիմնավորում է, որ խախտվել է իր սեփականության սահմանադրական իրավունքը, որովհետև սեփականությունից կարող է զրկել միայն դատարանը՝ օրենքով նախատեսված դեպքերում:



Վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով կամ օրենքով սահմանված այլ դեպքերում:

Վարչական գործի քննության կարգը սահմանում է վարչական դատավարության օրենսգիրքը (*տե՛ս [www.artis.am](http://www.artis.am) կայքը*):

**Դատարանի կողմից վարչական գործեր հարուցելու հիմքը հայցադիմումն է:** Մեր օրինակի դեպքում հայցվորը՝ քաղաքացին, պահանջում է, որ դատարանը վերացնի տեղական ինքնակառավարման մարմնի ակտը, որով վերցվել է իր հողամասը: Գրավոր հայցադիմումը դատարան ներկայացնում է հայցվորն առձեռն կամ ուղարկում է փոստով: Հայցադիմումը պետք է բովանդակի նշում այն մասին, որ հայցը ներկայացվում է վարչական դատարան, հայցվորի տվյալները, պատասխանողի տվյալները, հայցի էության հակիրճ նկարագրությունը, այն փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը, դրա իրավական հիմքերը, ապացույցների ցանկը և այլն: Հայցադիմումին պետք է կցվեն օրենքով նախատեսված փաստաթղթերը: Օրինակ՝ վիճարկվող ակտը կամ դրա պատճենը:

Հայցադիմումը ստանալուց հետո դատարանը հայցադիմումի վերաբերյալ կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝ վարույթ ընդունելու մասին, վերադարձնելու մասին (օրինակ՝ հայցադիմումը ստորագրված չէ), ընդունումը մերժելու մասին (օրինակ՝ հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության):

**Վարչական գործի քննության կարգը:** Գործը վարույթ ընդունելուց հետո դատավորը ձեռնարկում է այն դատաքննության նախապատրաստելու գործողություններ և որոշում է գործը նշանակել դատաքննության՝ կողմերին տեղյակ պահելով դրա ժամանակի և վայրի մասին:

Գործի քննությունը տեղի է ունենում դատական նիստում՝ նշանակված օրը: Դատավորը դատավարության մասնակիցներին բացատրում է նրանց իրա-

վունքները և պարտականությունները: Այնուհետև անցնում է գործն ըստ էության քննելուն: Դատարանի կողմից գործը ներկայացվելուց հետո դատարանը լսում է կողմերի բացման խոսքերը, որոնցում նրանք համառոտ ներկայացնում են իրենց պահանջները, առարկությունները, դրանք հիմնավորող փաստերը և իրավական դիրքորոշումները: Այնուհետև անմիջականորեն հետազոտվում են բոլոր ապացույցները: Դրանից հետո նախագահողը հարցնում է կողմերին՝ արդյոք նրանք չեն ցանկանում ներկայացնել լրացուցիչ նյութեր: Նման միջնորդությունների բացակայության դեպքում նախագահողը կողմերին իրավունք է տալիս հանդես գալու ամփոփիչ ճառերով: Սկզբում հանդես է գալիս հայցվորը կամ նրա ներկայացուցիչը, պատասխանողը կամ նրա ներկայացուցիչը, այնուհետև՝ երրորդ անձը:

Դատական վիճաբանություններից հետո նիստը նախագահողը դատավարության մասնակիցներին հարցնում է, թե նրանք արդյոք չեն ցանկանում միջնորդություններ հարուցել: Եթե այդպիսիք չկան, նախագահողն ավարտում է գործի դատաքննությունը և հայտարարում է գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման վայրն ու ժամանակը:

**Վարչական դատարանի որոշումները վարչական գործով:** Վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել և որոնք չեն պարզվել, տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, ինչպես նաև հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

**Վարչական դատարանի ակտերը ենթակա չեն վերաքննության:** Դրանք բողոքարկվում են միայն Վճռաբեկ դատարանում: Այդ դատարանի կողմից վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության վերադարձնելու մասին դատական ակտ կայացնելու դեպքում վարչական դատարանը հարուցում է գործի նոր քննության վարույթ:

Գործի նոր քննության վարույթ հարուցելու որոշումը սահմանված կարգով ուղարկվում է դատավարության մասնակիցներին: Գործի նոր քննությունն անցկացվում է կոլեգիալ՝ վարչական դատարանի երեք դատավորի կազմով: Առաջին անգամ գործը քննած դատավորը չի կարող մասնակցել տվյալ գործի նոր քննությանը:

### Հարցեր

1. Ո՞րն է քաղաքացիական գործ հարուցելու հիմքը:
2. Ի՞նչպե՞ս է ընթանում քաղաքացիական գործի ըստ էության քննությունը:
3. Ի՞նչ հարցեր է լուծում դատարանը քաղաքացիական գործով վճռում:
4. Ո՞ր քաղաքացիական գործերը ենթակա չեն բողոքարկման:
5. Ո՞րն է վարչական գործ հարուցելու հիմքը:
6. Ի՞նչպիսի՞ն է վարչական գործով դատական քննության կարգը:
7. Ի՞նչ կարգով կարող են վերանայվել վարչական դատարանի ակտերը:

## ԳԱՍ 20. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԵՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Արդի աշխարհում վեճերը բազմազան են՝ սկսած միջանձնայինից մինչև միջպետական: Գոյություն ունի գիտություն, որն անվանում են **կոնֆլիկտաբանություն**: Այն մշակում է կոնֆլիկտների (վեճերի) կառավարման և լուծման բավականին արդյունավետ եղանակներ ու մեթոդներ: Անշուշտ, դատական մարմիններին դիմելով՝ կարելի է լուծել իրավական վեճերը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ վեճը կարող է չունենալ իրավական բնույթ, այլ, օրինակ՝ կենցաղային: Բացի այդ, պետական արդարադատությունը շատ երկարատև, թանկարժեք, ոչ ճկուն ընթացակարգ է: Այս հանգամանքից ելնելով՝ մշակվել և կիրառվում են վեճերի լուծման եղանակներ, որոնք ընդունված է անվանել **արտադատական**: Վեճերի լուծման այդ եղանակներն այլընտրանք են պետական դատարաններին, ինչի պատճառով դրանք ավելի հաճախ անվանում են վեճի լուծման այլընտրանքային եղանակներ:

**Իրավական վեճերի լուծման այլընտրանքային եղանակները վեճերի լուծումն է արտադատական ճանապարհով, որի կիրառմամբ վիճող կողմերը կնքում են փոխազատության համաձայնություն:**

Այլընտրանքային եղանակով վեճի լուծումը տեղին է, երբ վեճի կողմերը շահագրգռված են համագործակցության մեջ, ամենաքիչը գոնե վեճի լուծման ընթացքում և դրա համար: Վեճն իսկապես լուծելու համար կողմերը պետք է դրսևորեն իրատեսական մտտեցում, քանի որ այդ դեպքում իրենք կրում են շատ ավելի քիչ նյութական, բարոյահոգեբանական վնասներ: Ըստ էության, այդ դեպքում ոչ ոք չի պարտվում, այլ կողմերը կնքում են փոխադարձորեն ձեռնտու համաձայնություն:

Իրավական վեճերի լուծման այլընտրանքային եղանակներից տարածված են բանակցությունները, միջնորդությունը, արբիտրաժը:

**Բանակցությունը** գործընթաց է, որին անմիջականորեն մասնակցում են վեճի կողմերը՝ իրենց ապագա վարքագծի վերաբերյալ որոշում ընդունելու համար: Երբ դրանք արդյունք չեն տալիս, խորհուրդ է տրվում լուծման գործընթաց ընդգրկել կոնֆլիկտի մեջ մասնակցություն չունեցող երրորդ կողմին:



**Միջնորդությունը** վեճի լուծման այլընտրանքային եղանակ է, որը ենթադրում է վիճող կողմերի վեճի լուծմանը մասնակցելու ամենամեղմ ձև, քանի որ կողմերը համաձայնություն են ձեռք բերում՝ ժամանակ առ ժամանակ համագործակցելու միջնորդի մասնակցությամբ: Այս ընթացակարգում մասնակցում է երրորդ անձը (միջնորդը), ով օգնում է վեճի կողմերին վեճի լուծման ուղիներ գտնելու համար: Արդի աշխարհում միջնորդությունը հասարակական կյանքի տարբեր բնագավառներում



ծագած կոնֆլիկտների լուծման կարևորագույն գործիք է: Միջնորդությունը լայնորեն օգտագործվում է հատկապես հասարակական հիմնախնդիրները լուծելիս (օրինակ՝ քաղաքական վեճերը), իրավաբանական պրակտիկայում (գույքային, աշխատանքային և ընտանեկան վեճեր):

**Արբիտրաժի՝** որպես վեճի լուծման այլընտրանքային եղանակի կիրառման դեպքում վեճի կողմերը պարտավորվում են պարտադիր դիմել

երրորդ կողմին, իսկ դիմելու դեպքում՝ կատարել նրա որոշումը:

Արբիտրաժը՝ որպես վեճի լուծման եղանակ, մասամբ կարգավորում է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը: Ձեռնարկատիրական հարաբերությունների մեջ գտնվող կողմերն ազատ են իրենց միջև վեճերի լուծման ընթացակարգի շուրջ համաձայնվելու հարցում: Երկկողմանի ցանկության դեպքում նրանք կնքում են գրավոր պայմանագիր, որով համաձայնվում են իրենց միջև առկա կամ հնարավոր բոլոր կամ որոշակի վեճերն արբիտրաժի լուծմանը հանձնելու վերաբերյալ: Արբիտրաժի իրականացման նպատակն է առանց անհարկի ձգձգումների կամ ծախսերի ստանալ անկողմնակալ արբիտրաժային տրիբունալի կողմից վեճերի արդարացի լուծում: Կողմերը կարող են նաև հրաժարվել արբիտրաժին դիմելու իրավունքից:

## 2. ՀԱՉՈՂ ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Սիրելի՛ աշակերտներ, բանակցությունները մարդկանց՝ վեճի կողմերի միջև առաջացած խնդիրների քննարկումն է, որը շատ հաճախ ավարտվում է փոխշահավետ համաձայնության կայացմամբ: Բանակցությունները ճիշտ վարելու և դրանք հաջողությամբ պսակելու համար անհրաժեշտ է իմանալ, որ ցանկացած բանակցային գործընթաց անցնում է մի քանի փուլեր, ինչպես նաև գոյություն ունեն բանակցություն վարելու որոշակի հնարքներ ու կանոններ:

Հետևելով ստորև բերվող փուլերին և դրանցից ամեն մեկին վերաբերող խորհրդատվական հրահանգներին՝ փորձեք ձեռնարկել հրապարակային բանակցային գործընթաց դասարանցիների միջև իրականում առկա (կամ էլ մտացածին) ինչ-որ վեճի կողմերի մասնակցությամբ:

Առաջին հերթին ընտրեք խնդիրը, որի շուրջ բանակցելու եք: Եթե խնդիրն իրականում առկա է, ապա դա որոշակիորեն կհեշտացնի բանակցային գործընթացը, որովհետև վեճի կողմերը «ապրում են» դրանով: Նրանց մնում է ընդամենը հետևել հրահանգներին: Իսկ եթե վեճը հորինովի է, ապա անհրաժեշտ է կատարել դերաբաշխում: Կողմերին այս դեպքում սպասում է մի քիչ ավելի շատ նախաբանակցային ջանքեր ու աշխատանք:

### ԲԱՆԱԿՅԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ

**Առաջին փուլ. կողմերի ելույթները:** Բանակցությունները, որպես կանոն, ավարտվում են հաջողությամբ, եթե բանակցող կողմերն ունեն ցանկություն՝ լսելու ու հասկանալու դիմացինին և, անշուշտ, ձգտում՝ լուծելու խնդիրը, վեճը: Բանակցությունների ընթացքում ցույց տվեք ձեր պատրաստակամությունը լսելու դիմացինին և առաջարկեք նրան արտահայտելու իր տեսակետը վիճելի խնդրի վերաբերյալ: Մի՛ փորձեք հենց սկզբից սրելու խնդիրը, այլ ընդհակառակը՝ մեղմեք:

Բանակցային ելույթների ընթացքում փորձեք շրջանցել այնպիսի զգացմունքները, ինչպիսիք են չարությունը, գայրույթը, հուզումները: Եթե կարիք կա, պարզ քննարկեք դրանք, առաջարկեք դիմացինին արտահայտել իր զգացումները և համաձայնվեք նրա հետ: Նման հնարքը օգնում է մեղմելու սրված մթնոլորտը, հանգիստ ու բանականությամբ քննարկել վեճը, այլ ոչ թե առաջնորդվել զգացմունքներով:

**Երկրորդ փուլ. շահերի պարզում:** Նախնական արտահայտվելուց հետո շատ կարևոր է վեր հանել միմյանց շահերը: Դրա համար օգտագործեք դասական հարցադրումը. «Ինչո՞ւ, ինչի՞ համար»: Այս հարցադրմանը պատասխանելիս ձեր կարծիքներն ու ցանկությունները արտահայտեք անկեղծորեն, մի՛ կեղծեք:

Փորձեք քննարկման ընթացքում գտնել համընկնող դիրքորոշումներ և կենտրոնանալ դրանց վրա: Նկատի ունեցեք, որ շատ վեճեր առաջանում են թյուրիմացություններից և կարող են ավարտվել ընդամենը ներողություն խնդրելով:

**Երրորդ փուլ. օրակարգի որոշում:** Հնարավոր է, որ արդեն երկրորդ փուլում ի հատ գա վեճի լուծման նոր տարբերակ և բանակցություններն ավարտվեն: Սակայն հաճախ վեճի լուծման համար պահանջվում են լրացուցիչ ջանքեր: Այս դեպքում արդեն քննարկված շահերի հիման վրա կազմեք այն հարցերի ցուցակը, որոնք դուք կցանկանայիք քննարկել: Զննարկված հարցերի ձևակերպումները և շրջանակը պետք է լինեն երկուստեք ընդունելի, այսինքն՝ կողմերը համաձայն են քննարկելու հենց այդ հարցերը և դրանք իրենց շահերի բավարարման միջոց են:

Կարևոր է, որպեսզի քննարկման օրակարգում ներառվեն կողմերի շահերին իրականում վերաբերող հարցերը: Ցանկալի է օրակարգը գրի առնել:

**Չորրորդ փուլ. առաջարկություններ:** Այս փուլում օգտագործվող արդյունավետ հնարքներից է «խաղից դուրս» կանոնը: Դրա համար պատկերացնում եք վեճն այլ անձանց օրինակով և փորձում եք գտնել լուծումներ նրանց համար: Այս կանոնի կիրառման ժամանակ առաջարկում եք զանազան գաղափարներ՝ ինչքան շատ, այնքան լավ: Ցանկալի է դրանք գրի առնել: Առաջարկություններ անելու փուլում կիրառվող հնարքներից է դերափոխությունը, երբ որ վեճի կողմերը սկսում են խաղալ «հակառակողի» դերը՝ պատկերացնելով, թե ինչ կանեին իրենք իրենց ընդդիմախոսի փոխարեն:

**Հինգերորդ փուլ. որոշման ընտրություն և համաձայնության կայացում:** Գրի առնված առաջարկությունները ենթարկեք ստուգման հետևյալ հարցադրմամբ. դրանցից ո՞րն է իրականում ընդունելի ու կիրառելի երկու կողմերի համար: Ամեն մի

առաջարկի համար կիրառեք «Ի՞նչ կլինի, եթե...» կամ «Դա հենց ա՞յն է, ինչ ես ուզում եմ, թե՞ ոչ» հարցադրումները: Եթե այս ընթացքում գտնում եք փոխադարձորեն ընդունելի առաջարկը, ապա փորձեք այն վերածել գրավոր համաձայնության: Դրանից հետո ստուգեք, թե արդյոք այն համապատասխանում է ձեր շահերին: Հետագա թյուրիմացություններից խուսափելու համար շատ կարևոր է պարզել, թե դուք և ձեր բանակցային գործընկերը միակե՞րպ էք հասկանում համաձայնության կետերը:

**Վեցերորդ փուլ. համաձայնության կատարում:** Ամեն մի բանակցություն իմաստունի, եթե դրա արդյունքում կնքված համաձայնությունը կատարվում է: Իհարկե, դա մնում է բանակցող կողմերի խղճին: Բայց իմացեք, որ չկատարումը կարող է էլ ավելի սրել վեճը: Սակայն հուսահատվել պետք չէ: Դուք կարող եք նախաձեռնել բանակցային նոր գործընթաց կամ էլ դիմել վեճի լուծման նոր միջոցի՝ միջնորդության:

**Հանրօգուտ աշխատանք:** Փորձեք ձեր դասարանում կամ դպրոցում հիմնել վեճերի լուծման մշտական գործող միջնորդական կենտրոն: Միջնորդությունը՝ որպես վեճի լուծման եղանակ, ընթանում է գրեթե նույն փուլերով ու ընթացակարգով, ինչ բանակցությունը: Միակ տարբերությունն այն է, որ բանակցային գործընթացին մասնակցում է միջնորդը: Նկատի ունեցեք՝ միջնորդի գործունեության սկզբունքներն են՝ չեզոքությունը, տեղեկույթի զաղտնիության պահպանումը:

### ԲԱՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Ելնելով վեճի բնույթից՝ ընտրեք վեճի լուծման եղանակը՝ բանակցություն կամ միջնորդություն:

2. Որպեսզի վեճն իրականում հարթվի և լուծում ստանա, անհրաժեշտ է որոշել թե ում հրավիրեք՝ շահագրգիռ անձանց, ծնողներին, ականատեսներից, հնարավոր է նաև փաստաբան:

3. Տանը մտածեք, թե որոնք են ձեր խորքային շահերը և նպատակը: Ինքներդ ձեզ տվեք հետևյալ հարցը. «Ինչո՞ւ է ինձ անհրաժեշտ այս կամ այն»:

4. Մտածեք այն մասին, թե բանակցությունների ո՞ր արդյունքն է ձեզ համար ընդունելի և ո՞րն է ձեր զիջումների սահմանը: Ի՞նչ է լինելու, եթե բանակցությունները կամ միջնորդությունը ձախողվեն: Ուրիշ ի՞նչ միջոցի կարող եք դիմել:

5. Մտածեք այն մասին, թե ինչպես կպատասխանեք վերը բերված 4 կետերի հրահանգներին մյուս կողմը:

6. Մտածեք և գրառեք վեճի վերաբերյալ ձեր առաջարկները՝ նկատի ունենալով, որ դրանք ընդունելի լինեն մյուս կողմի համար:

7. Եթե խնդիրը բարդ է, ապա խորհուրդ է տրվում այն գրի առնել, հավաքել անհրաժեշտ փաստաթղթեր, եթե կարիքը կա՝ դիմել փաստաբանի:

Նկատի ունեցեք՝ միջնորդը իրավական խորհրդատու չէ: Միաժամանակ մտածեք այն մասին, թե միջնորդին ո՞ր տեղեկույթը կարելի է հայտնել և որը՝ ոչ:

## ԳԼՈՒԽ 3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

### ԳԱՍ 21. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

#### 1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Հասարակական կյանքի ոլորտներից մեկն էլ **քաղաքացիական (գույքային) շրջանառությունն է**, որը ներառում է ապրանքափոխանակությունը, դրանք ձևակերպող գործարքները, դրանց բոլոր մասնակիցների հարաբերությունները: Քաղաքացիական շրջանառության մի մասը **ձեռնարկատիրական շրջանառությունն է՝** որպես ձեռնարկատերերի հարաբերությունների համակցություն:

Պետությունը կարգավորում է քաղաքացիական ազատ շրջանառությունը, որի արդյունքում կազմավորվում է իրավունքի առանձին ճյուղ՝ քաղաքացիական իրավունքը: **Քաղաքացիական իրավունքը կարգավորում է գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունները՝ կառուցված այդ հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարության և գույքային առանձնացվածության մեթոդի հիման վրա:** Իշխանության և ստորադասության մեթոդով կառուցված գույքային հարաբերությունները քաղաքացիական իրավունքը չի կարգավորում:

Գույքային հարաբերություններում գույքը պատկանում է որևէ անձի, կամ դրանք այնպիսի հարաբերություններ են, որոնց արժեքը կարող է արտահայտվել դրամական ձևով: Օրինակ՝ առքուվաճառք, բնակելի տան վարձակալություն, ինչպես նաև կրթական և նման այլ բնույթի ծառայությունների մատուցում (համերգ, թատրոն): Անձնական ոչ գույքային հարաբերություններից են կյանքը և առողջությունը, անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը, ապրանքանիշը:

Քաղաքացիական իրավունքի աղբյուր են Սահմանադրությունը, քաղաքացիական օրենսգիրքը, այնուհետև՝ այլ օրենքները և նորմատիվ այլ ակտերը:

**Իրավունքի սուբյեկտ անվանում են իրավունքով կարգավորվող հարաբերություններին մասնակից անձանց:** Իրավունքի ամեն մի ճյուղի բնորոշ է սուբյեկտների իր շրջանակը: Իրավունքի սուբյեկտ լինելու համար անհրաժեշտ է, որ անձն օժտված լինի իրավունակությամբ և գործունակությամբ:

**Իրավունակությունը սուբյեկտի՝ օրենքով ճանաչված ընդունակությունն է ունենալ իրավունքներ և կրել պարտականություններ:** Օրինակ՝ ունենալ սեփականության իրավունք, կնքել գործարքներ, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: **Գործունակությունը սուբյեկտի ունակությունն է ինքնուրույն՝ իր գործողություններով ձեռք բերել և իրականացնել իրավունքներ, իր համար ստանձնել պարտականություններ և կատարել դրանք:** Եթե իրավունակության հիման վրա անձը հնարավորություն ունի կնքել պայմանագիր, ապա գործունակությունն արտահայտվում է, օրինակ՝ գույքն իրականում գնելով կամ վաճառելով:

Քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ են իրավաբանական անձինք, պետությունը, տեղական ինքնակառավարվող համայնքները, ինչպես նաև քաղաքացիները, օտարերկրացիները և քաղաքացիություն չունեցողները: Վերջին երեքին միասին նշելու համար օրենքն օգտագործում է «ֆիզիկական անձ» հասկացությունը:

**Քաղաքացին որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ:** Քաղաքացու իրավունակությունը ծագում է նրա ծննդյան պահին և դադարում է մահվամբ: Երբեմն մինչև ծնվելը երեխան կարող է ձեռք բերել իրավունակություն: Օրինակ՝ չծնված երեխան ունի ժառանգության իրավունք մինչև ծնվելը՝ հոր մահվան դեպքում: Իրավունակությունը բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես:

Քաղաքացու իրավունակությունը և գործունակությունը կարող է սահմանափակվել: Օրինակ՝ հոգեկան խանգարման հետևանքով անձին անգործունակ ճանաչելու դեպքը և դրա դատական ընթացակարգը: Քաղաքացու իրավունակությունը կամ գործունակությունը սահմանափակելուն ուղղված գործարքներն առոչինչ են: Օրինակ՝ պայմանագիրը, որով քաղաքացին պարտավորվել է չզբաղվել ձեռնարկատիրությամբ, իրավաբանորեն առոչինչ է:

**Քաղաքացիների իրավունակությունը** ներառում է հետևյալ հնարավորությունները. սեփականության իրավունքով ունենալ գույք, ժառանգել և կտակել գույքը, զբաղվել ձեռնարկատիրական և օրենքով չարգելված այլ գործունեությամբ, կնքել օրենքին չհակասող գործարքներ և կրել պարտավորություններ, ունենալ ստեղծագործության հեղինակի և այլ իրավունքներ:

**Քաղաքացու գործունակությունը** նրա ընդունակությունն է իր գիտակցական գործողություններով և իր կամքով ձեռք բերել քաղաքացիական իրավունքներ և իրականացնել դրանք, իր համար ստեղծել քաղաքացիական պարտականություններ և կատարել դրանք: Նոր ծնված երեխան կարող է լինել տան սեփականատեր, որովհետև նա իրավունակ է ծննդյան պահից, բայց չի կարող իրականացնել սեփականատիրոջ իրավագործությունները, օրինակ՝ վաճառել տունը, որովհետև օրենքը նրան ճանաչում է անգործունակ: Հասուն բանականությունը, որ կապվում է տարիքի հետ, և ինքնուրույն կամքը գործունակության անհրաժեշտ պայմաններն են:

## 2. ՔԱՂԱՔԱՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Քանի որ մարդու գիտակցական սոցիալական հասունությունը միանգամից վրա չի հասնում, և նույնիսկ բավականին մեծ տարիքում նա կարող է ունենալ կամքի արատներ, օրինակ՝ տառապում է տկարամտությամբ, ապա օրենքը, ըստ գործունակության ծավալի, տարբերում է քաղաքացիների մի շարք խմբեր.

**1. Լրիվ գործունակ քաղաքացի:** Քաղաքացու լրիվ ծավալով գործունակությունը ծագում է չափահաս, այսինքն՝ 18 տարեկան դառնալու պահից: Այս ընդհանուր կանոնից օրենքը սահմանում է երկու բացառություն.

**1)** 16 տարին լրացած անչափահասը կարող է ճանաչվել լրիվ գործունակ (եմանսիպացիա), եթե նա աշխատում է աշխատանքային պայմանագրով կամ ծնողների,

որդեգրողների, հոգաբարձուի համաձայնությամբ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ: Էմանսիպացիան կատարվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման հիման վրա, եթե ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուն համաձայն են դրան: Եթե այդպիսի համաձայնություն չկա, ապա անչափահասի էմանսիպացումը կարող է անել դատարանը՝ իր վճռով:

**2)** Եթե օրենքով թույլատրվում է ամուսնանալ մինչև 18 տարեկան դառնալը, քաղաքացին լրիվ գործունակություն է ձեռք բերում ամուսնանալու պահից:

Գործունակ քաղաքացին իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Զաղաքացին դատարանի վճռով կարող է **սնանկ ճանաչվել**, եթե նա ի վիճակի չէ բավարարել պարտատերերի պահանջները: Այդ դեպքում պարտատերերի չբավարարված պահանջներն իրենց ուժը պահպանում են մինչև դրանց լիակատար մարումը:

Չափահաս գործունակ քաղաքացու խնդրանքով, որը վատառողջ լինելու պատճառով չի կարող ինքնուրույն իրականացնել ու պաշտպանել իր իրավունքները, կատարել պարտականությունները, նրա նկատմամբ կարող է սահմանվել **պատրոն-նաժ**: Խնամակալության և հոգաբարձության մարմինը պատրոն (օգնական) նշանակում է տվյալ քաղաքացու համաձայնությամբ: Չափահաս գործունակ քաղաքացու գույքը տնօրինում է պատրոնը: Զաղաքացու ապրուստի ու նրա կենցաղային կարիքների բավարարմանն ուղղված կենցաղային և այլ գործարքները պատրոնը կնքում է քաղաքացու համաձայնությամբ:

**2. Փոքրահասակների գործունակությունը:** 14 տարեկան չդարձած անձանց՝ փոքրահասակների փոխարեն գործարքները նրանց անունից կնքում են միայն նրանց օրինական ներկայացուցիչները՝ ծնողները, որդեգրողները կամ խնամակալները: Մինչև 6 տարեկանները չեն կարող կատարել իրավական գործողություններ: 6-14 տարեկանները կարող են ինքնուրույն կնքել մանր կենցաղային գործարքներ:

Փոքրահասակները իրավունք ունեն կնքել անհատույց օգուտների ստանալուն ուղղված գործարքներ, եթե դրանցով չի պահանջվում նոտարական վավերացում կամ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում: Օրինակ՝ նա կարող է նվեր ստանալ դրամ և առարկաներ: Սակայն տուն ստանալուն ուղղված գործարք չի կարող կնքել: Նրանց փոխարեն այդպիսի գործարքները կարող են կնքել օրինական ներկայացուցիչները:

Փոքրահասակի բոլոր գործարքներով գույքային պատասխանատվություն են կրում նրա օրինական ներկայացուցիչները, եթե չապացուցեն, որ պարտավորությունն իրենց մեղքով չի խախտվել: Նրանք պատասխանատվություն են կրում նաև փոքրահասակի պատճառած վնասի համար:

**3. Սահմանափակ գործունակ անչափահասի գործունակությունը:** Սահմանափակ գործունակ են 14-18 տարեկանները: Նրանք գործարքներ կնքում են իրենց օրինական ներկայացուցիչների (ծնողներ, որդեգրողներ, հոգաբարձու) գրավոր համաձայնությամբ, բացառությամբ որոշ գործարքների: Օրինակ, 14-18 տարեկան

անչափահասը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, եթե ունի օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությունը: Նրանց կնքած գործարքը վավեր է նաև նրանց օրինական ներկայացուցիչների հետագայում տված գրավոր հավանության դեպքում: Հակառակ դեպքում գործարքն անվավեր է:

14-18 տարեկան անչափահասներն առանց օրինական ներկայացուցիչների համաձայնության իրավունք ունեն տնօրինել իրենց աշխատավարձը, կրթաթոշակը և այլ եկամուտները, իրականացնել ստավոր գործունեության արդյունքի հեղինակի իրավունքներ. ավանդներ մուծել վարկային հաստատություններ և տնօրինել դրանք՝ օրենքին համապատասխան. կնքել այն բոլոր գործարքները, որ իրավունք ունեն կնքելու 6-14 տարեկան փոքրահասակները. լինել կոտպերատիվի անդամ:

14-18 տարեկան անչափահասներն ինքնուրույն գույքային պատասխանատվություն են կրում իրենց կնքած գործարքներով, ինչպես նաև իրենց գործողություններով պատճառված վնասի համար:

**4. Անգործունակ ճանաչված քաղաքացիներ:** Անձը, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ դեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել: Նրա նկատմամբ սահմանվում է **խնամակալություն**, այսինքն՝ նշանակվում է խնամակալ: Անգործունակ ճանաչված քաղաքացու խնամակալը նրա ներկայացուցիչն է՝ օրենքի ուժով և նրա անունից, ու ի շահ նրա կնքում է բոլոր անհրաժեշտ գործարքները:

**5. Քաղաքացու գործունակության սահմանափակումը:** Ոգելից խմիչքների կամ քնրամիջոցների չարաշահման, ինչպես նաև մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած քաղաքացու գործունակությունը կարող է դատարանով սահմանափակվել: Նրա նկատմամբ սահմանվում է **հոգաբարձություն**: Այդպիսի քաղաքացին իրավունք ունի կնքել միայն մանր կենցաղային գործարքներ: Մնացած գործարքները նա կարող է կնքել, ինչպես նաև ստանալ աշխատավարձ, կենսաթոշակ և այլ եկամուտներ ու տնօրինել դրանք միայն հոգաբարձուի համաձայնությամբ:

### 3. ՔԱՎԱՔԱՅԻՆՎԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՈՒՆԸ

Կնքված պայմանագրերը կարող են նաև խախտվել: Օրինակ՝ նախնական պայմանագրի կողմերից մեկը ցանկության դեպքում կարող է մյուս կողմից պահանջել կնքելու հիմնական պայմանագիր: Դա նրա իրավունքն է: Ենթադրենք, մյուս կողմը խուսափում կամ էլ հրաժարվում է կնքել հիմնական պայմանագիրը: Այս դեպքում առկա է պայմանագրի կողմերից մեկի սուբյեկտիվ իրավունքի խախտում: Դրա համար օրենքն իրավահարաբերությունների մասնակիցներին օժտել է նաև խախտումից պաշտպանվելու իրավագործությամբ: Քաղաքացիական իրավունքների պաշտպանության ձևերը երկուսն են՝ պետական մարմինների միջոցով պաշտպանությունը և ինքնապաշտպանությունը:

Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը պետական մարմինների

միջոցով ընդգրկում է այն գործողությունները, որոնք կատարվում են ոչ թե ինքնուրույն, այլ պետական և այլ իրավասու մարմինների օգնությանը դիմելով. անձը, որի իրավունքները խախտվել են կամ վիճարկվում են, դիմում է նրանց: Պաշտպանության այս ձևում հիմնական կարգը դատական պաշտպանությունն է:

Օրենքը սահմանում է խախտված քաղաքացիական իրավունքների վերականգնման հետևյալ եղանակները. իրավունքը ճանաչելը, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելը, իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծած գործողությունները կանխելը, պարտականությունը բնեղենով կատարելուն հարկադրելը, վնասները հատուցելը և այլն: Հատուկ եղանակներ են՝ գրավը, նախավճարը և այլն (*տես 23-րդ դասը*): Քաղաքացիական իրավունքների պաշտպանության թվարկված եղանակները դուք կսովորեք հաջորդ դասերում: Այստեղ կքննարկենք դրանցից մի քանիսը:

**1. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտը դատարանի կողմից անվավեր ճանաչելը:** Օրենքին կամ այլ իրավական ակտերին չհամապատասխանող և անձի քաղաքացիական իրավունքները և օրենքով պաշտպանվող շահերը խախտող հանրային մարմնի ակտը դատարանով կարող է ճանաչվել անվավեր, իսկ խախտված իրավունքը՝ ենթարկվել պաշտպանության որևէ եղանակով: Օրինակ՝ դատարանը վճռով հանրային մարմնին կարող է պարտադրել հատուցել իր կողմից պատճառված վնասը:

**2. Դատարանի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին հակասող ակտը չկիրառելը:** Որևէ գործի դատական քննության ընթացքում, եթե հանկարծ գործն ինչ-որ կերպ առնչվի օրենքին չհամապատասխանող հանրային մարմնի ակտի հետ, ապա դատարանը, պարզելով այդ հանգամանքը, չպետք է կիրառի այդ ակտը:

**3. Պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանությունը:** Քաղաքացին իրավունք ունի դատարանով պահանջել հերքելու թվարկված արժեքներն արատավորող տեղեկությունները, եթե դրանք տարածված անձը չապացուցի, որ դրանք համապատասխանում են իրականությանը: Եթե արատավորող տեղեկությունները տարածվել են ՁԼՄ-ներով, ապա դրանք պետք է հերքվեն նույն միջոցներով: Եթե նշված տեղեկությունները պարունակում են կազմակերպությունից ելնող փաստաթղթում, ապա այն պետք է փոխարինվի կամ հետ կանչվի:

### Հարցեր

1. Ի՞նչ հարաբերություններ է կարգավորում քաղաքացիական իրավունքը:
2. Ի՞նչ են իրավունքի սուբյեկտների իրավունահյությունը և գործունեությունը:
3. Ի՞նչ է քաղաքացու գործունահյությունը:
4. Որո՞նք են քաղաքացու գործունահյության տեսակները:
5. Ինչպե՞ս է անչք ճանաչվում անգործունահ կամ սահմանափակ գործունակ:
6. Ինչո՞ւ է անհրաժեշտ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը:
7. Քաղաքացիական իրավունքների պաշտպանության ի՞նչ եղանակներ գիտեք:

## ԳԱՄ 22. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

### 1. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՉԵՎԵՐԸ

Մարդիկ և կազմակերպություններն իրենց կենսագործունեության ընթացքում կատարում են տարբեր տեսակի գործարքներ: **Գործարքները գիտակցված, նպատակամղված գործողություններ են, որոնց կատարմամբ անձինք ձգտում են հասնել որոշակի իրավական հետևանքների:** Օրինակ՝ ձեռք բերել ինչ-որ գույք, օտարել գույքը և այլն:

Գործարքները կարող են լինել միակողմանի և երկկողմանի: **Միակողմանի գործարք է**, օրինակ՝ կտակը, որի կատարման համար բավական է, որ մի կողմն արտահայտի իր կամքը: **Երկկողմանի (բազմակողմանի) գործարքի** կատարման համար անհրաժեշտ է երկու և ավելի անձանց կամքի արտահայտություն: Այդպիսի գործարքի օրինակ է պայմանագիրը: Հետևաբար, գործարքները, որոնցում առկա են երկու և ավելի կողմեր, կոչվում են պայմանագրեր: Այսինքն՝ ամեն մի պայմանագիր գործարք է, բայց ոչ բոլոր գործարքներն են պայմանագիր: Գործարքները, որոնց կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք և ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը, կոչվում են պայմանագրեր:

**«Գործարքի ձև» հասկացությունը:** Գործարք (պայմանագիր) կնքելու համար անձանց կամքն արտաքին դրսևորում պետք է ստանա: Գործարքի (պայմանագրի) ձևը գործողություն կատարող սուբյեկտի կամքի արտահայտման եղանակն է: Գործարքն իր ձևով պետք է համապատասխանի օրենքով ներկայացվող պահանջներին: Հակառակ դեպքում առաջ են գալիս գործարքի անվավերության և վիճարկելիության հիմնախնդիրներ: **Գործարքները կարող են ունենալ բանավոր կամ գրավոր ձև:** Գրավոր գործարքներն իրենց հերթին լինում են հասարակ գրավոր, նոտարի կողմից վավերացված և պետական գրանցման ենթակա գործարքներ:

**Բանավոր գործարքներ:** Սրանք կնքվում են կամքի բառային արտահայտման ճանապարհով: Այդ դեպքում գործարքի մասնակիցը բառերով ձևակերպում է ինչպես իր պատրաստակամությունը կնքել գործարք, այնպես էլ դրա կատարման պայմանները: Գործարքը, որի համար օրենքով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ գրավոր ձև, կարող է կնքվել բանավոր: Գործարք կնքող անձինք կարող են ընտրություն կատարել և ցանկության դեպքում օրենքով թույլատրվող բանավոր գործարքը դարձնել գրավոր: Օրինակ, քաղաքացիների միջև աշխատավարձի սահմանված նվազագույն չափի քսանապատիկ գումարը գերազանցող գործարքները պետք է կնքվեն հասարակ գրավոր ձևով: Այստեղից բխում է, որ աշխատավարձի սահմանված նվազագույն չափի քսանապատիկ գումարը չգերազանցող գործարքները կնքվում են բանավոր: Սակայն, եթե կողմերը պայմանավորվել են տվյալ պայմանագիրը կնքել գրավոր ձևով, ապա այն կնքված է համարվում դրան գրավոր ձև տալուց հետո, թեկուզև այդ ձևն օրենքով չի պահանջվում:

Բանավոր կնքվող գործարքների դեպքում կարող են տրվել փաստաթղթեր, որոնք հաստատում են դրանց կատարումը (ապրանքային կտրոններ, տեղեկանք գնումների մասին և այլն), որը, սակայն, չի փոխում գործարքի բանավոր ձևը:

Գործարքը, որ կարող է կնքվել բանավոր, համարվում է կնքված նաև այն դեպքում, եթե անձի վարքից ակնհայտ է գործարք կնքելու նրա կամքը: Այդպիսի վարքն անվանում են **կոնկլուզենտ**: Օրինակ՝ ավտոմատի մեջ դրան գցելով՝ անձը ցանկություն է հայտնում գնել ավտոմատում պարունակվող ապրանքը:

Երբեմն օրենքով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում **լուրջունը** ևս կարող է համարվել գործարք կնքելու կամքի արտահայտություն: Օրինակ, եթե վարձակալը շարունակում է օգտագործել վարձակալված գույքը պայմանագրի ժամկետը լրանալուց հետո, իսկ վարձատրում չի առարկում դրան, ապա պայմանագիրը համարվում է նորացված անորոշ ժամկետով:

**Հասարակ գրավոր գործարքներ:** Գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց, կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից: Կողմերի համաձայնությամբ ցանկացած գործարք կարող է կնքվել գրավոր, չնայած որ օրենքը գրավոր ձև չի պահանջում:

Հասարակ գրավոր ձևով պետք է կնքվեն՝ 1) իրավաբանական անձանց՝ միմյանց միջև և քաղաքացիների հետ գործարքները, 2) քաղաքացիների միջև աշխատավարձի սահմանված նվազագույն չափի քսանապատիկ գումարը գերազանցող, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ անկախ գումարի չափից գործարքները:

Գործարքը ձևակերպող փաստաթղթերը կարող են կատարվել մի քանի օրինակներով: Բոլոր օրինակները համարվում են իսկական (քնօրինակ) և ունեն հավասար իրավական ուժ: Դրանով են իսկական օրինակները տարբերվում պատճեններից:

Գործարքը գրավոր կերպով ձևակերպող ցանկացած փաստաթղթի պարտադիր հատկանիշ է համարվում գործարքը կնքող անձի (անձանց) ստորագրություն(ներ)ը: Եթե անձը ֆիզիկական արատի, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող իր ձեռքով ստորագրել, ապա նրա խնդրանքով գործարքը կարող է ստորագրել այլ անձ: Նրա ստորագրությունը վավերացնում է նոտարը՝ նշելով այն պատճառները, որոնց ուժով գործարք կնքողը չի կարողացել ստորագրել այն:

Գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը գործարքը դարձնում է վիճահարույց: Սակայն վեճի դեպքում օրենքը կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից:




**Գործարքների նոտարական վավերացումը:** Նոտարիատը հատուկ պետական մարմին է, որն օրենքի հիման վրա կատարում է իրավական նշանակություն ունեցող գործողություններ, ինչպես նաև հաստատում է իրավաբանական փաստեր:

Գործարքի նոտարական վավերացումը կատարվում է գրավոր կնքված գործարքի փաստաթղթի վրա՝ նոտարի կողմից վավերացնող մակագրությամբ: Գործարքների նոտարական վավերացումը պարտադիր է՝

1) օրենքով նշված դեպքերում,

2) կողմերից մեկի պահանջով, թեկուզև օրենքով տվյալ տեսակի գործարքների համար այդ ձևը չի պահանջվում:

Նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի առոչինչության:



**Գործարքի պետական գրանցումը:** Շատ գործարքներ, եթե նույնիսկ կնքվել են պատշաճ ձևով, ուժ չունեն, քանի դեռ գործարքը կամ նրանից բխող իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման: Պետական գրանցման ենթակա են անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքները: Օրինակ՝ տան առքուվաճառքի պայմանագիրը ենթակա է գրանցման կադաստրում: Շարժական գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ օրենքով նախատեսված դեպքերում: Օրինակ՝ ավտոմեքենայի առքուվաճառքը: Եթե օրենքը գործարքի վավերականությունը կապում է պետական գրանցման հետ, ապա միայն ինքը՝ գործարքը, առանց գրանցման իրավական հետևանքներ չի առաջացնում: Նման գործարքն առոչինչ է:

## 2. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

**Գործարքների վավերության պայմանները:** Որպեսզի գործարքը համարվի վավերական, այն պետք է համապատասխանի գործարքին օրենքով ներկայացվող պահանջներին: Հակառակ դեպքում գործարքն անվավեր է օրենքին հակասող արատներ ունենալու պատճառով: Անվավեր գործարքը չի ճանաչվում որպես իրավական փաստ, հետևաբար՝ այն չի առաջացնում իրավական հետևանքներ, որոնք կողմերը նկատի ունեին գործարքը (պայմանագիրը) կնքելիս:

**Անվավեր գործարքները լինում են վիճահարույց և առոչինչ:** Գործարքի վիճահարույց լինելը նշանակում է, որ անհրաժեշտ է ապացուցել գործարքի վավերության համար նշանակություն ունեցող որևէ փաստ: **Վիճահարույց գործարքը** վավեր կարող է ճանաչել միայն դատարանը՝ օրենքով սահմանված հիմքերով: **Առոչինչ գործարքներն** անվավեր են օրենքի ուժով:


**Գործարքի անվավերության հետևանքները:** Անվավեր գործարքը չի առաջացնում իրավական հետևանքներ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից: Գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացվածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (օրինակ՝ սպառվել է)՝ հատուցել դրա արժեքը դրամով: Որոշ անվավեր գործարքների համար սահմանված են նաև այլ անբարենպաստ հետևանքներ:

### 3. ԱՆՎԱՎԵՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

**Սուբյեկտային կազմում արատներով գործարքները:** Այս գործարքները կապված են քաղաքացիների գործունակության հետ և լինում են չորս տեսակի.

- Հոգեկան խանգարման հետևանքով անգործունակ ճանաչված քաղաքացու կնքած գործարքն առոչինչ է:
- Սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացու գույքի տնօրինման գործարքը՝ կնքված առանց հոգեբարձուի համաձայնության, վիճահարույց է: Դատարանը կարող է հոգաբարձուի հայցով անվավեր ճանաչել այն: Այս կարգը չի տարածվում կենցաղային մանր գործարքների վրա, որոնք նման անձը կարող է կնքել ինքնուրույն:
- 14 տարեկան չդարձած անչափահասի կնքած գործարքն առոչինչ է: Փոքրահասակի շահերից ելնելով՝ նրա կնքած գործարքն օրինական ներկայացուցչի, օրինակ՝ ծնողի պահանջով դատարանով կարող է ճանաչվել վավեր, եթե այն կնքվել է ի շահ փոքրահասակի: Այս կարգը չի տարածվում փոքրահասակի կնքած կենցաղային մանր և այլ գործարքների վրա, որոնք նա իրավունք ունի կնքել ինքնուրույն:
- 14-18 տարեկան անչափահասի կողմից առանց իր օրինական ներկայացուցչի համաձայնության կնքած գործարքն այն դեպքերում, երբ նման համաձայնությունն պահանջվում էր, դատարանով կարող է ճանաչվել անվավեր:

**Կամքի արատներով գործարքներ:** Գործարքի հիմքը կամքն է: Հենց կամքն է ստեղծում գործարք: Կամքը պետք է ձևավորվի ազատ, առանց մոլորության, խաբեության ազդեցության, իսկ արդեն կնքված գործարքը պետք է ճիշտ արտացոլի ներքին կամքը: Կամքի թերություններով գործարքներն օրենքը համարում է վիճահարույց, հետևաբար՝ շահագրգիռ անձանց հայցով դրանք կարող են ճանաչվել անվավեր:



Կամքի արատներով գործարքներ են.

- գործարքի կնքման պահին իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ ղեկավարելու անընդունակ քաղաքացու (օրինակ՝ հարբածի) կնքած գործարքը.
- էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը: Էական նշանակություն ունի գործարքի բնույթի կամ դրա առարկայի այնպիսի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը, որը զգալիորեն պակասեցնում է այն ըստ նշանակության օգտագործելու հնարավորությունները.
- բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, ինչպես նաև մեկ կողմի ներկայացուցչի՝ մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ կնքված գործարքը.
- խաբեությամբ կնքված, ինչպես նաև ստրկացուցիչ գործարքը: **Ստրկացուցիչ** է այն գործարքը, որն անձն ստիպված է եղել կնքել ծանր հանգամանքների բերումով՝ իր համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններով:

**Բովանդակությամբ արատավոր գործարքներ:** Այս գործարքներն անվավեր են ճանաչվում գործարքի պայմանների և օրենքի, այլ իրավական ակտերի պահանջների միջև տարաձայնության հետևանքով: Այդպիսի գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

**Անվավեր գործարքների հատուկ տեսակներ են կեղծ և շինծու գործարքները:** **Կեղծ է** առերևույթ, առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը, օրինակ՝ կողմերը կնքել են առքուվաճառքի պայմանագիր, սակայն առերևույթ, առանց դրա կատարման: Կեղծ գործարքը առոչինչ է:

**Շինծու** գործարքով քողարկվում է մեկ այլ գործարք: Օրինակ՝ հաստոցն իրականում վաճառվել է, սակայն փաստաթղթով այն ձևակերված է որպես վարձակալված գույք: Շինծու գործարքը ևս առոչինչ է: Այդ գործարքի նկատմամբ, հաշվի առնելով դրա էությունը, կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս:

### Հարցեր

1. Ի՞նչ է գործարքը, և որո՞նք են դրա տեսակները:
2. Ի՞նչ է գործարքի չեղ, և որո՞նք են դրանք:
3. Ո՞ր գործարքներն են կնքվում բանավոր:
4. Որո՞նք են գործարքի հասարակ գրավոր չեղ չպահպանելու հետևանքները:
5. Ո՞ր գործարքներն են ենթակա նոտարական վավերացման:
6. Ո՞ր գործարքներն են ենթակա պետրական գրանցման:
7. Ի՞նչ են գործարքի վավերության պայմանները:
8. Որո՞նք են անվավեր գործարքների տեսակները:
9. Ի՞նչ հետևանքներ են առաջացնում անվավեր գործարքները:
10. Ի՞նչ են ստրկեկտային կազմով արատավոր գործարքները:
11. Ի՞նչ են կամքի և չեղի արատով գործարքները:
12. Ո՞ր գործարքներն են համարվում բովանդակությամբ արատավոր:

## ԳՍՍ 23. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1. «ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՂՄԵՐԸ

Քաղաքացիաիրավական պարտավորությունն իրավահարաբերություն է, որի մեկ կողմը (պարտապանը) պարտավոր է մյուս կողմի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Կախված ծագման հիմքերից՝ պարտավորությունները լինում են երկու տեսակի՝ **պայմանագրային** և **արտապայմանագրային**: Կնքված պայմանագիրը իրավական փաստ է, որն առաջացնում է պարտավորություն: Արտապայմանագրային պարտավորություններն առաջանում են այլ իրավական փաստերից՝ միակողմանի գործարք (կտակ), վնաս պատճառելուց, աղետներից և այլն:

**Պարտավորության կողմերն են պարտատերը և պարտապանը:** Ցանկացած իրավահարաբերության մեջ մասնակցում է երկու կողմ՝ իրավագոր և պարտավոր: Պարտավորության մեջ իրավագոր կողմին անվանում են **պարտատեր**, իսկ նրան պատկանող իրավունքը՝ պահանջի իրավունք: Մյուս կողմին անվանում են **պարտապան**, իսկ նրա կրած պարտականությունը՝ պարտք:

### 2. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵԼԸ

**Պարտավորությունները պետք է կատարվեն:** Պարտավորությունը կատարվում է պարտատիրոջ և պարտապանի կողմից պարտավորության բովանդակությունը կազմող իրավունքների ու պարտականությունների իրացմամբ: Կատարումը դրսևորվում է գործողության կատարմամբ կամ որոշակի գործողության կատարումից ձեռնպահ մնալով: Կատարումը գնահատելիս հաշվի է առնվում, թե արդյոք կատարվե՞լ է գործողությունը, եթե այո, ապա ինչպե՞ս: Համապատասխանաբար օրենքը պարտավորության խախտում է համարում այն չկատարելը կամ անպատշաճ կատարելը: Օրինակ՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերությունները կամ պարտավորության այլ պայմանների խախտումը: Պարտավորությունների կատարման սկզբունքներն են՝ իրական կամ բնեղենով կատարումը և պատշաճ կատարումը:

**Պարտավորության իրական՝ բնեղենով կատարման սկզբունքը:** Պարտավորությունը պետք է կատարել բնեղենով, այսինքն՝ պարտապանը պարտավոր է կատարել պարտավորության բովանդակությունը կազմող գործողությունը: Պայմանագրային պարտավորությունն իրականում չկատարելու դեպքում կարող է բարձրացվել հարկադիր կատարման հարցը: Իրական կատարումն ապահովող հատուկ միջոցներից է պարտավորությունը կատարելուց միակողմ հրաժարվելու անթույլատրելիությունը: Համաձայն այդ կանոնի՝ պարտականությունը կատարելուց միա-

կողմ հրաժարվելը և դրա պայմանները միակողմ փոփոխելը չի թույլատրվում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

**Պատշաճ կատարման սկզբունքը:** Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, իրավական նորմերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորություններին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան: Սիաժամանակ պարտավորությունը պետք է կատարվի պատշաճ սուբյեկտների կողմից, պատշաճ վայրում, պատշաճ ժամանակ, պատշաճ առարկայով և պատշաճ կերպով:

### 3. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԵՃՈՎՈՒՄԸ

Հիմնական միջոցը, որ պարտապանին ստիպում է կատարել պարտավորությունը, խախտմամբ պատճառված վնասների հատուցման սպառնալիքն է: Սակայն պարտատիրոջ համար դա բավարար չէ, քանի որ ամեն անգամ նա պետք է ապացուցի իր կրամ վնասի չափերը և դրա պատճառները: Իսկ դա բավականին դժվար գործ է: Բացի այդ, հաճախ պարտապանը չի ունենում համապատասխան միջոցներ, որպեսզի հատուցի պարտատիրոջ վնասները: Այդ պատճառով օրենքով սահմանված են պարտավորության կատարման ապահովման լրացուցիչ եղանակներ:

**Գրավ:** Գրավի պայմանագրի կողմերն են գրավատուն (կարող է լինել միայն գույքի սեփականատերը) և գրավառուն: Եթե չի կատարվում պարտավորությունը, ապա գրավառուն կարող է ի հաշիվ գրավ դրված գույքի ստանալ իր պարտքը:

**Երաշխավորության պայմանագիր:** Երաշխավորն այլ անձի, օրինակ՝ վարկ վերցրած անձի, պարտատիրոջ՝ բանկի առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել վարկ վերցնողի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի չկատարելու համար: Երաշխավորության պայմանագիրը պետք է կնքվի գրավոր:

**Երաշխիք:** Այն տալիս է բանկը, այլ վարկային կամ ապահովագրական կազմակերպությունը: Երաշխիք տվողն այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ՝ նրան վճարել դրամական գումար վերջինիս գրավոր պահանջով:

**Նախավճար:** Այն դրամական գումարն է, որ կողմերից մեկը պայմանագրով հասանելիք վճարների հաշվին տալիս է մյուս կողմին՝ իբրև պայմանագրի կնքման ապացույց և դրա կատարման ապահովում: Եթե պայմանագիրը չի կատարել նախավճար տված կողմը, այն մնում է մյուս կողմին: Եթե այն չի կատարել նախավճար ստացած կողմը, նա պարտավոր է մյուս կողմին վճարել նախավճարի գումարի կրկնապատիկը: Նախավճարի մասին համաձայնությունը կնքվում է գրավոր:

**Պարտապանի գույքի պահումը:** Պարտատերը, որի մոտ գտնվում է պարտապանին հանձնելու ենթակա գույքը, իրավունք ունի պարտապանի կողմից տվյալ գույքի համար վճարելու կամ դրա հետ կապված պարտատիրոջ ծախսերը և մյուս վնասները հատուցելու պարտավորությունը ժամկետին չկատարելու դեպքում գույ-

քը պահել իր մոտ մինչև պարտավորության կատարումը: Գույքը պահող պարտատիրոջ պահանջները բավարարվում են դրա արժեքից:

**Տուժանք կամ տույժ:** Օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարն է, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում: Տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ ինքը վնաս է կրել:

**Պարտավորության կատարումն ապահովող դատավարական միջոցներն** ապահովում են դատական որոշման կատարումը: Վճռի ուժով բնեղենով կատարումն իրականացվում է պարտապանի՝ իրերն ուղղակի վերցնելու միջոցով:

#### 4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՆՏԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Անձը, ով խախտել է պարտավորությունը, կրում է քաղաքացիական պատասխանատվություն, ինչը հանգում է գույքային սանկցիաների: Պատասխանատվության հիմքը պարտավորության խախտումն է, այսինքն՝ այն չկատարելը կամ անպատշաճ կատարելը:

**Պատասխանատվության ընդհանուր կանոնները:** Պարտավորությունը խախտած պարտապանը պարտավոր է հատուցել պարտատիրոջը պատճառած վնասները: Որպես կանոն, վնասները որոշելիս նկատի են առնվում վնասը կամավոր հատուցելու կամ դատարանի վճռի կայացման օրն այն վայրում գոյություն ունեցող գները, որտեղ պարտավորությունը պետք է կատարվեր: Եթե պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար սահմանված է տուժանք, ապա վնասները հատուցվում են տուժանքով չծածկված մասով, եթե օրենքով կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

**Դրամական պարտավորությունը չկատարելու համար պատասխանատվությունը:** Ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու կամ այլ անձի հաշվին անհիմն հարստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսների չափը որոշվում է դրամական պարտավորության կատարման օրվա բանկային տոկոսի հաշվարկային դրույքով:

**Պատասխանատվությունը և պարտավորությունը բնեղենով կատարելը:** Պարտավորությունն անպատշաճ կատարելու դեպքում տուժանք վճարելը և վնասներ հատուցելը պարտապանին չեն ազատում պարտքը բնեղենով կատարելուց:

Պարտավորությունը չկատարելու դեպքում վնասները հատուցելը և այն չկատարելու համար տուժանք վճարելը պարտապանին ազատում են պարտավորությունը բնեղենով կատարելուց:

Պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու դեպքում պարտատերն իրավունք ունի ողջամիտ ժամկետում և ողջամիտ գնով պարտավորության կատարումը հանձնարարել երբորդ անձանց կամ այն կատարել իր ուժերով ու պարտապանից պահանջել հատուցելու իր կրած անհրաժեշտ ծախսերը և այլ վնասները:

## 5. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԱԳԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Քաղաքացիաիրավական պարտավորության դադարումը պարտատիրոջ պահանջի իրավունքի և պարտապանի պարտքի վերացումն է:

**Պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը:** Պարտատերը, ընդունելով կատարումը, պարտավոր է պարտապանի պահանջով նրան ստացական տալ կատարումը լրիվ կամ որոշակի մասով ստանալու մասին: Եթե պարտապանը, ի հավաստումն պարտավորության, պարտքային փաստաթուղթ է տվել պարտատիրոջը, ապա պարտատերը, ընդունելով կատարումը, պետք է վերադարձնի այդ փաստաթուղթը, իսկ դրա անհնարինության դեպքում այդ մասին նշի իր տված ստացականում: Ստացականը կարող է փոխարինվել վերադարձվող պարտքային փաստաթղթի վրա արվող մակագրությամբ: Պարտքային փաստաթուղթը պարտապանի մոտ գտնվելը հավաստում է պարտավորության դադարումը, քանի դեռ այլ բան չի ապացուցվել: Սակայն պարտավորությունները կարող են դադարել նաև առանց կատարման՝ օրենքով սահմանված հետևյալ դեպքերում.

**1. Կատարման անհնարինություն:** Սա այնպիսի հանգամանք է, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ: Օրինակ՝ երգիչը կորցրել է երգելու ընդունակությունը, պարտավորության առարկա տունը փլվել է: Այդ դեպքում պարտատերն իրավունք չունի պարտապանից պահանջել կատարում: Կատարման անհնարինությունն ունի առանձնահատկություն՝ կախված նրանից, թե ինչպիսին է պարտավորության առարկա գույքը կամ գործողությունը: Գույքը կարելի է բաժանել **անհատական հատկանիշներով որոշվող և տեսակային հատկանիշներով**



**որոշվող գույքի:** Անհատապես որոշվող գույքն աչքի է ընկնում միայն իրեն հատուկ բնութագրերով: Օրինակ՝ Հ. Այվազովսկու վրձնած նկարը: Տեսակային հատկանիշներով գույքը բնութագրվում է քանակով, կշռով, չափով և այլն, այսինքն՝ այն դիտարկվում է որպես միևնույն գույքի հայտնի քանակ: Օրինակ՝ 1000 տուփ «Ախթամար» սիգարետ: Անհատապես որոշվող գույքն

իրավաբանորեն անփոխարինելի է, հետևաբար՝ կատարման անհնարինությունը վերաբերում է հենց դրանց: Իսկ տեսակային հատկանիշներով որոշվող գույքը փոխարինելի է:

**2. Հրաժարագին:** Կողմերի համաձայնությամբ պարտավորությունը կարող է դադարել՝ կատարման փոխարեն իրաժարագին տրամադրելով (դրամ վճարելով, գույք հանձնելով և այլն): Հրաժարագնի չափը, ինչպես նաև այն տրամադրելու ժամկետները և կարգը սահմանում են կողմերը:

**3. Հաշվանցում:** Օրինակ՝ անձը բանկից վերցրել է վարկ, որի վերադարձման ժամկետը լրացել է: Միևնույն ժամանակ նա բանկում ունի ավանդ: Այդ դեպքում բանկը կարող է կատարել հաշվանց: Պահանջների հաշվանց չի թույլատրվում օրենքով կամ պայմանագրով նախատեսված սի շարք դեպքերում: Օրինակ՝ եթե պահանջը վերաբերում է կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցմանը, ալիմենտի բռնագանձմանը:

**4. Նորացում:** Կողմերը համաձայնվում են հին պարտավորությունը փոխարինել նորով, որը նախատեսում է դրա այլ առարկա կամ կատարման այլ եղանակ: Օրինակ՝ փող պարտք վերցրած պարտապանը, չկարողանալով վճարել պարտքը, նոր պայմանագրով պարտավորվում է դրա փոխարեն պարտատիրոջ ավտոմեքենան վերանորոգել: Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման և ալիմենտի վճարման նկատմամբ նորացում չի թույլատրվում:

**5. Պարտքի ներում:** Պարտատերը պարտապանին ազատում է իր պարտքից՝ ներում է պարտքը: Սա նվիրատվության տեսակներից է:

**6. Պարտապանի և պարտատիրոջ համընկնում:** Օրինակ, եթե ինչ-որ պարտապան պարտք էր խանութին, սակայն նա դարձել է այդ խանութի սեփականատերը, կամ որդին պարտք էր հորը, իսկ հոր մահից հետո նա միակ ժառանգն է:

**7. Պարտապանի կամ պարտատիրոջ մահը:** Այս հիմքերով պարտավորությունը դադարում է, եթե կատարումը չի կարող տեղի ունենալ առանց նրանց անձնական մասնակցության կամ այլ կերպ անխզելիորեն կապված է նրանց անձի հետ, օրինակ՝ հանրահայտ նկարիչը պետք է պատրաստեր նկար: Իսկ, օրինակ, սովորական դրամական պարտքը չի կարող այս կերպ դադարել, այլ պետք է բավարարվի որպես ժառանգություն մնացած գույքի հաշվին: Պարտապան կամ պարտատեր իրավաբանական անձի լուծարմամբ պարտավորությունը դադարում է:

**8. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի հրապարակումը** դադարեցնում է պարտավորությունը, եթե կատարումը դառնում է անհնարին: Դրա հետևանքով վնաս կրած կողմերն իրավունք ունեն պահանջել ակտն ընդունող մարմնից հատուցելու իրենց պատճառված վնասները:

#### Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է քաղաքացիական պարտավորությունը:
2. Ի՞նչ է պարտավորության իրական կատարման սկզբունքը:
3. Ի՞նչ է պարտավորության պատշաճ կատարման սկզբունքը:
4. Որտե՞ր են պարտավորության կատարման ապահովման եղանակները, և ո՞րն է դրանց նշանակությունը:
5. Ի՞նչ է քաղաքացիական պարտասխանաբարությունը:
6. Որտե՞ր են քաղաքացիական պարտասխանաբարության պայմանները:
7. Ի՞նչ հիմքով է դադարում պարտավորությունը:

**Ինքնուրույն աշխատանք:** Պատրաստեք գեկուցում հետևյալ թեմայով. «Անձանց փոփոխվելը պարտավորության մեջ»՝ օգտվելով քաղաքացիական օրենսգրքից (տե՛ս [www.parliament.am](http://www.parliament.am) կամ [www.arlis.am](http://www.arlis.am) ինտերնետային կայքերը):

## ԴԱՍ 24. ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

### 1. ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆԸ

**Քաղաքացիաիրավական պայմանագիրը երկու կամ մի քանի անձանց համաձայնությունն է՝ ուղղված քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն:** Ոչ բոլոր համաձայնություններն են համարվում պայմանագիր: Պայմանագրի կողմերի նպատակն ունի իրավական բնույթ: Պայմանագիր չեն կարող համարվել բարոյակենցադային և այլ համաձայնությունները, օրինակ՝ ժամադրության մասին, որովհետև դրանց նպատակն իրավական չէ:

Պայմանագիրը դրա մասնակիցների հարաբերությունները կարգավորող միջոց է: Դրա կողմերը սահմանում են իրենց իրավունքներն ու պարտականությունները, որոնց ամբողջությունը կազմում է պայմանագրի բովանդակությունը: «Պայմանագիրն օրենք է, սակայն միայն դրա կողմերի համար»: Եթե օրենքն արտահայտում է պետության կամքը և պարտադիր է բոլորի համար, ապա պայմանագիրն արտահայտում է միայն նրա կողմերի կամքը և պարտադիր է միայն նրանց համար:

**Պայմանագիրը երկկողմ գործարքի տեսակ է:** Օրինակ՝ մեկն ունի գույք և ուզում է այն վաճառել, իսկ մյուսը ուզում է ձեռք բերել նման գույք: Ուրեմն գործարքի կայացման համար անհրաժեշտ է, որ երկու կողմերը՝ վաճառողը և գնորդը, որոշակի համաձայնության գան: Եթե նրանք պայմանավորվեն, ապա գործարքը կկայանա:

**Պայմանագիրը պարտավորություն առաջացնող իրավական փաստ է:** Պայմանագրի ուժով պարտապանը պարտավոր է պարտատիրոջ օգտին կատարել որոշակի գործողություն կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց:

**Պայմանագրի ազատության սկզբունքը** երաշխավորվում է մի շարք օրենսդրական կանոններով՝ անձինք ազատ են պայմանագիր կնքելու կամ չկնքելու հարցը լուծելիս. պայմանագիր կնքելիս կողմերն ունեն գործընկերոջ ընտրության ազատություն. պայմանագիր կնքելիս կողմերն ազատ են պայմանագրի տեսակի ընտրության և դրա բովանդակության որոշման հարցում: **Պայմանագրի ազատության սկզբունքի գործողությունը բացարձակ չէ:** Օրենքը սահմանում է նաև բացառություններ այդ սկզբունքից: Օրինակ՝ պայմանագրի պայմանները որոշելիս օրենսդրության նորմերը հաշվի առնելու պարտականությունը: Հակառակ դեպքում պայմանագիրը կճանաչվի անվավեր:

### 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԳԸ

**Պայմանագրի կնքման հասկացությունը:** Պայմանագիրն իր էությանմբ համաձայնություն է, սակայն համաձայնությունը կողմերի միջև ի սկզբանե չի ենթադրվում: Ուրեմն, որպեսզի պայմանագիրն առաջացնի իրավական հետևանքներ, անհրաժեշտ է, որ դրա կողմերը համաձայնության հասնեն պայմանագրի բոլոր էական պայմանների շուրջ: Համաձայնության կայացման այդ գործընթացն իրա-

վական տեսանկյունից անվանում են պայմանագրի կնքում: Պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ: Այդպիսով՝ պայմանագիրը համարվում է կնքված երկու անհրաժեշտ պայմանների պահպանման դեպքում. ա) կողմերը պետք է համաձայնության հասնեն պայմանագրի բոլոր էական կետերի վերաբերյալ, բ) կողմերի համաձայնությունն իր ձևով պետք է համապատասխանի այդ տեսակի պայմանագրին ներկայացվող պահանջներին:

**Անմիջական հանդիպումների արդյունքում կնքվող պայմանագիր:** Այդպիսի պայմանագրի կնքումը կատարվում է պայմանագրի նախագծի մշակման և ստորագրման ճանապարհով: Պայմանագիր կնքելուն սովորաբար նախորդում են նախնական բանակցությունները կողմերի միջև, որոնք սկսվում են նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ: Անմիջական հանդիպմամբ մշակված պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրելու պահից:

**Տարբեր վայրերում գտնվող կողմերի միջև պայմանագիր կնքելը:** Նախնական պայմանագրային բանակցությունների ընթացքում կարելի է առանձնացնել երկու փուլ՝ պայմանագիրը կնքելու առաջարկն անելու փուլ և այդ առաջարկն ընդունելու փուլ: Առաջին փուլն ընդունված է անվանել **օֆերտա**, իսկ երկրորդը՝ **ակցեպտ**: Գրան համապատասխան պայմանագիր կնքելու առաջարկ անող կողմը կոչվում է **օֆերենտ**, իսկ այդ առաջարկն ընդունող կողմը՝ **ակցեպտանտ**: Այդպիսով՝ պայմանագիրը կնքվում է կողմերից մեկի օֆերտան ուղարկելու և մյուս կողմի՝ դրա ակցեպտի (առաջարկը ընդունելու) միջոցով:

Նման կարգով պայմանագիրը կնքվում է նամակի, հեռագրի, ֆաքսի և այլ միջոցներով պայմանագիր կնքելու առաջարկ անելու (օֆերտան ուղարկելու) և մյուս կողմի՝ դրա առաջարկն ընդունելու (ակցեպտի) ճանապարհով:

Օֆերտան կաշկանդում է ուղարկող անձին այն հասցեատիրոջ կողմից ստանալու պահից և անհետկանչելի է: Ակցեպտը պետք է լինի լրիվ և անվերապահ: Լռությունն ակցեպտ չէ:

Օֆերտա ուղարկելու դեպքում ակցեպտն օֆերտա ուղարկած անձի կողմից ստանալու պահից պայմանագիրը համարվում է կնքված և ուժի մեջ է մտնում: **Ռեալ պայմանագրերը**, այսինքն՝ երբ պայմանագրի կնքման համար պահանջվում է ոչ միայն օֆերտայի ուղարկում ու ակցեպտի ստացում, այլ նաև գույքի հանձնում, ուժի մեջ են մտնում գույքը հանձնելու պահից:

Անկախ կնքման ձևից՝ պայմանագիրը, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, համարվում է կնքված այդ իրավունքի գրանցման պահից:



### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽԵԼԸ ԵՎ ԼՈՒԾԵԼԸ

Պայմանագրային իրավահարաբերությունը, առաջանալով պայմանագրի կնքմամբ, կարող է զարգանալ հետևյալ ուղղություններով. կատարում, դադարում, փոփոխում: Քաղաքացիական պայմանագրերը կնքվում են, որպեսզի կատարվեն, այսինքն՝ հանգեցնեն պայմանագրով նախատեսված որոշակի հետևանքի: Պայմանագրի դադարումը վրա է հասնում դրա պատշաճ կատարմամբ, պայմանագիրը լուծելով, ինչպես նաև մի շարք հատուկ դեպքերում:

**Պայմանագրի փոփոխման հասկացությունը:** Պայմանագրի գործողության ժամանակաշրջանում կարող են առաջ գալ այնպիսի հանգամանքներ, որոնք չեն դադարեցնում պարտավորության գործողությունը, այլ միայն փոփոխում են դրա մեկ կամ մի քանի տարրեր: Փոփոխությունը կարող է վերաբերել պայմաններին, մասնակիցների կազմին, կատարման եղանակին, ժամկետին և այլն: Եթե կատարված փոփոխության հետևանքով մեկ պարտավորությունը չի փոխվում մեկ այլ պարտավորությամբ, ապա առկա է եղած պայմանագրի փոփոխություն: Դրան հակառակ՝ պարտավորության նորացման՝ նովացիայի դեպքում պայմանագիրը դադարում է մեկ այլ պայմանագրով, նախկին պայմանագիրը չի պահպանվում:

**Պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու հիմքերը:** Կնքված պայմանագրերը պետք է կատարվեն: Դրա պայմաններն անփոփոխելի են: Այդպիսի ընդհանուր կանոնը կայունություն է հաղորդում քաղաքացիական շրջանառությանը: Օրենքը սահմանում է պայմանագրերի փոփոխման և լուծման երկու հիմք.

**ա) կողմերի համաձայնությամբ,**

**բ) կողմերից մեկի պահանջով:**

Այդ հիմքերի համար սահմանված են հակառակ կանխավարկածներ: Կողմերի համաձայնությամբ պայմանագրի փոփոխումը կամ լուծումը կարգավորվում է այլընտրանքային նորմով, այսինքն՝ դա հնարավոր է, եթե օրենքում կամ պայմանագրում այլ բան չի նախատեսված: Միակողմանի փոփոխումը թույլատրվում է միայն ուղղակիորեն օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում:

Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված: Դատարանի վճիռ այս դեպքում չի պահանջվում: Օրինակ՝ պայմանագրի կնքումից հետո դրա գինը թույլատրվում է փոփոխել պայմանագրով կամ օրենքով նախատեսված դեպքերում և պայմաններով: Այս կանոնը կարևոր նշանակություն ունի արժեզրկման պայմաններում: Եթե գործեր ընդհանուր կանոնը պայմանագրում գնի անփոփոխելիության մասին, ապա արժեզրկման գործընթացների հետևանքով շրջանառության մասնակիցները կհայտնվեն արտակարգ բարդ դրության մեջ: Այդ իսկ պատճառով օրենքը հնարավոր է համարում պայմանագրում պայմանի նախատեսումը, ըստ որի թույլատրվում է գնի փոփոխում:

Այն դեպքերում, երբ պայմանագիր փոփոխելու կամ լուծելու հնարավորությունը չի նախատեսված օրենքով կամ պայմանագրով, և կողմերը չեն հասել համաձայնության մասին, պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լուծվել կողմերից մեկի պահանջով դատարանի վճռով և միայն երկու դեպքում:

**1. Պայմանագրի փոփոխումը կամ լուծումը պայմանագրի էական խախտման դեպքում:** Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլտված խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն գրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ունի ակնկալել պայմանագիրը կնքելիս: Այդպիսին է, օրինակ՝ վաճառողի կողմից գնորդին անպատշաճ որակի ապրանք հանձնելը, երբ այն չի կարող օգտագործվել ըստ իր ուղղակի նշանակության:

**2. Պայմանագրի փոփոխումը կամ լուծումը հանգամանքների էական փոփոխության կապակցությամբ:** Հանգամանքների փոփոխությունն էական է համարվում, երբ դրանք այնքան են փոփոխվել, որ եթե կողմերը կարողանային դա ողջամտորեն կանխատեսել, նրանց միջև կկնքվեր էականորեն տարբեր պայմաններով պայմանագիր կամ ընդհանրապես պայմանագիր չէր կնքվի: Օրինակ՝ վարձակալության պայմանագրի լուծման հիմք կարող է ծառայել երկրաշարժը, որի հետևանքով վարձակալված շինությունն այնքան է վնասվել, որ դարձել է անպետք ըստ նշանակության օգտագործման համար և ենթակա չէ վերականգնման: Այդպիսի իրավիճակում վարձատուրն և վարձակալը կարող են գալ համաձայնության վարձակալության պայմանագրի վաղաժամկետ լուծման մասին: Եթե կողմերը համաձայնության չհասնեն, պայմանագիրը կարող է փոխվել կամ լուծվել դատարանով:

**Պայմանագիրը փոփոխելու և լուծելու կարգը:** Պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչ ձևով կնքվել է պայմանագիրը: Օրինակ՝ եթե պայմանագիրը կողմերը վավերացրել են նոտարական կարգով, ապա փոփոխելը կամ լուծելը ևս պետք է վավերացվեն նոտարական կարգով:

Պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ կարգ է սահմանված այն դեպքերի համար, երբ պայմանագիրը փոփոխվում կամ լուծվում է ոչ թե կողմերի համաձայնությամբ, այլ նրանցից մեկի պահանջով: Այդպիսի դեպքերում պայմանագրի շահագրգիռ կողմը պարտավոր է մյուս կողմին ուղարկել առաջարկություն պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու մասին: Մյուս կողմը պարտավոր է առաջարկում նշված ժամկետում, իսկ դրա բացակայության դեպքում՝ երեսօրյա ժամկետում առաջարկություն արած կողմին ուղարկել՝

1) **կա՛մ ծանուցում առաջարկության հետ համաձայնության վերաբերյալ:** Այս դեպքում պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված այդ ծանուցումն առաջարկություն անողի ստանալու պահից.

2) **կա՛մ ծանուցում առաջարկի մերժման վերաբերյալ:** Այս դեպքում առաջարկի մերժման վերաբերյալ ծանուցում, ինչպես նաև սահմանված ժամկետում պատասխան չստանալու դեպքերում շահագրգիռ կողմն իրավունք ունի պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու պահանջով դիմել դատարան, որը և կլուծի ծագած վեճը.

### 3) կան ծանուցում պայմանագիրն այլ պայմաններով փոփոխելու վերաբերյալ:

Այս դեպքում պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու առաջարկ արած կողմը կարող է համաձայնվել մյուս կողմի առաջարկների հետ: Այդպիսի իրավիճակում պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված առաջարկված հանդիպական պայմաններով: Եթե սկզբնական առաջարկողը համաձայն չէ մյուս կողմի հանդիպական առաջարկների հետ, ապա նա իրավունք ունի դիմելու դատարան պայմանագիրը փոփոխելու պահանջով: Այդպիսի իրավիճակում փոփոխման ենթակա պայմանները կորոշի դատարանը:

Կողմը կարող է պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին պահանջը դատարան ներկայացնել միայն դրանց առաջարկի վերաբերյալ մյուս կողմի մերժումն ստանալուց կամ այդ առաջարկում նշված ժամկետում պատասխանը չստանալուց հետո, իսկ դրա բացակայության դեպքում՝ երեսնօրյա ժամկետում:

**Պայմանագիրը փոփոխելու և լուծելու հետևանքները:** Պայմանագիրը փոփոխելիս կողմերի պարտավորությունները պահպանվում են ըստ փոփոխված պայմանագրի: Պայմանագիրը լուծելիս կողմերի պարտավորությունները դադարում են:

Պայմանագրի փոփոխման կամ լուծման դեպքում պարտավորությունները փոփոխված կամ դադարած են համարվում պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին կողմերի համաձայնությունը կնքելու պահից, եթե այլ բան չի բխում համաձայնությունից կամ պայմանագրի փոփոխության բնույթից:

Գատական կարգով պայմանագիրը փոփոխելիս կամ լուծելիս պարտավորությունները փոփոխված կամ դադարած են համարվում պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Կողմերն իրավունք չունեն պահանջելու վերադարձնել այն, ինչը կատարել են պարտավորությամբ մինչև պայմանագրի փոփոխման կամ լուծման պահը, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ կողմերի համաձայնությամբ:

Եթե փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլտված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները:

#### Հարցեր

1. Ի՞նչ է քաղաքացիական պայմանագիրը:
2. Ի՞նչ է պայմանագրի ազատության սկզբունքը, և ի՞նչ է այն ենթադրում:
3. Ե՞րբ է պայմանագիրը համարվում կնքված:
4. Ինչպե՞ս է կնքվում պայմանագիրն անմիջական հանդիպումների դեպքում:
5. Ինչպե՞ս է կնքվում պայմանագիրը փարբեր փայրերում գրնվող կողմերի միջև:
6. Ի՞նչ հիմքերով և կարգով է փոփոխվում կամ լուծվում պայմանագիրը:
7. Որո՞նք են պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու հետևանքները:

## ԳՍՍ 25. ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԾԱԳԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաքացիական իրավունքում անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Վնասը կառուցված է իրական վնասից և բաց թողնված օգուտից: **Իրական վնասը** տուժողի (իրավունքը խախտված անձի) այն ծախսերն են, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը, նրա գույքի կորուստը կամ այլ վնասը վերականգնելու համար: **Բաց թողնված օգուտը** չստացված եկամուտներն են, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր: Եթե վնաս պատճառողը դրա հետևանքով ստացել է եկամուտներ, ապա անձը, ում իրավունքը խախտվել է, մյուս վնասների հետ միասին բաց թողնված օգուտի հատուցման պահանջի իրավունք ունի՝ այդ եկամուտներից ոչ պակաս չափով:

**Վնասի հատուցման համար պատասխանատվության ընդհանուր հիմքերը:** Քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Օրենքով կարող է նախատեսվել վնասի հատուցում՝ վնաս պատճառողի մեղքի բացակայությամբ:

**Վնասը հատուցելու եղանակները:** Դատարանը, բավարարելով վնասի հատուցման պահանջը, գործի հանգամանքներից ելնելով, պարտավորեցնում է վնասի համար պատասխանատու անձին վնասը հատուցել **բնեղենով** (տրամադրել նույն տեսակի և որակի գույք, վերանորոգել վնասված գույքը և այլն) կամ հատուցել **դրամով**:

### 2. ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՒ ԳՐԱՆՅ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՉԱՆՅ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՅՈՒՄԸ

Անձին հանրային մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ)՝ ներառյալ նրանց կողմից օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտ հրապարակելու հետևանքով պատճառված վնասը հատուցում է պետությունը կամ համայնքը:

Հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազության և դատարանի ապօրինի գործողություններով պատճառված վնասի հատուցումը կատարում է պետությունը: Ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված

վնասը, օրենքով սահմանված կարգով, հատուցվում է լրիվ ծավալով՝ անկախ այդ մարմինների պաշտոնատար անձանց մեղքից: Արդարադատություն իրականացնելիս պատճառված վնասը հատուցվում է միայն այն դեպքում, երբ դատավորի մեղքը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

### 3. ՔԱՂԱՔԱՅՑՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԸ ՀԱՏՈՒՅԵԼԸ

Քաղաքացիները պայմանագրային պարտավորություններ կամ այլ պարտականություններ (օրինակ՝ զինվորական կամ ոստիկանական ծառայություն) կատարելիս կարող են կրել առողջության հետ կապված վնասներ: **Առողջությանը պատճառված վնասը քաղաքացու հաշմությունն է կամ նրա առողջությանը հասցված այլ վնասը:** Այդ վնասը պետք է հատուցի այն կողմը, որի համար վնասվածը կատարում էր պայմանագրային պարտավորություն կամ այլ պարտականություն:

Առողջության քայքայմամբ պատճառված և հատուցման ենթակա վնասն իր կառուցվածքով բաղկացած է երկու մասերից՝ տուժողի կորցրած եկամուտը և լրացուցիչ ծախսերը: **Տուժողի կորցրած եկամուտը** ներառում է տուժողի կորցրած աշխատավարձը (եկամուտը), որը նա ստանում էր կամ կարող էր ստանալ, եթե նրա առողջությանը վնաս չպատճառվեր: **Լրացուցիչ ծախսերն** առողջության քայքայման հետևանքով ծագած ծախսերն են: Օրինակ՝ բուժվելու, լրացուցիչ սննդի, դեղամիջոցներ ձեռք բերելու, պրոթեզավորման, կողմնակի խնամքի, առողջարանական-կուրորտային բուժման, հատուկ տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու, այլ մասնագիտություն ձեռք բերելու համար ծախսերը: Լրացուցիչ ծախսերը ենթակա են հատուցման, եթե պարզվի, որ տուժողն ունի օգնության մասն տեսակների կարիք և չունի դրանք անվճար ստանալու իրավունք:

**Հափահաս տարիքի չհասած անձի առողջությանը պատճառված վնասը հատուցելը:** 14 տարեկան չդարձած անչափահասին, որը չունի աշխատավարձ (եկամուտ), հաշմություն կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելու դեպքում դրա համար պատասխանատու անձը պարտավոր է հատուցել առողջությանը վնաս պատճառելուց ծագած ծախսերը:

Փոքրահասակի 14 տարեկան դառնալուց հետո, ինչպես նաև 14-18 տարեկան անչափահասի, որը չունի աշխատանք (եկամուտ), առողջությանը վնաս պատճառելու դեպքում, բացի տուժողի առողջությանը վնաս պատճառելուց ծագած ծախսերից, պետք է հատուցվեն նաև նրա աշխատունակության կորստի կամ նվազեցման հետ կապված վնասը՝ ելնելով նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափից:

Եթե առողջությանը վնաս հասցվելու ժամանակ անչափահասն ունեցել է աշխատավարձ, ապա վնասը հատուցվում է՝ ելնելով այդ աշխատավարձի չափից, որը, սակայն, չի կարող պակաս լինել նվազագույն աշխատավարձի հնգապատիկից:

Անչափահասը, որի առողջությանը նախկինում վնաս է պատճառվել, աշխատանքային գործունեությունն սկսելուց հետո իրավունք ունի, ելնելով իր ստացած աշխատավարձից, պահանջել վնասի հատուցման չափի մեծացում, սակայն իր

զբաղեցրած պաշտոնի համար սահմանված վարձատրությունից կամ իր աշխատատեղի նույն որակավորման աշխատողի աշխատավարձից ոչ ավելի չափով:

#### 4. ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՅԱՆՔԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԸ ՀԱՏՈՒՑԵԼԸ

Քաղաքացիները պայմանագրային պարտավորություններ կամ այլ պարտականություններ (օրինակ՝ զինվորական կամ ոստիկանական ծառայություն) կատարելիս կարող են կրել իրենց կյանքի հետ կապված վնասներ: Կյանքին հասցված վնասը քաղաքացու մահն է: Դրա հետևանքով առաջացած վնասը պետք է հատուցի այն կողմը, որի համար մահացածը կատարում էր պայմանագրային պարտավորություն կամ այլ պարտականություն: Որպես կանոն, աշխատողի վնաս է հուղարկավորության ծախսերը, որոնք պետք է հատուցվեն ծախսերը կատարած անձին: Այդ ծախսերը կատարած քաղաքացիների կողմից հուղարկավորության համար ստացած նպաստները չեն հաշվարկվում վնասների հատուցման հաշվում:

Հնարավոր է, որ մահացածն ունենա իր խնամքի տակ գտնվողներ: Այս իրավիճակն անվանում են **կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնաս**: Այդ հարաբերությունն ունի 3 մասնակից՝ տուժած կերակրողը, նրա խնամքի տակ գտնվող(ներ)ը, տուժողի մահվան հետ կապված վնասի համար պատասխանատուն:

Տուժողի (կերակրողի) մահվան դեպքում վնասի հատուցման իրավունք ունեն՝

- 1) մահացողի խնամքի ներքո գտնվող կամ նրա մահվան օրը նրանից խնամք ստանալու իրավունք ունեցող անաշխատունակ անձինք,
- 2) մահացածի մահվանից հետո ծնված նրա երեխան,
- 3) ծնողներից մեկը, ամուսինը կամ ընտանիքի անդամը՝ անկախ նրա աշխատունակությունից, որը չի աշխատում և զբաղված է մահացածի խնամքի ներքո գտնվող՝ նրա 14 տարին չդարձած կամ թեկուզև նշված տարիքին հասած, սակայն բժշկական մարմինների եզրակացությամբ իր առողջական վիճակով կողմնակի խնամքի կարիք ունեցող երեխաների, թոռների, եղբայրների և քույրերի խնամքով,
- 4) մահացածի խնամքի ներքո գտնվող և նրա մահվանից հետո հինգ տարվա ընթացքում անաշխատունակ դարձած անձինք:

**Կերակրողի մահվան հետևանքով վնաս կրած անձանց վնասի հատուցման ժամկետները:** Վնասը հատուցվում է՝

- 1) անչափահասներին՝ մինչև 18 տարեկան դառնալը,
- 2) 18 տարեկան բարձր տարիքի սովորողներին՝ մինչև ցերեկային ուսուցման ձևով ուսումնական հաստատություններում ուսման ավարտը, սակայն ոչ ավելի, քան մինչև 23 տարեկան դառնալը.
- 3) 55 տարեկանից մեծ կանանց և 60 տարեկանից մեծ տղամարդկանց՝ ցմահ,
- 4) հաշմանդամներին՝ հաշմանդամության ժամանակ,

5) ծնողներից մեկին, ամուսնուն կամ ընտանիքի այլ անդամին, որն զբաղված է մահացածի խնամքի տակ գտնվող նրա երեխաների, թոռների, եղբայրների և քույրերի խնամքով՝ մինչև վերջիններիս 14 տարեկան դառնալը:

**Կերակրողին կորցնելու դեպքում կրած վնասը հատուցելու չափը:** Կերակրողին կորցրած անձանց վնասը հատուցվում է մահացածի աշխատավարձի (եկամտի) այն մասի չափով, որը մահացածի կենդանության օրոք նրանք ստանում էին կամ ստանալու իրավունք ունեին իրենց ապրուստի համար: Այդ անձանց վնասի հատուցման չափը որոշելիս մահացածի եկամուտների կազմում աշխատավարձի հետ միասին ներառվում են կենդանության օրոք նրա կենսաթոշակը և նմանօրինակ վճարները: Վնասի հատուցման չափը որոշելիս կերակրողի մահվան հետ կապված անձանց նշանակված կենսաթոշակը և թոշակների այլ տեսակները, որոնք նշանակվել են ինչպես կերակրողի մահվանից առաջ, այնպես էլ հետո, ինչպես նաև այդ անձանց կողմից ստացվող աշխատավարձը (եկամուտը) և կրթաթոշակը չեն հաշվարկվում նրանց վնասի հատուցման հաշվին:

**Վնասի հատուցման չափի մեծացումը:** Տուժողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման գումարը կյանքի թանկացման դեպքում ենթակա է ինդեքսավորման: Նվազագույն աշխատավարձի չափը բարձրացնելու դեպքում կորցրած աշխատավարձի (եկամտի) և տուժողի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հետ կապված այլ վճարների գումարները մեծանում են աշխատավարձի նվազագույն չափի բարձրացմանը համամասնորեն:

##### **5. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀՏՈՒՅՈՒՄԸ**

Այս հիմքով հատուցվում է քաղաքացու կյանքին, առողջությանը, գույքին կամ իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը: Վնասի հատուցման իրավունք ունի քաղաքացին, իրավաբանական անձը, որը սպառողական, սակայն ոչ ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործման նպատակներով ձեռք է բերել ապրանքներ (աշխատանքներ, ծառայություններ):

Նման վնասը հասցվում է ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերությունների պատճառով: Վնասը կարող է պատճառվել նաև դրանց մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով:

Ապրանքի թերությունների հետևանքով պատճառված վնասը տուժողի ընտրությամբ ենթակա է հատուցման վաճառողի կամ ապրանք արտադրողի կողմից: Աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման կատարողի կողմից:

Ապրանքի (աշխատանքի, ծառայության) մասին լիակատար կամ հավաստի տեղեկատվություն չտրամադրելու հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման վաճառողի, ապրանք արտադրողի կամ կատարողի կողմից:

Նշված անձինք պարտավոր են հատուցել վնասը՝ անկախ նրանց մեղքից և նրանց հետ տուժողի պայմանագրային կապի մեջ գտնվելու պարագայից:

Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման, եթե այն ծագել է ապրանքի (աշխատանքի, ծառայության) պիտանիության ժամկետի ընթացքում: Եթե նման ժամկետ չի սահմանված՝ ապրանքը թողարկելու, աշխատանքը կատարելու կամ ծառայությունը մատուցելու օրվանից տասը տարվա ընթացքում:

Վնասը ենթակա է հատուցման՝ անկախ դրա պատճառման ժամկետից, եթե՝  
1) օրենքի պահանջների խախտմամբ պիտանիության ժամկետ չի սահմանվել.  
2) անձը չի նախազգուշացվել մինչև պիտանիության ժամկետի ավարտն անհրաժեշտ գործողությունների և դրանց չկատարելու հնարավոր հետևանքների մասին:

Ապրանք վաճառողը, արտադրողը, աշխատանքներ կատարողը, ծառայություններ մատուցողն ազատվում են պատասխանատվությունից, եթե ապացուցում են, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ սպառողի կողմից օգտագործման կամ պահպանման համար սահմանված կանոնները խախտելու հետևանքով:

#### Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է վնասը քաղաքացիական իրավունքում:
2. Ո՞ր դեպքում է վնաս պատճառողն ազատվում վնասը հատուցելուց:
3. Ո՞ր դեպքում է հատուցվում դատական մարմինների պատճառած վնասը:
4. Ինչպիսի՞ն է առողջության քայքայմամբ պատճառված վնասի կառուցվածքը:
5. Ինչպե՞ս է հատուցվում անչափահաս անչի առողջությանը պատճառված վնասը:
6. Ովքե՞ր ունեն վնասի հատուցման իրավունք կերակրողի մահվան դեպքում:
7. Որո՞նք են ապրանքների, ծառայությունների, աշխատանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման հիմունքները:

**Լուծե՛ք խնդիրը՝ օգտվելով 22-րդ դասի նյութերից:** Տերտերյանը իր հարևաններից մեկին պարտք էր տվել 500 000 դրամ: Ըստ պայմանավորվածության, Տերտերյանը գումարը հետ էր ստանալու 2 ամսից: Սակայն ժամկետը լրանալուց հետո հարևանը հրաժարվեց հետ վերադարձնել դրամը՝ ասելով, որ ինքը ոչ ոքի ոչինչ պարտք չէ: Տերտերյանը նրան հիշեցրեց, որ ինքը փողը տվել է բակի տաղավարում, նարդի խաղալուց, որտեղ ներկա էին 10 անձ, ովքեր կհաստատեն այդ փաստը և անհրաժեշտության դեպքում ինքն այդ անձանց կկանչի դատարան որպես վկա:

Գնահատեք տեղի ունեցածն իրավական տեսանկյունից:

Ի՞նչ լուծում կտա գործին դատարանը, եթե հանկարծ հարևանը դատարանում ևս ժխտի իր կողմից փող պարտք վերցնելու փաստը:

## ԳԱՍ 26. ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

### 1. ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքացիական իրավունքի մասերից մեկն էլ **ժառանգական իրավունքն** է, որը կարգավորում է քաղաքացիների մահից հետո նրանց սեփականության իրավունքով պատկանող գույքի անցումը ժառանգներին: Ժառանգությունը կատարվում է **ըստ կտակի** կամ **ըստ օրենքի**: Ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի, եթե չկա կտակ կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը:

**Ժառանգության բացումը:** Ժառանգական իրավահարաբերության ծագումը տեղի է ունենում քաղաքացու մահից հետո և կոչվում է ժառանգության բացում: Ժառանգության բացման օրը ժառանգատուի մահվան օրն է, որը հաստատվում է մահվան վկայականով: Եթե քաղաքացին դատարանի վճռով է ճանաչվել մահացած, ապա ժառանգության բացման օրը վճռի օրինական ուժի մեջ մտնելու օրն է:

Ժառանգության բացման վայրը ժառանգատուի բնակության վերջին վայրն է: Եթե այդ վայրն արտասահմանում է կամ անհայտ է, ապա բացման վայր է համարվում ժառանգության զանգվածի մեջ մտնող անշարժ գույքի կամ դրա առավել արժեքավոր մասի գտնվելու վայրը:

**Ժառանգատու և ժառանգներ:** Ժառանգատու կարող է լինել ցանկացած ֆիզիկական անձ: Իրավաբանական անձինք չեն կարող լինել ժառանգատու:

Ժառանգներ կարող են լինել ժառանգության բացման օրը կենդանի, ինչպես նաև ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո կենդանի ծնված քաղաքացիները: Իրավաբանական անձինք, ՀՀ-ն և համայնքները, ինչպես նաև օտարերկրյա պետություններն ու միջազգային կազմակերպությունները կարող են լինել միայն ըստ կտակի ժառանգներ:

**Անարժան ժառանգներին ժառանգությունից մեկուսացնում են:** Անարժան են այն ժառանգները, ովքեր դիտավորյալ խոչընդոտել են ժառանգատուի վերջին կամքի իրականացմանը, դիտավորյալ կյանքից զրկել են ժառանգատուին կամ հնարավոր ժառանգներից որևէ մեկին, կամ մահափորձ են կատարել նրանց կյանքի նկատմամբ: Բացառություն են կազմում այն անձինք, որոնց նկատմամբ ժառանգատուն կտակը կազմել է մահափորձ կատարելուց հետո: Ժառանգությունից մեկուսացնելու համար հիմք են դատարանի դատավճիռը և (կամ) վճիռը:

**Անժառանգ գույք:** Եթե չկան ո՛չ ըստ կտակի և ո՛չ էլ ըստ օրենքի ժառանգներ, կամ նրանք հրաժարվել կամ մեկուսացվել են ժառանգությունից, ապա գույքը ճանաչվում է անժառանգ և անցնում է ժառանգության բացման վայրի համայնքին:

### 2. ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԿՏԱԿԻ

**Կտակ և կտակի ազատություն:** Կտակը քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի տնօրինման վերաբերյալ նրա կամքի արտահայտությունն է: Կտակ կարող է անել գործունակ քաղաքացին՝ անձամբ: Ներկայացուցչի միջոցով

կտակ անել չի թույլատրվում: Կտակը կարող է պարունակել միայն մեկ անձի կարգադրություններ: Երկու և ավելի անձանց կողմից կտակելն արգելվում է:

Քաղաքացին իրավունք ունի իր հայեցողությամբ ցանկացած գույք կտակել ցանկացած անձի, ցանկացած ձևով որոշել ժառանգությունում ժառանգների բաժինները, գրկել ժառանգությունից ըստ օրենքի ժառանգներին,


վերացնել, փոփոխել կամ լրացնել կազմված կտակը: Քաղաքացին պարտավոր չէ որևէ մեկին տեղեկացնել կտակ անելու, այն փոփոխելու կամ վերացնելու մասին:

**Ժառանգության պարտադիր բաժնի իրավունք:** Կտակի ազատությունը սահմանափակվում է միայն ժառանգության պարտադիր բաժնի կանոններով: Պարտադիր բաժին է համարվում ժառանգի իրավունքը, անկախ կտակի բովանդակությունից, ժառանգելու այն բաժնի ամնվազն կեսը, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում: Պարտադիր բաժնի իրավունք ունեն ժառանգատուի երեխաները, ինչպես նաև հաշմանդամ կամ անգործունակ ճանաչված կամ 60 տարեկան դարձած ժառանգատուի զավակները, ամուսինը և ծնողները: Եթե կտակարարը ժառանգությունից գրկել է պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձին, ապա կտակը համապատասխան մասով անվավեր է:

**Պայմանով կտակ:** Կտակարարն իրավունք ունի ժառանգություն ստանալը պայմանավորել ժառանգի վարքագծի բնույթի վերաբերյալ որոշակի օրինաչափ պայմանով: Կտակում ներառված պայմանը, որը ժառանգը չի կարող կատարել իր առողջական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառների ուժով, կարող է անվավեր ճանաչվել ժառանգի հայցով:

**Կտակի ձևը:** Կտակը պետք է կազմվի գրավոր՝ նշելով այն կազմելու վայրը և ժամանակը, անձամբ ստորագրվի կտակարարի և վավերացվի նոտարի կողմից: Հակառակ դեպքում կտակն անվավեր է: Եթե կտակարարը ֆիզիկական թերությունների, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող անձամբ ստորագրել կտակը, ապա նրա խնդրանքով, նոտարի ներկայությամբ կտակը կարող է ստորագրվել այլ քաղաքացու կողմից՝ կտակում նշելով այն պատճառները, որոնց ուժով կտակարարը չի կարողացել անձամբ ստորագրել կտակը: Կտակում պետք է նշվեն այդ քաղաքացու անունը և նրա բնակության վայրը:

**Կտակը կտակարարի ցանկությամբ կարող է լինել փակ:** Փակ կտակը պետք է գրի և ստորագրի անձամբ կտակարարը: Այս դեպքում նոտարը կտակը վավերացնում է առանց դրա բովանդակության հետ ծանոթանալու: Կտակարարը փակ կտակը փակ (ստանձված) ծրարով հանձնում է նոտարին երկու վկայի ներկայությամբ, որոնք ծրարի վրա դնում են իրենց ստորագրությունները: Վկաների ստորագրած



ծրարը նոտարը նրանց ներկայությամբ տեղադրում է մեկ այլ ծրարում, փակում (ստանձում) է այն և վրան կատարում վավերացնող մակագրություն:

**Կտակի գաղտնիությունը:** Նոտարը, վկաները, ինչպես նաև կտակարարի փոխարեն կտակն ստորագրած քաղաքացին իրավունք չունեն մինչև ժառանգության բացումը տեղեկություններ հրապարակել կտակի բովանդակության, այն կազմելու, վերացնելու, փոփոխելու կամ լրացնելու մասին: Հակառակ դեպքում նրանք կկրեն օրենքով սահմանված պատասխանատվություն:

**Կտակային հանձնարարություն:** Կտակում կարող է սահմանվել հանձնարարություն, այսինքն՝ կտակով ժառանգին հանձնարարել ժառանգության հաշվին կատարելու որևէ պարտավորություն՝ հօգուտ մեկ կամ մի քանի անձանց: Ժառանգը, ում վրա կտակարարը դրել է կտակային հանձնարարության կատարումը, պետք է այն կատարի իրեն անցած ժառանգական գույքի արժեքի սահմաններում: Շահառուն իրավունք ունի հրաժարվել կտակային հանձնարարությունից: Այդ դեպքում ժառանգը, որը պարտավոր է կատարել կտակային հանձնարարությունը, ազատվում է այն կատարելու պարտականությունից:

### 3. ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ

Եթե չկա կտակ կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը, ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի: Ըստ օրենքի ժառանգները ժառանգման են հրավիրվում օրենքով սահմանված հերթականությամբ: Յուրաքանչյուր հաջորդ հերթի ժառանգները ժառանգության իրավունք են ձեռք բերում նախորդ հերթի ժառանգների բացակայության, նրանց ժառանգությունից մեկուսացնելու, նրանց կողմից ժառանգությունը չընդունելու կամ դրանից հրաժարվելու դեպքերում: Նույն հերթի ժառանգները ստանում են հավասար բաժիններ:

**Առաջին հերթի ժառանգներն են** ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

Մինչև ժառանգության բացումը մահացած ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է նրա երեխաներին և նրանց միջև բաշխվում է հավասարապես: Այդպիսի ժառանգությունը կոչվում է **ներկայացման իրավունքով ժառանգություն:**

**Երկրորդ հերթի ժառանգներն են** ժառանգատուի հարազատ եղբայրները և քույրերը: Ժառանգատուի եղբայրների և քույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

**Երրորդ հերթի ժառանգներն են** ժառանգատուի ինչպես հայրական, այնպես էլ մայրական կողմի պապը և տատը:

**Չորրորդ հերթի ժառանգներն են** ժառանգատուի ծնողների եղբայրները և քույրերը (հորեղբայրները, հորաքույրները, քեռիները, մորաքույրները): Ժառանգատուի հորեղբայրների և հորաքույրների ու քեռիների և մորաքույրների երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

Ըստ օրենքի ժառանգության դեպքում որդեգրվածն ու նրա երեխաները՝ մի կողմ

մից, և որդեգրողն ու նրա ազգականները՝ մյուս կողմից, հավասարեցվում են արյունակից ազգականներին:

#### 4. ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼԸ ԵՎ ԴԻԱՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ

**Ժառանգությունն ընդունելու կարգը:** Ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի առանց պայմանի կամ վերապահումների: Ժառանգներից յուրաքանչյուրը ժառանգության ընդունումը պետք է կատարի առանձին-առանձին: Ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ **ժառանգական իրավունքի վկայագիր** ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով:

Ժառանգությունն ընդունված է համարվում, երբ ժառանգը սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը, ներառյալ, երբ ժառանգը՝ 1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար. 2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր. 3) իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է նրան հասանելիք գումարները:

Ժառանգությունն ընդունվում է ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից պատկանում է ժառանգին:

**Ժառանգն իրավունք ունի հրաժարվել ժառանգությունից** ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում, ներառյալ այն դեպքը, երբ նա արդեն ընդունել է ժառանգությունը: Ժառանգությունից հրաժարվելն իրականացվում է ժառանգի կողմից ժառանգության բացման վայրի նոտարին դիմում տալու միջոցով: Ժառանգությունից հրաժարվելը չի կարող վերացվել կամ հետ կանչվել:


Ժառանգությունից հրաժարվելու դեպքում ժառանգն իրավունք ունի նշել, որ նա դրանից հրաժարվում է հօգուտ այլ ժառանգների՝ ներառյալ նրանց, ովքեր ժառանգում են ներկայացվելու իրավունքով:

Ժառանգությունն ընդունած ժառանգներն իրավունք ունեն պահանջելու ժառանգության բաժանում: Բաժանումը կարող է կատարվել ժառանգների համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում ժառանգությունը բաժանում է դատարանը: Անչափահասների շահերի պաշտպանության նպատակով ժառանգության բաժանման վերաբերյալ համաձայնությունը կազմելուն կամ ժառանգությունը բաժանելու վերաբերյալ գործի դատաքննությանը պետք է մասնակցի խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչը:

Սաղմնավորված, սակայն դեռ չծնված ժառանգի ամկայության դեպքում ժառանգության բաժանումը կարող է կատարվել միայն նրա ծնվելուց հետո:

## 5. ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼԸ, ԿԱՌԱՎԱՐԵԼԸ ԵՎ ՉԵՎԱԿԵՐՊԵԼԸ

Ժառանգների և այլ շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության համար ժառանգության բացման վայրի նոտարը ձեռնարկում է օրենքով սահմանված և ժառանգությունը պահպանելու ու կառավարելու համար անհրաժեշտ միջոցներ:



**Ժառանգությունը պահպանելու նպատակով նոտարը կատարում է ժառանգական զանգվածի գույքագրում:** Ժառանգության զանգվածի մեջ մտնող կանխիկ դրամը (արժույթը) մուծվում է նոտարի դեպոզիտ, իսկ արժույթը, թանկարժեք քարերից և մետաղներից պատրաստված գույքը պահատվության համար հանձնվում են բանկ: Մնացած գույքը, եթե այն կառավարման կարիք չունի, նոտարը պահատվության պայմանագրով հանձնում է ժառանգներից մեկին, իսկ ժառանգներին հանձնելու անհնարիանության դեպքում՝ մասնագիտացված կազմակերպությանը:

**Ժառանգության ձևակերպումը կատարվում է ժառանգության իրավունքի վկայագիր տալու միջոցով:** Վկայագիրը տալիս է ժառանգության բացման վայրի նոտարը՝ ժառանգի դիմումի հիման վրա: Վկայագիրը տրվում է ժառանգներից յուրաքանչյուրին առանձին-առանձին: Անժառանգ գույքի ժառանգության իրավունքի վկայագիրն ուղարկվում է տեղական ինքնակառավարման մարմին:

Ժառանգության իրավունքի վկայագիրը տրվում է ժառանգներին՝ ժառանգության բացման օրվանից վեց ամիս հետո: Այդ ժամկետից շուտ վկայագիրը կարող է տրվել, եթե առկա են ստույգ տվյալներ, որ վկայագիր ստանալու համար, դիմած անձանցից բացի, այլ ժառանգներ չկան:

### Հարցեր

1. Որո՞նք են ժառանգության հիմքերը:
2. Ե՞րբ և որտե՞ղ է բացվում ժառանգությունը:
3. Ովքե՞ր ունեն ժառանգության պարտադիր բաժնի իրավունք կրակի դեպքում:
4. Ի՞նչ է պայմանով կրակը:
5. Ո՞րն է կրակի չեք, և ի՞նչ է փակ կրակը:
6. Ի՞նչ է կրակային հանձնարարությունը:
7. Ո՞րն է ըստ օրենքի ժառանգության հերքահանությունը:
8. Ի՞նչ կարգով և ի՞նչ ժամկետում է ընդունվում ժառանգությունը:
9. Ինչպե՞ս է բաժանվում ժառանգությունն ըստ օրենքի ժառանգության դեպքում:
10. Ինչպե՞ս է կատարվում ժառանգության չեղարկումը:

## ԳԼՈՒԽ 4. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

### ԳՎԱՍ 27. ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ

#### 1. «ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ամուսնությունը սիրո և հարգանքի վրա հիմնված՝ տղամարդու և կնոջ ազատ, կամավոր, իրավահավասար, փոխադարձ իրավունքներ և պարտականություններ առաջացնող միությունն է, որի համար անհրաժեշտ են ամուսնացողների համաձայնությունը և նրանց ամուսնական տարիքի հասնելը:

**Ամուսնությունը տղամարդու ու կնոջ ազատ և իրավահավասար միությունն է:**

Նրանք կնքում են ոչ թե գործարք, այլ ընտանեկան միություն, որը ենթադրում է ամուսնացողների որոշակի հոգևոր ընդհանրություն, սեր, հարգանք, առանց որոնց ամուսնությունն անիմաստ է: Ամուսնության համար անհրաժեշտ է ամուսնացողների փոխադարձ կամավոր, ազատ համաձայնությունը:



**Կանայք և տղամարդիկ ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս օգտվում են հավասար իրավունքներից:** Արգելվում է ամուսնանալիս և ընտանեկան հարաբերություններում սոցիալական, ռատայական, ազգային, լեզվական կամ կրոնական հատկանիշներով իրավունքների որևէ սահմանափակում:

**Ամուսնությունը մենամուսնական միություն է:** Օրենքն արգելում է ամուսնություն կնքել այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկը գտնվում է օրենքով սահմանված կարգով գրանցված մեկ այլ ամուսնության մեջ: Նախկինում ամուսնության մեջ եղած անձանց նոր ամուսնության պետական գրանցում չի կատարվում առանց ամուսնալուծության վկայականի առկայության:

**Ամուսնությունը պետականորեն գրանցվող միություն է:** Փաստական ամուսնական հարաբերությունները, ինչքան էլ դրանք երկար լինեն, օրենքը չի ճանաչում: Հետևաբար, այդպիսի միությամբ ապրող կնոջ և տղամարդու միջև վեճի դեպքում նրանց իրավունքները և պարտականությունները չեն դիտարկվում ամուսնական և չեն պաշտպանվում: Հայաստանում ճանաչվում է միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման պետական մարմիններում (այսուհետև՝ գրանցման մարմին) գրանցված ամուսնությունը: Ամուսնությունը գրանցվում է ամուսնացողների գրավոր դիմումի հիման վրա, օրենքով սահմանված կարգով, ամուսնացող ան-

ձանց պարտադիր ներկայությամբ: Ամուսնությունը գրանցելուց հետո տրվում է ամուսնության վկայական: Ամուսինների իրավունքներն ու պարտականությունները ծագում են ամուսնության պետական գրանցման պահից:

**Անհատների ամուսնությունից և ընտանիքին պատկանելուց բխող անձնական և գույքային հարաբերությունները կարգավորող իրավունքի ճյուղը կոչվում է ընտանեկան իրավունք:** Ընտանեկան իրավունքի հիմնական աղբյուրն **ընտանեկան օրենսգիրքն է:** Այն սահմանում է ամուսնանալու, ամուսնալուծության, ամուսնությունն անվավեր ճանաչելու կարգն ու պայմանները, ընտանիքի անդամների իրավունքները և պարտականությունները և ալլն (*quæ u. arts. am կայքը*):

## 2. ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԿՆՔՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ

**Օրենքը սահմանում է ամուսնության երկու պայման:** Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացողների փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական տարիքի՝ 18 տարեկան հասնելը: Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը և ամուսնացող մյուս անձն առնվազն 18 տարեկան է: **Ամուսնության պայմաններն** ամուսնության արգելքներից տարբերվում են նրանով, որ հաղթահարելի են, այսինքն՝ համաձայնությունը միշտ էլ կարելի է ձեռք բերել, իսկ տարիքին անխուսափելիորեն կհասնեն:

**Ամուսնության արգելքներն** այն հանգամանքներն են, որոնց առկայության դեպքում ամուսնության կնքումն ընդհանրապես արգելվում է: Դրանց հիմքում ընկած են կենսաբանական և բարոյական շարժառիթներ: Օրինակ՝ արյունապղծությունը կործանարար է անդրադառնում երեխաների վրա:

Արգելվում է ամուսնությունն այն անձանց միջև, որոնցից թեկուզ մեկն արդեն այլ ամուսնության մեջ է գտնվում: Դա արգելում է նաև Հայ առաքելական եկեղեցին: Չի թույլատրվում ամուսնություն մերձավոր ազգականների (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) միջև, հարազատ և նույն հորից կամ նույն մորից ծնված եղբայրների ու քույրերի, որդեգրողների և որդեգրվածների միջև: Ամուսնությունն արգելվում է նաև այն անձանց միջև, որոնցից թեկուզ մեկին դատարանը ճանաչել է **անգործունակ:**

## 3. ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԳԱԳԱՐՈՒՄԸ

**Ամուսնության դադարումը ամուսնալուծության միջոցով:** Ամուսնալուծությունը կատարվում է գրանցման մարմիններում կամ դատական կարգով: Ամուսնալուծության միջոցով ամուսնությունը կարող է դադարել ամուսինների կամ ամուսիններից

մեկի դիմումի հիման վրա, ինչպես նաև դատարանի կողմից անգործունակ ճանաչված ամուսնու խնամակալի դիմումի հիման վրա: Ամուսինն առանց կնոջ համաձայնության իրավունք չունի ամուսնալուծության դիմում ներկայացնելու կնոջ հղիության ընթացքում:

**Մտորումներ:** Որոշ երկրներում օրենքն արգելում է ամուսնալուծությունը՝ թույլ տալով միայն անջատ ապրելու իրավունք: Այլ երկրներում սահմանված են ապահարգանի որոշակի հիմքեր, հետևաբար՝ ամուսնալուծությունը բարդեցված է: Հայաստանում գործում է ամուսնալուծության ազատության սկզբունքը: Ո՞ր սկզբունքն է նախընտրելի և ինչո՞ւ:

**Ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում:** Եթե ամուսինների միջև ամուսնալուծվելու վերաբերյալ կա փոխադարձ համաձայնություն, նրանց ամուսնալուծությունը կատարում է գրանցում իրականացնող մարմինը: Ամուսնալուծությունը կարող է կատարվել ամուսիններից մեկի դիմումի հիման վրա, եթե մյուս ամուսինը՝ ա) դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող. բ) դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ. գ) դատապարտվել է ազատազրկման երեք տարուց ոչ պակաս ժամկետով:

Եթե գրանցող մարմինը լուծում է ամուսնությունը, ապա ամուսինների ընդհանուր գույքի բաժանման, անաշխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոցը հոգալու, երեխաների վերաբերյալ վեճերը քննարկվում են դատական կարգով:

**Ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով.** եթե՝

- 1) ամուսիններից մեկը համաձայն չէ ամուսնալուծվելու.
- 2) ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայության, խուսափում է ամուսնալուծությունը գրանցում իրականացնող մարմիններում կատարելուց.
- 3) ամուսինները երկուստեք ցանկանում են ամուսնալուծվել դատական կարգով:

Եթե ամուսնալուծության դիմումը տվել է ամուսիններից մեկը, ապա դատարանը իրավունք ունի միջոցներ ձեռնարկելու ամուսիններին հաշտեցնելու համար: ‘Իրա համար նա կարող է գործի քննությունը հետաձգել՝ հաշտվելու համար ամուսիններին տրամադրելով մինչև երեքամսյա ժամկետ: Այս դեպքում ամուսնալուծությունը կատարվում է, եթե ամուսինները (նրանցից մեկը) պնդում են դա:

**Ամուսնալուծող ամուսինների վեճերի քննարկումը:** Ամուսնալուծողները կարող են գրանցող մարմին կամ դատարան ներկայացնել համաձայնություն այն մասին, թե նրանցից ում հետ են ապրելու երեխաները, երեխաներին և (կամ) անաշխատունակ անապահով ամուսնուն պահելու համար ապրուստի միջոցները հոգալու կարգի ու չափերի կամ ամուսինների ընդհանուր գույքի բաժանման մասին: Եթե ամուսինների միջև չկա համաձայնություն, ապա դատարանը պարտավոր է՝

- 1) որոշել, թե ծնողներից ում հետ պետք է ապրեն երեխաները.
- 2) որոշել, թե որ ծնողից և ինչքան է ապրուստավճար բռնագանձվելու.
- 3) ամուսինների (ամուսիններից մեկի) պահանջով կատարել նրանց ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանում.

4) ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեցող մյուս ամուսնու պահանջով դրոշել այդ միջոցների չափը:

**Ամուսնությունն անվավեր ճանաչելը:** Անվավեր է ճանաչվում ամուսնության պայմանների, արգելքների խախտմամբ կնքված ամուսնությունը, ինչպես նաև կեղծ ամուսնությունը: **Կեղծ է այն ամուսնությունը, երբ ամուսինները կամ նրանցից մեկը ամուսնությունը գրանցել են առանց ընտանիք ստեղծելու մտադրության:**

Ամուսնությունն անվավեր է ճանաչում դատարանը՝ օրենքով սահմանված շահագրգիռ անձանց պահանջի հիման վրա: Դատարանն ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից 3 օրվա ընթացքում վճռի քաղվածքն ուղարկում է ամուսնության գրանցման վարչի մարմին: Ամուսնությունն անվավեր է ճանաչվում դրա պետական գրանցման պահից:

Դատարանը կարող է ամուսնությունը վավերական ճանաչել, եթե ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին գործի քննության պահին վերացել են դրա կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքները: Օրինակ՝ կինն ամուսնացել է հարկադրաբար, սակայն գործի քննության պահին նա դեմ չէ ամուսնությանը:

Կնոջ հղիության կամ երեխա ծնվելու դեպքում, կամ եթե դա են պահանջում անչափահաս ամուսնու շահերը, ինչպես նաև ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին անչափահաս ամուսնու համաձայնության բացակայության դեպքում դատարանը կարող է մերժել ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին հայցը:

Անվավեր ճանաչված ամուսնությունը չի առաջացնում իրավական հետևանքներ ամուսինների համար, սակայն ամուսնությունն անվավեր ճանաչելը չի ազդում այդպիսի ամուսնությունից ծնված կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու պահից հետո՝ 300 օրվա ընթացքում ծնված երեխաների իրավունքների վրա: Բացի այդ, ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին վճիռ կայացնելիս դատարանը կարող է ճանաչել ամուսնուց ապրուստի միջոց ստանալու՝ մյուս ամուսնու (բարեխիղճ ամուսնու) իրավունքը: Բարեխիղճ ամուսինն իրավունք ունի պահանջելու հատուցել իրեն պատճառված գույքային վնասը:

#### 4. ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Ամուսիններն ունեն գույքային երկու հիմնական իրավունք՝** անձնական սեփականության և ընդհանուր համատեղ սեփականության:

Ամուսիններից յուրաքանչյուրն ունի անձնական, այսինքն՝ միայն իրեն պատկանող սեփականության իրավունք: Այդ գույքն ամուսնալուծության դեպքում ենթակա չէ բաժանման: **Անձնական սեփականություն է համարվում՝**

- ա) մինչամուսնական գույքը, այսինքն՝ մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի ունեցած գույքը,
- բ) ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը,
- գ) անհատական օգտագործման գույքը (հագուստը, կոշիկը և այլն): Եթե նույնիսկ այդպիսի գույքը ձեռք է բերվել ամուսնության ընթացքում ամուսինների

ընդհանուր միջոցների հաշվին, համարվում է այն ամուսնու սեփականությունը, որն այդ գույքն օգտագործել է: Անհատական օգտագործման գույքից անձնական սեփականություն չեն համարվում **թանկարժեք իրերը** և **պերճանքի առարկաները**:

Ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց **համատեղ սեփականությունն է**, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջև կնքված ամուսնական պայմանագրով: Համատեղ գույքն ամուսնալուծվելիս ենթակա է բաժանման:

**Ամուսինների անձնական իրավունքներն ու պարտականությունները** կառուցված են ընտանիքում նրանց իրավահավասարության սկզբունքի վրա:

Ամուսինների անձնական իրավունքները	Ամուսինների անձնական պարտականությունները
<ul style="list-style-type: none"> <li>• Ամուսիններն ունեն ազգանվան ընկրության իրավունք:</li> <li>• Ամուսիններից յուրաքանչյուրն ազատ է աշխատանք, գրադնունք, մասնագիտություն ընկրելու հարցում:</li> <li>• Ամուսիններից յուրաքանչյուրն ազատ է բնակության վայր ընկրելու հարցում:</li> <li>• Ամուսիններն ունեն ընկրանեկան կյանքի հարցերի համարեղ լուծման իրավունք:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Ամուսինները պարտավոր են իրենց հարաբերությունները կառուցել փոխադարձ օգնության և հարգանքի վրա:</li> <li>• Ամուսինները պարտավոր են նպաստել ընկրանիքի ամրությանը:</li> <li>• Ամուսինները պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների բարեկեցության ու զարգացման համար:</li> </ul>

**Հարցեր և առաջադրանքներ**

1. Ի՞նչ է ընկրանեկան իրավունքը, և ո՞րն է դրա հիմնական աղբյուրը:
2. Ի՞նչ է ամուսնությունը, և որո՞նք են դրա հատկանիշները:
3. Որո՞նք են ամուսնության պայմանները և արգելքները:
4. Որո՞նք են ամուսնության դադարման հիմքերը:
5. Ո՞ր դեպքերում է ամուսնալուծությունը կատարվում արտադատական կարգով:
6. Ե՞րբ է ամուսնալուծությունը կատարվում դատական կարգով:
7. Ի՞նչ հարցեր պետք է լուծի դատարանն ամուսնալուծության վճռով:
8. Ո՞վ և ինչպե՞ս է ամուսնությունը ճանաչում անվավեր:
9. Որո՞նք են ամուսինների անչնական իրավունքները և պարտականությունները:

**Ինքնուրույն աշխատանք:** Պատրաստե՛ք զեկուցում «Ամուսնական պայմանագիր. հասկացությունը և կնքման կարգը» թեմայով, օգտվելով ընտանեկան օրենսգրքից:

**Լուծե՛ք խնդիրը:** Քանի որ գյուղական բնակավայրերում տարածված էին օրենքով սահմանված տարիքից ավելի շուտ ամուսնանալու դեպքերը, ապա մարզպետարանի հատուկ որոշմամբ մարզի տարածքում բոլորի համար ամուսնական տարիք սահմանվեց 16 տարին:

Կարո՞ղ է արդյոք գործադիր իշխանության մարմին համարվող մարզպետարանը ընդունել նման որոշում:

Ո՞ր տարիքում և ինչպե՞ս կարող են ամուսնանալ անձինք:  
Հիմնավորե՛ք պատասխաններն իրավաբանորեն:

## **ԳԱՍ 28. ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԳԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **1. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ**

**Ընտանիքն անձանց շրջանակ է, որն առաջանում է ամուսնության, ինչպես նաև արյունակցական կապերի և որդեգրման հետևանքով, և որի անդամները կապված են փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով:** Ընտանիքը սոցիալական միավոր է, որի գոյությունն ու պահպանումը խրախուսվում ու պաշտպանվում է պետության կողմից՝ որպես նրա ամրության հիմքերից մեկը: Սահմանադրությունն ընտանիքը համարում է հասարակության բնական և հիմնական բջիջ: Ընտանիքի անդամների՝ ամուսինների, ծնողների և զավակների փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները ծագում են նախ ամուսնությունը գրանցելու պահից, իսկ այնուհետև՝ երեխաների ծնողներից սերման, ինչպես նաև որդեգրման փաստի հիման վրա: Ընտանիքի անդամների կապն արտահայտվում է համատեղ ապրելով, ընդհանուր տնտեսություն վարելով, հոգսերի, խնդիրների ընդհանրությամբ:

**Ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքը:** Երեխա է համարվում 18 տարին չլրացած անձը: Յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու (որքան դա հնարավոր է), իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու, նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել նրա շահերին:

Երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք:

**Ծնողների և այլ ազգականների հետ շփվելու երեխայի իրավունքը:** Ազգականներն են պապերը և տատերը, եղբայրները, քույրերը, ինչպես նաև այլ ազգականները: Ծնողների ամուսնության դադարումը կամ նրանց առանձին ապրելը չեն ազդում երեխայի իրավունքների վրա:

Ծնողների առանձին (ընդ որում՝ տարբեր պետություններում) ապրելու դեպքում երեխան նրանցից յուրաքանչյուրի հետ շփվելու իրավունք ունի: Արտակարգ իրադրության մեջ գտնվող (ձերբակալված, կալանավորված, բժշկական կազմակերպությունում գտնվելու և այլ դեպքերում) երեխան իր ծնողների և մերձավոր ազգականների, ինչպես նաև արտակարգ իրադրության մեջ գտնվող ծնողն իր երեխայի հետ շփվելու իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով:

**Երեխայի պաշտպանության իրավունքը:** Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնում են ծնողները (օրինական ներկայացուցիչները), իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ խնամակալության և հոգաբարձության մարմինը: Երեխան ունի իր ծնողների (օրինական ներկայացուցիչների) չարաշահումներից պաշտպանվելու իրավունք: Երեխայի իրավունքների և

շահերի խախտման դեպքում նա իրավունք ունի պաշտպանության համար ինքնուրույն դիմելու խնամակալության և հոգաբարձության մարմին: Այդ մարմինները պետք է ձեռնարկեն երեխայի պաշտպանության անհրաժեշտ միջոցներ:

**Սեփական կարծիքն արտահայտելու երեխայի իրավունքը:** Երեխան իրավունք ունի իր շահերը շոշափող ցանկացած հարց լուծելիս ունկնդիր լինելու հարցի քննությանը և արտահայտելու սեփական կարծիքն ընտանիքում, դատական և այլ մարմիններում: 10 տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է՝ կապված խղճի ազատության հետ, որոշակի միջոցառումներին մասնակցելու, արտադպրոցական կրթություն ստանալուց հրաժարվելու, ծնողներից որևէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու, օրենքով նախատեսված այլ դեպքերում: 10 տարին լրացած երեխայի վերաբերյալ խնամակալության և հոգաբարձության մարմինը կամ դատարանը կարող են որոշում ընդունել նրա համաձայնությամբ:

**Երեխայի անուն, հայրանուն և ազգանուն ունենալու իրավունքը:** Երեխային անուն տրվում է ծնողների համաձայնությամբ, իսկ հայրանուն տրվում է հոր անունով: Երեխայի ազգանունը որոշվում է ծնողների ազգանունով: Եթե ծնողները կրում են տարբեր ազգանուններ, ապա երեխային ծնողների համաձայնությամբ տրվում է հոր կամ մոր ազգանունը: Ծնողների միջև երեխայի անվան, ազգանվան վերաբերյալ անհամաձայնության դեպքում տարաձայնությունները լուծում է խնամակալության և հոգաբարձության մարմինը:

**Երեխայի անունը և ազգանունը փոխելը:** Մինչև երեխայի 10 տարին լրանալը նրա ծնողների համատեղ դիմումի հիման վրա պետական գրանցում իրականացնող մարմինները փոխում են երեխայի անունը, ինչպես նաև նրան տրված ազգանունը՝ մյուս ծնողի ազգանունով: Եթե ծնողներն ապրում են առանձին, և ծնողը, որի մոտ ապրում է երեխան, ցանկանում է նրան տալ իր ազգանունը, այդ հարցը լուծվում է՝ հաշվի առնելով մյուս ծնողի կարծիքը:

Մյուս ծնողի կարծիքը հաշվի առնելը պարտադիր չէ, եթե՝ 1) հնարավոր չէ պարզել նրա բնակության վայրը. 2) նա գրկված է ծնողական իրավունքներից. 3) նա դա-



տարանի կողմից ճանաչված է անգործունակ. 4) նա առանց հարգելի պատճառների խուսափում է երեխային դաստիարակելուց ու պահելուց:

10 տարին լրացած երեխայի անվան և (կամ) ազգանվան փոխումը կարող է կատարվել՝ հաշվի առնելով նրա կարծիքը:

**Երեխայի գույքային իրավունքները:** Երեխան իր ծնողներից և ընտանիքի այլ անդամներից ապրուստի միջոց պահանջելու իրավունք ունի: Երեխաներին ալիմենտ վճարելու պարտավոր ծնողի պահանջով դատարանը կարող է որոշում կայացնել վճարման ենթակա ալիմենտի գումարի հիսուն տոկոսից ոչ ավելին բանկերում երեխաների անունով բացված հաշվին փոխանցելու մասին:

Երեխան սեփականության իրավունք չունի ծնողների գույքի նկատմամբ, իսկ ծնողները՝ երեխայի գույքի նկատմամբ: Համատեղ ապրող երեխաներն ու ծնողները կարող են մեկը մյուսի գույքն օգտագործել փոխադարձ համաձայնությամբ:

## 2. ԾՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ

Ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (**ծնողական իրավունքներ**): Դրանք դադարում են երեխաների 18 տարին լրանալով:

**Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակելու իրենց երեխաներին:** Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին: Ծնողները պարտավոր են ապահովել երեխաների կրթություն ստանալը: Ծնողները, երեխաների կարծիքը հաշվի առնելով հանդերձ, ունեն կրթական հաստատության ուսուցման ձևի ընտրության իրավունք մինչև երեխաների հիմնական ընդհանուր կրթություն ստանալը:

**Երեխաների իրավունքների պաշտպանությունը դրվում է նրանց ծնողների վրա:** Նրանք իրենց երեխաների օրինական ներկայացուցիչներն են և նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությամբ առանց լիազորագրի հանդես են գալիս այլ անձանց հետ հարաբերություններում, ինչպես նաև դատարանում:

**Ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխաների շահերին հակառակ:** Երեխաների շահերի ապահովումը պետք է լինի ծնողների հիմնական հոգածության առարկան: Ծնողական իրավունքներն իրականացնելիս ծնողներն իրավունք չունեն վնաս պատճառելու երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, նրանց բարոյական զարգացմանը: Երեխաներին դաստիարակելիս բացառվում են նրանց նկատմամբ քամահրական, դաժան, կոպիտ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը, վիրավորանքը կամ շահագործումը:

Երեխաների դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող բոլոր հարցերը ծնողները լուծում են փոխադարձ համաձայնությամբ՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով 10 տարին լրացած երեխայի կարծիքը: Նրանք անհամաձայնության դեպքում կարող են առկա տարաձայնությունները լուծելու համար դիմել խնամակալության և հոգաբարձության մարմին կամ դատարան:

**Ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ:** Դրա բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով 10 տարին լրացած երեխայի կարծիքը: Ընդ որում՝ դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը և այլ հանգամանքներ:

**Երեխայից առանձին ապրող ծնողն իրավունք ունի իրականացնելու ծնողական իրավունքները:** Օրինակ՝ երեխայի հետ շփվելու, նրա դաստիարակությանը մասնակցելու, երեխայի կրթության հարցերը լուծելու: Ծնողը, որի հետ ապրում է երեխան, չպետք է խոչընդոտի մյուս ծնողի հետ երեխայի շփմանը, եթե նման շփումը չի վնասում երեխայի ֆիզիկական ու հոգեկան առողջությանը, նրա բարոյական զարգացմանը: Ծնողներն իրավունք ունեն գրավոր համաձայնություն կնքելու երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման մասին:

Խորթ ծնողները պարտավոր են դաստիարակել և խնամել իրենց ամուսնու՝ նախկին ամուսնությունից ծնված և իրենց հետ համատեղ ապրող խորթ երեխաներին: Երեխայի ազգականներն իրավունք ունեն շփվելու երեխայի հետ:

**Ծնողական իրավունքների պաշտպանությունը:** Ծնողները կարող են պահանջել վերադարձնել իրենց երեխային այն անձից, ով նրան իր մոտ է պահում առանց օրինական հիմքի: Վեճի դեպքում ծնողները կարող են դիմել դատարան: Հաշվի առնելով 10 տարին լրացած երեխայի կարծիքը՝ դատարանը կարող է մերժել ծնողների հայցը, եթե պարզի, որ վերադարձնելը չի բխում երեխայի շահերից:

**Երեխային վերցնելը նրա կյանքը և առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում:** Այդպիսի սպառնալիքի դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինն իրավասու է անմիջապես երեխային վերցնելու ծնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան: Երեխային վերցնելիս այդ մարմինները պարտավոր են անհապաղ ապահովել երեխայի ժամանակավոր տեղավորումը և յոթ օրվա ժամկետում դիմել դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին) ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով:

**Ծնողական իրավունքներից զրկելը կատարվում է դատական կարգով:** Ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից, եթե նրանք՝

- ա)** չարամտորեն խուսափում են ծնողական պարտականությունները կատարելուց, օրինակ՝ ալիմենտ վճարելուց.
- բ)** առանց հարգելի պատճառների հրաժարվում են վերցնել իրենց երեխային ծննդատնից կամ բժշկական այլ կազմակերպությունից, ինչպես նաև դաստիարակչական կամ նմանատիպ այլ կազմակերպություններից.
- գ)** չարաշահում են ծնողական իրավունքները, օրինակ՝ իրենց անբարոյական վարքագծով վնասակար ազդեցություն են գործում երեխայի վրա.

- դ)** դաժանաբար են վարվում երեխաների հետ, օրինակ՝ ֆիզիկական կամ հոգեկան բռնություն են գործադրում նրանց նկատմամբ.
- ե)** տառապում են քրոնիկ ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ.
- զ)** կատարել են իրենց երեխաների դեմ ուղղված դիտավորյալ հանցանք:  
Ծնողական իրավունքներից զրկված ծնողները կորցնում են երեխայի հետ ազգակցության փաստի վրա հիմնված բոլոր իրավունքները: Նման ծնողները չեն ազատվում իրենց երեխայի ապրուստը հոգալու պարտականությունից:

### 3. ՈՐՂԵԳՐՈՒՄ (ԴԱՏԵՐԱԳՐՈՒՄ)

Որդեգրումն իրավաբանական ակտ է, որով որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները: Որդեգրում (դատերագրում) են մինչև 18 տարեկան երեխաներին: Որդեգրել կարող են ինչպես երեխայի արյունակից հարազատները, այնպես էլ կողմնակի անձինք: Եթե որդեգրվում է 10 տարեկան դարձած երեխա, ապա նա պետք է տա իր համաձայնությունը: Եթե որդեգրվում է հարազատ ծնողներ ունեցող երեխան, ապա ծնողական իրավունքներից չզրկված ծնողները պարտադիր պետք է տան գրավոր համաձայնություն:

Որդեգրված երեխաներն օրենքով ստանում են որդեգրողների հարազատ երեխայի վիճակ: Օրենքով պատասխանատվություն է սահմանված որդեգրման գաղտնիքը խախտելու համար: Որդեգրման շնորհիվ որդեգրվածի և իր հարազատ ծնողների ու մյուս հարազատների միջև օրենքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները դադարում են: Դրա փոխարեն այդ իրավունքներն ու պարտականություններն առաջանում են որդեգրվածի ու նրան որդեգրողների միջև:

Որդեգրումը կարող է դատական կարգով ճանաչվել անվավեր կամ էլ վերացվել:

#### Հարցեր

1. Ի՞նչ է ընդհանրում ապրելու և դաստիարակվելու երեխայի իրավունքը:
2. Ի՞նչ է ազգականների հետ շփվելու երեխայի իրավունքը:
3. Ովքե՞ր են իրականացնում երեխայի պաշտպանության իրավունքը:
4. Ինչպե՞ս է երեխային տրվում անուն, հայրանուն և ազգանուն:
5. Ինչպե՞ս է կատարվում երեխայի անվան և ազգանվան փոփոխությունը:
6. Ի՞նչ գույքային իրավունքներ ունի երեխան:
7. Որո՞նք են ծնողների իրավունքները և պարտականությունները երեխաների նկատմամբ:
8. Ինչպե՞ս է որոշվում երեխայի բնակության վայրը, եթե ծնողներն ապրում են փարքեր վայրերում:
9. Ի՞նչ իրավունքներ ունի երեխայից առանչին ապրող ծնողը:
10. Ո՞վ և ի՞նչ հիմքերով է զրկում ծնողական իրավունքներից:

## ԳԼՈՒԽ 5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

### ԳՎԱՍ 29. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ, ԿՈՂՄԵՐԸ

#### 1. ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ԳՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Աշխատանքը կարևոր դեր է խաղում հասարակության և մարդու կյանքում: Այն մեծ նշանակություն ունի մարդու արժանապատվության և ինքնահարգանքի ապահովման համար, նախադրյալներ է ստեղծում մարդու մնացած իրավունքների համար: Այդ պատճառով արդի աշխարհում աշխատանքը ձեռք է բերել մեծ նշանակություն: Դրա համար գոյություն ունի աշխատանքային իրավունքի ճյուղը, որի նորմերը կոչված են ստեղծելու վարձու աշխատողների սոցիալական պաշտպանության իրավական կառուցակարգ:

**Աշխատանքային իրավունքն իրավական նորմերի համակցություն է, որը կարգավորում է մարդու աշխատանքի սահմանադրական իրավունքը:**

Աշխատանքային իրավունքի հիմնական աղբյուրն **աշխատանքային օրենսգիրքն** է, որը կարգավորում է աշխատանքային հարաբերությունները՝ աշխատանքային պայմանագիրը, աշխատաժամանակը և հանգստի ժամանակը, աշխատանքի վճարումը, աշխատանքային կարգապահությունը, վեճերի լուծման կարգը և այլն (*տե՛ս www.arlis.am*):

**Աշխատանքային իրավունքի աղբյուր են նաև աշխատանքային պայմանագրերը:** Աշխատանքային հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկություններից է աշխատանքի, դրա պայմանների սահմանման պայմանագրային բնույթը: Պայմանագրային կարգավորումը կատարվում է երկու մակարդակում: Առաջինը՝ **անհատական աշխատանքային պայմանագիր**, որը գործատուն կնքում է առանձին աշխատողի հետ: Երկրորդը՝ **կոլեկտիվ պայմանագիր**, որը գործատուն կնքում է աշխատավորական կոլեկտիվի հետ:

#### 2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԵՐԸ

**Աշխատանքային են այն հարաբերությունները, որոնք հիմնված են աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա:** Այդ հարաբերությունները ծագում են սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա: Աշխատանքային իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը հավասարապես ճանաչվում է ՀՀ բոլոր քաղաքացիների համար: Ոչ քաղաքացիներն ունեն նույն աշխատանքային իրավունքները, ինչ քաղաքացիները: Աշխատողը և գործատուն աշխատանքային իրավահարաբերությունների



հիմնական սուբյեկտներն են: **Աշխատողն** օրենքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացին է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին կատարում է որոշակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի:

Աշխատող են համարվում նաև ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ աշխատանքային պայմանագրով աշխատող 14-16 տարեկան անչափահաս քաղաքացիները: Մինչև 14 տարեկան անձանց հետ աշխատանքային պայմանագիր կնքելը կամ նրանց աշխատանքի ներգրավելն արգելվում է:

**Գործատուն** աշխատանքային հարաբերության այն մասնակիցն է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա և (կամ) օրենքով սահմանված կարգով օգտագործում է քաղաքացիների աշխատանքը: Գործատու կարող է լինել աշխատանքային իրավունակություն և գործունակություն ունեցող իրավաբանական անձը: Գործատու իրավաբանական անձանց աշխատանքային իրավունակությունը և գործունակությունը ծագում է դրանց ստեղծման պահից: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որպես գործատու կարող է հանդես գալ աշխատանքային պայմանագիր կնքելու իրավունք ունեցող այլ սուբյեկտ (հիմնարկ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին և այլն):

**Գործատու կարող է լինել նաև ֆիզիկական անձը:** Գործատու անձի իրավունակությունը և գործունակությունը կարգավորվում է քաղաքացիական օրենսգրքով (*վերհիշե՛ք 21-րդ դասը*):

**Աշխատողների կոլեկտիվը** մասնակցում է աշխատանքային հարաբերություններին օրենքով սահմանված դեպքերում: Աշխատողների կոլեկտիվ կազմում են գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող բոլոր աշխատողները: Աշխատողների կոլեկտիվն իր որոշումներն ընդունում է **աշխատողների ժողովում** կամ **համաժողովում**, այսինքն՝ աշխատողների ընտրած պատվիրակների ժողովում:

### 3. ԿՈՒԼԵԿՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

**Աշխատանքային վեճ. հասկացությունը, տեսակները, լուծման փուլերը:** Աշխատանքային վեճն աշխատողի և գործատուի միջև տարաձայնությունն է, որն առաջանում է աշխատանքային իրավունքների և պարտականությունների կատարման ժամանակ: Դրանք լինում են կոլեկտիվ և անհատական (*տե՛ս 31-րդ դասը*):

**Կոլեկտիվ աշխատանքային վեճն** արհեստակցական միության և գործատուի կամ կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունք ունեցող կողմերի միջև տարաձայ-

նություններն են կողմերի ներկայացրած ու չբավարարված պահանջների վերաբերյալ, որոնք ծագում են կոլեկտիվ պայմանագրի կնքման առիթով բանակցությունների, աշխատանքի պայմանների փոփոխման կամ նոր պայմանների սահմանման, կոլեկտիվ պայմանագրի կնքման և կատարման ընթացքում:

Կոլեկտիվ աշխատանքային վեճերի վերաբերյալ գործատուին կամ կոլեկտիվ պայմանագրի կողմին պահանջներ առաջադրելու իրավունք ունեն սոցիալական գործընկերության կողմերը՝ աշխատողները, գործատուները, ՀՀ կառավարության ներկայացուցիչները:

Պահանջները պետք է ներկայացվեն գրավոր՝ հստակ շարադրված ու պատճառաբանված: Գրավոր պահանջները հանձնվում են գործատուին կամ սոցիալական գործընկերության համապատասխան կողմին:

Գործատուն կամ պահանջներ ստացած համապատասխան կողմը պարտավոր է քննարկել ստացված պահանջները և դրանք ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում, ընդունել գրավոր որոշում և այն տրամադրել պահանջներ առաջադրողին: Եթե որոշումը չի բավարարում պահանջներ առաջադրողներին, ապա կողմերը կարող են վեճը քննարկել օրենքով սահմանված կարգով: Կոլեկտիվ աշխատանքային վեճի կողմն իրավունք չունի խուսափելու հաշտեցման ընթացակարգերից:

Կոլեկտիվ աշխատանքային վեճերի քննումը և լուծումն անցնում է երկու փուլ.

- 1) վեճի քննարկումը հաշտեցման հանձնաժողովում (այդ թվում՝ միջնորդի մասնակցությամբ),
- 2) վեճի քննարկումը դատարանում,
- 3) հնարավոր է վեճի լուծում գործադուլի միջոցով:

**Կոլեկտիվ աշխատանքային վեճի քննարկումը հաշտեցման հանձնաժողովում:** Կոլեկտիվ աշխատանքային վեճի քննարկումը հաշտեցման հանձնաժողովի կողմից կոլեկտիվ վեճերի քննարկման պարտադիր փուլ է: Այդ հանձնաժողովները ձևավորվում են կոլեկտիվ աշխատանքային վեճի կողմերի համաձայնությամբ՝ կողմերի հավասար թվով ներկայացուցիչներից: Հաշտեցման հանձնաժողովը ստեղծվում է առաջադրված պահանջները մերժելու մասին գրավոր որոշումը պահանջներ առաջադրած կողմին տրամադրելու օրվանից հետո՝ 7 օրվա ընթացքում:

Հաշտեցման հանձնաժողովում ներկայացված պահանջների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերվելու դեպքում ընդունվում է գրավոր որոշում կոլեկտիվ աշխատանքային վեճը լուծված համարվելու և հաշտեցման գործընթացն ավարտվելու մասին: Այդ որոշումը կողմերի համար պարտադիր է և ենթակա կատարման:

Հաշտեցման հանձնաժողովում վեճը չլուծելու դեպքում վեճի կողմերը կազմում են արձանագրություն տարաձայնությունների վերաբերյալ և ընդունում են որոշում՝ վեճի քննարկումը միջնորդի մասնակցությամբ շարունակելու կամ վեճը չլուծվելու և հաշտեցման գործընթացն ավարտելու մասին: Հաշտեցման հանձնաժողովի որոշման մասին տեղեկացվում է աշխատողներին:

### **Կոլեկտիվ աշխատանքային վեճի քննարկումը միջնորդի մասնակցությամբ:**

Հաշտեցման հանձնաժողովում չլուծված վեճը կարող է քննարկվել միջնորդի մասնակցությամբ, եթե վեճը վերաբերում է կոլեկտիվ պայմանագրի կնքմանը կամ փոփոխմանը: Կոլեկտիվ վեճի կողմերը 3 աշխատանքային օրվա ընթացքում հրավիրում են միջնորդ: Միջնորդի թեկնածության վերաբերյալ համաձայնությունն ամրագրվում է արձանագրությամբ: Եթե 3 աշխատանքային օրվա ընթացքում վեճի կողմերը ձեռք չեն բերում համաձայնություն միջնորդի թեկնածության վերաբերյալ, ապա բանակցությունները համարվում են ավարտված, իսկ վեճը՝ չլուծված:

Եթե միջնորդն ընտրվում է, ապա նրա և վեճի կողմերի մասնակցությամբ որոշված կարգով սկսվում է վեճի քննարկումը 7 օրվա ընթացքում: Վիճելի պահանջների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերվելու դեպքում ընդունվում է գրավոր որոշում կոլեկտիվ աշխատանքային վեճը լուծված համարելու մասին, հակառակ դեպքում՝ վեճը չլուծվելու և հաշտեցման գործընթացն ավարտելու մասին:

**Կոլեկտիվ աշխատանքային վեճի քննումը դատարանում:** Դատարանում լուծվում են կոլեկտիվ պայմանագրի կատարման ընթացքին վերաբերող վեճերը: Այդպիսի վեճի վերաբերյալ հաշտեցման հանձնաժողովում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճի կողմերը տարաձայնությունների վերաբերյալ արձանագրությունը կազմելուց և վեճը չլուծվելու ու հաշտեցման գործընթացն ավարտելու մասին որոշումն ընդունելուց հետո 10 օրվա ընթացքում կարող են դիմել դատարան:

**Աշխատողներն ունեն գործադուլի իրավունք:** Գործադուլը մեկ կամ մի քանի կազմակերպությունների աշխատողների կամ աշխատողների խմբի աշխատանքի ժամանակավոր դադարեցում է այն դեպքում, երբ կոլեկտիվ աշխատանքային վեճը հնարավոր չի եղել լուծել այլ կերպ: Գործադուլի նպատակը աշխատողների սոցիալ-տնտեսական, աշխատանքային շահերի պաշտպանությունն է: Գործադուլ հայտարարելու իրավունք ունի արհմիությունը: Մինչև գործադուլը հնարավոր է նախազգուշական գործադուլ՝ 2 ժամից ոչ ավելի: Գործադուլն արգելվում է ոստիկանությունում, զինված ուժերում, նման այլ ծառայություններում, կենտրոնացված մատակարարման (էլեկտրականություն, ջերմություն, գազ) կազմակերպություններում, անհետաձգելի բժշկական օգնության ծառայությունում, տարերային աղետի գոտիներում, ինչպես նաև ռազմական կամ արտակարգ դրության վայրերում:

### **Հարցեր և առաջադրանքներ**

1. Ի՞նչ է աշխատանքային իրավունքը:
2. Ի՞նչ տեղ են գրավում պայմանագրերն աշխատանքային իրավունքում:
3. Ի՞նչ են աշխատանքային հարաբերությունները, և ովքե՞ր են դրա կողմերը:
4. Ի՞նչ հատկություններ ունի քաղաքացու աշխատանքային իրավունակությունը:
5. Ովքե՞ր կարող են լինել գործադուլ:
6. Որո՞նք են կոլեկտիվ աշխատանքային վեճի քննարկման և լուծման փուլերը:
7. Ի՞նչ է գործադուլը:

**Ինքնուրույն աշխատանք:** Պատրաստեք գեկուցում «Արհեստակցական միությունը որպես կազմակերպություն, և արհմիութենական շարժումը աշխարհում» թեմայով:

## ԳԱՍ 30. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

### 1. «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ՀԱՄԱՎՅՈՒԹՅՈՒՆԸ

**Աշխատանքային պայմանագիրը (ԱՊ) համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև:** Դրանով աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք՝ պահպանելով աշխատանքային կարգապահությունը: Գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել պատշաճ աշխատանքային պայմաններ:

ԱՊ կնքելով՝ աշխատավորը դառնում է գործատու կազմակերպության անդամը և ենթարկվում է նրա ներքին աշխատանքային կարգ ու կանոնին: Դրանով է այն տարբերվում քաղաքացիական իրավունքի այն պայմանագրերից, որոնք կապված են աշխատանքի հետ (օրինակ՝ կապալի, հեղինակային):

**Աշխատանքային պայմանագրի կարևոր հատկությունը դրա ազատությունն է:** Յուրաքանչյուր ոք ազատ կամահայտնությամբ ընտրում է իր աշխատանքային գործունեության վայրը և տեսակը, ինչպես նաև կնքում է ԱՊ և կարող է ցանկացած ժամանակ օրենքով սահմանված կարգով լուծել այն:

ԱՊ-ն պետք է ներառի հետևյալ անհրաժեշտ պայմանները.

1) աշխատանքի վայրը.

2) աշխատանքն սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը.

3) պաշտոնի անվանումը և (կամ) աշխատանքային գործառույթները.

4) աշխատավարձի չափը և (կամ) այն որոշելու ձևը.

5) աշխատողին սահմանված կարգով տրվող հավելավճարները և այլն.

6) աշխատաժամանակը՝ ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատանքային ռեժիմ սահմանելու դեպքում.

7) ԱՊ-ի գործողության ժամկետը.

8) ԱՊ կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը:

Բացի վերը թվարկված պարտադիր պայմաններից, պայմանագիրը կարող է ունենալ լրացուցիչ պայմաններ: **Լրացուցիչ** են այն պայմանները, որոնք սահմանում են կողմերը, իհարկե, օրենսդրությամբ թույլատրված շրջանակներում: Օրինակ՝ կողմերը կարող են պայմանագրով նախատեսել փորձաշրջանի անցկացման վերաբերյալ պայմաններ: Փորձաշրջանը ԱՊ-ով նախատեսված միջոց է, որի նպատակն է ստուգել աշխատողի համապատասխանությունը հանձնարարվող աշխատանքին: Այդ պայմանները կոչվում են լրացուցիչ, որովհետև դրանք կարող են լինել, բայց կարող են և չլինել, միևնույն է, պայմանագիրն առանց դրանց առկա է, եթե, իհարկե, անհրաժեշտ բոլոր պայմանները որոշված են: Եթե կողմերը սահմանել են լրացուցիչ պայմաններ, ապա դրանք ևս ենթակա են պարտադիր կատարման:

## 2. ԱՃԻԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԿԱՐԳԸ

**Աշխատանքային պայմանագիր կնքելու գործընթացն աշխատավորին որպես աշխատող ընդունելն է:** ԱՊ-ն կնքվում է գրավոր՝ երկու օրինակից, կողմերի ստորագրությամբ: Այն ստորագրում են գործատուն կամ նրա ներկայացուցիչը և աշխատողը: Բացի պայմանագիր կնքելուց, գործատուն ընդունում է նաև **աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ:**

Աշխատանքի ընդունման ժամանակ գործատուն կամ նրա լիազորված անձը պարտավոր է աշխատանքի ընդունվող անձին ստորագրությամբ ծանոթացնել աշխատանքի պայմաններին, կոլեկտիվ պայմանագրին (դրա առկայության դեպքում), ներքին կարգապահական կանոններին, աշխատավայրում նրա աշխատանքը կանոնակարգող այլ իրավական ակտերին:

Աշխատողը պարտավոր է պայմանագրում նշված օրն անցնել աշխատանքի:



Այդ օրն անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը հիմք է ԱՊ-ի լուծման համար: Աշխատողն իր պարտականությունները կատարում է անձամբ: Աշխատողը միայն գործատուի թույլտվությամբ կարող է այլ անձի հանձնարարել ԱՊ-ով նախատեսված աշխատանքների կատարումը:

**Աշխատանքային պայմանագրի կնքման նախադրյալները:** Գործատուն իրավունք ունի ինքնուրույն, ուղղակիորեն (ամանց մրցութային կամ այլ ընթացակարգերի) համալրելու աշխատատեղերը՝ կնքելով աշխատանքային պայմանագրեր: Աշխատող փնտրող գործատուն կարող է աշխատատեղերը համալրել նաև իր կազմակերպած մրցույթով կամ օգտվել համապատասխան մասնագիտացված կազմակերպության ծառայությունից: Հատուկ մասնագիտական գիտելիքներ պահանջող աշխատանքների կատարման կամ պաշտոնի նշանակման համար կարող է պահանջվել որակավորման քննությունների հանձնում: Դրանց անցկացման կարգը սահմանում է գործատուն՝ իրավական նորմերին համապատասխան:

**Աշխատանքի ընդունման ժամանակ պահանջվող փաստաթղթերը:** ԱՊ կնքելու համար գործատուն պարտավոր է պահանջել հետևյալ փաստաթղթերը. 1) անձը հաստատող փաստաթուղթ, 2) աշխատանքային գրքույկ (բացառությամբ առաջին անգամ կամ համատեղությամբ աշխատանքի ընդունվողների) և սոցիալական ապահովության քարտ կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանք, 3) կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին վկայական, եթե աշխատանքը կապված է որոշակի կրթության կամ մասնագիտական պատրաստվածության հետ, 4) տեղեկանք առողջական վիճակի մասին (սանիտարական գրքույկ), եթե պայմանագիրը կնքվում է այնպիսի աշխատանքների համար, որոնք պահանջում են սկզբնական և պարբերական բժշկական զննություն, ինչպես նաև

մինչև 18 տարեկան քաղաքացիների հետ պայմանագիր կնքելու ժամանակ: Այդպիսի աշխատանքների ցանկը և տեղեկանքի (սանիտարական գրքույկի) ձևը սահմանում է կառավարությունը, 5) ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությունը, եթե աշխատանքի է ընդունվում 14-16 տարեկան անչափահաս քաղաքացին, 6) օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր:

Աշխատանքի ընդունելիս արգելվում է պահանջել այնպիսի փաստաթղթեր, որոնք նախատեսված չեն նորմատիվ իրավական ակտերով:

**Մտորումներ:** *Ի՞նչ եք կարծում, արդյոք շատ չե՞ն աշխատանքի ընդունման ժամանակ պահանջվող փաստաթղթերը: Ո՞րն է դրանցից յուրաքանչյուրի նշանակությունն աշխատանքային պայմանագիր կնքելու համար:*

**Աշխատանքային պայմանագրերն ըստ իրենց գործողության ժամկետի լինում են որոշակի և անորոշ ժամկետով:** Պայմանագիրը կնքվում է՝ 1) **անորոշ ժամկետով**, եթե պայմանագրում դրա գործողության ժամկետը նշված չէ, 2) **որոշակի ժամկետով**, եթե պայմանագրում դրա գործողության ժամկետը նշված է:

### 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ, ԳԱԳԱՐՈՒՄԸ

Աշխատանքային իրավունքի սկզբունքներից է ԱՊ-ի կայունությունը, այսինքն՝ անփոփոխելիությունը: Սակայն օրենքով նախատեսված դեպքերում դա հնարավոր է:

**Արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման դեպքում** թույլատրվում է փոփոխել աշխատանքի էական պայմանները: Աշխատողին նույն գործատուի մոտ այլ վայր աշխատանքի փոխադրելը, ինչպես նաև այլ գործատուի մոտ աշխատանքի փոխադրելը, աշխատանքի վարձատրության չափը, արտոնությունները, աշխատանքի ռեժիմը, ոչ լրիվ աշխատաժամանակ սահմանելը կամ վերացնելը, տարակարգերը և պաշտոնների անվանումներն աշխատանքի էական պայմաններ են, որոնց փոփոխման դեպքում գործատուն աշխատողին պետք է տեղյակ պահի ոչ ուշ, քան երկու ամիս առաջ: Աշխատողը չի կարող տեղափոխվել այնպիսի աշխատանքի, որն առողջական վիճակի բերումով նրան հակացուցված է ըստ բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի եզրակացության:

Առանց աշխատողի գրավոր համաձայնության աշխատանքի վարձատրության պայմանները գործատուն կարող է փոփոխել միայն օրենքով կամ կոլեկտիվ պայմանագրով՝ աշխատանքի վարձատրության պայմանների փոփոխության դեպքում:

**Գործատուն իրավունք ունի աշխատողին մինչև մեկ ամիս ժամկետով նույն աշխատավայրում փոխադրելու պայմանագրով չնախատեսված այլ աշխատանքի, ինչպես նաև փոփոխելու պայմանագրի որոշ պայմանները՝ տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքների կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման նպատակով:** Աշխատանքի վարձա-

տրությունը կատարվում է կատարված աշխատանքին համապատասխան: Եթե այլ աշխատանքի փոխադրման դեպքում աշխատողից անկախ պատճառներով նրա աշխատավարձը նվազում է, ապա պահպանվում է նրա նախկին աշխատանքի վերջին ամսվա աշխատավարձի չափը: Արգելվում է աշխատողին փոխադրել նրա առողջական վիճակին հակացուցված աշխատանքի:

**Գործատուն իրավունք ունի պարապուրդի դեպքում աշխատողին այլ աշխատանքի փոխադրել:** Ոչ աշխատողի մեղքով պարապուրդը աշխատավայրում ստեղծված այն իրավիճակն է, որի ժամանակ գործատուն արտադրական կամ օբյեկտիվ այլ պատճառներով չի կարողանում ապահովել աշխատողի՝ ԱՊ-ով նախատեսված աշխատանքը: Պարապուրդի ժամանակ գործատուն կարող է աշխատողին նրա գրավոր համաձայնությամբ փոխադրելու ցանկացած այլ աշխատանքի՝ հաշվի առնելով աշխատողի մասնագիտությունը, որակավորումը և առողջական վիճակը: Աշխատողի համաձայնությամբ նա կարող է փոխադրվել նաև այլ աշխատանքի՝ առանց հաշվի առնելու նրա մասնագիտությունը և որակավորումը:

**Աշխատանքային պայմանագիրը դադարում է, երբ դրա համար կան օրինական հիմքեր:** Պայմանագրի դադարման հիմքեր (պատճառներ) են համարվում այն կենսական հանգամանքները, որոնք օրենքը ճանաչում է պայմանագրի դադարման համար անհրաժեշտ իրավաբանական փաստ: Հիմքի առկայությունն ինքնաբերաբար չի դադարեցնում ԱՊ-ը: Դրա համար անհրաժեշտ է որոշակի իրավաբանական փաստաթուղթ (ադմինիստրացիայի հրամանը կամ աշխատողի դիմումը):

ԱՊ-ի դադարումն իրավաչափ է միայն այն դեպքում, եթե առկա է օրենքով սահմանված հիմքը, պահպանվել է այդ հիմքով աշխատողին արձակելու որոշակի կարգը, առկա է աշխատանքային իրավահարաբերության դադարումն ազդարարող իրավաբանական փաստաթուղթը:

ԱՊ-ն դադարում է գործել՝ 1) կողմերի համաձայնությամբ, 2) պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում, 3) աշխատողի նախաձեռնությամբ, 4) գործատուի նախաձեռնությամբ, 5) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

**Ինքնուրույն աշխատանք:** Օգտվելով աշխատանքային օրենսգրքից (տե՛ս [www.parliament.am](http://www.parliament.am) կայքում)՝ ուսուցչի բաշխմամբ պատրաստե՛ք գեկուցում աշխատանքային պայմանագրի դադարման վերը նշված, ինչպես նաև այլ հիմքերից մեկի վերաբերյալ:

### Հարցեր

1. Ի՞նչ է աշխատանքային պայմանագիրը:
2. Ի՞նչ են ԱՊ-ի անհրաժեշտ պայմանները, և որո՞նք են դրանք:
3. Ի՞նչ են ԱՊ-ի լրացուցիչ պայմանները, և որո՞նք են դրանք:
4. Ի՞նչ կարգով և չեով է կնքվում աշխատանքային պայմանագիրը:
5. Որո՞նք են աշխատանքային պայմանագրի կնքման նախադրյալները:
6. Ի՞նչ փաստաթղթեր են պահանջվում աշխատանքի ընդունման ժամանակ:
7. Որո՞նք են ԱՊ-ի տեսակներն ըստ գործողության ժամկետի:
8. Ի՞նչ հիմքերով է հնարավոր աշխատանքային պայմանագրի փոփոխումը:
9. Ի՞նչ հիմքերով է դադարում գործել աշխատանքային պայմանագիրը:

## **ԳԱՍ 31. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ**

### **1. ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՀԱՆԳԱՏԻ ԺԱՄԱՆԱԿ**

Աշխատաժամանակն այն ժամանակահատվածն է, որի ընթացքում աշխատողը պարտավոր է կատարել ԱՊ-ով նախատեսված աշխատանքը, ինչպես նաև դրան հավասարեցված այլ ժամանակահատվածները: Աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել շաբաթական 40 ժամից: Ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը չի կարող անցնել ութ աշխատանքային ժամից, եթե իրավական նորմերով և կոլեկտիվ պայմանագրով չի նախատեսված այլ բան: **Արտաժամյա աշխատանքները** հնարավոր են գործատուի պահանջով կամ կողմերի համաձայնությամբ: Արտաժամյա աշխատանքը թույլատրվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում:

**Յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք:** Առանց հանգստի աշխատանքն անհնարին է: Հանգիստն աշխատող մարդու բնական պահանջմունքն է, ուստի Սահմանադրությունը երաշխավորում է. «Առավելագույն աշխատաժամանակը, հանգստյան օրերը և ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն տևողությունը սահմանվում են օրենքով»: **Հանգստի ժամանակն** օրենքով, աշխատանքային պայմանագրով կանոնակարգված աշխատանքից ազատ ժամանակն է, որն աշխատողն օգտագործում է իր հայեցողությամբ: Հանգստի ժամանակի տեսակներն են.

**1. Հանգստանալու և սնվելու համար ընդմիջում:** Տրամադրվում է աշխատանքային օրվա կեսին, սակայն ոչ ուշ, քան աշխատանքը սկսելուց 4 ժամ հետո (2 ժամից ոչ ավելի և կես ժամից ոչ պակաս տևողությամբ): Աշխատողը կարող է ընդմիջմանը բացակայել աշխատավայրից:

**2. Աշխատանքային օրվա ընթացքում հանգստանալու լրացուցիչ և հատուկ ընդմիջումներ:** Լրացուցիչ ընդմիջումները տրամադրվում են մինչև 18 տարեկան աշխատողներին՝ նվազագույնը 30 րոպե, իսկ հատուկ ընդմիջումները՝ հատուկ պայմաններում (օրինակ՝ մտավոր հուզական գերլարված վիճակում կամ պլյուս 40°C-ից բարձր օդի ջերմաստիճանի դեպքում) աշխատողներին:

**3. Աշխատանքային օրերի միջև ընկած անընդմեջ հանգիստ:** Դրա տևողությունը չի կարող պակաս լինել 11 ժամից:

**4. Ամենշաբաթյա անընդմեջ հանգիստ:** Ընդհանուր հանգստյան օրը կիրակին է, իսկ հինգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ նաև շաբաթը:

**5. Տոնական և հիշատակի օրեր:** Դրանք օրենքով սահմանված են որպես ոչ աշխատանքային (Ամանոր, Սուրբ Ծնունդ և Հայտնություն, Բանակի օր, Կանանց տոն, Ցեղասպանության գոհերի հիշատակի օր, Աշխատանքի օր, Հաղթանակի և խաղաղության տոն, Հանրապետության տոն, Սահմանադրության օր, Անկախության տոն):

**6. Ամենամյա արձակուրդ:** Այս արձակուրդն օրերով հաշվարկվող ժամանակահատված է, որը տրամադրվում է աշխատողին: Այդ ընթացքում պահպանվում է նրա

աշխատատեղը (պաշտոնը), վճարվում է միջին աշխատավարձ: **Ամենամյա նվազագույն արձակուրդի** տևողությունը հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում 20 աշխատանքային օր է, իսկ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ 24: Կան նաև ամենամյա **երկարացված** և **լրացուցիչ արձակուրդներ**, ինչպես նաև հղիության և ծննդաբերության արձակուրդը, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդը, ուսումնական արձակուրդը:

**Ուսումնական արձակուրդ:** Միջնակարգ մասնագիտական և բուհ ընդունվելու նպատակով քննություններին նախապատրաստվելու համար աշխատողներին յուրաքանչյուր քննության համար տրամադրվում է եռօրյա արձակուրդ:

Հանրակրթական, միջնակարգ-մասնագիտական կամ բուհում սովորող աշխատողներին ուսումնական հաստատության միջնորդությամբ տրամադրվում է ուսումնական արձակուրդ՝ **1) ընթացիկ քննություններին** նախապատրաստվելու և հանձնելու համար. յուրաքանչյուր քննության համար 3 աշխատանքային օր, **2) ստուգարքներին** նախապատրաստվելու և հանձնելու համար՝ յուրաքանչյուր ստուգարքի համար 2 աշխատանքային օր, **3) լաբորատոր աշխատանքների** կատարման համար՝ ուսումնական պլանով նախատեսված օրերի քանակով, **4) դիպլոմային** աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության համար 30 աշխատանքային օր, **5) պետական (ավարտական)** յուրաքանչյուր քննության նախապատրաստվելու և հանձնելու համար 6 աշխատանքային օր:

Ուսումնական արձակուրդում չի հաշվարկվում ուսումնական հաստատության վայր մեկնելու և վերադառնալու ժամանակը:

## 2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

**Աշխատանքային կարգապահությունն իրավական նորմերով սահմանված վարքագծի կանոններն են, որոնց պարտավոր են ենթարկվել աշխատողները:**

**Աշխատողը պարտավոր է** բարեխղճորեն կատարել ԱՊ-ով ստանձնած պարտավորությունները, պահպանել գործատուի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը, կատարել աշխատանքի սահմանված նորմաները, պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման պահանջները, բարեխղճորեն վերաբերվել գործատուի և այլ աշխատողների գույքին, ինչպես նաև մարդկանց կյանքին ու առողջությանը:

**Գործատուն պարտավոր է** աշխատողին ապահովել պայմանավորված աշխատանքով և կազմակերպել նրա աշխատանքը, նախատեսված ժամկետում և սահմանված չափով վճարել աշխատավարձը, սահմանված կարգով աշխատողին տրամադրել վճարվող և չվճարվող արձակուրդը, ապահովել անվտանգ աշխատանքային պայմաններ, աշխատանքի ընդունելիս, ինչպես նաև աշխատելու ընթացքում աշխատողին ծանոթացնել գործատուի ներքին կարգապահական կանոններին, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության պահանջներին, կատարել նախատեսված այլ պարտականություններ:

Գործատուն կարող է կիրառել **խրախուսանքներ** աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար, օրինակ՝ շնորհակալության հայտարարում, միանվագ դրամական պարգևատրում, հուշանվերով պարգևատրում, լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում: Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով աշխատողները կարող են ներկայացվել պետական պարգևների:

**Աշխատանքային կարգապահության խախտումը և պատասխանատվության հիմքերը:** **Խախտում** է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ **կարգապահական տույժերը**. նկատողություն, խիստ նկատողություն, օրենքով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում: Օրենքով չնախատեսված կարգապահական տույժերի կիրառումն արգելվում է:

Կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը: Յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

**Կարգապահական տույժի կիրառման կարգը և ժամկետը:** Մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց բացատրության:

Կարգապահական տույժը կարող է կիրառվել խախտումը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, չհաշված աշխատողի ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայության, գործուղման կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածները: Կարգապահական տույժը չի կարող կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է վեց ամիս: Եթե խախտումը հայտնաբերվում է աուդիտի, ֆինանսատնտեսական գործունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգման ընթացքում, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե խախտումը կատարվելու օրվանից անցել է մեկ տարի:

Կարգապահական տույժը կարող է բողոքարկվել դատական կարգով:

### 3. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒՇՈՒՄԸ

Անհատական աշխատանքային պայմանագրի վերաբերյալ վեճերը ենթակա են քննության դատարանում: Աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ ԱՊ-ն դադարեցնելու կամ այն լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան փաստաթուղթը ստանալու օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում իրավունք ունի դիմելու դատարան:

Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ ԱՊ-ն լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված



կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները կարող են վերականգնվել: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար կամ աշխատավարձի տարբերությունն այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական կամ այլ պատճառներով, կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատողին վճարելու հատուցում միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Այս դեպքում դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված:

#### Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է աշխատաժամանակի՝ օրենքով սահմանված կառուցվածքը:
2. Ի՞նչ է հանգստի ժամանակը, և որո՞նք են դրա տեսակները:
3. Ի՞նչ է ամենաձյա արչակուրդը, և որո՞նք են դրա տեսակները:
4. Ի՞նչ է ուսումնական արչակուրդը, և դրա ի՞նչ տեսակներ կան:
5. Որո՞նք են աշխատողի և գործատուի պարտականություններն աշխատանքային կարգապահության հարցերում:
6. Աշխատանքային ի՞նչ խրախուսանքներ կարող են կիրառվել:
7. Աշխատանքային կարգապահական ի՞նչ տույժեր կարող է կիրառել գործատուն:
8. Որո՞նք են կարգապահական տույժի կիրառման սկզբունքները և կարգը:
9. Ո՞ւմ կողմից և ինչպե՞ս են լուծվում անհատական աշխատանքային վեճերը:

**Լուծե՛ք խնդիրը՝ օգտվելով դաս 30-ի նյութերից:** Խաչատրյանն աշխատում էր գործարանում որպես արտադրամասի պետ: Գործարանի տնօրենի հրամանով Խաչատրյանն առանց իր համաձայնության փոխադրվեց այլ աշխատանքի՝ մասնավորապես, գործարանի գլխավոր ճարտարագետ: Խաչատրյանը դժգոհեց փոխադրումից, ինչին տնօրենը պատասխանեց, որ փոխադրումով նրա աշխատանքի պայմանները չեն փոխվել, իսկ աշխատավարձը աճել է երկու անգամ, հետևաբար՝ փոխադրման համար աշխատողի համաձայնության կարիքը չկա: Խաչատրյանը, չհամաձայնելով տնօրենի հետ և համարելով, որ փոխվել են և՛ աշխատանքի բնույթը, և՛ ծավալները, դիմեց դատարան:

Աշխատանքային պայմանագրի կնքման ո՞ր սկզբունքին է հակասում տնօրենի հրամանը: Ո՞րն է աշխատողին այլ աշխատանքի փոխադրելու հիմնական պայմանը:

Գրե՛ք այս գործով դատարանի վճիռ:

## ԳԼՈՒԽ 6. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

### ԳՎԱՍ 32. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

#### 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

XX դ. առաջին կեսերից սկսվում է մարդու իրավունքների միջազգայնացումը, այսինքն՝ մարդու իրավունքների ամրագրումը պետությունների կնքած միջազգային պայմանագրերում: Միջազգային պայմանագրերը մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնական աղբյուրներն են, որոնց կնքումով մարդու իրավունքները դարձան համաշխարհային իրավական արժեք, վերածվեցին իրավական չափանիշների, որոնց պետք է ձգտեն բոլոր ժողովուրդները և պետությունները: Այսպիսով, մարդու իրավունքները ներպետական ոլորտից ներթափանցեցին միջպետական հարաբերությունների ոլորտ:


**Մարդու իրավունքների միջազգային իրավունքը նորմերի և սկզբունքների համակցություն է, որոնք որոշում են միջազգային հանրության համար միասնական մարդու իրավունքները և սահմանում են պետությունների պարտավորությունը՝ ամրագրել ու երաշխավորել դրանք:** Այս իրավունքի ձևավորմամբ սկսվեց դրա հետադարձ ներգործությունն ազգային իրավական համակարգերի վրա:

**Մարդու իրավունքների միջազգային իրավունքի սկզբունքներն են՝** մարդու իրավունքներն անօտարելի են և ի ծնե պատկանում են նրան. մարդու իրավունքները հիմնված են հավասարության վրա. մարդու իրավունքները երաշխավորված են. մարդու իրավունքները համընդհանուր են. մարդու իրավունքները բարձրագույն արժեք են. մարդու իրավունքների իրականացումը չպետք է խախտի այլոց իրավունքները. մարդու իրավունքներն անհամատեղելի են ցանկացած խտրականության հետ. մարդու իրավունքների հարգումը, պահպանումը, ապահովումը, պաշտպանությունը պետության պարտականությունն է:

**Մտորումներ:** Մարդու իրավունքները դուք սովորել եք 9-րդ դասարանում: Փորձեք օգտագործելով ձեր իմացությունը՝ մեկնաբանել, քաջատրել մարդու իրավունքների միջազգային իրավունքի վերը բերված սկզբունքները:

#### 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Մարդու իրավունքների միջազգային պաշտպանության կառուցակարգերը և կազմակերպությունները լինում են համաշխարհային և տարածաշրջանային: Դրանք ոչ թե մրցակիցներ են, այլ լրացնում են մեկը մյուսին: Երբեմն տարածաշրջանային կազմակերպությունների գործունեությունն ավելի արդյունավետ է լինում,



9-րդ դասարանի «Հասարակագիտություն» դասագրքից վերիիշեք մարդու իրավունքների միջազգային աղբյուրները և համակարգերը

որովհետև դրանց կազմի մեջ մտնում են պետություններ, որոնք ունեն նմանատիպ մշակութային ավանդույթներ, կրոնական և պատմական արժանատիքներ, նման տնտեսական և քաղաքական պայմաններ: Ներկայումս գործում են մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական, ամերիկյան, աֆրիկյան և այլ համակարգերը: Հայաստանը ներգրավված է մարդու իրավունքների ապահովման, դրանց պաշտպանության չորս համակարգերում, որոնցից առաջինը՝ ՄԱԿ-ի համընդհանուր համակարգն է: Մնացածը տարածաշրջանային համակարգեր են:

### Մարդու իրավունքների Եվրոպայի

**խորհրդի համակարգը** հիմնված է Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագրի վրա: Այս համակարգի կարևորագույն փաստաթղթերից են նաև Կոտանքների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխման եվրոպական համաձայնագիրը (1987 թ.), Եվրոպական սոցիալական խարտիան (1996 թ.), Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային համաձայնագիրը (1995 թ.):

### 3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ


Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) ընդունվել է 1950 թ. նոյեմբերի 4-ին՝ Հռոմում: Այն սկսել է գործել 1959 թվականից: Ներկայումս Եվրոպայի խորհրդի բոլոր անդամները Համաձայնագրի մասնակիցներ են:

Համաձայնագրի հիման վրա մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգի արժանիքն այն է, որ այն մշտապես զարգանում ու կատարելագործվում է: Օրինակ՝ ներկայումս Համաձայնագիրն ունի տասնյակից ավելի լրացուցիչ արձանագրություններ, որոնք արդեն պաշտպանության տակ են վերցրել համարյա բոլոր քաղաքական և քաղաքացիական իրավունքները, ինչպես նաև սեփականության և կրթության իրավունքները:

Համաձայնագրի մյուս առավելությունն այն է, որ դրանում ոչ միայն ամրագրված են իրավունքները և ազատությունները, այլև ստեղծված են դրանց պաշտպանության գործուն կառուցակարգեր՝ ի դեմս վերահսկիչ և դատական մարմինների:

**Համաձայնագրով պաշտպանվող մարդու իրավունքները:** Համաձայնագրով պաշտպանվող իրավունքների և ազատությունների շրջանակը բավականին լայն է: Այդ իրավունքների և ազատությունների պաշտպանության համար անհրաժեշտ է պատկերացնել, թե ինչ բովանդակություն է դնում դրանց մեջ Համաձայնագիրը: Այդ բովանդակության բացահայտումը կատարվում է Համաձայնագրի տեքստի, դրան կից արձանագրությունների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կոնկրետ գործերով որոշումների վերլուծության միջոցով:

<b>Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագրի հիման վրա եվրոպական դատարանի կողմից պաշտպանվող մարդու իրավունքները և ազատությունները</b>	
<b>Մարդու կյանքը և առողջությունը պահպանող նորմեր</b>	Կյանքի իրավունք, մահապատժի վերացում, կտրանքների և անմարդկային ու մարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի արգելք:
<b>Մարդկանց արժանապատվությունը, անկախությունը և իրավահավասարությունը պահպանող նորմեր</b>	Ստրկության արգելք, հարկադիր կամ պարտադիր աշխատանքի արգելք, անչնական և ընդհանրական կյանքի հարգանքի իրավունք, ամուսնության իրավունք, խտրականության արգելք, ամուսինների իրավահավասարություն:
<b>Մարդու ինքնաարտահայտման ազատությունը և զարգացումը պահպանող նորմեր</b>	Մտքի, խղճի և կրոնի ազատություն, կարծիքի ազատ արտահայտության իրավունք, կրթության իրավունք:
<b>Քաղաքական ազատությունները պահպանող նորմեր</b>	Խաղաղ հավաքների և միավորումների ազատություն, ազատ ընտրությունների իրավունք:
<b>Անչնական ազատությունը պահպանող և իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանությունն ապահովող նորմեր</b>	Ազատության և անվտանգության իրավունք, արդար դատական քննության իրավունք, օրենքի հիման վրա պատժվելու իրավունք, խախտված իրավունքների պաշտպանության գործում միջոցների իրավունք, վերաքննության իրավունք, պարտքերի համար ազատազրկման արգելք, կրկնակի անգամ դատվելու կամ պատժվելու արգելք, դատական սխալի դեպքում փոխհատուցման իրավունք:
<b>Ազատ փեղաշարժման և բնակության վայրի ընտրությունն ապահովող նորմեր</b>	Տեղաշարժման ազատություն, քաղաքացիներին վտարելու արգելք, օտարերկրացիների զանգվածային վտարման արգելք:
<b>Փոչքային իրավունքները պահպանող նորմեր</b>	Սեփականության և դրա պաշտպանության իրավունք:
<b>Հարցում շրջապատին:</b> Հինգ անձի ենթարկե՞ք հարցման Համաձայնագրի խնացության հարցի շուրջ: Սրացված արդյունքները քննարկե՞ք դասարանում:	



ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՄ. 6  
ՄԱՀԱՊԱՏԺՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ  
(ETS N 114)  
Ստրասբուրգ, 28 ապրիլի, 1983 թ.

1950 թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին համաշայնագիրը (այսուհետև՝ «Համաշայնագիր») ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, որ ստորագրել են Համաշայնագրի սույն արշանագրությունը, գրնելով, որ Եվրոպայի խորհրդի անդամ որոշ պետություններում րեղի ունեցող զարգացումներն արտահայտում են ընդհանուր միտումը հոգուր մահապարժի վերացման, համաշայնվում են հերեյալում.

Հորված 1. Մահապարժը վերացվում է: Ոչ որ չի կարող դարապարվել կամ ենթարկվել մահապարժի:

Հորված 2. Պետությունը կարող է իր օրենսդրությամբ նախարեսել մահապարժ պարերազմի ժամանակ կամ պարերազմի անխուսափելի սպառնալիքի դեպքում կարարված արարքների համար. նման պարժը կիրառվում է միայն օրենքով սահմանված դեպքերում և դրա դրույթներին համապարասխան: Պետությունը հաղորդում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին այդ օրենսդրության համապարասխան դրույթների մասին:

### Հարցեր

1. Ի՞նչ է մարդու իրավունքների միջազգային իրավունքը:
2. Որո՞նք են մարդու իրավունքների միջազգային իրավունքի սկզբունքները:
3. Ի՞նչ է մարդու իրավունքների պաշտպանության Եվրոպայի խորհրդի համակարգը, և որո՞նք են դրա հիմնական փաստաթղթերը:
4. Ե՞րբ է ընդունվել Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաշայնագիրը, և ի՞նչ արժանիքներ ունի այն:
5. Ի՞նչ իրավունքներ և ազատություններ է պաշտպանում Համաշայնագիրը:

## ԳԱՍ 33. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

### 1. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Դատարան) հիմնադրվել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին համաձայնագրի հիման վրա: Դատարանը մշտական գործող է՝ տեղակայված Ստրասբուրգում: Դատավորների քանակը հավասար է համաձայնագրի մասնակից պետությունների՝ Եվրոպայի խորհրդի անդամների քանակին: Դատավորներն ընտրվում են Եվրոպայի խորհրդի խորհրդարանական համաժողովի կողմից՝ 6 տարի ժամկետով: Նրանք ունեն վերընտրության իրավունք: ԵՄ անդամ պետությունն առաջադրում է Դատարանի երեք թեկնածու, որոնցից քվեների մեծամասնությամբ խորհրդարանական համաժողովն ընտրում է տվյալ երկրի դատավորին:

Դատարանի դատավորների թեկնածուները պետք է ունենան բարոյական բարձր նկարագիր, բավարարեն դատական բարձր պաշտոններում նշանակվող անձանց ներկայացվող պահանջներին, լինեն ճանաչված գիտակ իրավաբաններ:

Դատավորներն իրենց լիազորությունները կատարելու ընթացքում օգտվում են Եվրոպայի խորհրդի կանոնադրությամբ և դրա հիման վրա կնքված համաձայնագրերով նախատեսված արտոնություններից ու անձեռնմխելիությունից: Դատավորի լիազորությունները դադարում են, եթե լրանում է նրա 70 տարին:

Եվրոպական համաձայնագրին համապատասխան, բացի **անհատական դիմումներից**, Դատարանն իրավասու է քննության առնել և լուծել նաև **միջպետական վեճեր**: Համաձայնագրի մասնակից ցանկացած պետություն կարող է դիմել դատարան Համաձայնագրի ու դրան կից արձանագրությունների իրավական դրույթների մեկ այլ մասնակից պետության կողմից ենթադրվող խախտման հարցով:



Դատարանի մասին տե՛ս [www.echr.coe.int](http://www.echr.coe.int) ինտերնետային կայքում

### 2. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵՆՈՒ ԿԱՐԳԸ

**Եվրոպական դատարան դիմելու պայմանները:** Դատարանը քննարկում է անհատների, ոչ կառավարական կազմակերպությունների կամ այլ անձանց դիմումները: Դատարան կարող են դիմել նաև անչափահասները, սահմանափակ գործունակ կամ անգործունակ ճանաչված անձինք, բանտարկյալները:

Տուժողը կարող է դիմում ներկայացնել Դատարան, եթե համարում է, որ տուժել է Համաձայնագրում ամրագրված իրավունքների ոտնահարումից: Դիմումի մեջ պետք է հստակ նշվի Համաձայնագրի կամ լրացուցիչ արձանագրությունների այն հոդվածը, որն ըստ դիմողի խախտվել է: Միաժամանակ դիմողը պետք է

Գիմումի ուղարկման հասցեն  
The Registrar  
European Court of Human Rights  
Council of Europe  
F-67075 Strasbourg Cedex

Գիմելու ձևի այլ մանրամասներին կարող եք ծանոթանալ Հայաստանում Եվրոպայի խորհրդի տեղեկատվական գրասենյակի [www.echr.coe.am](http://www.echr.coe.am) ինտերնետային էջում:

նշի, թե դիմելով Դատարանին՝ նա ինչ է ակնկալում: Եթե դիմումում հստակ չեն վկայակոչված Համաձայնագրի խախտված հոդվածները, ապա դիմումը մերժվում է:

Դատարանը քննարկման է ընդունում այն դիմումները, որոնք ուղղված են Համաձայնագիրը վավերացրած պետության դեմ, ընդ որում՝ խախտումը պետք է կատարված լինի մինչև վավերացումը:

Մինչև դիմումը ներկայացնելն անհրաժեշտ է նախապես սպառել ներքին պաշտպանության միջոցները տվյալ պետությունում: Գիմելիս պետք է պահպանել վաղեմության ժամկետը՝ պետության կայացրած վերջին որոշման օրից պետք է անցած լինի 6 ամսից ոչ ավելի:

**Եվրոպական դատարան դիմելու կարգը և դիմումի ընդունելիության պայմանները:** Դիմումը չի կարող լինել **անանուն**, կրկնել նախկինում Դատարանի կողմից քննված գանգատը կամ լինել միջազգային քննության այլ ընթացակարգի առարկա: Դիմումը պետք է լինի **հիմնավորված**, այսինքն՝ դրան կցվում են ապացույցներ Համաձայնագրի հոդվածի խախտման վերաբերյալ: Դատարանն ընդունում է քննարկման այն դիմումները, որոնք ուղղված են պետական մարմինների գործողությունների ու որոշումների դեմ: Մասնավոր և ոչ կառավարական կազմակերպությունների դեմ ուղղված դիմումները դատարանը չի ընդունում:

**Դատարան ներկայացված դիմումն ունի պաշտոնական ձևաթուղթ:** Դիմումում պետք է տրվի գանգատ ներկայացնելու հիմք ծառայած իրավունքների խախտման մասին փաստերի ստույգ, պարզ և համառոտ նկարագրությունը: Փաստերը պետք է նկարագրվեն ժամանակագրական կարգով՝ նշելով գործի քննության ընթացքն ազգային պետական մարմիններում և դատարաններում: Դիմումին պետք է կցել դիմումին առնչվող ներպետական մարմինների բոլոր որոշումները:

### 3. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

**Առաջին հերթին Դատարանը լուծում է դիմումների ընդունելիության հարցը:** Օրինակ՝ վերաբերում է այն Համաձայնագրով ամրագրված իրավունքին: Այսպես՝ 1998 թ. նոյեմբերից մինչև 2001 թ. օգոստոսը Դատարան են ներկայացվել 28 հազ. դիմում, սակայն դրանցից ընդունվել են միայն 2 300-ը, մնացած 15 200 դիմումները մերժվել են:

Երբ գործով հավաքված է քննարկման ենթակա բավարար տեղեկություն, նշանակվում է զեկուցող դատավոր: Գործերի մեծ մասը քննարկում է երեք դատավորներից կազմված կոմիտեն, որն ընդունում է գործի ընդունելիության կամ անընդունելիության վերաբերյալ որոշում: Այնուհետև Դատարանը երկու կողմերին առա-

ջարկում է համաձայնության գալ և կարգավորել խնդիրը: Բարեկամական լուծում չգտնելու դեպքում Դատարանը քննում և լուծում է գործն ըստ էության: Դատարանի դատական նիստը դռնբաց է: Դիմողը կարող է մասնակցել նիստին, ունենալ փաստաթուղթ:

Գործի քննության ցանկացած պահին Դատարանը կարող է ընդունել որոշում գործը ցուցակից հանելու վերաբերյալ, եթե՝

**ա)** դիմողը խնդրում է այդ մասին.

**բ)** դիմողը շահագրգռված չէ քննության շարունակության մեջ.

**գ)** կողմերը հասել են խաղաղ կարգավորման:

Եթե դա տեղի չի ունենում, Դատարանն ընդունում է ըստ էության որոշում, որով ճանաչում է, արդյոք տեղի է ունեցել Համաձայնագրի դրույթի խախտում, թե ոչ:

Դատարանը ոչ թե վերացնում է ազգային՝ ներպետական մարմինների ակտերը, այլ որոշում՝ հատկացնել **արդար դրամական փոխհատուցում**: Սակայն դրամական փոխհատուցումը պարտադիր չէ: Դատարանը կարող է ուղղակի ճանաչել խախտման փաստը: Դատարանի որոշումները կայացվում են Դատարանի պաշտոնական լեզուներով՝ ֆրանսերեն և անգլերեն:

Դիմելու և գործը քննելու համար տուրքեր չեն վճարվում: Դատարանի որոշումներն իրավունքը խախտած պետության համար պարտադիր են: ԵԽ-ի նախարարների կոմիտեն՝ կազմված մասնակից պետությունների արտաքին գործերի նախարարներից, իրականացնում է հսկողություն Դատարանի վերջնական որոշումների կատարման վրա: Համաձայնագրի մասնակից պետությունները Դատարանի որոշումը կատարելիս պարտավոր են՝

**ա)** վճարել Դատարանի որոշմամբ նախատեսված արդարացի փոխհատուցումը,

**բ)** ի շահ դիմումատուի իրականացնել անհատական միջոցառումներ, օրինակ՝ վերականգնել մինչև իրավունքի խախտումը եղած վիճակը,

**գ)** իրականացնել ընդհանուր միջոցառումներ, օրինակ՝ փոխել կամ վերացնել Համաձայնագրին հակասող օրենքները, այլ ակտերը հետագայում նման խախտումները կանխելու համար:

#### 4. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Դատական նախադեպի էությունն այն է, որ դատարանի կոնկրետ գործով նախկինում կայացրած որոշումն ունի իրավական նորմի ուժ հետագայում նման գործեր լուծելիս (*վերհիշե՛ք 5-րդ դասը*): Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կոնկրետ գործով նախկինում կայացված որոշումների ամբողջությունն անվանում են նշված դատարանի նախադեպային իրավունք: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների իրավական համակարգերի (այդ թվում՝ նաև մեր) վրա թողնում է երկակի ազդեցություն.

- **նախադեպային իրավունքում արտահայտված իրավական դիրքորոշումներն ազդում են Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ներպետական նորմա-**

տիվ իրավական ակտերի ստեղծման և բովանդակության վրա: Բացի Համաձայնագիրը խախտած պետությունից, ում վերաբերում է Դատարանի որոշումը, այլ մասնակից պետություններում ևս նորմատիվ իրավական ակտերն ընդունող հանրային իշխանության մարմինները Դատարանի նախադեպերում արտահայտված իրավական դիրքորոշումները դարձնում են իրավունքի նորմեր:

- **Նախադեպային իրավունքի դրույթները կարող են անմիջապես կիրառվել ներպետական հասարակական հարաբերությունների նկատմամբ:** Օրինակ, եթե ներպետական դատարանը քննում է այնպիսի գործ, որով շոշափվող իրավունքն ամրագրված է Համաձայնագրում և Դատարանն ունի համանման պրակտիկա նույնաբնույթ գործերով: Դատարանն անխուսափելիորեն օգտագործում է նախադեպային իրավունքի իրավական մեկնաբանությունները և դիրքորոշումները: Հակառակ դեպքում ներպետական դատարանը հիմքեր է ստեղծում եվրոպական դատարան դիմելու համար:

Նախադեպային իրավունքի շնորհիվ Դատարանը ձեռք է բերում հատուկ դեր ԵԽ-ի անդամ պետությունների ներպետական իրավունքի ձևավորման ու զարգացման գործում: Օրինակ՝ Համաձայնագրի 6-րդ հոդվածում ամրագրված արդար դատական քննության իրավունքի հետ կապված դատարանի նախադեպերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Դատարանը «դատավարության կողմերի հավասարությունը» դիտարկում է 6-րդ հոդվածի բովանդակային բաղադրատարր, չնայած այն բառացիորեն չի արտացոլված հոդվածում: Դատարանն իր նախադեպերում գտել է, որ դատավարության կողմերն ունեն հավասար միջոցների իրավունք, և կողմերից ոչ մեկը չպետք է ունենա նշանակալի առավելություններ ընդդիմախոսի համեմատ: Բացի այդ, կողմերը պետք է ներկայացվեն գործի քննության բոլոր փուլերում: Կողմերից յուրաքանչյուրը պետք է ունենա հնարավորություն պատասխանելու հակառակ կողմի փաստարկներին: Այս նախադեպերում ձևակերպված իրավական դիրքորոշումների նշանակությունն այն է, որ եթե հանկարծ Համաձայնագրի որևէ անդամ պետության օրենքը հակասի դրանց, ապա դա կարող է դիտարկվել Համաձայնագրի խախտում և հիմք դառնալ Դատարան դիմելու համար:

#### Հարցեր

1. Ի՞նչ դատարան է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:
2. Ի՞նչպե՞ս է կազմավորվում Եվրոպական դատարանը, և ովքե՞ր կարող են դառնալ դրա դատավոր:
3. Ի՞նչ գործեր է քննում Եվրոպական դատարանը:
4. Որո՞նք են Եվրոպական դատարանի դիմելու պայմանները:
5. Ո՞րն է Եվրոպական դատարանի դիմելու կարգը:
6. Ի՞նչ է բարեկամական յուժման ընթացակարգը Եվրոպական դատարանում:
7. Ո՞րն է Եվրոպական դատարանի որոշման կատարման կարգը:
8. Ի՞նչ է Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, և ի՞նչ ազդեցություն է բողոքում այն Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների վրա:

#### ԳԱՍ 34. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

# ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ԳԼՈՒԽ 7. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

### ԴԱՍ 35. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

#### 1. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

«Քաղաքականություն» եզրույթի ծագումը կապվում է Հին Հունաստանի պոլիս-պետությունների հետ: Հունարեն լեզվում «քաղաքականություն» եզրույթին համարժեք է *politike* բառը: «Քաղաքականություն» հասկացությունն ամենապարզ մեկնաբանմամբ նշանակում է պետության կառավարման արվեստ, այսինքն՝ պետության ներքին և արտաքին նպատակների իրականացման եղանակ:

Հասարակության մեջ առաջանում են բազում խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն: Ակնհայտ է, որ դրանց կառավարումն ու կարգավորումն իրականացնում է պետությունը: Սակայն մինչև պետության կողմից վերջնական՝ իրավական լուծումը՝ հիմնախնդիրները գիտակցվում են մարդկանց և նրանց կազմակերպությունների կողմից: Այնուհետև դրանք դառնում են հասարակական քննարկման առարկա, ընդ որում՝ այդ քննարկումների ընթացքում մարդկանց և նրանց խմբերի կարծիքները կարող են նաև բախվել: Ակնհայտ է, որ բարձրացված հիմնախնդրի լուծողը պետությունն է՝ իր մարմինների միջոցով: Պետությունն այդ հիմնախնդրի լուծումն իրականացնում է՝ դրան օրինական ձև տալով, քաղաքական որոշում ընդունելով: Իսկ որոշումը նա ընդունում է՝ մարդկանց և հասարակական խմբերի կարծիքները հաշվի առնելով կամ նրանց մասնակցությամբ: Այս ամբողջ գործընթացը՝ սկսած հիմնախնդրի գիտակցումից մինչև դրա իրավական լուծումը պետության միջոցով, համարվում է քաղաքականություն: Հետևաբար, **քաղաքականությունը գործունեություն է՝ ուղղված հասարակական կյանքի կառավարմանը և կարգավորմանը:** Ըստ քաղաքագետների՝ քաղաքականության հիմնական հարցը պետական իշխանության նվաճումն է և դրա իրականացումը: **Քաղաքականությունը հետազոտող գիտությունը կոչվում է քաղաքագիտություն,** որի հետաքրքրությունների որոշ ոլորտների դուք կառնչվեք հետագա դասերին:

#### 2. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ՍՈՒՔՅԵԿՏՆԵՐԸ

Հասարակության կյանքը արտահայտվում է հասարակության (մարդկանց) կենսագործունեության համապատասխան ոլորտներով, որոնցիվ մեկն էլ քաղա-

քականությունն է: Քաղաքականությունը, այսինքն՝ պետության կառավարումը և հասարակական հիմնախնդիրների լուծումն իրականացվում է քաղաքական համակարգի շրջանակում:

**Քաղաքական համակարգը գործող կառուցակարգ է, որի միջոցով լուծվում են քաղաքական կառավարման հիմնախնդիրները, ընդունվում են քաղաքական որոշումներ:** Այսպես՝ սահմանադրության ընդունումը քաղաքական գործընթաց է, որը տեղի է ունենում քաղաքական համակարգի շրջանակում:

**Քաղաքական համակարգն ունի որոշակի կազմակերպական կառուցվածք:** Այն քաղաքական կազմակերպությունների ամբողջություն է, որոնք իրավունքի (օրենքի) շրջանակներում և պետության միջոցով իրականացնում են քաղաքական իշխանությունը կամ պայքարում են դրա իրականացման համար: Հասարակության քաղաքական համակարգի մասնակիցներին անվանում են **քաղաքական համակարգի սուբյեկտներ:** Դրանք են պետությունը և քաղաքական կազմակերպությունները (կուսակցությունները, հասարակական-քաղաքական կազմակերպությունները և շարժումները):

**Անհատը քաղաքական համակարգում հանդես է գալիս որպես քաղաքական իրավունքներով օժտված քաղաքացի:**



Օրինակ՝ քաղաքական գործիչ, ընտրող, որևէ կուսակցության անդամ, պատգամավորության թեկնածու, պետական պաշտոնյա և այլն:

Քաղաքական համակարգի սուբյեկտների մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում պետությունը, որովհետև այն համընդհանուր հանրային իշխանություն է՝ օժտված գերակայությամբ և ինքնիշխանությամբ: Ոչ մի այլ քաղաքական կազմակերպու-

թյուն նման հատկություններ չունի (*տես հաջորդ դասը*):

### 3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅԱԿԱՐԳԸ

Քաղաքական համակարգի գործողության համար շատ մեծ նշանակություն ունեն քաղաքական պահանջմունքները և դրանցով պայմանավորված շահերը: Հասարակական գիտակցության կողմից շահերի իմաստավորումն ունի մեծ նշանակություն: Դիցուք, ինչ-որ «Ուտոպիա» հասարակության մեջ նրա անդամներին հուզող հարցերից մեկն է նորահռչակ պետության կառավարման ձևը, այն է՝ նախագահակա՞ն, թե՞ խորհրդարանական: Ո՞ր ձևին տալ նախապատվություն: Այս հարցում մարդիկ սկսում են բաժանվել տարբեր տեսակետների կողմնակիցների և հա-

վանություն տալ այս կամ այն ձևին: Նախապատվությունը կատարվում է տարբեր գործոնների ազդեցությամբ, սակայն դրանում վճռական նշանակություն ունեն ընտրություն կատարողի շահերը: Ակնհայտ է, որ քաղաքական համակարգի անհրաժեշտ բաղադրատարրն է դառնում **հասարակության անդամների քաղաքական գիտակցությունը**, որը տեղեկացված է կառավարման ձևերի հարցում և կարող է իմաստավորել այդ քաղաքական հիմնահարցը:

Հիմնահարցն անհատներից անցնում է քաղաքական ուժերին: Արտահայտելով իրենց տեսակետները՝ կուսակցությունները կողմնորոշվում են՝ իրենց գաղափարական, քաղաքական, մարտավարական շահերից ելնելով: Օրինակ՝ կոմունիստական կուսակցությունն ընդհանրապես դեմ է և՛ նախագահական, և՛ խորհրդարանական կառավարման ձևերին, որովհետև, ըստ նրա, լավագույն կառավարման ձևը սոցիալիստական հանրապետությունն է: Այս դիրքորոշումն ունի գաղափարական հիմնավորում:

«Ուտոպիա» հասարակության ազգայնական կուսակցությունը գտնում է, որ իրենց ավանդաբար բնորոշ է խորհրդարանականությունը, հետևաբար՝ նախընտրում է խորհրդարանական կառավարման ձևը: Այդ դիրքորոշումը կարող է պայմանավորված լինել նաև ազգայնական կուսակցության մարտավարական շահերով: Օրինակ՝ ազգայնականներն այդ պահին չունեն նախագահի հարմար թեկնածու, ուստիև դեմ են նախագահական կառավարման ձևին:


Այսպիսով՝ պետության կառավարման ձևի հիմնախնդիրը հասունանալով վերածվեց ներքին քաղաքական հիմնահարցի: Հիմնահարցի սրումը պայմանավորված էր հասարակության անդամների և քաղաքական կազմակերպությունների շահերով: Ելնելով իրենց շահերից՝ կուսակցությունները սկսում են քաղաքական քարոզչությունը կառավարման ձևի հարցում: Զարոզչությունն ուղղված է ապագա հանրաքվեում իրենց դիրքորոշման հաղթանակի ապահովմանը:

Այդ ամենը կատարվում է քաղաքական համակարգում, որի միջուկը պետությունն է: Կուսակցությունների խնդիրն է հանրաքվեով ընդունվելիք օրենքով ամրագրել իրենց համար նախընտրելի կառավարման ձևը: Սակայն այդ ամրագրումը կատարվում է պետության միջոցով. թե ինչպիսին պիտի լինի կառավարման ձևը, սահմանվելու է պետության կողմից նշանակվող հանրաքվեով, իսկ որոշելու է ժողովուրդը՝ ձայների մեծամասնությամբ: Հանրաքվեի արդյունքում ընդունված քաղաքական որոշումն ունի օրենքի ուժ: Ստացվեց, որ ի վերջո քաղաքական համակարգի միջուկը պետությունն է, որի շուրջ պտտվում են կուսակցությունները և փորձում են անցնել պետական իշխանության կամ մասնակցել դրա իրականացմանը:

Այս ամբողջ գործընթացը կարգավորվում է իրավական և քաղաքական նորմերով: Այդ գործընթացում կարևոր նշանակություն ունեն նաև բնակչության ու քաղաքական ուժերի քաղաքական գիտակցությունը և մշակույթը: Դրա հասունության աստիճանը, ակտիվությունը մեծ նշանակություն ունեն քաղաքական համակարգի արդյունավետ գործողության համար:

#### 4. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԱՂԱԴՐԱՏԱՐԻՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Քաղաքական համակարգի գործողության կառուցակարգի նկարագրությունից կարող ենք վեր հանել այդ համակարգի բաղադրատարրերը, ինչը կարելի է արտահայտել հետևյալ գծապատկերով.



**Քաղաքական համակարգի գործողությունը կարգավորվում է իրավական, քաղաքական, ինչպես նաև բարոյական նորմերով:** Այդ նորմերը սահմանված կամ ավանդաբար ձևավորված վարքագծի կանոններ են, որոնցով կարգավորվում կամ որոնց համաձայն ընթանում են քաղաքական հարաբերությունները, և որոնք գոյություն ունեն օրենքների, կանոնադրությունների, կուսակցությունների ծրագրերի, քաղաքական գործընթացները կարգավորող քաղաքական ավանդույթների տեսքով:

Քաղաքական համակարգի սուբյեկտները չեն գործում ամենաթողության պայմաններում: Արդի դարաշրջանում քաղաքականությունն ընթանում է համաձայն սահմանադրական և օրենսդրական նորմերի, որոնք պարտադիր են քաղաքական կյանքին մասնակցող բոլոր սուբյեկտների համար՝ լինի դա պետություն, կուսակցություն, թե քաղաքականությամբ զբաղվող քաղաքացի:

**Քաղաքական կյանքը կարգավորող նորմերը խարսխված են քաղաքական արժեքների վրա:** Դրանք ունեն գաղափարական բնույթ և որպես սկզբունքներ ստեղծվել են հասարակության զարգացման ընթացքում: Այդ արժեքների վրա խարսխվում են տվյալ հասարակության քաղաքական կյանքը, այդ թվում՝ քաղաքական նորմերը: Արդի հասարակության քաղաքական կյանքի հիմքում ընկած են հետևյալ քաղաքական արժեքները.

- ազգային անվտանգություն և ազգային անկախություն,
- բարեկեցություն և տնտեսական զարգացում,
- ազատություն և սահմանադրական կարգ,
- միջազգային համագործակցություն, անվտանգություն և խաղաղություն...

**Մտորումներ:** Ուրիշ է՞լ ինչ արժեքներ կարող եք նշել, որոնք վճռական դեր են խաղում քաղաքական համակարգում:

Ըստ էության, այս արժեքները գլխավոր են քաղաքական բոլոր ուժերի համար, և բոլորն էլ ձգտում են դրանց կենսագործմանը: Տարբերությունը դրանց հասնելու ուղիների ու մանրամասնությունների մեջ է, որոնք տեղայնացվում են ամեն մի կուսակցության քաղաքական ծրագրում:

Քաղաքականությունը, քաղաքական համակարգն ամբողջությամբ կրում են տվյալ հասարակության ընդհանուր մշակույթի ազդեցությունը: Ի վերջո, քաղաքական համակարգն արժեքների ընդհանրություն է, քաղաքական խորհրդանիշների, համոզմունքների համակցություն, որոնք ընդունելի են տվյալ քաղաքական հանրության՝ ժողովրդի կողմից: Քաղաքականության ոլորտում միասնությունը հնարավոր է միայն հասարակության անդամների որոշակի հոգևոր ընդհանրության դեպքում: Դրա շնորհիվ մարդիկ գոնե հասկանում են իրար: Այդ ընդհանրությունն ունի ազգային-մշակութային արմատներ: Ընդհանրության ձևավորման գործում մեծ դեր է կատարում հասարակության մեջ գործող դաստիարակության և կրթության համակարգը:

**Ժողովրդավարական քաղաքական համակարգին բնորոշ են գաղափարական և քաղաքական բազմազանությունը:** Քաղաքական համակարգի այդ սկզբունքներն ամրագրված և երաշխավորված են ՀՀ Սահմանադրությամբ: Բազմազանությունը հնարավորություն է տալիս արտահայտելու մարդ էակի (Արիստոտելի խոսքերով՝ քաղաքական էակի) բազմազան քաղաքական պահանջմունքներն ու շահերը:

### Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ են քաղաքականությունը և քաղաքագիտությունը:
2. Ի՞նչ է քաղաքական համակարգը:
3. Ո՞րն է քաղաքական համակարգի կազմակերպական կառուցվածքը, և որո՞նք են դրա սուբյեկտները:
4. Ո՞րն է քաղաքական համակարգի գլխավոր և կենտրոնական սուբյեկտը և ինչո՞ւ:
5. Ինչպե՞ս է գործում քաղաքական համակարգը: Մեկնաբանե՞ք դա օրինակով:
6. Որո՞նք են քաղաքական համակարգի քաղադրաբարրերը:
7. Ինչպե՞ս է կարգավորվում քաղաքական համակարգի գործունեությունը:
8. Ի՞նչ են քաղաքական արժեքները, և ի՞նչ այդպիսի արժեքներ գիտեք:

**Պարտադիր ինքնուրույն աշխատանք:** Միտելի՞ աշակերտներ, սովորելով այս դասը, դուք իմացաք, որ քաղաքական գործընթացներում էական դեր են խաղում քաղաքական գաղափարախոսությունները, որոնցով առաջնորդվում են քաղաքական կազմակերպությունները և գործիչները: Հաջորդ դասին պետք է կատարեք քաղաքական գաղափարախոսության ընտրություն: Որպեսզի դուք կարողանաք կատարել գիտակցված ընտրություն, պարտադիր ընթերցեք 49-50 դասերը: Միաժամանակ հաջորդ դասին հրավիրեք քաղաքականությամբ զբաղվող մասնագետի, որպեսզի նա օգնի ձեր նախասիրություններին համապատասխան ընտրություն կատարելու գործում:

### ԴԱՍ 36. ՄԱՆԱԳԵՏԻ ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՎ «ՈՒՆԵՑԻՐ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ» ԽԱՂ

Սիրելի՛ աշակերտներ, նախորդ դասի վերջի պարտադիր հանձնարարությունը կատարելով, դուք իմացաք, որ կան քաղաքական գաղափարախոսական հոսանքներ:

Դասի սկզբում լսեք քաղաքագիտության ոլորտի մասնագետին, նրան ուղղեք ճշգրիտ հարցեր: Այնուհետև «Ունեցի՛ր դիրքորոշում» խաղի օգնությամբ կատարեք ձեր ընտրությունը: Ձեզ ուղղված հարցադրումը հետևյալն է. «Ո՞ր քաղաքական գաղափարական հոսանքին եք դուք ավելի շատ համակրում՝ ազատականություն, պահպանողականություն, սոցիալ-ժողովրդավարություն, ազգայնականություն»: Դասարանի ամեն մի անկյունը պետք է հատկացվի որևէ գաղափարախոսական հոսանքին: Դուք նախապես լինելով կողմնորոշված, տեղափոխվում եք համապատասխան անկյունը:



Ձբաղեցնելով դիրքը, դուք կարող եք կարծիքներ փոխանակել, առաջարկել վիճելի հիմնախնդիրներ, ճշգրտել սեփական դիրքորոշումը: Այնուհետև ձեզանից ամեն մեկը համառոտելովքով բացատրում է իր ընտրության դրդապատճառները, բերում է իր ընտրած գաղափարախոսության պաշտպանության փաստարկներ: Համոզիչ փաստարկների աղդեցության ուժով դուք կարող եք ազատ փոխել ձեր անկյունը, այսինքն՝ գաղափարախոսությունը:

Խորհուրդ ենք տալիս դասի վերջում կատարել ամեն մի անկյունում եղած աշակերտների անդամագրում:

Քանի որ հետագա դասերը պետականագիտական և քաղաքագիտական բովանդակություն ունեն, ապա ցանկալի կլինի խմբային քննարկումները կատարել ըստ այդ «անկյունների»:

Ուսումնական տարվա վերջում ևս մեկ անգամ կատարեք «Ունեցի՛ր դիրքորոշում» մեթոդի կիրառումը և պարզեք, թե խմբերից ամեն մեկում ինչ քանակությամբ փոփոխություններ են տեղի ունեցել:

## ԳԼՍ 37. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### 1. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հասկանալու համար, թե ինչ է պետությունը, անհրաժեշտ է իմանալ, թե այն ինչ հատկանիշներով է օժտված, որոնք են նրա արդի բնութագրերը: Այդ հիմնահարցերը կարելի է արտահայտել հետևյալ գծապատկերով:

«Պետություն» հասկացությունը (ի՞նչ է պետությունը)	Պետությունը գերակայությամբ օժտված քաղաքական հատուկ կազմակերպություն է:
Պետության հատկանիշները (նրա անկրկնելի, յուրօրինակ հատկությունները)	<ul style="list-style-type: none"> <li>◆ Բնակչության և իշխանության բաժանումը վարչատարածքային սկզբունքով:</li> <li>◆ Պետությունը միայն կառավարմամբ զբաղվող մարդկանց հատուկ խումբ է՝ հանրային իշխանություն:</li> <li>◆ Պետությունը հասարակական կյանքը կարգավորում է իրավական հիմքերով:</li> <li>◆ Պետությունն օժտված է ինքնիշխանությամբ (տե՛ս 38-րդ դասը):</li> </ul>
Արդի պետության սահմանադրական բնութագրերը	◆ Ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն:

### 2. «ՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Պետությունը հասարակության հատուկ քաղաքական կազմակերպություն է, որն ունի տարածք, իր իշխանությունը տարածում է տվյալ տարածքի և այնտեղ ապրող բնակչության վրա, դրա համար ունի կառավարման հատուկ կառուցակարգ, հրապարակում է իրավունքի նորմեր և օժտված է ինքնիշխանությամբ:

#### **Բնակչության և իշխանության բաժանումը վարչատարածքային սկզբունքով:**

Տարածքը և դրա վրա ապրող բնակչությունը պետության առաջացման բնական նախադրյալներն են, պետության գոյության նյութական և սոցիալական հիմքը: Չի կարող լինել պետություն առանց երկրագնդի վրա տեղ գրավող ինչ-որ տարածքի: Տարածքն ինքնաբերաբար չի առաջացնում պետություն: Այն կազմում է տարածությունը, որի շրջանակում ապրող բնակչության վրա պետությունն ունի իշխանություն:

Պետության առաջացմամբ մինչպետական հասարակությանը բնորոշ և մարդկանց միավորող արյունաազգակցական սկզբունքին գալիս է փոխարինելու վարչատարածքային սկզբունքը: Պետության հետ միասին առաջանում են «պետության տարածք», «պետության սահման» երևույթները: Ամեն մի պետության գոյության հիմնական պայմաններից մեկն իր սահմանների շրջանակներում տարածքային գերակայությունն է: **Պետական տարածքն** այն տարածությունն է (ներառյալ ընդերքը, տարածքային ջրերը, օդային տարածությունը), որտեղ բնակվում է տվյալ պետության բնակչությունը՝ ճանաչելով այդ պետության գերագույն իշխանությունը:

նր: **Տարածքը, որպես պետության հատկանիշ, անբաժանելի ու անձեռնմխելի է, բացառիկ ու անօտարելի:**

Բնակչության կազմակերպման տեսանկյունից առաջ են գալիս այնպիսի երևույթներ, ինչպիսիք են հպատակությունը կամ քաղաքացիությունը՝ որպես անհատի և պետության կայուն իրավական կապ: Այդ կապն արտահայտվում է փոխադարձ իրավունքներում և պարտականություններում: Քաղաքացիներից բացի, բնակչության կառուցվածքում առանձնանում են նաև այլ պետությունների քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, երկքաղաքացիները:

**Պետությունը միայն կառավարմամբ զբաղվող մարդկանց հատուկ խումբ է՝ հանրային իշխանություն:** Որպես հանրային իշխանության կառույց՝ պետությունը տարբերվում է նախնադարյան համայնական կազմակերպությունից: Այստեղ իշխանությունն ուներ **անմիջական** հասարակական բնույթ: Դրան հակառակ՝ պետական հասարակությունում իշխանական գործառույթներն իրականացնում է հասարակությունից առանձնացած, կառավարչական աշխատանք կատարող մարդկանց խումբը: Այսպիսով՝ պետության առաջացմամբ տեղի է ունենում հանրային պետական իշխանության «**առանձնացում**» հասարակությունից: Կառավարչական գործառույթները ևս առանձնանում և կենտրոնանում են պետական պաշտոնյաների ձեռքում: Որպես հանրային իշխանության կառույց՝ այն իրենից ներկայացնում է օրենսդիր, գործադիր և դատական մարմինների համակարգ:

Պետությունը պետական մարմինների կառույցի միջոցով նպատակային ներգործություն է իրականացնում հասարակության, նրա առանձին ոլորտների (տնտեսական, հոգևոր և այլն) վրա հասարակության առջև կանգնած խնդիրների լուծման համար: Իր մարմինների ու հիմնարկությունների օգնությամբ պետությունն իրականացնում է հասարակության կառավարումը, պաշտպանում իր սահմանների անձեռնմխելիությունը, ապահովում քաղաքացիների օրինական շահերի պաշտպանությունը: Այդ ընթացքում պետությունն օգտագործում է նաև հարկադրանքը:

**Պետությունը հասարակական կյանքը կարգավորում է իրավական հիմքերով:** Մարդկանց անհրաժեշտ են վարքագծի օրինակելի կանոններ, որոնք օգնում են նրանց միասին խաղաղ գոյակցել: Ցանկացած իշխանության խնդիրներից մեկն էլ այդպիսի կանոնների (օրենքների) սահմանումն է և դրանց կատարման ապահովումը: Հասարակական կյանքի կարգավորման այդպիսի ձևն անվանում են իրավական: Իրավական ամրագրման շնորհիվ հասարակության գոյության համար անհրաժեշտ համակեցության կանոնները վերածվում են պարտադիր պահանջների:

### 3. ԱՐԳԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հասարակությունը, որպես մարդկանց պատմականորեն կազմավորված համատեղ գործունեության ձև, առաջացել է շատ ավելի վաղ, քան պետությունը: Հասարակության զարգացման ընթացքում նրա ներքին կառուցվածքը և հարաբերությունները մարդկանց միջև սկսեցին ձեռք բերել բավականին բարդ բնույթ: Այս պայման-

ներում առաջացավ նոր հասարակական իշխանության անհրաժեշտությունը: Այդ նոր իշխանությունը պետական իշխանությունն էր, որն ուներ կազմակերպական հզոր ուժ հանձինս իր կառավարման կառույցների:

Պետությունը և հասարակությունն իրենց փոխհարաբերություններում անցնում են բավականին բարդ և դժվարին զարգացման ճանապարհ: Այդ ճանապարհին նրանք աստիճանաբար ձեռք են բերում քաղաքակիրթ որակներ, ժողովրդավարական բնույթ: Այդ փոխհարաբերություններում, վերջին հաշվով, գլխավոր դերակատարը հասարակությունն է, որը հակակշռում է պետությանը, պայմանավորում է նրա բնույթը: Հասարակության և պետության դարավոր շարժումը դեպի ժողովրդավարություն, քաղաքակրթություն հանգեցնում է նրան, որ ձևավորվում է քաղաքակիրթ, ժողովրդավարական հասարակություն: Այդպիսի ժամանակակից հասարակությունը անվանում են քաղաքացիական հասարակություն (*9-րդ դասարանի «Հասարակագիտություն» դասագրքից վերհիշե՛ք, թե ինչ է քաղաքացիական հասարակությունը*):

Քաղաքացիական հասարակությանը համապատասխանում է **ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետությունը** (*տե՛ս 44-րդ դասը*):

#### Հարցեր և առաջադրանքներ

1. *Որո՞նք են պետության հատկանիշները:*
2. *Ի՞նչ է պետությունը:*
3. *Ի՞նչ նշանակություն ունեն փարածքը և բնակչությունը պետության համար:*
4. *Ինչի՞ միջոցով է պետությունն իրականացնում հասարակության կառավարումը:*
5. *Ինչպե՞ս է պետությունը կարգավորում հասարակական կյանքը:*
6. *Ինչպիսի՞ բնութագրեր ունի արդի պետությունը:*

**Ինքնուրույն աշխատանք:** Պատրաստե՛ք գեկուցում «Պետության տարածքի կառուցվածքը և հատկանիշները» թեմայով:

## ԳՎԱ 38. ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### 1. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Իշխանությունն իշխողի ընդունակությունն է ազդել մարդկանց վարքագծի և գործունեության վրա ու նրանց ենթարկել իր կամքին: Իշխանությունը ենթադրում է սուբյեկտ (կառավարող, իշխող) և օբյեկտ (կառավարվող, ենթարկվող): Իշխանությունը հասարակության անհրաժեշտ տարրն է: Եթե սիմֆոնիկ նվագախմբին անհրաժեշտ է դիրիժոր, ապա հասարակությանը՝ իշխանություն, որովհետև այն դիրիժորի նման կառավարում, կանոնակարգում է հասարակությունը:

Իշխանությունը, որպես կազմակերպված ուժ, բնորոշ է ինչպես ամբողջ հասարակությանը, այնպես էլ նրա տարբեր բաղկացուցիչ մասերին: Ուստի գոյություն ունեն իշխանության տարբեր տեսակներ: Օրինակ՝ կուսակցական, կրոնաեկեղեցա-

կան, խմբային, ընտանեկան (ընտանիքում գերիշխում է ծնողներից մեկը), համայնքի (գյուղապետ, քաղաքապետ), հասարակական կազմակերպության և այլն:

«Պետություն» և «պետական իշխանություն» հասկացություններն ունեն տարբեր իմաստներ: Պետությունը քաղաքական կազմակերպություն է, իսկ պետական իշխանությունն այդ կազմակերպությանը պատկանող ընդունակություն: **Պետական իշխանությունը պետության ընդունակությունն է ազդել մարդկանց վարքագծի վրա և նրանց ենթարկել իր կամքին:** Այս իշխանության կրողը՝ սուբյեկտը, կառավարողը պետությունն է, իսկ օբյեկտը՝ կառավարվողը, ենթարկվողը, հասարակությունը: Այսպիսով, պետական իշխանությունն իրականացնում է հասարակությունից առանձնացված կառավարման կառույցը՝ պետությունը:

## 2. ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ



**Պետական իշխանությունը համընդհանուր է և համապարտադիր:** Միայն պետական իշխանությունն է տարածվում պետության ողջ տարածքի և ամբողջ բնակչության վրա: Նրա կամքը պարտադիր է բոլորի համար, իսկ պետությունն ունակ է լուծելու հասարակական կյանքի ցանկացած հարց:

**Պետական իշխանությունը հանրային իշխանություն է:** Այդ իշխանությունը մարմնավորվում, իրական է դառնում հասարակությունից առանձնացված պետական մարմինների համակարգում: Հանրային պետական իշխանությունը, ի տարբերություն տոհմացեղային իշխանության, չի համընկնում բնակչության հետ: Այն իրականացնում է հասարակությունից առանձնացված կառավարման ապարատը: Այդ իշխանությունն անվանում են հանրային, որովհետև այն և միայն այն իրավունք ունի հանդես գալու ամբողջ հասարակության, ժողովրդի անունից:

**Պետական իշխանությունը պետք է լինի լեգիտիմ:** «Լեգիտիմ» բառի հիմքում ընկած է լատիներեն *lex* արմատը, ինչը նշանակում է օրենք, օրինական: Պետական իշխանության լեգիտիմության հետևանքը նրա հեղինակությունն է բնակչության մեծամասնության աչքում, իշխանության նկատմամբ հարգանքը:

Պետական իշխանության լեգիտիմության նախադրյալները ժողովրդաիշխանությունն ու օրինականությունն են: Այսինքն՝ լեգիտիմ է այն պետությունը, որում հռչակված է ժողովրդաիշխանության սկզբունքը, իսկ պետական մարմինները ձևավորվում են ժողովրդավարական բնույթ ունեցող օրենքներից համապատաս-

խան: Օրինակ՝ ժողովրդավարական պետական իշխանության լեգիտիմության միջոցը նրա բարձրագույն մարմինների ընտրովիությունն է ժողովրդի կողմից: Ընտրություններն իրենց հերթին պետք է լինեն ազատ, պարբերական, այլընտրանքային (մրցակցային), հավասար, արդար, ազնիվ: Հակառակ դեպքում, օրինակ՝ կեղծված ընտրությունների միջոցով ձևավորված իշխանությունը լեգիտիմ չէ:

**Բոլոր տեսակի իշխանությունների բնութագրական գիծը հեղինակությունն է,** այսինքն՝ ընդունակությունը ստիպելու հնազանդվել, իրեն ենթարկել այլ մարդկանց: Իշխանությունն առանց ուժի անգոր է իր կամքը թելադրելու մարդկանց, կառավարելու հասարակությունը: Այդ ուժը կարող է հենվել բռնության կամ էլ հեղինակության վրա: Բռնի ուժի վրա կառուցված իշխանությունը չունի լեգիտիմություն: Նրա իշխանության ուժի հիմքը բռնությունն է: Իրականում լեգիտիմ է այն իշխանությունը, որ հենվում է ժողովրդի հարգանքի ու վստահության վրա, այսինքն՝ հենվում է հեղինակության ուժի վրա, այլ ոչ թե միայն հարկադրանքի: Լեգիտիմ պետական իշխանությունը վայելում է բնակչության հարգանքը, վստահությունը, այսինքն՝ այն վայելում է հեղինակություն:

**3. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

«Ինքնիշխանություն» եզրույթը բառացիորեն նշանակում է գերագույն իշխանություն: **Պետության ինքնիշխանությունը նրա հատկությունն է, որն արտահայտվում է երկրի ներսում պետական իշխանության գերակայությամբ և արտաքին հարաբերություններում անկախությամբ:**

<b>Պետության ինքնիշխան իրավունքները</b>	
Պետության ինքնիշխանությունը դրսևորվում է նրա իրավունքներում, որոնք իրականացնում են պետության մարմինները: Այդ իրավունքներն են՝ օրենքներ հրապարակելու իրավունքը, պետության խորհրդանիշները (գինանշան, հիմն, դրոշ) որոշելու իրավունքը, դրամական միավոր ունենալու իրավունքը, հարկեր սահմանելու իրավունքը, պատերազմի և խաղաղության իրավունքը, դիվանագիտական ներկայացուցչության իրավունքը, միջպետական միությունների մեջ միավորվելու իրավունքը և այլն:	
<b>Ներքին ինքնիշխանություն</b>	<b>Արտաքին ինքնիշխանություն</b>
Արտահայտվում է պետության գերակայությամբ հասարակական այլ կազմակերպությունների նկատմամբ: Գերակայությունը պետության մենաշնորհային իրավունքն է երկրում իրականացնել օրենսդիր, գործադիր և իրավապահական գործառույթներ:	Պետության անկախությունը և իրավահավասարությունն է այլ պետությունների հետ հարաբերություններում, անբույլատրելիությունը՝ դրսից միջամտել նրա ներքին գործերին, իրավահավասար անդամությունը միջազգային կազմակերպություններին:
<b>Պետական ինքնիշխանության հատկանիշները</b>	
<ul style="list-style-type: none"> <li>◆ գերակայություն</li> <li>◆ անկախություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>◆ անօտարելիություն</li> <li>◆ անբաժանելիություն</li> </ul>
<ul style="list-style-type: none"> <li>◆ ինքնուրույնություն</li> <li>◆ իրավահավասարություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>◆ լիիշխանություն</li> </ul>
<b>Մտորումներ:</b> Փորձե՛ք մեկնաբանել պետական ինքնիշխանության հատկանիշները:	

Ինքնիշխանությամբ օժտված է ցանկացած պետություն՝ անկախ պետության տարածքի չափից, բնակչության քանակից: Արդի դարաշրջանում պետության ինքնիշխանությունն ավելի ու ավելի է սահմանափակվում միջազգային իրավունքով: Բացի այդ, ակնհայտ է, որ գերտերությունների իրավունքներն առավել իրական են, քան փոքր պետությունների:

XX դարում մարդու իրավունքների միջազգայնացումը և համընդհանրացումը էականորեն թուլացրեցին պետության ներքին գործերին չմիջամտելու և ինքնիշխան հավասարության անխախտելիության դիրքերը: ՄԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված շրջանակներում և սահմաններում կիրառվում են զինված ուժեր այն պետությունների նկատմամբ, որոնք թույլ են տալիս կամ կատարում են մարդու իրավունքների խախտումներ (մարդասիրական ինտերվենցիա):

#### 4. ԺՈՂՈՎՐԳԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

**Ինքնիշխանությունը բնութագրական է նաև ժողովրդին: Ժողովրդի ինքնիշխանությունը նրա՝ որպես իշխանության աղբյուրի և կրողի գերակայությունն է, նրա իրավունքն է ինքնուրույն որոշել իր բախտը, անմիջականորեն կամ ներկայացուցչական մարմինների միջոցով մասնակցել իր պետական մարմինների կազմավորմանը, վերահսկել պետության գործունեությունը:** Ժողովրդի ինքնիշխանությունն արդի սահմանադրական կարգերի գլխավոր հիմունքներից է:

Ժողովրդի ինքնիշխանությունից կամ ժողովրդաիշխանությունից բխում են ժողովրդի հետևյալ հիմնական իրավունքները. լինել գերագույն իշխանության աղբյուր և կրող պետության մեջ, ձևավորել իշխանության ներկայացուցչական մարմինները, պատվիրակել սեփական լիազորություններն իշխանության ներկայացուցչական մարմիններին, մասնակցել օրենսդրական գործունեությանը, պետության կառավարմանը և այլն: Ժողովրդի ինքնիշխանությունից բխում է պետության՝ որպես ամբողջ ժողովրդի պաշտոնական ներկայացուցչի ինքնիշխանությունը:

#### Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է իշխանությունը:
2. Որո՞նք են պետական իշխանության սուբյեկտը և օբյեկտը:
3. Որո՞նք են պետական իշխանության հատկանիշները:
4. Ի՞նչ է պետական իշխանության լեգիտիմությունը:
5. Ի՞նչ է պետական ինքնիշխանությունը:
6. Որո՞նք են պետության ինքնիշխան իրավունքները:
7. Արդյո՞ք քաղաքացի է պետության ինքնիշխանությունը:
8. Ինչպիսի՞ն է ժողովրդի և պետության ինքնիշխանության հարաբերակցությունը:

**Ինքնուրույն աշխատանք:** Օգտվելով համապատասխան գրականությունից՝ դուրս գրեք երեք ասույթ քաղաքականության վերաբերյալ և դասարանում կազմակերպեք դրանց քննարկումը: Արդյունքներն ամփոփեք «Վավազույն քաղաքական հետազոտող» մրցույթով:

## ԳԼՈՒԽ 39. ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՉԵՎԵՐԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

### 1. ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՉԵՎԵՐԸ

Պետությունը հասարակությունը կառավարում և մարդկանց վարքագիծը կանոնակարգում է նաև իրավական ձևերով: Հասարակության կյանքի այդպիսի կարգավորումը կատարվում է օրենքի միջոցով, օրենքի հիման վրա: Այդ ձևերը երեքն են՝ իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապահպան:

**Իրավաստեղծ գործունեությունն իրավական կարգավորման սկզբնական փուլն է:** Այն պետության իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց գործունեությունն է, որն արտահայտվում է մարդու և հասարակության շահերի պաշտպանությանն ուղղված օրենքների ընդունմամբ և դրանց հրապարակմամբ: Օրինակ՝ մարդու սեփականության իրավունքը ապահովելու համար պետությունն ընդունում է օրենքներ, որոնցով կարգավորում է սեփականատիրական հարաբերությունները, նաև արգելում է սեփականության դեմ ուղղված կոնկրետ ոտնձգությունները, դիցուք՝ գողությունը:

**Իրավաստեղծագործությանը հաջորդում է իրավակիրառ գործունեությունը:** Օրենքներն ընդունվում են կատարվելու համար: Ուստի համապատասխան մարմինները և պաշտոնատար անձինք իրականացնում են գործունեություն՝ ուղղված օրենքների կիրառմանը: Այդպիսի իրավական գործունեությունն անվանում են իրավակիրառ: Օրինակ՝ պետական մարմինները գրանցում են անշարժ գույքի (տան, հողամասի) նկատմամբ մարդկանց սեփականության իրավունքը և տալիս են սեփականության իրավունքի վկայական:

**Իրավական կարգավորման գործընթացում մեծ նշանակություն ունի իրավապահպան գործունեությունը:** Չնայած բոլոր ջանքերին, հասարակության մեջ գտնվում են մարդիկ, որոնք խախտում են այլոց սեփականության իրավունքը՝ տարբեր տեսակի ոտնձգություններ կատարելով: Օրինակ՝ կատարում են գողություն: Անխուսափելիորեն պետության համար առաջանում է խնդիր՝ վեր հանել կատարված իրավախախտումները, պարզել դրանցում մեղավոր անձանց և ենթարկել նրանց պատասխանատվության: Այդպիսի գործունեությունն անվանում են իրավապահպան: Որոշ մարմինների համար այդ գործունեությունը հիմնական է, օրինակ՝ ազգային անվտանգության, դատախազության, ոստիկանության և այլն:

**Պետական իշխանության իրականացման կազմակերպական ձևերը:** Պետությունն իր կառավարչական գործունեության ընթացքում, բացի իրավական հարկադրանքից, իրականացնում է նաև գործողություններ, որոնք ունեն գուտ կազմակերպական նշանակություն: Օրինակ՝ սոցիոլոգիական հետազոտությունը (դիտարկում, անկետավորում, հարցում), տեղեկատվական ապահովումը, հիմնախնդիրների հետազոտումը, կանխատեսումը, ծրագրավորումը, ընթացիկ վերլուծությունը,

արդյունքների ամփոփումը: Սրանք մեծամասամբ ունեն սպասարկող նշանակություն, ապահովում են պետության տարբեր գործառույթների իրականացումը:

**Հարցում շրջապատին:** *Տասը անձանց ենթարկեք հարցման հետևյալ հարցի շուրջ. «Վաճառում է արդյոք հարգանք ու վստահություն պետական իշխանությունը նրանց մոտ» («այո», «մասամբ», «ոչ»): Արդյունքները գրանցե՛ք, ամփոփե՛ք տոկոսային հարաբերությամբ և վերլուծեք դասարանում: Ի՞նչ են հուշում տվյալները:*

## 2. ՀԱՐԿԱԳԻՐԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿ

Իրավապահպան գործունեության իրականացման ընթացքում պետությունը կիրառում է նաև օրենքներով թույլատրված, այսինքն՝ իրավական հարկադրանք:



**Իրավական հարկադրանքը** ազատության օրինական սահմանափակումն է ուժային ճնշման ճանապարհով (օրինակ՝ հասարակական կարգը խախտող զանգվածային անկարգությունների մասնակիցներին շրջան մեքենաների և արցունքաբեր գազի օգտագործմամբ ցրելը), ինչպես նաև իրավական պատասխանատվությունը (օրինակ՝ գողության համար ազատազրկման դատապարտելը):

Պետությունը՝ որպես հանրային իշխանություն, ունի հարկադրանքի կիրառման մենաշնորհային իրավունք:

**Պետական հարկադրանքը լիազորված պետական մարմինների ու պաշտոնատար անձանց՝ օրենքներով նախատեսված հոգեբանական, նյութական, ֆիզիկական ներգործությունն է անհատի և մարդկանց խմբերի նկատմամբ: Նյութական հարկադրանքի օրինակ են տուգանքը, գույքի բռնագրավումը: Ֆիզիկական հարկադրանքն ուղղված է անձի ազատության դեմ, օրինակ՝ ազատազրկումը, կալանքը: Հոգեբանական հարկադրանքի օրինակ է նախազգուշացումը, դիտողությունը:**

Հարկադրանքի կիրառման նպատակն է բոլորին ստիպել գործել ի շահ պետության և հասարակության: Եթե, օրինակ, անհատը կամավոր չի կատարում ուրիշի սեփականության իրավունքը հարգելու իր պարտականությունը, ապա նրա համար դա կարող է ունենալ մի շարք բացասական հետևանքներ: Մասնավորապես՝ նրա նկատմամբ կարող է հարուցվել քրեական գործ՝ գողության մեջ մեղադրանքով, իսկ գողությունը՝ որպես հանցանք, պատժվում է նաև ազատազրկմամբ:

**Պետական հարկադրանքն ունի ոչ թե կամայական, հայեցողական, այլ իրավական, որոշակի բնույթ:** Այն սահմանվում և կիրառվում է օրենքով: Իրավական պետության մեջ պետական հարկադրանքը կարող է լինել միայն օրինական, այսինքն՝ օրենքով սահմանված հիմքերով, ձևերով և կարգով:

### 3. ԻՐԱԶԵԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՄՈՉՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ


**Իրագեկումը պետության քաղաքականության, պետության ընդունած որոշումների վերաբերյալ հանրությանը տեղեկացնելն է հասարակական կարծիքի ձևավորման համար:** Պետական քաղաքականության և նորմատիվ ակտերի վերաբերյալ բնակչությանը տեղեկացնելը, դրանց բացատրումը, ինչպես նաև այլ քարոզչական, կրթական և դաստիարակչական գործունեությունը շատ կարևոր են: Գրանք նպատակամղված են պետության գործունեության և պահանջների գաղափարական-գիտակցական ապահովմանը, հասարակական կարծիքի և համոզմունքի ձևավորմանը: Օրինակ՝ կոռուպցիայի դեմ պայքարն իրականացվում է նաև դաստիարակության, հասարակական կարծիքի ձևավորման միջոցով:

**Համոզումը մարդկանց կամքի և գիտակցության վրա գաղափարադաստիարակչական, բարոյական միջոցներով ակտիվ ներգործության ձևն է բնակչության գաղափարական մշակման, նրա մոտ համոզմունքի ձևավորման համար:** Այն իրականացվում է որոշակի գործունեության նպատակահարմարության և անհրաժեշտության բացատրմամբ, հիմնավորմամբ:

***Մտորումներ:** Արդյոք մեր հասարակության անդամներն օրինահպատա՞ն են հարկադրանքից վախենալով, թե՞ համոզմունքից ելնելով:*

Մարդուն կառավարելու կարևոր միջոցներից մեկն էլ խոսքն է: Օրինակ՝ պետական իշխանությունն իրականացվում է նաև դաստիարակության, պատգամների, կոչերի, գաղափարների օգնությամբ: Այս միջոցների օգտագործման արդյունքում մարդու, մարդկանց խմբերի մեջ ձևավորվում են որոշակի բարոյահոգեբանական արժեքներ: Գրանով իսկ հասարակական շահերն ու իշխանության պահանջները վերածվում են անհատի **ներքին հոգեբանական համոզմունքի:** Օրինակ՝ «Մի՛ արա այն, ինչ չես ուզում, որ քեզ անեն» բարոյակրոնական սկզբունքի իրավական արտահայտությունն այլոց իրավունքներն ու ազատությունները հարգելու պարտականությունն է: Այդ պարտականությունն անհատների կողմից կատարվում է մեծամասամբ կամավոր կերպով, որովհետև մարդկանց բարոյաարժեքային կողմնորոշման կամ աշխարհայացքի հիմքում, որպես համոզմունք, ընկած է մարդասիրությունը: Հանուն այդ գաղափարի նման մարդը պատրաստ է նաև ինքնագոհողության ուրիշին փրկելու համար: Իսկ եթե անհատը չունի այդ բարոյաարժեքային կողմնորոշումը, այսինքն՝ նա հակված չէ կատարելու իր վրա դրված իրավական պարտականությունը, ապա պետությունը դիմում է հարկադրանքի:

Հանրության շահերին համահունչ վարքագիծ ցուցաբերած անձանց նկատմամբ կարող է կիրառվել նաև խրախուսում: **Խրախուսումն** անհատներին և կազմակերպություններին իրավունքներով ու արտոնություններով օժտելն է նրանց՝ հանրության համար օգտակար գործունեությունը խթանելու համար: Օրինակ՝ զինվորական ծառայություն անցած դիմորդին արտոնություններ տրամադրելը:



**Մտորումներ:** Մ. Գոշը «Գիրք դատաստան»-ին եզրափակում է հավելվածով, որտեղ նա ներդնում է Աստծո տասը պատվիրանները և Աստծո Որդու «Լեռան քարոզը» հոշակավոր խոսքը: Ի՞նչ էր կարծում, ինչո՞ւ է մեծ օրենսգետն այդպես վարվել: Կարդացե՛ք Աստվածաշունչ մատյանի այդ մասերը և փորձե՛ք պատասխանել հարցին:

#### Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են պեղական իշխանության իրականացման իրավական շեղերը:
2. Ի՞նչ նշանակություն ունեն պեղական իշխանության իրականացման կազմակերպական շեղերը, և նման ի՞նչ շեղեր գիտեք:
3. Ի՞նչ են պեղական հարկադրանքը և դրա ներգործության եղանակները:
4. Ո՞րն է պեղական հարկադրանքի կիրառման նպատակը:
5. Ո՞րն է պեղական քաղաքականության վերաբերյալ փեղեկութափորման դերը:
6. Ի՞նչ է համոզումը՝ որպես պեղական իշխանության իրականացման եղանակ:
7. Ո՞րն է փարբերությունը փեղեկացվածության և համոզմունքի միջև:

**Ստեղծագործական աշխատանք:** Գրե՛ք փոքրիկ շարադրություն «Իմ համոզմունքները» թեմայով:

## ԳԱՍ 40. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ՉԵՎԵՐԸ

### 1. «ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՉԵՎ» ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՄԱԿՆԵՐԸ

Պետական կառավարման ձևը ցույց է տալիս պետական մարմինների ձևավորման կարգը, դրանց փոխգործությունը միմյանց միջև և բնակչության հետ, բնակչության մասնակցության աստիճանը պետական մարմինների ձևավորմանը:



**Միապետության հասկացությունը և տեսակները:** Միապետությունում բարձրագույն պետական իշխանությունը պատկանում է մեկ անձի՝ միապետին (թագավոր, ցար, կայսր, շահ), որը գահը զբաղեցնում է ժառանգաբար և ցմահ, իրավաբանորեն պատասխանատու չէ բնակչության առջև:

**Անսահմանափակ (բացարձակ) միապետություններում** միապետը պետության բարձրագույն մարմինն է: Նա իրականացնում է օրենսդիր գործառույթ (միապետի կամքն իրավունքի և օրենքի աղբյուր է), ղեկավարում է գործադիր իշխանությունը, վերահսկում է արդարադատությունը: Բացարձակ միապետության առաջին ձևը

**հին արևելյան միահեծանություններն** էին: Հին Արևելքում աշխարհագրական պայմանները, խոշորածավալ հասարակական աշխատանքների կատարման (ռոռոգման համակարգերի կառուցման) անհրաժեշտությունը կանխորոշեցին ուժեղ իշխանության առաջացումը: Այդ պետությունների տնտեսական հիմքը հողի պետական սեփականությունն էր: Դրանք էլ պայմանավորեցին ոչնչով չսահմանափակված միապետական իշխանության ձևավորումը: Միապետը երկիրը կառավարում էր ուժեղ ռազմապաշտոնական պետական կառուցակարգի օգնությամբ: Կառավարման միահեծանական ձև ուներ Վանի թագավորությունը:

Բացարձակ միապետությունները բնութագրական էին նաև ուշ միջնադարին, երբ ավատական մասնատվածության վերջնական հաղթահարումով կազմավորվեցին կենտրոնացված պետությունները: Այս կառավարման ձևի էությունն արտահայտել է Ֆրանսիայի Լյուդովիկոս թագավորը. «Պետությունը ես եմ»:

Միջնադարյան ավատատիրական եվրոպական միապետությունները ձևավորվեցին որպես ապակենտրոնացված միապետություններ: Հասարակության զարգացումը նախադրյալ դարձավ քաղաքական կենտրոնացման և մասնատված միապետությունից անցնելու **դասային-ներկայացուցչականի**: Կառավարման այս ձևում միապետի իշխանությունը սահմանափակված էր դասերի ներկայացուցչական մարմնով, օրինակ՝ Անգլիայում՝ պառլամենտով, Լեհաստանում՝ սեյմով:

**Սահմանադրական միապետությունը** ծագեց նոր դարաշրջանում: Այս կառավարման ձևում միապետի իշխանությունը սահմանափակվում է ներկայացուցչական (ընտրովի) մարմնով: Միապետն իրավունք չունի փոխել սահմանադրությունը: Այս միապետության տեսակներն են դուալիստականը և խորհրդարանականը:

Եթե բացարձակ միապետությունում չկան սահմանադրություն և խորհրդարան, իշխանությունների բաժանում, ամբողջ իշխանությունը կենտրոնացված է միապետի ձեռքում, ապա **դուալիստականում** իշխանությունը բաժանվում է միապետի կողմից նշանակվող կառավարության և օրենսդիր խորհրդարանի միջև: Կառավարությունը կազմվում է միապետի կողմից և պատասխանատու է միայն նրա առջև: Ներկայումս կառավարման այսպիսի ձև չկա:

**Խորհրդարանական միապետությունում**, օրինակ՝ Մեծ Բրիտանիայում միապետը թագավորում է, բայց չի կառավարում: Կառավարությունը կազմվում է ընտրություններում հաղթանակած կուսակցությունների ներկայացուցիչներից և պատասխանատու է միայն խորհրդարանի առջև: Օրենքներն ընդունում է խորհրդարանը: Միապետի իշխանությունը խորհրդանշական է:

**Մտորումներ:** Ժամանակակից աշխարհի ինչպիսի՞ միապետություններ գիտեք: Ի՞նչ էք կարծում, ինչո՞ւ են այդ երկրներում պահպանվել միապետական կառավարման ձևերը: Արդյո՞ք միապետությունն իր դարն ապրած երևույթ է, թե՞ ոչ:

**Հանրապետության հասկացությունը և տեսակները:** Հանրապետությունում բարձրագույն պետական իշխանությունը պատկանում է որոշակի ժամկետով ժողովրդի կողմից ընտրված մարմիններին, որոնք պատասխանատու են ընտրողների առջև:

Կառավարման հանրապետական ձևն առաջացել է Հին աշխարհի ստրկատիրական պետություններում: **Աթենքի ժողովրդավարական հանրապետությունում** պետության մարմիններն ընտրվում էին լիիրավ քաղաքացիների՝ ժողովրդական ժողովի կողմից: Սակայն Հին աշխարհում տարածված էր **արիստոկրատական հանրապետությունը**, որտեղ պետական իշխանության ընտրովի մարմինների կազմավորմանը և աշխատանքին մասնակցում էր ռազմահողատեր ավագանին:

Միջնադարում հանրապետական ձևը հազվադեպ էր: Այն գոյություն ուներ միայն ինքնավարության իրավունք ունեցող միջնադարյան քաղաքներում, որտեղ ընտրությունների միջոցով կազմավորվում էին իշխանության մարմիններ՝ քաղաքային խորհուրդներ՝ քաղաքապետերի գլխավորությամբ:

Նոր դարաշրջանում առաջացան **խորհրդարանական և նախագահական** հանրապետություններ: Դրանք տարբերվում են իրարից նրանով, թե պետական իշխանության բարձրագույն մարմիններից ո՞վ է կազմում կառավարությունը ու ղեկավարում նրա գործունեությունը՝ խորհրդարանը, թե՞ նախագահը, և նրանցից ո՞ւմ առջև է պատասխանատու կառավարությունը: Եթե հանրապետությունում կառավարությունը կազմավորվում է ընտրություններում հաղթած կուսակցության կողմից կամ ընտրվում է խորհրդարանի կողմից և հաշվետու, պատասխանատու է նրա առջև (խորհրդարանը կարող է անվստահության քվե հայտնել կառավարությանը), ապա այն խորհրդարանական է: Այդպիսին էր, օրինակ, Հայաստանի առաջին հանրապետությունը, այդպիսին են ժամանակակից Իտալիան, Ավստրիան: Եթե հանրապետությունում նախագահն է կազմում կառավարությունը, և վերջինս իր գործունեության համար հաշվետու և պատասխանատու է նախագահի առջև, ապա հանրապետությունը նախագահական է: Դրա դասական օրինակը ԱՄՆ-ն է:

Կան նաև **խառը՝ նախագահական-խորհրդարանական** կամ **կիսանախագահական** հանրապետություններ: Այդպիսին է, օրինակ, մեր հանրապետության կառավարման ձևը: Դրանում գուցակցված են և՛ նախագահական, և՛ խորհրդարանական հանրապետություններին բնորոշ գծերը: Այդ կառավարման ձևը նախագահական է այնքանով, որքանով հանրապետության նախագահը Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա վարչապետ է նշանակում պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին: Նախագահը վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է կառավարության անդամներին: Սակայն նախագահի կողմից կազմավորվող կառավարությունը հաշվետու և պատասխանատու է նաև Ազգային ժողովի առջև: Օրինակ՝ նա իրավասու է անվստահություն հայտնել կառավարությանը: Այդ դեպքում վարչապետը դիմում է ներկայացնում նախագահին կառավարության հրաժարականի մասին:

**Սոցիալիստական հանրապետությունում** պետական կառուցակարգը կազմավորվում է ոչ թե իշխանությունների տարանջատման, այլ, ընդհակառակը, կենտրոնացման սկզբունքով: Սովորաբար մերժվում է այլախոհությունը և բազմակուսակ-

ցական համակարգը: Հասարակության կյանքի տնտեսական, սոցիալական, մշակութային ղեկավարությունը կենտրոնացվում է պետության ձեռքում: Պետությունն ամբողջ երկրի մասշտաբով կառավարում է, կարգավորում և վերահսկում ամեն ինչ՝ հանուն սոցիալիզմի և կոմունիզմի շինարարության:

## 2. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՉԵՎԸ

**Պետական կառուցվածքի ձևը բնութագրում է պետական իշխանության տարածքային կազմակերպումը, պետության ներքին բաժանումը մասերի, պետության և նրա բաղկացուցիչ մասերի փոխհարաբերության բնույթը:** Ըստ կառուցվածքի ձևի պետությունները լինում են պարզ՝ միասնական, և բարդ՝ դաշնային:

**Միասնական (լատ.՝ ունիտար) պետությունն** ամբողջական, կենտրոնացված պետություն է, որի տարածքը բաժանված է պետական կազմավորման կարգավիճակ չունեցող և ինքնիշխան իրավունքներով չօժտված վարչատարածքային միավորների (մարզեր, պրովինցիաներ և այլն): Այդպիսին է մեր հանրապետությունը: Այս պետություններում գոյություն ունեն բարձրագույն պետական մարմինների միասնական համակարգ, մեկ սահմանադրություն: Այդ պարագայում նախադրյալներ են ստեղծվում երկրի ամբողջ տարածքի վրա կենտրոնական պետական իշխանության բավականին ուժեղ ազդեցության համար:

**Դաշնային (լատ.՝ ֆեդերատիվ) պետությունը** բարդ միութենական պետություն է, որի մասերը (հանրապետություններ, նահանգներ, կանտոններ և այլն) ինքնիշխանությամբ օժտված պետություններ կամ պետական կազմավորումներ են: Դաշնության կազմի մեջ մտնող պետական կազմավորումները կոչվում են դաշնության սուբյեկտներ: Դաշնային պետություններն ունեն միասնական զինված ուժեր, միասնական ֆինանսական, հարկային, մաքսային համակարգ: Սակայն բոլոր դաշնություններում պետական մարմինների համակարգը, իրավական համակարգն ունեն երկու մակարդակ՝ ամբողջ դաշնության և նրա անդամների:

### Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է պետական կառավարման ձևը, և որո՞նք են դրա տեսակները:
2. Ի՞նչ է միասնականությունը:
3. Միասնական կառավարման ինչպիսի՞ ձևեր են գոյություն ունեցել:
4. Ի՞նչ է հանրապետությունը:
5. Որո՞նք են արդի դարաշրջանի հանրապետական կառավարման ձևերը:
6. Ինչպիսի՞ն է Հայաստանի Հանրապետության կառավարման ձևը:
7. Ի՞նչ է պետական կառուցվածքի ձևը:
8. Ի՞նչ են միասնական և դաշնային պետությունները:

**Ինքնուրույն աշխատանք:** Ուսուցչի քաշխմամբ պատրաստե՛ք զեկուցումներ հետևյալ թեմաներով. «Անտիկ Հունաստանի մտածող Պոլիբիոսը պետության ձևերի հերթափոխման շրջափուլի մասին», «ԼՂՀ-ի կառավարման ձևը»:

## ԳՍՍ 41. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

### 1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

**Առաքելություն** նշանակում է հասարակական և այլ հանձնարարություն, խնդիր, որի կատարման համար գոյություն ունի ինչ-որ մեկը: Պետության առաքելություն ասելով հասկանում ենք այն հասարակական խնդիրները, որոնց կատարման համար առաջացել է և գոյություն ունի պետությունը:

Պետության ծագումը և գոյությունը պայմանավորված է նրա ընդունակությամբ՝ բավարարելու հասարակության (բնակչության) հիմնարար պահանջմունքները: Պետությունը պետք է լուծի հասարակական խնդիրները, կազմակերպի հասարակական «ընդհանուր գործերը»: Օրինակ՝ անվտանգությունը, քաղաքացիական խաղաղությունը և իրավակարգը, ի վերջո, հասարակության հարատևումը:

Որպես հանընդհանուր կազմակերպություն՝ միայն պետությունն է ընդունակ իրականացնել հասարակության ընդհանուր գործերի կարգավորումը և կառավարումը: Ուստի **պետության սոցիալական առաքելությունը, արժեքը հենց նրանում է, որ այն կարգավորում և կառավարում է հասարակությունը, որոշում է նրա զարգացման ընդհանուր նպատակները և կազմակերպում է դրանց իրականացումը:**

**Մարդու իրավունքները և պետության առաքելությունը:** Պետության սոցիալական առաքելությունը չի դրսևորվում ինքնաբերաբար: Դրա վրա ազդում են բազմաթիվ գործոններ, օրինակ՝ ում է պատկանում պետական իշխանությունը, ով է այն իրականացնում և ում շահերից ելնելով, կրոնը և այլն:

Պետության հասարակական առաքելության վերաբերյալ պատկերացումների հեղափոխական վերաիմաստավորումը տեղի ունեցավ ուշ միջնադարում՝ ի դեմս բնական իրավունքի տեսաբանների: Նրանց կարծիքով՝ պետության նպատակը մարդն է ու նրա իրավունքները: Դա նշանակում է, որ պետությունը հասարակական դաշինքի արդյունքում ստեղծված կազմակերպություն է, որի առաքելությունը մարդու իրավունքների կենսագործումն ու երաշխավորումն է, հասարակական կարգուկանոնի, խաղաղության հաստատումը:


**Մտորումներ:** Պետության հասարակական առաքելության վերաբերյալ մոտեցումներից է դասակարգային կամ մարքսիստական մոտեցումը, որն ասպացուցում է, որ պետական իշխանությունը պատկանում է տնտեսապես գերիշխող դասակարգին և օգտագործվում է ի շահ նրա: Հետևաբար, պետությունը գործիք է, որի միջոցով մեկ դասակարգը (փոքրամասնությունը) իշխում է մյուսի (մեծամասնության) վրա:

### 2. «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Իր առջև դրված առաքելությունն իրականացնելու համար ցանկացած պետություն պետք է գործի մշտապես: Պետության անգործությունը հավասարագոր է և՛ պետության, և՛ հասարակության կործանմանը: Հետևաբար, պետությունն իրակա-

նացնում է բազմաթիվ գործառույթներ: **Պետության գործառույթները նրա գործունեության հիմնական ուղղություններն են, որոնք արտահայտում են պետության հասարակական առաքելությունը, ուղղված են հասարակության պետական կառավարման խնդիրների ու նպատակների իրագործմանը:**

Գործառույթների շրջանակը կախված է տվյալ պահին հասարակության, ուստի նաև պետության առջև կանգնած խնդիրներից: **Պետության խնդիրն** այն է, ինչը լուծում է պահանջում, իսկ **գործառույթն** այդպիսի լուծմանն ուղղված գործունեության տեսակ է: Այլ կերպ ասած՝ պետության խնդիրները և գործառույթները փոխկապակցված են, սակայն նույնական չեն: Պետության յուրաքանչյուր գործառույթ ունի իր ներգործության ոլորտը և իր բովանդակությունը: Ոլորտը հասարակական կյանքի որոշակի մասն է (տնտեսություն, երկրի պաշտպանություն), որին ուղղված է պետական ներգործությունը: Գործառույթի բովանդակությունը մատնանշում է, քե ինչ է անում պետությունը, ինչ կառավարչական գործողություններ է կատարում տվյալ ոլորտում, ինչով են զբաղվում նրա համապատասխան մարմինները: Օրինակ՝ պետության խնդիրներից մեկն էլ երկիրն արտաքին հնարավոր հարձակումներից պաշտպանելն է: Այդ խնդրի իրացման համար պետությունն իրականացնում է երկրի պաշտպանության գործառույթ, որը ենթադրում է զինված ուժերի (բանակի) ստեղծում, դրա անընդհատ կատարելագործում, բանակի մարտունակության և մարտական պատրաստականության բարձրացում, ինչպես նաև բազմաթիվ այլ միջոցառումներ:



**Պետության գործառույթները լինում են ներքին և արտաքին:** **Ներքին գործառույթները** նպատակամղված են երկրի ներքին խնդիրների լուծմանը, իսկ **արտաքինները**՝ այլ պետությունների հետ որոշակի հարաբերությունների հաստատմանը, դրանց զարգացմանը, երկրի պաշտպանությանը (*տես 52-րդ դասը*): Բոլոր գործառույթները սերտորեն կապված են միմյանց հետ, լրացնում են իրար:

**3. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

<p><b>1. Տնտեսական գործառույթ.</b> տնտեսության կարգավորում, պետքառաջնի ձևավորում և կատարման վերահսկողություն, տնտեսական զարգացման ծրագրերի մշակում, ձեռնարկատիրության համար նպաստավոր պայմանների ստեղծում, արտադրանքի որակի նկատմամբ հսկողություն և այլն:</p>	
<p><b>2. Ֆինանսական վերահսկողության և հարկման գործառույթ.</b> ֆինանսական համակարգի կազմակերպում և կառավարում, հարկային համակարգի կազմակերպում և հարկահավաքություն, եկամտների օրինակահանության նկատմամբ վերահսկողություն:</p>	
<p><b>3. Սոցիալական գործառույթ.</b> մարդու արժանապատիվ կյանքի համար պայմանների ապահովում, հասարակության կարիքավոր անդամներին սոցիալական օգնության մատուցում, առողջապահության, հանգստի, կրթության, բնակարանային շինարարության և այլ ոլորտներում ծրագրերի մշակում և կենսագործում:</p>	
<p><b>4. Կրթամշակութային գործառույթ.</b> ազգի համախմբում, ազգային ինքնագիտակցության զարգացում, ազգային փոքրամասնությունների զարգացման ապահովում, կրթության համընդհանուր և անընդհատ համակարգի կազմակերպում, գիտության և մշակութային զարգացման օժանդակում, ժողովրդի մշակութային ժառանգության պահպանություն:</p>	
<p><b>5. Իրավական գործառույթ.</b> օրենսդրության ստեղծում, մարդու իրավունքների ամրագրում, ապահովում, պաշտպանություն, օրենսդրության ճշգրիտ կենսագործման ապահովում, իրավախախտների բացահայտում և պատասխանատվության ենթարկում:</p>	
<p><b>6. Բնապահպանական գործառույթ.</b> մարդու կյանքի համար անվտանգ բնական պայմանների ապահովում, շրջակա միջավայրի պահպանություն, վերականգնում և բարելավում, բնական ռեսուրսների պահպանության և ռացիոնալ օգտագործման ապահովում, ժողովրդի գեներոֆոնդի պահպանում:</p>	

#### 4. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

**Պետության գործառույթները ոչ թե քարացած, այլ շարժուն երևույթներ են:** Պետության պատմական զարգացման ընթացքում անընդհատ փոխվում են գործառույթների շրջանակը, գործառույթների մի մասը վերանում է, առաջանում են նոր գործառույթներ՝ պայմանավորված հասարակական զարգացման նոր պահանջմունքներով ու խնդիրներով: Օրինակ՝ XX դարում պետությունները սկսեցին կատարել էկոլոգիական գործառույթ: Ճիշտ է՝ էկոլոգիական միջոցառումներ իրականացվել են գրեթե բոլոր ժամանակներում, սակայն մինչ XX դարը դրանք միայն եզակի ակտեր էին, չունեին մշտական, համակարգված գործունեության նշանակություն:

Պետության պատմական զարգացման ընթացքում փոխվում և զարգանում են նաև գործառույթների բովանդակությունը: Օրինակ՝ տնտեսական գործառույթը, որն իրականացվել է պետության պատմության ողջ ընթացքում, անընդհատ փոփոխություններ է կրել: Այսպես՝ քաղաքակրթության պատմության նոր և նորագույն շրջանում պետության տնտեսական գործառույթը կառուցվել է մի քանի ձևերով՝ տնտեսությանը չմիջամտելու (**գիշերային պահակի պետություն**), իսկ որոշ երկրներում՝ պլանային սոցիալիստական տնտեսության: Արդի շրջանում այդ գործառույթի իրականացման ձևը խառը տնտեսությունն է՝ շուկայում պետության ուժեղ կարգավորիչ դերով:

**Մտորումներ:** Պետության մասին դուք արդեն բավականին զիտելիքներ ունեք: Իսկ ինչպիսի՞ն կլինի ապագայի պետությունը, ի՞նչ զարգացումներ կապրի և ի՞նչ գործառույթներ կիրականացնի: Կան մտածողներ, որոնց կարծիքով եկել է համաշխարհային պետության ստեղծման ժամանակը: Ի՞նչ եք մտածում այդ մասին:

Պետության գործառույթներից ամեն մեկը սպասարկող, երաշխավորող նշանակություն ունի մյուսի համար: Ակնհայտ է, որ տնտեսական գործառույթի կազմակերպված, խելացի իրականացումը, ճիշտ հարկային քաղաքականությունը նախադրյալ են սոցիալական գործառույթի համար: Իրավական գործառույթի լիարժեք իրականացումը և օրինականության հաստատումը պայմաններ են ստեղծում մնացած բոլոր գործառույթների պատշաճ իրականացման համար:

#### Հարցեր

1. Ո՞րն է պետության հասարակական առաքելությունը:
2. Ինչպե՞ս է ազդում մարդու իրավունքների գերակայությունը պետության հասարակական առաքելության վրա:
3. Ի՞նչ են պետության գործառույթները:
4. Պետության ներքին ի՞նչ գործառույթներ գիտեք:
5. Ինչպիսի՞ փոփոխություններ են կրում պետության գործառույթները ժամանակի ընթացքում:
6. Ինչպե՞ս են կապված պետության գործառույթները:

### ԳԱՍ 42. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԸ

#### 1. «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

**Պետության կառուցակարգը պետական մարմինների, կազմակերպությունների և հիմնարկությունների համակարգ է, որի միջոցով իրականացվում են պետական իշխանությունը, պետության խնդիրներն ու գործառույթները:**

**Պետության կառուցակարգի կարևորագույն բաղադրատարրը պետական մարմինն է:** Այն մասնակցում է պետության գործառույթների իրականացմանը և դրա համար օժտված է իշխանական լիազորություններով:

**Պետական մարմինների կազմավորման և գործունեության կարգը, կառուցվածքը սահմանվում են օրենսդրությամբ:** Պետական ամեն մի մարմին մասնակցում է պետության խնդիրների և գործառույթների կատարմանը՝ օրենքով իրեն վերապահված ոլորտում: Պետական մարմինը կազմված է համապատասխան ստորաբաժանումներից և պետական ծառայողներից, որոնք միավորված են նպատակների միասնությամբ:

**Պետական մարմիններն ունեն օրենքով ամրագրված իրավասություն՝** լիազորությունների և պարտականությունների ամբողջություն: Վերջիններս պայմանավորված են տվյալ պետական մարմնի առջև դրված խնդիրներով և գործառույթներով: Իր իրավասությունն իրականացնելու համար պետական մարմինն ունի անհրաժեշտ նյութական և ֆինանսական միջոցներ:

**Պետական մարմինն օժտված է իշխանական լիազորություններով՝** իր իրավասությանը համապատասխան: Դա նշանակում է, որ նա կարող է հրապարակել կատարման համար պարտադիր կարգադրագրեր: Այդ կարգադրագրերը կարող են լինել անհատական և նորմատիվ: Կարգադրագիրն անհատական է, եթե այն ուղղված է կոնկրետ անձին: Օրինակ, եթե քաղաքացին ստանում է ցուցում ապօրինի շինությունը քանդելու մասին, ապա այդ ցուցումն անհատական է: Իսկ եթե կարգադրագիրն ուղղված է բոլորին, այսինքն՝ ընդհանուր է, ապա այն նորմատիվ է: Օրինակ՝ քաղաքաշինության ընդհանուր կանոնները:

Ընդհանուր կարգադրագիր	Անհատական կարգադրագիր
<p><i>Բնակելի տներ, կցաշենքեր, ավտոտրակներ և այլ տնտեսական ու կենցաղային շինություններ ինքնակամ կառուցելն առաջացնում է տուգանքի նշանակում:</i></p> <p><b>Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հոդված 154</b></p>	

## 2. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅԱԿԱՐԳԻ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

Պետության կառուցակարգը կազմավորվում և գործում է որոշակի սկզբունքների հիման վրա: **Պետության կառուցակարգի սկզբունքները ելակետային դրույթներ են, որոնք որոշում են պետական մարմինների կազմակերպման և գործունեության հիմնական, առանցքային մոտեցումները:** Օրինակ՝ ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է մեր պետականության կառուցման և գործունեության հիմունքները, որոնք վերջին հաշվով կոչված են պետությունը դարձնելու իսկապես ժողովրդավարական, ժողովրդի կամքն ու շահերը արտահայտող:

<b>Արդի պետության կառուցակարգի սկզբունքները</b>	Մարդու իրավունքների գերակայություն
	Ժողովրդաիշխանություն
	Իշխանությունների բաժանում (տե՛ս 45-րդ դասը)
	Օրինականություն
	Հրապարակայնություն և քափանցիկություն
	Արհեստավարժություն

**Մարդու իրավունքների գերակայություն:** «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ են»: Պետության նպատակը մարդն է ու նրա իրավունքները: Մարդու իրավունքները նախորդում են օրենքների բովանդակությունը և գործադրման ոգին, այսինքն՝ պետության գործունեությունը: Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից: Պետությունը սահմանափակված է մարդու իրավունքներով:

**Ժողովրդաիշխանություն:** Պետությունը պետք է ծառայի մարդուն և ժողովրդին: Պետական կառավարումը պետք է լինի ժողովրդավարական: Ժողովրդավարական է այն կառավարման ձևը, որը կառուցվում ու գործում է ժողովրդաիշխանության սկզբունքով: Համաձայն ժողովրդաիշխանության սկզբունքի՝

- **Իշխանության տերը, աղբյուրը ժողովուրդն է:** Հայաստանում իշխանության գերագույն կրողը ժողովուրդն է: Չկա իշխանություն, որ չի բխում ժողովրդից: Այսինքն՝ ժողովուրդը ոչ մեկի հետ չի կիսում իր իշխանությունը, իրականացնում է այն անկախ այլ սոցիալական ուժերից: Ոչ ոք առանց ժողովրդի համաձայնության չի կարող հավակնել իշխանության: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է անմիջապես, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով:
- **Պետական իշխանությունն ածանցված է ժողովրդի իշխանությունից,** պայմանավորված է ժողովրդի կամքով ու պահանջմունքներով: Ժողովրդի կամքով ձևավորված իշխանության համակարգը պետք է լինի ժողովրդին հաշվե-

տու: Պետությունն իշխանությունը ստանում է ժողովրդից, իրականացնում է ժողովրդով, հանուն ժողովրդի:

**Օրինականության սկզբունքը:** Օրինականությունը պետությանը և նրա մարմիններին ու պաշտոնատար անձանց ներկայացված խստագույն պահանջն է՝ ստեղծվել և գործել օրենքներին համապատասխան: Բացի այդ, պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ: Օրինականության սկզբունքը պահանջում է, որ պետական ամեն մի օղակ, ամեն մի աշխատակից իր գործունեության ընթացքում դրսևորի բացառապես իրավաչափ վարքագիծ: Վերջիններիս կողմից օրինականության ամեն մի խախտում խարխլում է պետության հեղինակությունը, վնասում նրա լեգիտիմությանը:

**Հրապարակայնություն և թափանցիկություն:** Տեղեկատվական թափանցիկությունը, բացախսությունը, կառավարական քաղաքականության կանխատեսելիությունը ժողովրդավարական գործընթացի կարևորագույն բաղադրատարրերն են, առանց որոնց ժողովրդաիշխանությունից մնում են միայն արտաքին ձևերը: Չևն առանց բովանդակության անհետաքրքիր է ընտրողների համար: Ուստի շատ կարևոր է պետության և նրա մարմինների հրապարակային գործունեությունը:

Պետական գործունեության չափից դուրս գաղտնիությունը խախտում է մարդու տեղեկատվական իրավունքները: Դա մեզ համար ունի սկզբունքային նշանակություն, քանի որ ավանդաբար բնակչությանը բնորոշ է անվստահությունն իշխանության նկատմամբ, ինչը կարելի է հաղթահարել միայն մեկ ճանապարհով՝ պետական ապարատի աշխատանքի մասին տեղեկության հանրամատչելիությամբ:

Տեղեկատվական թափանցիկության, կառավարական քաղաքականության հրապարակայնության երաշխիքը մարդու տեղեկատվական իրավունքներն են:

**Արհեստավարժության սկզբունքը:** Պետության կառուցակարգի զանազան օղակների աշխատակիցները պետք է լինեն իրենց ոլորտի որակյալ մասնագետներ, այսինքն՝ անձինք, որոնց համար կառավարչական աշխատանքը համարվում է մասնագիտություն: Պետական կառույցների համալրումն արհեստավարժ աշխատակիցներով բարձրացնում է այդ կառույցների ընդունակությունը որակով լուծելու հանրային կառավարման խնդիրները: Ոչ արհեստավարժ աշխատակիցներով համալրված պետական կառուցակարգն ունակ չէ լուծելու հասարակական բարդ հիմնախնդիրները:

Հայաստանում քաղաքացիներն ունեն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության և քաղաքացիական աշխատանքի ընդունվելու իրավունք: Հանրային ծառայությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրների ու գործառույթների իրականացմանն ուղղված մասնագիտական գործունեություն է: Այդ իրավունքը չի գործում ինքնաբերաբար: Նախ և առաջ անձը պետք է ունենա հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնելու իրավունք: Օրինակ՝ քաղաքացիական ծառայության իրավունք ունի

անձը, որը համապատասխանում է տվյալ պաշտոնի անձնագրին, տիրապետում է հայերենին և 18 տարեկան է: Այնուհետև նա պետք է մասնակցի ծառայության պաշտոն զբաղեցնելու մրցույթին և համապատասխան գիտելիքներ ու հմտություններ ցուցաբերելու դեպքում՝ հաղթելով մրցույթը, նոր միայն նշանակվի պաշտոնի:

### 3. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ



Պետական մարմինները բազմազան են: Ըստ իրենց կողմից իրականացվող խնդիրների պետական մարմինները կարելի է բաժանել երեք խմբի՝ **օրենսդիր, գործադիր, իրավապահպան (դատական)**: Պետական մարմինների համակարգում յուրահատուկ դեր է խաղում նախագահը: Նա՝ որպես պաշտոնատար անձ, դուրս է բոլոր երեք տեսակի մարմինների շրջանակից և գործում է անկախ: Նախագահն ապահովում է բոլոր մարմինների բնականոն գործունեությունը, որի համար ունի համապատասխան սահմանադրական լիազորություններ:

Ըստ որոշումների ընդունման եղանակի պետական մարմինները լինում են **կոլեգիալ**, օրինակ՝ կառավարությունը, և **միանձնյա**, օրինակ՝ նախագահը, որն իրավական ակտերն ընդունում է միանձնյա:

Ըստ պետական մարմինների ստորակարգության մեջ գրաված դիրքի պետական մարմինները բաժանվում են **կենտրոնական և տեղական մարմինների**: Կենտրոնական են, օրինակ՝ կառավարությունը, հանրապետության նախագահը: Տեղական են, օրինակ՝ մարզպետը և մարզպետարանը:



#### Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է պետության կառուցակարգը:
2. Ի՞նչ է պետական մարմինը:
3. Ի՞նչ հատկանիշներով է օժտված պետական մարմինը:
4. Որո՞նք են պետության կառուցակարգի սկզբունքները:
5. Ի՞նչ կապ կա ժողովրդասիրականության և պետության կառուցակարգի միջև:
6. Ի՞նչ նշանակություն ունի պետության կառուցակարգի գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը:
7. Ի՞նչ նշանակություն ունի արհեստավարժությունը պետության կառուցակարգի համար:
8. Պետական մարմինների ի՞նչ տեսակներ գիտեք:

**Ինքնուրույն աշխատանք:** Ուսուցչի բաշխմամբ պատրաստեք զեկուցումներ հետևյալ թեմաներով. «Լանի թագավորության կառուցակարգը», «Արտաշեսյան Հայաստանի պետական կառուցակարգը», «Արշակունյաց Հայաստանի պետական կառուցակարգը», «Քաղատունյաց Հայաստանի պետական կառուցակարգը»:

## ԳԼՈՒԽ 43. ՊԵՏԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉԱՉԵՎԸ

### 1. «ՊԵՏԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉԱՉԵՎ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

**Պետաքաղաքական վարչաձևը հանրային իշխանության իրականացման միջոցների, եղանակների և հնարքների համակցությունն է, որոնց հավաքական գործողության հետևանքը ժողովրդավարության փաստական մակարդակն է:**

Պետաքաղաքական վարչաձևը բնութագրելու համար հիմք կարող են ծառայել զանազան գործոններ: Վերջիններս պետաքաղաքական վարչաձևի տեսակը բացահայտելու չափանիշներ են, որոնք ընդունված է անվանել «պետաքաղաքական վարչաձևի հատկանիշներ»: Պետական իշխանության իրականացման եղանակները և միջոցները կարող են լինել բազմազան: Նշանակում է՝ անհրաժեշտ է ունենալ ընդհանուր չափորոշիչներ, որոնց օգնությամբ մենք կարող ենք արձանագրել պետաքաղաքական վարչաձևի այս կամ այն տեսակին պատկանելությունը: Օրինակ՝ քաղաքացիների նկատմամբ իրավական կարգավորումն իր բնույթով կարող է լինել երկու տեսակի՝ թույլատվական-խթանող և արգելող-սահմանափակող: Ակնհայտ է, որ եթե պետության մեջ իրավական կարգավորումն իր բնույթով ավելի շատ թույլատվական-խթանող է, ուրեմն պետական իշխանությունն ունի ժողովրդավարական բնույթ, և, ընդհակառակը, եթե իրավական կարգավորման եղանակը գերազանցապես արգելող-սահմանափակող է, ապա պետական իշխանությունը և նրա վարչաձևը հակաժողովրդավարական են:

**Պետաքաղաքական վարչաձևի հատկանիշներն են.**

- գաղափարական, քաղաքական, տնտեսական բազմազանություն,
- անմիջական ժողովրդաիշխանության իրականացման աստիճանը,
- պետական մարմինների ձևավորմանը ժողովրդի մասնակցության աստիճանը, ինչպես նաև այդպիսի ձևավորման եղանակները և կարգը,
- մարդու իրավունքների իրական լինելու և երաշխավորվածության աստիճանը,
- հրապարակայնության և պետական ապարատի թափանցիկության աստիճանը,
- պետական իշխանության երեք ճյուղերի միջև իրավասության բաշխումը և դրանց փոխհարաբերությունների բնույթը,
- պետական որոշումներ ընդունելիս փոքրամասնության շահերի հաշվառումը,
- պետական իշխանություն իրականացնելիս որոշակի եղանակների գերակշռությունը (համոզում, հարկադրանք և այլն),
- իրավունքի դերը հասարակական և պետական կյանքում և օրենքի գերակայության աստիճանը,
- հասարակության մեջ ուժային պետական կառույցների քաղաքական և իրավական կարգավիճակը,


- պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու իրական կառուցակարգերի գոյությունը և այլն:

Պետաքաղաքական վարչաձևի հատկանիշների նշանակությունը այն է, որ դրանց օգնությամբ, դրանց դրսևորման բացահայտման միջոցով որոշվում է, թե կոնկրետ երկրի պետաքաղաքական վարչաձևն ինչպիսին է:

***Մտորումներ:** Փորձե՛ք ինքնուրույն մեկնաբանել պետաքաղաքական վարչաձևի վերը քվարկված հատկանիշները և դրանք համադրե՛ք մեր հասարակության հետ՝ դրսևորման աստիճանը որոշելու համար:*

**2. ՊԵՏԱՔԱԳԱՔԱԿԱՆ ՎԱՐՉԱՁԵՎԻ ՏԵՄԱԿՆԵՐԸ**

Ելնելով կառավարման եղանակում ժողովրդավարական և բռնատիրական միջոցների հարաբերակցությունից՝ պետաքաղաքական վարչաձևը կարելի է դասակարգել նախ երկու տեսակների՝ վերջիններիս շրջանակում առանձնացնելով տարատեսակներ: Դասակարգման հիմնական չափանիշը պետաքաղաքական վարչաձևի հատկանիշների ժողովրդավարականության աստիճանն է:



**Հակաժողովրդավարական պետաքաղաքական ռեժիմի բնութագրերը:** Հակաժողովրդավարական ռեժիմն այս կամ այն տեսքով ձևավորվում է այնտեղ, որտեղ չկան բավարար չափով զարգացած քաղաքացիական հասարակություն և իրավական պետություն, իրավունքի և օրենքի գերակայություն, մարդու իրավունքների պաշտպանության և իրականացման երաշխիքներ: Այստեղ պետական իշխանությունը կամայական է, անսանձ, անվերահսկելի:

Հակաժողովրդավարական վարչաձևի պայմաններում պետությունը, ի դեմս տարբեր մարմինների, ճնշում է անհատին, ոտնահարում է նրա իրավունքները, արգելակում է նրա ազատ զարգացումը: Հակաժողովրդավարական ռեժիմների դեպքում իրականում գործում է պետության գերակայությունն իրավունքի նկատմամբ, որը կամայականության հետևանք է:

Հակաժողովրդավարական ռեժիմը բնութագրվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտների նկատմամբ պետության ամբողջական (տոտալ) վերահսկողությամբ: Այդպիսի պետությունում սահմանվում է մեկ կուսակցության դիկտատուրա, որը փաստորեն իրականացնում է բոլոր պետական գործառնությունները՝ ունենալով չսահմանափակված լիազորություններ:

Հակաժողովրդավարական ռեժիմն անտեսում է ազգային փոքրամասնությունների շահերը: Ազգային փոքրամասնությունները գործնականում զրկված են իրենց ներքին գործերը լուծելու ինքնուրույնությունից, քանի որ այդ հարցերն ամբողջովին գտնվում են կենտրոնական իշխանությունների իրավասության ներքո:

Հակաժողովրդավարական պետությունը հաշվի չի առնում բնակչության կրոնական համոզմունքների առանձնահատկությունները: Այն լիովին ժխտում է կրոնական աշխարհայացքը կամ նախապատվությունը տալիս է կրոններից մեկին՝ արգելելով և ճնշելով իրեն անցանկալի բոլոր կրոնական հոսանքները:

**Ժողովրդավարական պետաքաղաքական վարչաձևի բնութագրերը:** Ժողովրդավարական պետաքաղաքական վարչաձևերի պատմական տարատեսակներն են անտիկ աշխարհի ժողովրդավարություններից սկսած մինչև արդի ժողովրդավարական պետաքաղաքական վարչաձևերը: Արդի վարչաձևերը լինում են **ազատական-ժողովրդավարական** և **սոցիալական-ժողովրդավարական**:

Ժամանակակից իրավական պետության ու քաղաքացիական հասարակության պայմաններում ժողովրդավարական-ազատական ռեժիմը ենթադրում է մարդու բնական իրավունքների լայն շրջանակ, իրավական օրենքի գերակայություն, իշխանությունների բաժանում, գաղափարական ու քաղաքական բազմաձևության հաստատում, ժողովրդաիշխանության իրականացում, պետական իշխանության գործունեության նկատմամբ հասարակական հսկողություն: Այսպիսով՝ ազատական-ժողովրդավարական ռեժիմները կազմավորվում են իրավական պետություններում: Նրանք բնութագրվում են պետական իշխանության իրականացման այնպիսի եղանակներով, որոնք իրականորեն ապահովում են անհատի ազատ զարգացումը, նրա օրինական իրավունքների և շահերի փաստացի պաշտպանությունը:



Բռնագաղթված հայերը  
Հալեպում



Ստալինյան ճամբար



Ֆաշիստական ճամբար

Սակայն ազատական վարչաձևը, այսինքն՝ միայն իրավական պետաքաղաքական վարչաձևը, զարգացմանը և հարստության կուտակմանը զուգընթաց, հանգեցնում է հասարակության գույքային շերտավորմանը, նրա բևեռացմանը, ինչը հղի է սոցիալական պայթյունով: Միայն ազատական ռեժիմը բավարար չէ լիարժեք ժողովրդավարության հաստատման համար: Հասարակությանը նետվում է մարտահրավեր՝ շարունակել՝ անհատական ազատության ազատական սկզբունքի կիրառումը, թե՞ գերապատվությունը տալ սոցիալական հավասարության սկզբունքին, որը պետությունից պահանջելու էր «գիշերային պահակի» դերից անցնել քաղաքացիական հասարակության ինքնավար ոլորտներին (սոցիալական, տնտեսական, մշակութային, բնական ռեսուրսներ) միջամտելու քաղաքականությանը: Այդ մարտահրավերի պատասխանն ազատական-իրավական պետությունը սոցիալական դարձնելու պահանջն էր՝ որպես մարդասիրական պետություն (*տե՛ս հաջորդ դասը*):

#### Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է պետաքաղաքական ռեժիմը:
2. Ի՞նչ են պետաքաղաքական վարչաչեի հատկանիշները, և ո՞րն է դրանց նշանակությունը:
3. Պետաքաղաքական վարչաչեի ի՞նչ հատկանիշներ գիտեք:
4. Ի՞նչ է ժողովրդավարական պետաքաղաքական վարչաչեը:
5. Ի՞նչ է հակաժողովրդավարական պետաքաղաքական վարչաչեը, և որո՞նք են դրա հատկանիշները:
6. Ժողովրդավարական պետաքաղաքական վարչաչեի ի՞նչ տեսակներ կան:
7. Որո՞նք են ազատական-ժողովրդավարական և սոցիալ-ժողովրդավարական վարչաչեների տարբերությունները:

**Ինքնուրույն աշխատանք:** Ուսուցչի բաշխմամբ պատրաստեք համառոտ գեկուցում հետևյալ բեմաներով. «Ինքնակալություն», «Ամբողջատիրություն», «Բռնապետություն», «Միահեծանություն»:


### ԳԱՍ 44. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

#### 1. «ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Մարդը (քաղաքացին) և պետությունը (իշխանությունը) կապված են առաջնային իրավունքներով ու պարտականություններով: Մարդը պարտավոր է ենթարկվել պետական իշխանությանը, լինել օրինահպատակ, իսկ պետությունն իրավունք ունի մարդուն հարկադրել ենթարկման: Բայց միևնույն ժամանակ մարդը (քաղաքացին) օժտված է ի ծնե անօտարելի իրավունքներով: Իրավունքներ, որոնք մարդուն երաշխավորում են ազատության նվազագույնը հասարակության մեջ և պետության հետ հարաբերություններում: Այս դեպքում մարդու բնական իրավունքներին համապատասխանում է պետության պարտականությունը՝ ապահովել, պահպանել, պաշտպանել, երաշխավորել դրանք: Սա ազատության նվազագույն չափն է, որից այն կողմ իշխանությունն արդեն պետական չէ, այլ բռնապետական: Ազատության այդ նվազագույն չափի կենսագործման առաջին նախադրյալն իրավական պետության հայեցակարգի կենսագործումն է:



**Իրավական պետությունը պետական իշխանության կազմակերպման կառույց և անհատի, հասարակության ու պետության փոխկապվածության հատուկ իրավական ձև է, որում պաշտոնապես ճանաչված, ամրագրված և պահպանված են երեք սկզբունքներ՝ մարդու բնական իրավունքները, իրավական օրենքների գերակայությունը, իշխանությունների բաժանումը և հավասարակշռումը:**



Իրավական պետության ողջ կառույցի իմաստը, ի վերջո, մարդն է, որովհետև այն կոչված է բնական իրավունքներով օժտված մարդուն դարձնել ազատ անհատ, իրավունքի և հասարակության լիիրավ, իրավահավասար, արժանապատվությամբ օժտված սուբյեկտ:

## 2. ԱՌՅԻՎԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**Շուկայական տնտեսությունը և պետությունը:** Շուկայական տնտեսության պայմաններում պետության և մարդու փոխհարաբերության հարցը եղել և մնում է մարդկային մտքի կենտրոնական հարցերից: Այն շոշափում է հասարակության կարևորագույն սկզբունքները՝ ազատությունը և սոցիալական հավասարությունը: Իրավական պետության ձևավորումը կարելի է համարել մարդկային քաղաքակրթության մեծագույն նվաճումներից մեկը: Այն լուծեց մարդու «իրավունքների առաջին սերնդի» հիմնախնդիրը և ապահովեց մարդու ազատությունն ու **ձևական (իրավական) հավասարությունը:**



Սակայն ինդուստրիալ հասարակությունն իր զարգացման ընթացքում չկարողացավ լուծել մարդկանց սոցիալական (փաստական) հավասարության խնդիրը: Առաջացավ հակասություն իրավական և **սոցիալական հավասարության** սկզբունքների միջև: XIX դարի վերջերից զարգացմանը և հարստության կուտակմանը զուգընթաց տեղի էր ունենում ինդուստրիալ հասարակության գույքային շերտավորում, նրա բևեռացում, ինչը հղի էր սոցիալական պայթյունով:

Հասարակությանը նետված էր մարտահրավեր՝ շարունակել՝ անհատական ազատության ազատական սկզբունքի կիրառումը, թե՞ գերապատվությունը տալ սոցիալական հավասարության սկզբունքին:

**Իրավական պետության բերությունները:** Ընդունված է իրավական պետությունը համարել «գիշերային պահակի» դեր կատարող պետություն: Այդպիսի մոտեցման դեպքում պետությունը չի միջամտում քաղաքացիական հասարակության գործերին: Դա դասական ազատականության տեսանկյունից արգելք է ազատ ձեռներեցության ու մրցակցության համար, ոտնձգում է սեփականատեր-հարկատուի իրավունքները: Սակայն ինչպես ցույց տվեց պատմական փորձը, XIX դարի իրավական պետությունը չապահովեց համընդհանուր բարեկեցությունը, չկասեցրեց



աղքատությունը և հասարակական հակամարտությունները: Հույսերը, որ ազատ, ինքնակարգավորվող քաղաքացիական հասարակությունն ինքնաբերաբար կհանգեցնի հասարակության ծաղկմանը և հասարակության բոլոր անդամների նպատակների իրացմանը, չարդարացան: Ազատ մրցակցության հետևանքով հարստությունը կենտրոնացավ ունևոր փոքրամասնության մոտ, իսկ հասարակության մեծ մասը հայտնվեց չքավորության ճիրաններում:

**Սոցիալական պետության գաղափարի առաջացումը և կենսագործումը:** Արդեն XIX դարի վերջին դասական ազատականությունը քայլ առ քայլ հրաժարվեց «պետության չեզոքության» սկզբունքից, իսկ իրական պետությունը հասարակական ճնշման ազդեցության տակ սկսեց միջամտել քաղաքացիական հասարակության տնտեսական և սոցիալական ոլորտների գործընթացներին:

«Սոցիալական պետություն» հասկացությունը ծագել է XIX դարի վերջին և XX դարի սկզբին: Մեծ տնտեսական ճգնաժամի տարիներին մշակվեց նոր-ազատական գաղափարախոսությունը և դրա վրա կառուցված «**ընդհանուր բարեկեցության պետության**» տեսությունը: Այն առաջարկեց հրաժարվել պետության նկատմամբ «գիշերային պահակի» ազատական մոտեցումից՝ հիմնավորելով պետաիրավական միջոցներով սոցիալ-տնտեսական հակասությունների հաղթահարման անհրաժեշտությունը և ուղիները: Չմերժելով քաղաքացիական հասարակության ինքնակարգավորումը, այդ տեսությունը պահանջում էր այնպիսի պետական միջամտություն, որը կուղղեր շուկայի ինքնակարգավորման թերությունները, կկանխեր տնտեսական ճգնաժամերը և կապահովեր հասարակական խաղաղություն:

Ամերիկյան մտածող Ջ. Հելբրեյտը մշակեց «**ժողովրդական կապիտալիզմի պետություն**» հասկացությունը, որը նա բնորոշում էր որպես հասարակության բոլոր անդամների համար կյանքի բարձր մակարդակ ապահովելուն, ռեսուրսների արդար բաշխմանը և սոցիալական անհավասարության վերացմանն ընդունակ պետություն:

Մայրցամաքային Եվրոպայում XX դ. 50-ական թթ. զարգացվեց «**սոցիալական պետության**» տեսությունը, որը ելնում է պետության համաժողովրդական բնույթից: Այդպիսի պետությունը կառուցված է հասարակությունը միավորող արժեքների շուրջ: Դրանք են մարդու իրավունքները, սեփականությունը, սոցիալապես կողմնորոշված շուկայական տնտեսությունը, ժողովրդավարությունը, բազմակարծությունը, սոցիալական հավասարությունը, համերաշխությունը:

Երկրորդ աշխարհամարտից հետո զարգացած երկրների մեծ մասում իշխանության եկան նոր քաղաքական ուժեր, որոնք կենսագործեցին սոցիալական պետության գաղափարները: Չնավորվեց պետություն, որը երաշխավորում է ոչ միայն ազատությունը, անվտանգությունը, սեփականությունը, այլև ապահովում է սոցիալական երաշխիքներ (հատկապես զբաղվածության, կրթության, առողջապահության ոլորտներում): Դրանք բույլ են տալիս հասարակության անդամների մեծ մասին ավելի արդյունավետորեն հասնել բարեկեցության՝ սեփական ակտիվության հաշվին: Սոցիալական պետությունը ձևավորվեց առանձին մասնակի քայլերի միջոցով՝ աշխատավարձի նվազագույն չափի, գործազրկության և այլ նպաստների սահմանում: Ի վերջո, դրանք վերափոխվեցին պետության պարտականության՝ յուրաքանչյուր քաղաքացու համար ապահովել կյանքի արժանապատիվ մակարդակ:

**Սոցիալական պետության հասկացությունը:** Սոցիալական է այն պետությունը, որը ձգտում է իր բնակչության համար ապահովել արժանապատիվ և անվտանգ գոյության պայմաններ, աշխատանք, բարենպաստ կենսական միջավայր, բոլորի համար մոտավորապես միատեսակ կենսական հնարավորություններ:

Սոցիալական պետությունը գույքային և այլ սոցիալական տարբերությունները հարթեցնում է ազգային եկամտի մի մասը հոգուտ անապահովների վերաբաշխելու միջոցով: Այն ստեղծում է սոցիալական ապահովագրության և բոլորի համար մատչելի կրթական, առողջապահական համակարգեր, իրականացնում է մշակույթի զարգացման, զբաղվածության ապահովման, աշխատավորների իրավունքների պահպանության ծրագրեր, սոցիալական օգնություն է մատուցում գործազուրկներին, մայրությանը, մանկությանը, տարիքավորներին, երիտասարդությանը և այլն:

**Սոցիալական պետության կայացման հիմնախնդիրները Հայաստանում:** Հետխորհրդային տարածքում կատարված բարեփոխումներն իրենց ներդրումն ունեցան Հայաստանում մարդու ազատության զարգացման համար: Հաստատվեցին սեփականության իրավունքը, ժողովրդավարական ազատությունները և այլն, այսինքն՝ նախկին սոցիալիստական պետությունը վերածվեց իրավական պետության: Բայց մյուս կողմից այդ բարեփոխումների արդյունքում խստորեն կրճատվեցին նախկին սոցիալիստական պետական սոցիալական երաշխիքները: Շատ տարածքներ և բնակչության խմբեր հայտնվեցին աղքատության վիճակում՝ «մեկնարկային» պայմանների անհավասարության, ավանդաբար առկա պաշտպանության բացակայության պատճառով:

**Մտորումներ:** Սոցիալիստական պետություն: Ի՞նչ գիտեք այդպիսի պետության մասին: Ինչո՞վ են նման և ինչո՞վ տարբեր սոցիալիստական և սոցիալական պետությունները: Ինչպիսի՞ սոցիալիստական պետություններ գիտեք:

Տեսցող շուկայական բարեփոխումները Հայաստանում չստեղծեցին իրական նախադրյալներ մարդկային զարգացման համար: Դրա պատճառները բազմաթիվ են՝ և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ բնույթի: Դրանցից մեկն էլ այն է, որ արդյունավետ չի լուծվել **շուկայական տնտեսության և գործունակ պետության միջև հավասարակշռություն** հաստատելու հիմնախնդիրը: Իսկ դա նշանակում է, որ մեր առջև կանգնած գերխնդիրները հայաստանյան քաղաքացիական հասարակության և սոցիալ-իրավական պետականության կայացումն է:


### Հարցեր

1. Ի՞նչ է իրավական պետությունը, և որո՞նք են դրա սկզբունքները:
2. Ի՞նչ մարտահրավերներ սպիայեցին հասարակությանն անցնել սոցիալական պետության հայեցակարգի կենսագործմանը:
3. Ի՞նչ քերություններ ունի իրավական պետությունը:
4. Ե՞րբ և որտե՞ղ առաջացան սոցիալական պետության գաղափարները:
5. Ի՞նչ է սոցիալական պետությունը:
6. Ի՞նչ խնդիրներ էր լուծում սոցիալական պետությունը:
7. Իրապես սոցիալակա՞ն է արդյոք Հայաստանի Հանրապետությունը:

## ԳԱՍ 45. ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐԸ

### 1. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Իշխանության կենտրոնացման սկզբունքը պետության կառուցակարգի կազմակերպման պատմականորեն առաջին եղանակն է: Օրինակ՝ Վանի թագավորությունը կրոնապետություն էր, որտեղ թագավորի ձեռքում էին կենտրոնացված հոգևոր և աշխարհիկ իշխանությունները: Թագավորն այստեղ օրենսդիրն էր, պետության գլուխը և բարձրագույն դատավորը: Այսպես, Վանի թագավորության հզորացման սկիզբը դրած Մարդուրի I թագավորը իրեն անվանում էր «տիեզերքի արքա»:



Սակայն պատմությունը ցույց է տվել, որ իշխանության կենտրոնացումը մեկ անձի կամ մարմնի ձեռքում վտանգավոր է: Այդպիսի պետությունում հաստատվում է մեկ անձի ինքնակալական իշխանություն: Այդպիսի պետական իշխանությունը կամայական է, անսանձ, անվերահսկելի: Արդյունքում այն դառնում է վտանգավոր մարդու և հասարակության համար, որովհետև ոտնահարում է նրանց իրավունքները, արգելակում է նրանց ազատ զարգացմանը:

Զարգացնելով բնական և անօտարելի իրավունքների տեսությունը՝ **Ֆրանսիացի լուսավորիչ Շ. Լ. Մոնտեսքիոն** (1689-1755) մարդու ազատությունը կապեց օրենքի հետ. «Ազատությունը իրավունքն է՝ անել ամենը, ինչը թույլատրված է օրենքով»: Որպես ազատության ապահովման երաշխիք նա առաջարկեց պետական իշխանությունը բաժանել երեք անկախ և իրար հակակշռող ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր և դատական:

Վաղ ազատական հեղափոխությունների հաղթարշավի շնորհիվ բնական իրավունքի տեսության դրույթներն անրագրվեցին օրենքներում: Իսկ նոր ստեղծված պետությունները կառուցվեցին իշխանությունների բաժանման սկզբունքով: Այդ գործում մեծ էր ԱՄՆ-ի 1787 թ. Սահմանադրության դերը, որը վիթխարի ազդեցություն թողեց հետագայում այլ երկրներում իշխանությունների բաժանման կայացման վրա:

Հայաստանի առաջին հանրապետության կառուցակարգում կենսագործված էր իշխանությունների բաժանումը՝ խորհրդարանական հանրապետության ձևով: Սակայն 1920 թ. Հայաստանում իշխանության եկան մեծամասնականները (բոլշևիկները), և հաստատվեց դիկտատուրա, որում իշխանության համակարգը կառուցված էր կենտրոնացման սկզբունքով: Մեծամասնականները հիմնադրեցին ոչնչով

չսահմանափակված և բրգաձև կենտրոնացված իշխանություն, որը կատարեց մարդու իրավունքների հրեշավոր խախտումներ:

Միայն Երրորդ հանրապետության հռչակմամբ իշխանությունների բաժանման սկզբունքի կենսագործումը ճանաչվեց անհրաժեշտ և իրագործվեց:

## 2. ԻՃԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԿՉՔՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Իշխանությունների բաժանման գլխավոր նպատակներից են ազատության և օրինականության ապահովումը, իշխանության չարաշահումների բացառումը: Դրանց կենսագործման համար անհրաժեշտ է կիրառել հետևյալ պահանջները.

**1. Պետական իշխանությունն անհրաժեշտ է բաժանել երեք ճյուղի:** Դրանցից յուրաքանչյուրն իրականացվում է պետական առանձին մարմինների միջոցով՝ օրենսդիր, գործադիր, դատական: Իշխանության բաժանումը բացառում է դրա կենտրոնացումը մեկ մարմնի ձեռքում կամ մեկի առավելությունը մյուսի նկատմամբ, ինչը կարող է հանգեցնել պետական իշխանության չարաշահման:

**Օրենսդիրը** ժողովրդի կողմից ընտրվող ներկայացուցչական մարմին է, որ կոչված է որոշելու հասարակության և պետության զարգացման ռազմավարությունը՝ օրենքներ ընդունելու ճանապարհով: Մյուս իշխանությունների նկատմամբ խորհրդարանը հանդես է գալիս որպես օրենսդիր իշխանության ինքնուրույն մարմին: Այն չի ենթարկված ոչ մի պետական մարմնի:

**Գործադիրը** զբաղվում է օրենքների կենսագործմամբ, ընթացիկ կառավարմամբ: Գործադիր իշխանությունը ենթաօրենսդրական իշխանություն է, որովհետև նրա գործունեությունը և ակտերը պետք է համապատասխանեն օրենքներին: Գործադիր իշխանության մարմինների համակարգը գլխավորում է կառավարությունը: Առանձին ոլորտների կառավարումն իրականացնում են նախարարությունները:


**Դատական իշխանությունը** հատուկ կազմակերպված անկախ մարմինների՝ դատարանների համակարգ է, որն զբաղվում է իրավունքի խախտումների վերաբերյալ վեճերի լուծմամբ, արդարադատության իրականացմամբ:

**2. Պետական իշխանության երեք ֆևերը ներկայացնող մարմինները պետք է լինեն միմյանցից հարաբերականորեն անկախ և ինքնուրույն:** Իշխանության երեք ճյուղերից յուրաքանչյուրն ունի Սահմանադրությամբ ամրագրված իր լիազորությունները, որոնք իրականացնում է ինքնուրույն: Օրինակ՝ խորհրդարանը, ընդունելով օրենքներ, որոնք պարտադիր են մյուս իշխանությունների համար, չպետք է խախտի նրանց ինքնուրույնությունը, յուրացնի դրանց լիազորությունները: Այդ իշխանությունները չեն գտնվում օրենսդիր մարմնի անմիջական ենթակայության տակ: Օրենսդիրը չպետք է փոխարինի գործադիր և դատական իշխանություններին, դուրս ելնի իր լիազորությունների շրջանակներից:

**3. Քացի բաժանումից, անհրաժեշտ է ապահովել իշխանության երեք ճյուղերի հավասարակշռությունը,** այսպես կոչված՝ «հակակշիռների և զսպիչների» համակարգերի միջոցով: Դրա իմաստն այն է, որ պետական նշված մարմիններից յուրա-

քանչյուրն ունի նաև այնպիսի լիազորություններ, որոնք հնարավորություն են տալիս հսկելու և ազդելու միմյանց վրա, համագործակցելու միմյանց հետ պետական կարևորագույն հարցերը վճռելիս: Օրինակ՝ մեր Սահմանադրությամբ ամրագրված են «հակակշիռների և զսպիչների» հետևյալ կառուցակարգերը. հանրապետության նախագահի իրավունքը՝ մերժում կիրառել խորհրդարանի օրենքների նկատմամբ, Ազգային ժողովի իրավունքը՝ հաղթահարել այդ մերժումը:

**4. Իշխանությունների բաժանման համակարգում յուրահատուկ դեր է խաղում նախագահը:** Նրա լիազորություններն առնչվում են երեք իշխանությունների հետ, սակայն նա՝ որպես պաշտոնատար անձ, դուրս է դրանցից և գործում է անկախ: Նախագահն ապահովում է



երեք իշխանությունների բնականոն գործունեությունը, որի համար ունի համապատասխան սահմանադրական լիազորություններ:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման արդյունքում պետական իշխանության կառույցը նմանվում է **հավասարակշռված եռաթև կշեռքի**: Եթե հանկարծ նժարներց որևէ մեկը փորձի խախտել հավասարակշռությունը, մյուսները, օգտագործելով իրենց լիազորությունները, կվերականգնեն հավասարակշռությունը:

### 3. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱԿԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ

Իշխանությունների բաժանման սկզբունքը կենսագործելու ընթացքում հնարավոր են դրանց անհավասարակշիռ տարանջատումը, հակակշիռների և զսպիչների ոչ արդյունավետ համակարգը և վերջապես ճյուղերից մեկի իրական գերակայությունը մյուսների նկատմամբ: Օրինակ՝ նախագահն իրեն բնորոշ լիազորությունների արդյունքում և գործող նախագահի անձնական հատկությունների շնորհիվ կարող է գերակշռել մնացած իշխանությունների նկատմամբ, նրանց դարձնել «**իր գրպանի գործիքները**»: Արդյունքում պետական կառավարման նույն ձևում այս կամ այն պետական մարմնի իրական կշիռը կարող է լինել տարբեր: Օրինակ՝ պետությունների կառավարման ձևը կարող է լինել միևնույնը՝ խորհրդարանական հանրապետություն, սակայն պետական կառավարման իրական հարաբերությունները կառուցված են այնպես, որ դրանից մեկի կառուցակարգում գերակայում է խորհրդարանը, իսկ մյուսում՝ կառավարությունը:

Այս դեպքում պետության ամեն մի կառավարման ձևի շրջանակում առաջ են գալիս իշխանությունների տարանջատման մի շարք տարատեսակներ: Օրինակ՝ խորհրդարանական հանրապետությունում հնարավոր են խորհրդարանական հավասարակշռված կառավարում, մենիշխանական խորհրդարանականություն, կաբինետի կամ կառավարության գերիշխանություն:

Նախագահական կառավարման ձևում ևս հնարավոր են իշխանության բաժանման տարբեր մոդելներ, օրինակ՝ նախագահի և խորհրդարանի զուգահեռ հավասարակշռված կառավարում կամ նախագահի մենիշխանական պետական կառավարում, երբ խորհրդարանը դառնում է նախագահի գրպանի գործիք:

Որպես օրինակ կարելի է վերցնել Մեծ Բրիտանիան: XVIII դարից սկսած այն խորհրդարանական միապետություն է: XIX դարում Մեծ Բրիտանիան համարվում էր խորհրդարանականության դասական երկիր, որում առաջատար դեր էր պատկանում խորհրդարանին: Կառավարությունը ձևավորվում էր խորհրդարանական ուժերի հարաբերակցության հիմքով և պատասխանատվություն էր կրում օրենսդիր մարմնի առջև: Կառավարությունը պետք է հրաժարական տար, եթե կորցնում էր Համայնքների պալատի վստահությունը: Թագավորական իշխանությունը հետին պլան էր մղված: Միապետի վերաբերյալ առաջ եկավ «Նա քաղավորում է, բայց չի կառավարում» ասույթը: XX դարի սկզբից այս երկրում տեղի ունեցավ կառավարության դերի ուժեղացում: Երկկուսակցական համակարգի պայմաններում կաբինետը, հենվելով խորհրդարանական մեծամասնության վրա, սկսում է աստիճանաբար իրեն ենթարկել Համայնքների պալատը՝ վերջինիս ըստ էության վերածելով կաբինետի կամքը կատարող խորհրդակցական մարմնի: Լորդերի պալատը՝ քաղավորի նախկին հենարանը, կորցնում է իր նշանակությունը, հատկապես ժառանգական պերերի ինստիտուտի վերացումից հետո: Խորհրդարանականությունը՝ որպես պետական կառավարման վարչաձև, արդեն չկա: Ըստ էության, պետության կառավարման ձևը դարձել է կաբինետային կառավարում, որը երբեմն անվանում են «մինիստրականություն»: Այսպիսով՝ կառավարման ձևը մնացել է միևնույնը, սակայն պետական կառավարման վարչաձևը փոխվել է:

### Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ է վրանգավոր իշխանության կենտրոնացման սկզբունքը:
2. Ե՞րբ և ո՞ւմ կողմից մշակվեց իշխանությունների բաժանման սկզբունքը:
3. Ինչպիսի՞ն էր իշխանությունների բաժանման սկզբունքի նախադրադիրը Հայաստանում:
4. Որո՞նք են իշխանությունների բաժանման սկզբունքի պահանջները:
5. Ո՞րն է իշխանությունների բաժանման սկզբունքի նպատակը:
6. Ի՞նչ դեր ունի նախագահն իշխանությունների բաժանման համակարգում:
7. Ինչո՞ւ պետք է իշխանությունների բաժանումը լինի հավասարակշռված:

**Ինքնուրույն աշխատանք:** Պատրաստե՛ք գեկուցում Շ.Լ. Մոնտեսքիոյի մասին:

## ԳԼՈՒԽ 46. ԻՐԱՎԱԿԱՆ ՕՐԵՆՔ

### 1. «ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՕՐԵՆՔ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ

«Իրավունք» և «օրենք» հասկացությունների հարաբերակցության հարցն իրավագիտության բարդ հիմնախնդիրներից մեկն է: Որպեսզի հասկանանք խնդրի էությունը, փորձենք առաջին հերթին առանձին-առանձին պարզել այդ հասկացությունների իմաստը, այնուհետև կանգ առնենք դրանց հարաբերակցության վրա:

**Օրենքը** պետական իշխանության օրենսդիր մարմնի կամ համաժողովրդական հանրաքվեի միջոցով ընդունված և բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտ է (*Վերհիշե՛ք 6-րդ դասը*):

«**Իրավունք**» հասկացության ամենատարածված իմաստը հետևյալն է. իրավունքը հասարակական հարաբերությունների կարգավորման պետական համակարգ է (*Վերհիշե՛ք 1-ին դասը*): Հետևաբար, իրավունքի գլխավոր հատկանիշը հասարակական հարաբերությունների կարգավորիչ լինելն է:

Անվիճելի է, որ իրավական կարգավորումն իրականացնում է պետությունը: Խնդիրն առաջանում է այն հիմնահարցից, թե պետությունն ինչպես է ստեղծում իրավունքը: Պետությունն ազատորե՞ն, առանց որևէ սահմանափակման ստեղծում, հորինում է իրավունքը, ամրագրում այն օրենքներում և պարտադրում հասարակությանը, թե՞ պետությունն օրենք ստեղծելիս կողմնորոշվում է որոշակի չափորոշիչներով: Հետևաբար, պետությունն ազատ չէ օրենքը ստեղծելիս: Նա ղեկավարվում է իրավունքով, այսինքն՝ բնական օրինաչափություններով:

Այսպիսով՝ «իրավունքի» և «օրենքի» հարաբերակցության հիմնահարցում առաջ են գալիս երկու իրար հակադիր մոտեցումներ: Առաջին մոտեցումը նույնացնում է իրավունքը և օրենքը, նրանց միջև տարբերություն չի դնում: Այդ մոտեցումն անվանում են **լեգիտական (օրենքական)**: Երկրորդ մոտեցումը տարբերում է իրավունքն օրենքից և կոչվում է **իրավաբանական**:

**Իրավունքի և օրենքի հարաբերակցության օրենքական մոտեցման տեսանկյունից** իրավունքը նույն ինքը օրենքն է: Օրենքից դուրս և առանց օրենքի չկա իրավունք:

Իրավունքի և օրենքի հարաբերակցության նման վարկածը շատ թերի է: Պնդելով, որ օրենքների բովանդակությունը որոշում է պետությունը՝ այս տեսությունը զերագնահատում է նրա դերը հասարակության կարգավորման գործում: Բայց չէ՞ որ պետությունը կարող է չսահմանել «լավ օրենքներ», այդպիսով խոչընդոտել հասարակության զարգացումը: Համարելով իշխանությանը ոչնչով չսահմանափակված իրավաստեղծ՝ օրենքականությունը նախադրյալ է հակաժողովրդավարական պետության ձևավորման համար:

Օրենքականության մոտեցման մեջ չկա իրավունքը կամայականությունից, իրավական օրենքը հակաիրավական օրենքից տարբերելու որևէ չափանիշ: Պե-

տական իշխանությունն իր հրամանով ծնուն է իրավունք: Հետևաբար, այն, ինչ հրամայում է իշխանությունը, իրավունք է: Դրանով իսկ իրավունքը դառնում է սուբյեկտիվ և հայեցողական:

**Իրավունքի և օրենքի հարաբերակցության իրավաբանական մոտեցումը** տարանջատում է «իրավունքը» և «օրենքը»: Իրավունքը դիտարկվում է օբյեկտիվորեն գոյություն ունեցող էություն՝ իրեն հատուկ բովանդակությամբ, իսկ օրենքը՝ դրա դրսևորման, ամրագրման ձևը: Իրավունքը նախ և առաջ գոյություն ունի ի դեմս բնական իրավունքի: Հետևաբար, իրավունքը և օրենքը հոմանիշներ չեն: Իրավունքը էությունն է, իսկ օրենքը՝ էության դրսևորման ձևը: «Իրավունքի» այդպիսի լայն հասկացության դեպքում ակնհայտ է, որ իրավունքի բովանդակությունը ստեղծվում է հասարակության կողմից, իսկ դրան նորմատիվ ձև տալը, այսինքն՝ «օրենքի աստիճան բարձրացնելը» կատարում է պետությունը:

**Իրավաբանական իրավահասկացողության վարկած է բնական իրավունքի տեսությունը:** Այն տարբերակում է բնական իրավունքը (չգրված իրավունք) պետության կողմից սահմանված օրենսդրությունից (գրված իրավունք): Համաձայն այդ տեսության՝ բոլոր մարդիկ ի ծնե օժտված են անօտարելի և անքակտելի բնական իրավունքներով, որոնք արդյունք են բնական օրինաչափությունների և պայմանավորված են մարդու ու հասարակության բնույթով: Հետևաբար՝ դրանք կախված չեն պետության կամքից: Բնական իրավունքը, լինելով չգրված իրավունք, չափանիշ է օրենքների համար: Պետության ընդունած օրենքները պետք է բխեն բնական իրավունքից, համապատասխանեն դրան: Հետևաբար՝ օրենքի կոչումը բնական իրավունքի ապահովումն է, դրա պաշտպանությունը:

## 2. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՈՉ ԻՐԱՎԱԿԱՆ ՕՐԵՆՔ


Իրավունքի և օրենքի տարբերակման մոտեցման դեպքում հնարավոր են դառնում երկու իրավիճակներ: Առաջին՝ օրենքը համապատասխանում է իրավունքին կամ նրա պահանջներին: Այդպիսի օրենքն անվանում են «**իրավական օրենք**»: Երկրորդ՝ օրենքը չի համապատասխանում իրավունքին կամ նրա պահանջներին: Այդպիսի օրենքն անվանում են «**ոչ իրավական օրենք**»:

**Իրավունքի և օրենքի տարբերակումն ունի առաջադիմական նշանակություն:** Եթե իրավունքն ու օրենքը դիտարկվում են որպես հոմանիշներ, ապա ստացվում է, որ այն, ինչ հրամայեց պետությունը, իրավունք է: Պետությունն այդ դեպքում կարող է մարդուն և հասարակությանը հրամայել անեն ինչ: Եթե իրավունքը չի նույնանում օրենքի հետ, ապա իրավունքը դառնում է օրենքի որակի, ժողովրդավարականության չափանիշ, պետության գործունեության կողմնորոշիչ: Այս դեպքում մարդիկ կարող են պետությունից պահանջել «իրավական օրենքներ»:

Այսպիսով՝ իրավաբանական իրավահասկացողությունն ունի պատմականորեն հաստատված առավելություններ կամ արժանիքներ: Տարբերելով իրավունքը և օրենքը՝ այն առաջ է քաշում «ոչ իրավական օրենքի» գաղափարը՝ գտնելով, որ

դրանք պետք է վերացվեն կամ համապատասխանեցվեն բնական իրավունքին, այսինքն՝ իրավահավասարությանը, ազատությանը, արդարությանը:

Օրենքը դիտարկելով իրավունքի դրսևորման ձև՝ իրավաբանական մոտեցումն իդենս իրավունքի տեսնում է կողմնորոշիչ պետության և նրա մարմինների համար: Վերջիններս օրենքները ստեղծելիս և կիրառելիս պետք է հետևեն իրավունքին, ինչը երաշխիք է, որ պետությունը չի դառնա կամայականության աղբյուր:



**Ինքնուրույն աշխատանք:** Համեմատեք վերը բերված Սահմանադրության դրույթները ներկա Սահմանադրության 2, 4 և 30 հոդվածների հետ, և վեր հանեք 1922 թ. Սահմանադրության «ոչ իրավական» դրույթները:

**Օրենքների իրավականությունը միայն կանխավարկած է:** Իրականում օրենքները ոչ միշտ են իրավական: Որպես օրենքների իրավականության ապահովման երաշխիք գոյություն ունեն պետության գործունեությանը ներկայացվող պահանջներ: Դրանք խարսխված են մարդու բնական իրավունքների հայեցակարգի վրա: Այդ պահանջներից են, օրինակ՝

- 1) Մարդու իրավունքները բարձրագույն արժեքներ են:

- 2) Մարդու իրավունքներն ազատության, արդարության, հավասարության հիմքն են:
- 3) Մարդու իրավունքների ճանաչումը, պահպանումը, ապահովումը, պաշտպանությունը պետության պարտականությունն է:
- 4) Պետությունը սահմանափակված է մարդու իրավունքներով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:
- 5) Մարդու արժանապատվությունը հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:
- 6) Մարդու իրավունքների սահմանափակումները չեն կարող աղավաղել այդ իրավունքների էությունը:
- 7) Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, այլ ներպետական իրավական ակտերը՝ Սահմանադրությանը և օրենքներին:

**Ոչ իրավական օրենքների դեմ պայքարի երաշխիքներ:** Իրավական, ժողովրդավարական հասարակության մեջ անհատը և հասարակական միավորումները կարող են հասնել ոչ իրավական օրենքները և այլ ակտերն անվավեր ճանաչվելուն: Այսինքն՝ օրենքների իրավականության կանխավարկածն ունի իր երաշխիքները, որոնք բազմազան են: Այդպիսի երաշխիքներից են՝

- ա) ժողովրդաիշխանության սկզբունքը, հատկապես դրա անմիջական ձևերը,
- բ) իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը,
- գ) գործադիր իշխանության և նրա ակտերի ենթաօրենսդրականությունը,
- դ) սահմանադրական և ընդհանուր դատական վերահսկողությունը,
- ե) իրավաստեղծ գործունեության բարդ և ձևականացված բնույթը,
- զ) մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը,
- է) ոչ իրավական օրենսդրության դեմ պայքարի միջազգային համակարգերը:

**Մտորումներ:** Այս երաշխիքները դուք սովորել եք առանձին-առանձին անցյալ դասերում: Փորձե՛ք ինքնուրույն մեկնաբանել դրանցից ամեն մեկի դերը «ոչ իրավական օրենքների» դեմ պայքարի կառուցակարգում: Ուրիշ էլ ի՞նչ նման երաշխիքներ գիտեք:

### Հարցեր

1. Ո՞րն է «իրավունք» և «օրենք» հասկացությունների հարաբերակցության հիմնախնդիրը:
2. Իրավունքի և օրենքի հարաբերակցության ի՞նչ մտերցումներ կան:
3. Ի՞նչ է օրենքականությունը, և որո՞նք են դրա թույլ կողմերը:
4. Ի՞նչ է իրավունքի և օրենքի հարաբերակցության իրավաբանական մտերցումը:
5. Ի՞նչ են իրավական և ոչ իրավական օրենքները:
6. Ինչո՞վ է առաջադիմական իրավաբանական իրավահասկացությունը:
7. Որո՞նք են օրենքների իրավականության ապահովման սահմանադրական պահանջները:
8. Ոչ իրավական օրենքների դեմ պայքարի ի՞նչ երաշխիքներ գիտեք:

## ԳԼՈՒԽ 8. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

### ԳՒԱՍ 47. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

#### 1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

**Քաղաքական կուսակցություններն արդի հասարակության քաղաքական համակարգի անբաժանելի մաս են:** Քաղաքական կուսակցությունն ընդհանուր նպատակներով ու շահերով միավորված մարդկանց որոշակի խումբ է: Կուսակցությունները կարևոր դեր ունեն պետության ու քաղաքացիական հասարակության միջև կապ հաստատելու և քաղաքական բնագավառում բնակչության տարբեր խավերի ու խմբերի շահերը ներկայացնելու գործում: Քաղաքական բնագավառում բնակչության, բոլոր քաղաքացիների շահերը ներկայացնելը, այն է՝ ժողովրդի ինքնիշխանության իրագործումը, ինչպես հայտնի է, կատարվում է ընտրական համակարգի և ընտրական գործընթացի միջոցով: Քաղաքական կուսակցություններն այդ շահերը ներկայացնող գործիքներ են: Հետևաբար, կուսակցությունները հասարակական-քաղաքական կազմակերպություններ են, որոնք պայքարում են իշխանության համար կամ իշխանությունն իրագործելուն մասնակցության համար:

**«Չձևակերպված» և «ձևակերպված» կուսակցություններ:** Ժամանակակից «չձևակերպված» քաղաքական կուսակցությունները նման են ընտրողների յուրահատուկ ընկերակցությունների: Դրանցում չկա պաշտոնական անդամություն, ընտրական հանձնաժողովներում աշխատանքը կատարում են հիմնականում ակտիվիստները: Այդպիսի կուսակցությանը միանալու համար բավարար է ընտրություններում նրա կողմից առաջադրված թեկնածուի օգտին քվեարկելը: Նմանատիպ կուսակցությունների բնորոշ օրինակ են հանրապետական ու դեմոկրատական կուսակցությունները ԱՄՆ-ում և պահպանողական կուսակցությունը Մեծ Բրիտանիայում: Այսպես կոչված «ձևակերպված» քաղաքական կուսակցությունները, որոնց բնորոշ են անդամությունը, կուսակցական տոմսը, անդամավճարն ու ներկուսակցական կարգապահությունը, Եվրոպայում ի հայտ եկան զանգվածային բանվորական շարժման հետ մեկտեղ: Ժամանակակից քաղաքական կուսակցություններին հատուկ է կուսակցական աշխատախմբի (ապարատի) առկայությունը: Դա մարդկանց առանձին, կազմակերպված խումբ է, որոնց համար կուսակցական, քաղաքական գործունեությունը մասնագիտություն է:

## 2. ԿՈՒՍԱԿԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅԱՅՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Կազմավորումները, որոնց մենք այժմ անվանում ենք քաղաքական կուսակցություններ, հանդես են եկել Արևմուտքում XIX դարի սկզբներին միայն: XVIII դարի առավել հայտնի քաղաքական փաստաթղթերում՝ Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում կամ ԱՄՆ-ի Սահմանադրության մեջ, կուսակցությունների մասին չի խոսվում: Դիշտ է՝ ժամանակի քաղաքական գործիչներն ու գաղափարախոսները խոսում էին **ֆրակցիաների** պայքարի մասին, բայց գնահատում էին այն խիստ բացասաբար: Քաղաքական գործիչների մեծ մասն ընդհուպ մինչև XIX դարի սկիզբը համարում էր, որ կուսակցական պայքարը պետության ու հասարակության համար կործանարար հետևանքներ կունենա:

Կարելի է առանձնացնել կուսակցությունների կայացման երկու կարևոր նախապայման: Առաջինը քաղաքականության՝ հասարակական հարաբերությունների համեմատաբար ինքնուրույն ոլորտ դառնալն է: Այստեղից էլ՝ արևմտյան ժողովրդավարական հասարակության մեջ կուսակցությունների կարևորագույն գործառույթն է ներկայացնել հասարակական խմբերի ու խավերի սոցիալական ու տնտեսական շահերը, նրանց պահանջները:

Կուսակցությունների ձևավորման երկրորդ կարևոր նախապայման կարելի է համարել հասարակության «աշխարհիկացումը» (սեկուլյարիզացումը): Կրոնական բոլոր ուղղություններին, այդ թվում և քրիստոնեությանը, հատուկ է հասարակության՝ որպես բնականոն ամբողջության մասին պատկերացումը: Կրոնական ավանդույթով դաստիարակված մարդը հանրության մեջ տիրող միասնությունն ու համաձայնությունը համարում էր ճշմարիտ կարգ, կանոն, իսկ բաժանումը, տարաձայնությունն ու հակամարտությունը՝ ճշմարտությունից շեղում, հավատի թուլացում և արդարության խախտում: Այդպիսի աշխարհայացքային համակարգում միանգամայն բնական է ձգտումը դեպի ներդաշնակության վերականգնումը, այլ ոչ թե հակամարտության «օրինականացումը», ինչին փաստորեն ծառայում են ժամանակակից կուսակցությունները: Հասկանալի է, թե ինչու էր XVIII դարի վերջերին Եվրոպայում և Ամերիկայում դեռևս կենսունակ բացասական վերաբերմունքը կուսակցությունների և նրանց պայքարի նկատմամբ:

Աշխարհիկ հասարակության կայացման ճանապարհին Եվրոպան երկու սահմանագիծ է ունեցել: Առաջին փուլում Ռեֆորմացիայից և կրոնական ավերիչ պատերազմներից հետո կաթոլիկ եկեղեցին ստիպված էր հաշտվել բողոքականների՝ կաթոլիկներին հավասար իրավունքներ ունենալու հետ: Ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո կատարվեց երկրորդ քայլը. հավատն անհատի մասնավոր գործ համարվեց: Երկար ժամանակ Եվրոպայում գոյակցում էին երկու արժեքային համակարգեր՝ կրոնական, որը մինչ այդ որոշում էր բոլոր՝ իրավական, քաղաքական, բարոյական նորմերը, և կրոնականի հետ հակամարտության մեջ ծնված, բայց դեռևս նրա ազդեցության ներքո գտնվող աշխարհիկ մշակույթը:

Ներկայումս այդ արժեքային պառակտումը կորցրել է իր սրությունը, և գաղափարական վեճերն արդեն կուսակցական ծրագրերի միջև պայքարի տեսք են ստացել: Այդ ծրագրերն արդեն հենված են որոշակի գաղափարախոսության, աշխարհայացքի վրա, ինչն էլ որոշում է հանրության սոցիալական, տնտեսական, քաղաքական նպատակները: Դրանցում գերակշիռ տեղ ունի սոցիալական զարգացման գաղափարը: Կուսակցություններն արտահայտում են հանրության տարբեր խմբերի ընդհանուր, տևական շահերը: Թե ո՞ր կուսակցության հետ կկապի իր քաղաքական շահը հասարակական այս կամ այն խումբը, իսկով, կախված է կոնկրետ պայմաններից, այն բանից, թե ինչպիսի դիրքորոշում են ունեցել կուսակցությունները երկրի պատմության շրջադարձային պահերին, ում կողմն էին նրանք սոցիալական հակամարտությունների ու բախումների ընթացքում:

Վերջին տասնամյակներում նկատվում է, որ շատ երկրներում կուսակցությունների հետ հանրության խմբերի ավանդական կապերը թուլացել են: Ավելի ու ավելի հազվադեպ է ընտրության դրդապատճառ դառնում ընտանեկան ավանդույթը կամ խմբային, կորպորատիվ շեզոքությունը: Ընտրողն այժմ ավելի ինքնուրույն է, նրա համար կողմնորոշիչ են ոչ այնքան կուսակցության «դեմքը», որքան նրա հայացքները հանրության համար տվյալ պահին առավել կարևոր սոցիալ-տնտեսական ու քաղաքական հիմնահարցերի շուրջ: Ընտրությունների արդյունքը դառնում է պակաս կանխատեսելի, իսկ խոշոր կուսակցությունների ընտրազանգվածը գործնականում համընկնում է բնակչության գրեթե ողջ կազմի հետ:

**Մտորումներ:** Ուսումնասիրեք Հայաստանում տեղի ունեցած համապետական վերջին ընտրությունների վերաբերյալ մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների նյութերը: Փորձեք պարզել, թե ինչ միջոցներով ու եղանակներով էին ձգտում ընտրողներին իրենց կողմը գրավել ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունները:

### 3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ներկայումս Հայաստանում գործում են մի քանի տասնյակ քաղաքական կուսակցություններ: Այն կուսակցությունները, որոնք ձևավորվել են դեռևս XIX դարի վերջերին՝ ազգային պետականության բացակայության պայմաններում, անվանում են ավանդական կամ ազգային կուսակցություններ:

**Լրացուցիչ նյութ:** Հայ իրականության մեջ առաջին քաղաքական կուսակցությունը 1885 թ. Վանում ձևավորված **Արմենական** կուսակցությունն էր: 1921 թ. արմենականները և քաղաքական այլ կազմակերպություններ միավորվեցին ու կազմեցին **Ռամկավար-ազատական** կուսակցությունը: 1887 թ. Ծվեյցարիայի Ժնև քաղաքում հիմնադրվեց **Սոցիալ-դեմոկրատական հնչակյան** կուսակցությունը: 1890 թ. Թիֆլիսում հիմնադրվեց **Հայ հեղափոխական դաշնակցություն** կուսակցությունը: Դաշնակցությունը կարճ ժամանակամիջոցում դարձավ հայ կյանքի ամենաազդեցիկ կուսակցությունը:

XX դարի սկզբներին Անդրկովկասում ստեղծվում են սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ, որոնց գաղափարական հիմքը



մաքրսիզմն էր: Ստեղծված բոլոր կազմակերպություններն իրենց համարում էին Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ճյուղերից մեկը: Այսինքն՝ արևելահայ իրականության մեջ ինքնուրույն սոցիալ-դեմոկրատական կուսակցություն չկար:

1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Առաջին հանրապետության կառավարող կուսակցությունը Դաշնակցությունն էր: Խորհրդարանի կազմում կային նաև ռամկավարներ, էսեռներ և այլ կուսակցությունների ներկայացուցիչներ: Դա փաստորեն բազմակուսակցական քաղաքական համակարգի ստեղծման առաջին փորձն էր: Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանում հաստատվեց միակուսակցական համակարգ՝ կոմունիստական կուսակցության մենիշխանությամբ:

1990 թ. օգոստոսի 23-ին հանրապետության նոր ձևավորված Գերագույն խորհուրդն ընդունեց Հայաստանի անկախության մասին հռչակագիրը, որում հռչակվում էր նաև կուսակցությունների գործունեության ազատությունը: 1991 թ. փետրվարի 26-ին խորհրդարանի կողմից ընդունվեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը:



Օրենքի ընդունումն ազդարարեց անցում բազմակուսակցական համակարգին: Ավանդական կուսակցություններից բացի, հանրապետությունում գրանցվեցին նաև բազմաթիվ այլ կուսակցություններ և հասարակական-քաղաքական կազմակերպություններ: Նրանք ակտիվորեն ներգրավվեցին մեր երկրում նոր, ժողովրդավարական

հասարակության հիմքերի ստեղծմանը:

### Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ են քաղաքական կուսակցությունները:
2. Ինչո՞ւ են փարբերվում «չձեռակերպված» և «չձեռակերպված» կուսակցությունները:
3. Ե՞րբ և որտե՞ղ են առաջացել արդի իմաստով առաջին կուսակցությունները:
4. Ի՞նչ հատկանիշով են փարբերվում արդի և XX դարի կուսակցությունները:
5. Համատար ներկայացրե՞ք կուսակցությունների որպես քաղաքական կյանքի մշտական սուբյեկտների հաստատման նախապայմանները: Ի՞նչ կարևոր սահմանագիծ դարձավ Ֆրանսիական մեծ հեղափոխությունն այդ առումով:
6. Ինչպիսի՞ փոփոխություններ են նկատվում վերջին տասնամյակներում հանրության խմբերի և կուսակցությունների ավանդական կապերում:

**Ինքնուրույն աշխատանք:** Մեր հանրապետությունում գործող ի՞նչ կուսակցություններ գիտեք: Ներկայացրե՞ք նրանց ծրագրերի՝ ձեր կարծիքով կարևոր հիմնադրույթներ: Հարցին պատասխանելու համար օգտագործե՞ք լրացուցիչ նյութեր (օգտվե՞ք նաև [www.fcsd](http://www.fcsd) կայքից և ՀՀ Ազգային ժողովի [www.parliament.am](http://www.parliament.am) պաշտոնական կայքից):

## ԳԱՍ 48. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

### 1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Քաղաքական համակարգի գործողության կառուցակարգում կարևոր տեղ է զբաղեցնում քաղաքական գիտակցությունը (*վերհիշե՛ք 35-րդ դասը*): Այդ համակարգի ալլ քաղաղրատարների հետ միասին այն ապահովում է դրա գործողության արդյունավետությունը և ժողովրդավարականությունը: Պատճառն այն է, որ ոչ մի քաղաքական գործողություն չի կենսագործվում առանց այն միջնորդավորող գիտակցության:

**Քաղաքական գիտակցությունը արտացոլում է քաղաքական իրականությունը քաղաքական գիտելիքների, քաղաքականության նկատմամբ վերաբերմունքի, արժեքային կողմնորոշումների ձևերով և կարգավորում է մարդկանց և նրանց խմբերի վարքագիծը քաղաքական իրադրություններում:**

Պատկերացրեք, որ դուք՝ որպես ժամանակակից մարդ, հայտնվել եք ինչ-որ կղզում, որտեղ տոհմային կարգերով ապրում է մի ցեղախումբ: Կարո՞ղ եք այնտեղ հիմնադրել արդի չափանիշներին համապատասխանող քաղաքական համակարգ: Անշուշտ, ոչ, որովհետև ո՛չ ցեղախմբի զանգվածային գիտակցությունը, ո՛չ էլ դրա առանձին անդամների գիտակցությունը չեն համապատասխանում ձեր առաջարկած համակարգին: Դա անհասկանալի ու անըմբռնելի է նրանց համար:

**Ստորումներ:** Միայն հոշակված քաղաքական ու իրավական հաստատություններն անբավարար են ժողովրդավարությունն իրական դարձնելու համար: Քաղաքական համակարգի բոլոր քաղաղրատարները շաղախող միջոցը, «նյութը» քաղաքական գիտակցությունն է: Կարդացե՛ք Մուրացանի «Առաքյալը» փիլակը: Արդյոք կղզու վրա քաղաքական համակարգ հիմնադրելու ձեր ջանքերը նմա՞ն են Պ. Կամսարյանի ապարդյուն ջանքերին: Ինչո՞ւ Պ. Կամսարյանի առաքելությունը տապալվեց: Ի՞նչ կանեիք դուք Պ. Կամսարյանի փոխարեն:

Քաղաքական համակարգում գիտակցության մեծ դերը պայմանավորված է դրա կատարած գործառույթներով:

**Քաղաքական գիտակցությունը կատարում է ճանաչողական գործառույթ:** Այսինքն՝ անհատը գիտակցության միջոցով ճանաչում է քաղաքական երևույթները և արդյունքում ձեռք է բերում քաղաքական գիտելիքների որոշակի գումար: Դրանք հետևանք են մտավոր (մտածողական) գործունեության և արտահայտում են անհատի քաղաքական պատրաստվածությունը, իմացությունը:

**Քաղաքական գիտակցությունը կատարում է գնահատող գործառույթ:** Գնահատումը որոշակի հուզական վերաբերմունք է քաղաքական կյանքի տարբեր կողմերի և երևույթների նկատմամբ՝ հիմնված կենսափորձի վրա: Այս գործառույթի նախադրյալը քաղաքական պատրաստվածությունն է. գնահատել կարելի է այն, ինչի մասին գիտեք: Գնահատվում են բոլոր քաղաքական երևույթները, այդ թվում՝ սեփական քաղաքական վարքագիծը (ինքնագնահատում), քաղաքական տեսությունները և այլն:

Կյանքի և քաղաքական երևույթների նկատմամբ արժեքային վերաբերմունքի հետևանքով անհատի մոտ առաջանում է ներքին նոր հատկություն, որն անվանում են

**քաղաքական դիրքորոշում:** Դիրքորոշումն անհատին բնորոշ հոգեբանական երևույթ է, որում առկա են տեղեկության, հուզական-գնահատողական, վարքագծային բաղադրատարրերը: **Տեղեկության** բաղադրատարրը ենթադրում է մարդու աշխարհայացքը և այն քաղաքական իդեալը, որին նա ձգտում է: **Հուզական-գնահատողական** բաղադրատարրը ենթադրում է համակրանք և հակակրանք ինչ-ինչ օբյեկտների նկատմամբ: **Վարքագծային բաղադրատարրը** գործելու պատրաստականությունն է:

**Քաղաքական գիտակցությունը կատարում է կարգավորիչ գործառույթ:** Մարդն ունենալով որոշակի քաղաքական դիրքորոշումներ ու արժեքային կողմնորոշում՝ գործում է դրանց համապատասխան: Արդյուքում նա իր վարքագիծը համապատասխանեցնում է իր քաղաքական դիրքորոշումներին:

Այսպիսով, վերը բերված օրինակում՝ ձեր փորձերը կղգում հիմնադրել ժամանակակից քաղաքական համակարգ դատապարտված էին ձախողման, որովհետև կղգիաբնակները չունեին համապատասխան քաղաքական գիտակցություն, որը կարող էր կատարել իր գործառույթներն այդ համակարգում:

## 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՆՆԳԻՐԸ

Քաղաքական պատշաճ դիրքորոշման հիմնական ցուցանիշն անհատի ակտիվ մասնակցությունն է հասարակական-քաղաքական գործերին: Վերջինների նկատմամբ շահագրգռվածությունը, դրանց քննարկման և լուծման նկատմամբ հետաքրքրվածությունն իսկական քաղաքացիական քաղաքական դիրքորոշման կարևոր հատկանիշն է: **Քաղաքական համակարգն այնքանով է ուժեղ և արդյունավետ, որքանով հասարակության անդամներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերում քաղաքական կյանքում:** Սակայն այդպիսի<sup>օ</sup> ենք մենք բոլորս: Պարզվում է՝ ոչ: Մարդկանց քաղաքական գիտակցությունը և դրանով պայմանավորված ընդգրկվածությունը քաղաքական գործընթացներում, հենց թեկուզ ընտրական, տարբեր են:

**1. Սոցիալապես ակտիվ քաղաքական գիտակցություն և վարքագիծ:** Քաղաքական ակտիվությունը որոշվում է զարգացած քաղաքական գիտակցությամբ, խորը համոզվածությամբ: Նման անհատը պատրաստակամ է օգտագործել քաղաքական համակարգի ընձեռած հնարավորությունները, ստեղծագործաբար մասնակցել քաղաքական կյանքին՝ կատարելով սկզբունքային վարքագծային ընտրություն:

**2. Հարմարվողական քաղաքական գիտակցություն և վարքագիծ:** Հարմարվողական քաղաքական գիտակցությունը և վարքագիծն անհատի քաղաքական այնպիսի գործունեությունն է, երբ նա իր վարքագիծը ենթարկում է շրջապատի կարծիքներին և գործողություններին, այսինքն՝ հարմարվում է: Նման էակը քաղաքական ոլորտում վարվում է այնպես, ինչպես ուրիշները: Նա չի արտահայտում իր կարծիքը, պաշտպանում այն և ընտրում սեփական քաղաքական վարքագիծ: Հարմարվողականությունը հասարակության համար ցանկալի չէ, քանի որ իրենից ներկայացնում է ենթարկում, կույր հետևում, առանց սեփական քաղաքական դիրքորոշումների ակտիվության: Նման գործելակերպը չի նպաստում քաղաքական համակարգի իրական

ժողովրդավարությանը: Մարդիկ չեն արտահայտում իրենց մտքերը, համոզմունքները, չեն դրսևորում անկեղծություն, նախաձեռնություն, իրական ինքնուրույնություն:

**3. Օտարված քաղաքական գիտակցություն և վարքագիծ:** Օտարված նշանակում է քաղաքական կյանքից հեռացած, դրանով չհետաքրքրվող, քաղաքականության նկատմամբ անտարբեր: **Օտարումը հասարակությունից, պետական կառավարումից, քաղաքականությունից կործանիչ է և՛ անհատի, և՛ պետության, և՛ հասարակության համար:** Անհատի քաղաքական օտարվածությունը հետևանք է, ինչպես նրա քաղաքական գիտակցության հոգեբանական ձևախեղման, այնպես էլ քաղաքական համակարգում լուրջ կառուցվածքային, բարոյափոփոխական, գաղափարախոսական փերությունների: Քաղաքական օտարվածության պատճառ կարող է դառնալ նաև իրական քաղաքական կյանքը, որը չի խթանում ակտիվությունը և չի ապահովում ընդգրկվածությունը: Այդպիսի դիրքորոշումը հնարավոր բոլոր տեսակի քաղաքական դիրքորոշումներից ամենավատն է: Օրինակ, դուք ձեր շրջապատում հաճախ եք լսում «**Ես քաղաքականությամբ չեմ զբաղվում**» խոսքերը: Բայց դրա պատասխանն ունի խորը իմաստ. «**Եթե դուք չեք զբաղվում քաղաքականությամբ, ուրեմն քաղաքականությունը կզբաղվի ձեզանով**»: Համոզված եղեք, որ քաղաքականապես անտարբեր և օտարված հասարակության մեջ քաղաքականությունը և պետական իշխանությունը դառնալու են չարիք հասարակության համար: Հետևաբար՝ քաղաքական անտարբերությունը բուժերանգի պես խփելու է ձեզ:

**Քաղաքական գործընթացներում կանանց ընդգրկվածության հիմնախնդիրները:** Ինչպես միջազգային իրավունքը, այնպես էլ ՀՀ Սահմանադրությունն ամրագրում են կնոջ և տղամարդու իրավահավասարության սկզբունքը: Սակայն դա չի նշանակում, որ իրականում կնոջ և տղամարդու միջև առկա է փաստական հավասարություն, այդ թվում՝ նաև քաղաքական համակարգում:

Կնոջ և տղամարդու կենսաբանական տարբերությունները պատմականորեն պայմանավորել են հասարակական միջսեռային անհավասարությունը: Շատ երկրներում առկա է սեռային խտրականության հիմնախնդիրը: Նույնիսկ ձևական-իրավական հավասարության դեպքում՝ երկրի հոգևոր-մշակութային առանձնահատկություններով պայմանավորված, առկա է փաստական խտրականության հիմնախնդիրը քաղաքական և այլ ոլորտներում: Օրինակ՝ ավանդաբար մեր իրականության մեջ կնոջ հիմնական գործառույթներից է տնային տնտեսության վարումը, իսկ տղամարդունը՝ դրսի վճարվող աշխատանքը: Դերային նման բաշխումն ինքնին ծնում է անհավասարություն, այդ թվում՝ քաղաքական ոլորտում: Հետևանքն այն է, որ կանայք հեռացվում են քաղաքական որոշումների ընդունման գործընթացից՝ բոլոր մակարդակներում փոքրաթիվ ներկայացուցչության պատճառով: Օրինակ՝ քաղաքականության ոլորտում կանանց նկատմամբ օրենսդրական քվոտաների բացակայության կամ ոչ արդյունավետ լուծումների պատճառով պետական մարմիններում կանանց թիվը կամ չնչին է, կամ նվազում է:

**Փաստեր:** ՀՀ առաջին գումարման (1995 թ.) Ազգային ժողովում կին պատգամավորների

թիվը 12 էր (մոտ 6%), իսկ երկրորդում (1999 թ.) 4 (մոտ 3%): 1999 թ. ընտրական օրենսգրքում նախատեսվեց կանանց ընդամենը 5% քվոտա՝ համամասնական ընտրակարգով կուսակցությունների ցուցակների համար: Մակայն նպատակը չիրականացավ, քանի որ կանայք հիմնականում եզրավակում էին կուսակցությունների ցուցակները: Արդյունքում երրորդ գումարման (2003 թ.) Ազգային ժողովում կին պատգամավորները հինգն էին (մոտ 4%), չորրորդում (2007 թ.) կանայք կազմում էին մոտ 9%, իսկ հինգերորդում՝ (2012 թ.)՝ մոտ 11%:

Բերված տվյալները վկայում են, որ, չնայած միջսեռային հավասարության ոլորտում որոշակի նվաճումներին, Հայաստանում առկա է քաղաքական ոլորտում կանանց ընդգրկվածության հիմնախնդիր: Նշանակում է՝ **միջսեռային իրավահավասարությունից** գատ, անհրաժեշտ է վարել նաև **սեռերի համար հավասար հնարավորությունների** ստեղծման հատուկ քաղաքականություն:

### 3. ՔԱՂԱՔԱԳԱՆ ԱԿՏԻՎ ԳԻՏԱԿՅՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ

Բնակչության քաղաքական գիտակցության ցածր մակարդակի և անտարբերության հաղթահարման հիմնական միջոցը քաղաքական-իրավական համառոտացումը և դաստիարակությունն է:

Միգուցե ուտոպիստական է ցանկությունը յուրաքանչյուր անհատի դարձնել **քաղաքական-իրավական ակտիվ էակ**: Մակայն քաղաքական, քաղաքացիական, ինչպես նաև իրավական նվազագույն գիտելիքներն անհրաժեշտ են: Դրանից բխում է, որ հասարակության առաջ դրված է խնդիր. ապահովել ամեն մի անհատի նվազագույն քաղաքական-իրավական գիտելիքները և պատրաստվածությունը: Վերջինները պայման են քաղաքական-իրավական էակի ձևավորման և զարգացման համար:

Ժողովրդավարական քաղաքական համակարգը ևս պետք է ապահովի քաղաքական ընդգրկվածությունը: Այսինքն՝ օտարման պատճառները միայն կրթական չեն, այլ նաև կառուցակարգային: Քաղաքագիտական միտքը մշակել է օտարվածության և քաղաքական անտարբերության հաղթահարման հայեցակարգ, որն անվանում են «**մասնակցության ժողովրդավարություն**»: Այն ենթադրում է, որ, բացի ընտրություններից, քաղաքացիները պետք է ունենան իրավունք և հնարավորություն ակտիվ մասնակցելու քաղաքական որոշումների ընդունմանը, քաղաքական գործընթացներին, ինչպես նաև ընդունված որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությանը:

#### Հարցեր

1. Ի՞նչ է քաղաքական գիտակցությունը, և ինչո՞վ է այն կարևոր քաղաքական համակարգում:
2. Ի՞նչ գործառույթներ է կատարում քաղաքական գիտակցությունը:
3. Ի՞նչ է քաղաքական դիրքորոշումը:
4. Ի՞նչ է քաղաքական ընդգրկվածությունը:
5. Որո՞նք են քաղաքական գիտակցության և վարքագծի տեսակներն ըստ անհատների ակտիվության աստիճանի:
6. Որո՞նք են քաղաքական ակտիվ գիտակցության շեղումնան միջոցները:
7. Ինչպիսի՞ն է չեթ քաղաքական գիտակցությունը և ակտիվության աստիճանը:

## ԳԱՍ 49. ԱՐԴԻ ԳԱՂԱՓԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ. ԱԶԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սահմանադրությունը, բացի բազմակուսակցությունից, երաշխավորում է նաև գաղափարախոսական բազմակարծությունը: Մարդիկ բնականից միատեսակ չեն. տարբեր են նրանց շահերը, կյանքի պայմանները: Հետևաբար, բազմազանությունը արհեստական և հորինովի չէ, այլ բնական կացություն: Կուսակցությունները՝ ելնելով իրենց քաղաքական գաղափարախոսությունից, մշակում և ընտրողներին են ներկայացնում հասարակական զարգացման այլընտրանքային տարբերակներ: Հետևաբար, քաղաքական և գաղափարական բազմազանությունը ժողովրդավարական քաղաքական համակարգի կարևոր հատկանիշն է: Կարծիքների, հայացքների, ուսմունքների և քաղաքական հայեցակարգերի բազմազանությունը ծնում է առողջ գաղափարաքաղաքական մրցակցություն, այն հնարավորություն է տալիս ընտրելու զարգացման և հասարակական հիմնախնդիրների լուծման առավել ընդունելի տարբերակը: Հասարակական-քաղաքական հոսանքները բազմազան են: Մենք կանդրադառնանք դրանցից մի քանիսին միայն:

### 1. ԱԶԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԼԻԲԵՐԱԼԻԶՄ)

Ազատականության հիմնական գաղափարներն ու սկզբունքներն են՝ անհատը որպես առանձին արժեք և նրա պատասխանատվությունն իր գործողությունների համար, մասնավոր սեփականությունը որպես անհրաժեշտ պայման անհատի ազատության համար, ազատ շուկա, ազատ մրցակցություն և ձեռնարկատիրություն, հավասար հնարավորություններ, իշխանությունների բաժանում, զսպումներ և հակակշիռներ, անձի հիմնական իրավունքների և ազատությունների երաշխիքներ, համընդհանուր ընտրական իրավունք և այլն:



«Լիբերալիզմ» հասկացությունը եվրոպական հասարակական-քաղաքական բառապաշար է մտել XIX դարի սկզբներին: Ազատականության ակունքներում կանգնած են այնպիսի նշանավոր անհատներ, ինչպիսիք են Ջ. Լոքը, Շ. Մոնտեսքիոն, Ի. Կանտը, Թ. Ջեֆերսոնը և ուրիշներ: Ազատականության ձևավորման մեջ շրջադարձային եղավ Ֆրանսիական մեծ հեղափոխությունը, հատկապես 1789 թ. ընդունված հեղափոխության գլխավոր փաստաթղթերից մեկը՝ Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը:

Ազատական աշխարհայացքը սկզբից ևեթ ձգտում էր անհատական ազատության կատարելատիպի (իդեալի) ընդունմանը: Անհատականությունն ամենից առաջ ենթադրում է յուրաքանչյուր մարդու բնական, ի ծնե ունեցած իրավունքները,

առաջին հերթին՝ կյանքի, ազատության և մասնավոր սեփականության: Ընդ որում՝ մասնավոր սեփականությունը համարվում է ազատության երաշխիք: Մասնավոր սեփականության իրավունքն ու տնտեսական ազատությունը հիմք են դառնում քաղաքական և քաղաքացիական ազատությունների ձևավորման համար: Ազատականության կարևոր բաղադրիչ է բազմակարծությունը, այսինքն՝ սոցիալական խավերի, ազգային ու կրոնական խմբերի, քաղաքական, հասարակական կազմակերպությունների բազմազանությունը:

Ազատականության հիմնադիրներն այն գաղափարն էին զարգացնում, որ պետության մեջ պետք է տիրապետեն ոչ թե առանձին անձինք, այլ օրենքները: Պետության խնդիրն է օրենքով կարգավորել ազատ քաղաքացիների միջև առաջացող հարաբերությունները, ինչը պետք է ապահովի անձի ազատությունը, սեփականության անձեռնմխելիությունը, մարդու և քաղաքացու մյուս իրավունքները:

**Մտորումներ:** *Չոն Լոքը պետությունը համեմատում էր ոչ թե հասարակության գլխի, այլ գլխարկի հետ, որը կարելի է հանգիստ փոխարինել մեկ ուրիշով: Համաձայն էք արդյոք լիբերալիզմի հիմնադիրներից մեկի այդ կարծիքի հետ: Հիմնավորե՞ք ձեր տեսակետը:*

**Լրացուցիչ նյութ:** XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին ավելի ակնառու դարձան ազատականության թույլ և ուժեղ կողմերը: Պարզ դարձավ, որ ազատ մրցակցության սկզբունքի անգուսպ իրագործումը հանգեցնում է արտադրության համակենտրոնացմանը, արտադրական և ֆինանսական մագնատների ազդեցության աճին: Այդ պայմաններում լիբերալիզմն ակամա ստանձնում էր հասարակության արտոնյալ խավերի գաղափարախոսի դերը: Այս ամենի արդյունքում սկիզբ առավ դասական ազատականության վերանայումը ժամանակի մի շարք հայտնի քաղաքագետների, տնտեսագետների, սոցիոլոգների և այլ մասնագետների ջանքերով: Նրանք առաջարկում էին սահմանափակել խոշոր կորպորացիաների կամայականությունները և պաշտպանել բնակչության առավել ճնշված խավերի շահերը: Այդ գաղափարները հիմք դարձան **նոր կամ սոցիալական ազատականության** ձևավորման համար, որի հաստատման սահմանագիծ դարձավ անցյալ դարի 30-ական թվականների տնտեսական մեծ ճգնաժամը: Այդ ժամանակաշրջանում մեծ ճանաչում ստացավ անգլիացի տնտեսագետ Ջ. Քեյնսի տեսությունը: Քեյնսը և նրա հետևորդները, ազատ մրցակցության և ազատ շուկայի դասական սկզբունքներին գոգահեռ, առաջարկում էին տնտեսական և սոցիալական դորտներում պետական միջամտության նոր մոտեցումներ: Այդ գաղափարների մարմնավորումը դարձավ, այսպես կոչված, «բարեկեցության պետությունը», որը կոչված էր իրագործելու բնակչության անապահով խավերի սոցիալական օժանդակության ծրագրեր: Սկզբնական շրջանում առավել մեծ կիրառություն գտնելով ԱՄՆ-ում, Ֆրանկլին Ռուզվելտի հակաճգնաժամային «նոր կուրսի» լայնամասշտաբ իրագործման տարիներին, քեյնսականությունն այնուհետև այս կամ այն չափով տարածում գտավ աշխարհի գրեթե բոլոր զարգացած երկրներում:

Ազատականության և ազատական ուղղվածության կուսակցությունների գործունեության շնորհիվ XX դարի առաջին տասնամյակներում վերջնականապես հաստատվեցին ժամանակակից քաղաքական համակարգի հիմնական սկզբունքներն ու ինստիտուտները, այն է՝ խորհրդարանականությունը, իշխանությունների բաժանումը, իրավական պետությունը և այլն: Դրանք ի վերջո ընդունելի դարձան գրեթե բոլոր քաղաքական ուժերի համար:

## 2. ՊԵՃՊԵՆՈՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԿՈՆՍԵՐՎԱՏԻՉՄ)

Պահպանողականությունն իր մեջ ներառել է տարբեր՝ երբեմն հակասական գաղափարներ, հայեցակարգեր, ավանդույթներ: «Կոնսերվատիզմ» բառը տարածում է ստացել XIX դարի սկզբներին (այն ծագում է լատիներեն *conservare* – պահպանել բառից): Պահպանողականության հիմնական դրույթները ձևավորվել ու զարգացել են ազատականության, սոցիալ-ժողովրդավարության և գաղափարաքաղաքական այլ հոսանքների դեմ հակադրության մեջ:

Սկզբից ևեթ պահպանողականները հանդես էին գալիս գոյություն ունեցող համակարգն առանց որևէ լուրջ փոփոխության պահպանելու օգտին: Քաղաքական սկզբունքները, ըստ պահպանողականների, պետք է հարմարեցնել սովորույթներին, ազգային ավանդույթներին, հասարակական-քաղաքական ինստիտուտների հաստատված ձևերին: Նրանք բնական և օրինական էին համարում միայն այն հասարակությունը, որը հենվում է աստիճանակարգված (հիերարխիկ) կառուցվածքի վրա, և որի առանձին բաղադրիչներն ապահովում են հասարակական օրգանիզմի կենսունակությունն ու ամբողջականությունն այնպես, ինչպես մարդկային մարմնի առանձին օրգանները նրա ամբողջ օրգանիզմի համար:

Պահպանողականության՝ որպես գաղափարաքաղաքական ուղղության վերլուծության դեպքում պետք է նկատի ունենալ, որ հասարակական-քաղաքական գործընթացը երկակի բնույթ ունի: Մի կողմից դա է վոլյուցիան է, զարգացումը, հնի մերժումը և նորի ստեղծումը: Մյուս կողմից այն պահպանում և անցյալից ներկային ու ապագային է փոխանցում այն ամենը, ինչը կենսունակ է, անանց և համամարդկային: Ցանկացած հասարակական-քաղաքական համակարգ կարող է վերափոխվել իր բազմաթիվ կողմերով՝ միաժամանակ պահպանելով նախորդ համակարգի հետ ժառանգական կապը: Պահպանողականները նախապատվությունը տալիս են փոխզիջմանը և դեմ են որևէ գաղափարի, տեսության բացարձակացմանը, առավել ևս գործնականում դրանց «մաքուր տեսքով» իրականացմանը:

**Մտորումներ:** *Ճիշտ են արդյոք պահպանողականներն այդ դեպքում. նորագույն պատմության ո՞ր իրադարձություններն են մեզ ցույց տալիս, թե ինչ ողբերգական հետևանքների կարող է հանգեցնել որևէ գաղափարախոսության ծայրահեղացված, բռնի միջոցներով կիրառումը:*

Պահպանողականությունը սովորաբար նույնացվում է գոյություն ունեցող կարգերի պաշտպանության հետ: Այդուհանդերձ, պահպանողականները, բնականաբար, չեն անտեսում տեղի ունեցող փոփոխությունները: Ավելին՝ նրանք հաճախ հանդես են գալիս փոփոխությունների, բայց դանդաղ, աստիճանական, «վերևից» կատարվող փոփոխությունների օգտին, ինչը թույլ կտա խուսափել «ներքևից» սկսվող հեղափոխական վայրիվերումներից: Ժամանակակից պահպանողականները հանդես են բերում բավականաչափ ճկունություն և գործնականություն, իրավիճակին հարմարվելու կարողություններ:

**Փաստեր:** 1970-1990-ական թվականները կարելի է համարել պահպանողականների և «աջ» ուժերի հաղթանակների ժամանակաշրջան: Ռեոնալդ Ռեյգանի իշխանության գլուխ



*Մեծ Բրիտանիայի պառլամենտի շենքը  
(Վեստմինստերի պալատը)*

կան հեղափոխության փաստացի հակառակորդներից դառնալ դրա համոզված կողմնակիցները: Ինչպես իրենք են հաստատում, պահպանողական լինելն ամենևին չի նշանակում դառնալ հետադիմական և փակել առաջադիմության ճանապարհը:

Ժամանակակից պահպանողականությունը, այդուհանդերձ, շարունակում է մշակութային և կրոնական ավանդապաշտության համոզված կողմնակիցը մնալ: Պահպանողականներն առաջվա պես կարծում են, որ ավանդական արժեքներից հրաժարումը ժամանակակից հասարակության մեջ եղած բացասական երևույթների գլխավոր պատճառն է: Նրանք նույն հետևողականությամբ շարունակում են փաստարկներ բերել ավանդական արժեքների վերականգնման օգտին՝ շեշտը դնելով ընտանիքի, համայնքի, եկեղեցու և այլ ինստիտուտների վրա:

**Գործնական աշխատանք:** Օգտագործելով ստորև բերվող նյութը՝ քննարկեք և փորձեք պարզաբանել «ազատություն» հասկացությունը:

«Ըստ Հեգելի՝ ազատությունը ոչ միայն հոգեբանական երևույթ է, դա մարդու տարբերակիչ հատկանիշն է: Այդ իմաստով բնությունն ու ազատությունը տրամագծորեն հակոտնյա են: Ազատությունը չի նշանակում բնության մեջ կամ բնության համաձայն ապրել, ընդհակառակը, ազատությունը սկսվում է միայն այնտեղ, որտեղ վերջանում է բնությունը: Մարդու ազատությունը ծնվում է միայն այն ժամանակ, երբ մարդն ունակ է դառնում հաղթահարել իր բնական, կենդանական գոյությունը և ինքն իր համար ձևավորել նոր անձ»:

**Ֆրենսիս Ֆուկույամա, «Լիբերալիզմի այլընտրանքները»**

### Հարցեր


1. **Գաղափարաբարդարական ի՞նչ հոսանքներ գիտեք, ներկայացրեք մի քանիսը:**
2. **XIX դարի վերջում սկիզբ առած ո՞ր գործընթացները հարկադրեցին վերանայել դասական ազատականության որոշ դրույթներ: Ազատականության ո՞ր ուղղությունը չեափորվեց դրա արդյունքում:**
3. **Ո՞րն է, չե՞ր կարծիքով, ժամանակակից քաղաքական համակարգում ազատականության գլխավոր ներդրումը:**
4. **Ինչպիսի՞ փոփոխությունների կողմնակից ևն պահպանողականները:**
5. **Որո՞նք են քվարկված անունների օգտարարեզու հոմանիշները ազատականություն, պահպանողականություն:**

## ԳԱՍ 50. ԱՐԴԻ ԳԱՂԱՓԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ. ՍՈՅԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### 1. ՍՈՅԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Նոր ժամանակներում տարածված գաղափարական հոսանքներից է սոցիալիստական ուսմունքը: Դրա արմատները գալիս են ուշ միջնադարի ուտոպիստական սոցիալիզմից: XIX դարում մեծ թափ առած բանվորական շարժումներն այն քաղաքական նախադրյալն էին, որ խթանեցին սոցիալիստական գաղափարախոսության առաջացումը և տարածումը: Սոցիալիստական գաղափարախոսության տեսական հիմքը Կ. Մարքսի ուսմունքն էր:

**Մարքսիստական** ուսմունքը ձևավորվել է XIX դարի կեսերին, երբ Եվրոպան ցնցում էին մեկը մյուսին հաջորդող բուրժուական հեղափոխությունները: Այն երկրներում, որտեղ կապիտալիզմն արդեն հաստատվել էր, ի հայտ եկան նաև տնտեսական ճգնաժամի առաջին հատկանիշները: Հասարակական իրավիճակը լուրջ ազդեցություն ունեցավ նաև Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի սոցիալ-քաղաքական հայացքների ձևավորման վրա: Նրանք ստեղծեցին հասարակական զարգացման նոր տեսություն, որն ավելի ուշ ստացավ մարքսիզմ անվանումը:



Կարլ Մարքս (1818-1883)

Ուսումնասիրելով հասարակական արտադրությունը՝ Մարքսն առանձնացրեց դրա երկու կողմերը՝ արտադրողական ուժեր և արտադրական հարաբերություններ: Ցանկացած հասարակության գլխավոր **արտադրողական ուժը** մարդիկ են՝ իրենց գիտելիքներով և աշխատանքային հմտություններով: Ոչ պակաս կարևոր դեր ունեն նաև հասարակության ստեղծած **արտադրության միջոցները** (աշխատանքի գործիքներն ու առարկաները): Համատեղ աշխատանքային գործունեության ընթացքում մարդիկ որոշակի արտադրական հարաբերությունների մեջ են մտնում: **Արտադրահարաբերությունների ողջ համակարգը պայմանավորված է այն հանգամանքով, թե ում սեփականությունն են կազմում արտադրության հիմնական միջոցները:**

Հետազոտելով հասարակական զարգացման հիմնական փուլերը՝ Մարքսն ու Էնգելսը եկան այն եզրակացության, որ կապիտալիզմին պետք է փոխարինի հասարակական-տնտեսական նոր կացութաձև՝ կոմունիստական հասարակությունը: Այդ կացութաձևն անցնելու էր զարգացման երկու փուլ՝ սոցիալիզմ և կոմունիզմ: Դրանցում, ի տարբերություն կապիտալիզմի, գերակշռելու էր արտադրության միջոցների հանրային սեփականությունը:

Մարքսիզմը՝ որպես քաղաքական-գաղափարական հոսանք, հետագայում տրոհվեց երկու առանձին ուղղությունների: Վ. Լենինի և նրա կողմնակիցների առաջ քաշած տեսությունը հայտնի է **մարքսիզմ-լենինիզմ** անունով: Մարքսիզմ-լենինիզմի դրոշով և կոմունիստական կուսակցությունների ղեկավարությամբ սկզբում Ռուսաստանում 1917 թ., իսկ Երկրորդ աշխարհամարտից հետո Չինաստանում և մի շարք այլ երկրներում տեղի ունեցան սոցիալիստական և ժողովրդադեմոկրատական հեղափոխություններ: Խորհրդային Միության գլխավորությամբ ձևավորվեց սոցիալիստական երկրների ճամբարը: Տասնամյակներ շարունակ մարդկության գրեթե կեսն իր գործունեության հեռանկարում տեսնում էր կոմունիստական հասարակարգի իդեալը: Նպատակն ինքնին շատ բարձր ու ազնիվ էր՝ կառուցել արդարացի, կատարյալ հասարակարգ՝ զերծ մարդու կողմից մարդու շահագործումից և ժողովուրդների միավորման հիմունքներով: Այդ լուսավոր ապագային հասնելու համար, սակայն, թույլատրելի էին համարվում բոլոր անմարդկային, դաժան, բռնակալական, ահաբեկչական միջոցները: Արդյունքում իր հիմնադրումից ընդամենը յոթ տասնամյակ հետո Խորհրդային Միությունն անկում ապրեց, իսկ կոմունիստական գաղափարախոսությունը կորցրեց իր նախկին ազդեցությունը:

Սոցիալիստական գաղափարախոսության երկրորդ հիմնական ուղղությունը **ժողովրդավարական սոցիալիզմն** է, որի հիմնադրությունների մշակման մեջ նշանակալի դեր ունեցավ գերմանացի հայտնի գործիչ Էդուարդ Բեռնշտայնը: Բեռնշտայնը հրաժարվեց մարքսիզմի այն դրույթներից, որոնց իրագործումը Ռուսաստանում և մի շարք այլ երկրներում հանգեցրին ամբողջատիրական (տոտալիտար) վարչակարգերի հաստատմանը: Մերժելով **պրոլետարիատի դիկտատուրայի** գաղափարը՝ Բեռնշտայնը և նրա հետևորդները հիմնավորեցին պայքարի բռնի եղանակներից հրաժարվելու և սոցիալ-ժողովրդավարության՝ «խորհրդարանական գործունեության դաշտ» տեղափոխվելու անհրաժեշտությունը: Ժողովրդավարական սոցիալիզմի կողմնակիցները միաժամանակ հռչակում էին արդարացի հասարակարգի հասնելու իրենց ձգտման մասին: Ընդ որում՝ նրանք ելնում էին այն հիմնադրույթից, որ վերացնելով մարդու կողմից մարդու շահագործումը՝ անհրաժեշտ է անձեռնմխելի թողնել ժողովրդավարական հիմնական ինստիտուտներն ու ազատությունները:

Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած ժամանակաշրջանը կարելի է համարել ժողովրդավարական սոցիալիզմի զարգացման նոր փուլ: 1951 թ. Սոցիալիստական ինտերնացիոնալն ընդունեց նոր ծրագրային փաստաթուղթ՝ **Ֆրանկֆուրտյան հռչակագիրը**: Հռչակագիրը ձևակերպեց ժողովրդավարական սոցիալիզմի հիմնական արժեքները: Եթե փորձենք համառոտ ձևակերպել հետպատերազմյան սոցիալ-ժողովրդավարության էությունը, այն կարելի է արտահայտել հետևյալ կարգախոսով՝ **ազատություն, արդարություն, համերաշխություն**: Ընդ որում՝ ազատությունը, որն անտեսում է բոլորի իրավունքների հավասարությունը, վաղ թե ուշ վերաճում է կամայականության, իսկ արդարությունը, որը հաշվի չի առնում այդ իրավունքները, վերածվում է համահարթեցման, այսինքն՝ անարդարու-

թյան: Այլ խոսքով՝ ազատությունն ու հավասարությունը փոխկապված են, ինչի արտահայտությունն արդարությունն է: Այն ամենից առաջ նշանակում է բոլորի համար հավասար ազատություն:

Ղեկավարվելով այս գաղափարներով և դրանց իրագործման մեջ մեծ դեր հատկացնելով պետությանը՝ եվրոպական սոցիալ-ժողովրդավարությունը հետպատերազմյան շրջանում նշանակալի հաջողությունների հասավ: Մի շարք երկրներում հասնելով իշխանության կամ դառնալով ազդեցիկ խորհրդարանական ուժ՝ սոցիալ-ժողովրդավարական կուսակցություններն ու նրանց աջակից արհմիությունները բազմաթիվ բարեփոխումների նախաձեռնողներ դարձան. տնտեսության մի շարք ճյուղերի ազգայնացում, պետության սոցիալական ծրագրերի աննախադեպ ընդլայնում, աշխատաժամանակի կրճատում: Բարեփոխումների արդյունքում այդ երկրները բուռն տնտեսական աճ ապրեցին: Միաժամանակ սոցիալիստների նախաձեռնությամբ սկիզբ առավ Արևելքի և Արևմուտքի միջև եղած լարվածության թուլացումը, միջազգային հարաբերությունների բարելավման ուղղությամբ արված մի շարք ձեռնարկումներ:

## 2. ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գաղափարաքաղաքական ուղղություններից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ազգայնականությունը: Այս ուղղության համար առանցքային նշանակություն ունեն ազգը, ազգային շահը: Ընդ որում՝ ազգի, ժողովրդի, էթնոսի շահերը ներկայացնող գաղափարաքաղաքական ուղղությունը կարող է դրսևորվել ազգայնականության (նացիոնալիզմ) և ազգայնամոլության (շովինիզմ) ձևով: Վերջին դեպքում որևէ ազգի շահերը ծայրահեղացվում և գերադասվում են մյուսներից:

Այս կարգի ուղղություն է նաև ռասիզմը, որի դեպքում արդեն առաջին պլանում բնակչության, նրա առանձին խմբերի ոչ թե ազգային, այլ մարդաբանական հատկանիշներն են և դրանցից բխող քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և այլ շահերը:

Այդպիսի ծայրահեղացված, ուրիշների նկատմամբ թշնամանք սերմանող գաղափարախոսական ուղղություններին զուգահեռ գոյություն ունեն նաև չափավոր, սեփական ազգի, երկրի նկատմամբ սիրով և օրինական հպարտությամբ լեցուն գաղափարներ, որոնցում չկան այլոց հանդեպ ատելության հիվանդագին դրսևորումներ:

**Գործնական աշխատանք:** Ստորև բերվող նյութի հիման վրա փորձե՛ք բնութագրել Գարեգին Նժդեհի տեսակետները: Ազգայնականության ո՞ր ուղղության կողմնակիցն էր նա: Արդյո՞ք Գ. Նժդեհի գաղափարներն ուղղված էին ուրիշների դեմ, չարություն և ատելություն էին սերմանում այլ ազգերի հանդեպ: Հիմնավորե՛ք ձեր կարծիքը՝ վկայակոչելով Գ. Նժդեհի խոսքերը:

- Ազգերի հանճարը ստեղծագործ, իսկ նրա արտահայտությունը հորդաբույս է լինում միայն բացարձակ անկախության մթնոլորտում: Ահա թե ինչու մարդկությանն ավելի օգտակար լինելու համար ժողովուրդները պիտի լինեն ինքնիշխանորեն ազատ և անկախ:



*Չորեքին Նժդեհի  
հուշարձանը Կապանում*

- Անկախությունը, անկախ Հայրենիքն իրավունք լինելուց առաջ պարտականություն է, որից խուսափող ժողովուրդները կորցնում են իրենց բարոյական գոյության իրավունքը:
- Չկա հրեշ, որ կարողանար վերագանցել անհայրենասերին, որ հոգեբանորեն անտարբեր է դեպի երկիրն ու ժողովուրդը:
- Անհայրենասեր ժողովուրդը, եթե այսօր չէ, անհայրենիք կդառնա վաղը:
- Ժողովուրդների մեջ մի ստոր տարր կա՝ անհայրենասերները:
- Հերիք է, որ մի ժողովուրդ դառնա անհայրենասեր, որպեսզի համարվի պատրաստի որս, և նրա երկիրը բաժանվի իր հարևանների միջև:
- Ապագան վտանգված ժողովուրդը, ինչպիսին է մերը, նորանոր աղետներից խուսափելու համար մի հատիկ միջոց ունի – բարձր հայրենասիրությունը, այնպիսին, որով քաղցրանում են մեր հավաքական թե անձնական ցավերը:
- Հայրենասիրությունը ժողովուրդներին ներշնչում է առաքիներություններ, որոնց շնորհիվ նրանք դառնում են և մնում ապահով և հարգված:
- Գինետոն յին հայրենասիրությունը, որ բավականին դավանողներ ունի մեր մեջ, այնքան էլ հեռու չէ անհայրենասիրությունից:
- Դատապարտելի է նաև պայմանական հայրենասիրությունը: Հայրենիքը պետք է սիրել անկախ իր քաղաքական ռեժիմից, ինչպես նաև անկախ մեր քաղաքական հանդուժմաններից:
- Կան այնպիսիները, որոնք իբրև թե սիրում են Հայրենիքը, բայց որովհետև սիրում են և մարդկությունը, գործնականում մնում են անտարբեր թե դեպի մեկը, թե դեպի մյուսը: Սրանք նույնպես հակազգային ուժ են: Սխալվում են ազգային պարտականության դասալիքները՝ կեղծ ընկերավարականը, համայնավարը, անիշխանականը:
- Հայրենասեր լինել չի նշանակում օտար ժողովուրդների թշնամին լինել: Դա նշանակում է, թե այդ օտարները կարող են մեր թշնամին դառնալ:
- Հզորանալու մի իմաստուն ճիգ է հայրենասիրությունը:

*Չորեքին Նժդեհ, «Հայրենիք և հայրենասիրություն»*

### **Հարցեր և առաջադրանքներ**

1. **Սոցիալիստական ի՞նչ հիմնական գաղափարական ուղղություններ կան. համեմատելք դրանք: Ո՞րն է, չե՞ր կարծիքով, գլխավոր բաժանարար գիծը նրանց միջև:**
2. **Ի՞նչ դրսևորումներ կարող է ունենալ ազգայնականությունը, ինչո՞վ է դրանից փարբերվում ռասիզմը:**
3. **Նշե՛ք թվարկված անունների օգտարալիզու հոմանիշները. ազգայնականություն, անբողջատիրություն:**

**Ինքնուրույն աշխատանք:** Պատմության դասընթացի, հանրագիտարանների և լրացուցիչ այլ աղբյուրների հիման վրա կազմե՛ք համատուտ տեղեկատու նյութ, որտեղ կներկայացվեն գաղափարական հոսանքների ձևավորումը, հիմնադրույթները, այն ներկայացնող կուսակցությունների քաղաքական գործելակերպը, նշանավոր ներկայացուցիչները. ա) մարքսիզմ-լենինիզմ, բ) ֆաշիզմ, գ) շովինիզմ:

### **ԳԱՍ 51. ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ**

## ԳԼՈՒԽ 9. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

### ԳՒՍ 52. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

#### 1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

**Պետության արտաքին քաղաքականությունը նրա համապատասխան մարմինների նպատակային գործունեությունն է՝ ուղղված միջազգային (արտաքին) հարաբերությունների ոլորտում պետության առջև դրված խնդիրների նվաճմանը:**

Յուրաքանչյուր պետություն այլ պետությունների հետ հարաբերություններում կիրառում է իր արտաքին քաղաքականությունը: Այն ձևավորվում (մշակվում) է բազմաթիվ գործոնների հիման վրա, որոնց թվում են երկրի սոցիալ-տնտեսական դրությունը, աշխարհագրական դիրքը, ազգային-կրոնական, պատմական առանձնահատկությունները, երկրի անկախության և անվտանգության ապահովման պահանջը և այլն: Այդ գործոնների հաշվառմամբ մշակված արտաքին քաղաքականությունը կոչված է ապահովելու ազգային (պետական) շահերը միջազգային ոլորտում: **Պետության արտաքին քաղաքականությունը պետք է ելնի ազգային շահերից և ազգային անվտանգության որոշակի հայեցակարգից:**

Ազգային անվտանգության կենսագործումը նպատակ ունի ապահովելու ազգի (ժողովրդի) կամ նրա պետականության գոյատևումը և երբեմն կարող է ձեռք բերել պատերազմական բնույթ: Արտաքին քաղաքականություն մշակողներն արդի պայմաններում, բացի ազգային շահերից, պետք է հաշվի առնեն նաև համամարդկային արժեքներն ու նորմերը, միջազգային հանրության կարծիքը: Միաժամանակ, որպեսզի արտաքին քաղաքականությունը կայուն լինի, օրենքներում ամրագրվում են դրա հիմնադրույթները և իրացման ընթացակարգը:

#### 2. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ժամանակակից աշխարհում դժվար է գտնել որևէ պետություն, որը չի հաստատում արտաքին սերտ կապեր միջազգային կյանքի ամենատարբեր ոլորտներում: Հակառակ դեպքում այն դատապարտված է մեկուսացման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Հետևաբար, պետությունները փորձում են իրականացնել ակտիվ արտաքին քաղաքականություն, համագործակցել միջազգային հարաբերությունների բոլոր մասնակիցների հետ: Որպես կանոն, պետություններն առաջին հերթին որոշում են արտաքին քաղաքականության նպատակները և սկզբունքները, պետական մարմինների լիազորություններն այդ ոլորտում:

Հայաստանի Սահմանադրությունը սահմանում է, որ «Հանրապետության ար-

տաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով»:

**Հայաստանի արտաքին քաղաքականության նպատակներից են բարիդրացիականությունը և փոխշահավետությունը:** Դա ընդգծում է մեր արտաքին քաղաքականության խաղաղ բնույթը: Իր անկախության առաջին օրերից Հայաստանը հաստատեց միջազգային հանրության ու նրա առանձին անդամների շահերը հարգելու պատրաստակամությունը: Միաժամանակ արտաքին քաղաքականության նպատակներից է բոլոր պետությունների հետ փոխադարձորեն շահավետ հարաբերությունների հաստատումը:

**Հայաստանի արտաքին քաղաքականության ելակետային հիմնադրույթներն են միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը:** Այսպիսով՝ Հայաստանն իր արտաքին քաղաքական գործունեություն մեջ պարտավորվում է ղեկավարվել միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով և անշեղորեն կատարել միջազգային իրավունքի նորմերով ստանձնած իր պարտավորությունները:



Արտաքին քաղաքականության սահմանադրական հիմունքներն ունեն եռակի նշանակություն: **Առաջին՝** դրանք ազդարարում են, թե միջազգային իրավական ինչ սկզբունքներ ու նորմեր է ճանաչում ՀՀ-ն, հետևաբար՝ ինչ պարտավորություններ է վերցնում իր վրա: **Երկրորդ՝** դրանք ուղեցույց են արտաքին քաղաքական գործունեություն իրականացնող պետական մարմինների համար: **Երրորդ՝** դրանք չափանիշ են արտաքին քաղաքական գործունեությունը, ինչպես նաև կնքած միջազգային և կառավարական պայմանագրերը արժևորելու համար:

### 3. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Արտաքին ոլորտում իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար պետությունն իրականացնում է արտաքին գործառույթներ (*վերհիշե՛ք 41-րդ դասը*): **Պետության արտաքին գործառույթները նրա գործունեության հիմնական ուղղություններն են, որոնք ուղղված են երկրի արտաքին խնդիրների և շահերի լուծմանը:** Դրանք նպատակամղված են այլ պետությունների հետ որոշակի հարաբերությունների հաստատմանը, դրանց զարգացմանը, երկրի պաշտպանությանը: Արտաքին գործառույթները սերտորեն կապված են ներքինների հետ, փոխադարձաբար լրացնում են իրար:

### Պետության արտաքին գործառույթները

**Երկրի պաշտպանության գործառույթը:** Խնդիրն է պաշտպանել երկրի անկախությունը, տարածքային ամբողջականությունը՝ դիվանագիտական, տնտեսական և հատկապես ռազմական (զինված ուժեր) միջոցառումների իրականացմամբ:

Երկրի պաշտպանության գործառույթը ենթադրում է զինված ուժերի (բանակի) ստեղծում, դրա անընդհատ կատարելագործում, բանակի մարտունակության և մարտական պատրաստականության բարձրացում, քաղաքացիական պաշտպանության և պահեստային զինված ուժերի կազմակերպում, ինչպես նաև այլ միջոցառումներ՝ նախատեսված պետության պաշտպանական-ռազմական դոկտրինայով:

**Դիվանագիտական գործառույթը:** Խնդիրն է հաստատել և պահպանել դիվանագիտական հարաբերություններ այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ՝ համաձայն միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի:

**Միջազգային խաղաղության, անվտանգության ապահովման գործառույթը:** Խնդիրն է քաղաքական և ռազմական փոխզիջումների և հավասարակշռության հաստատումը՝ այլ պետությունների հետ համագործակցելով. համաշխարհային, լոկալ և քաղաքակրթական պատերազմների կանխումը:

**Միջպետական ֆինանսատնտեսական համագործակցության գործառույթը:** Խնդիրն է այլ պետությունների հետ առևտրաֆինանսական հարաբերությունների հաստատումը. գործարար տնտեսական համագործակցությունը. ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը:

**Միջպետական գիտամշակութային, տեղեկատվական, էկոլոգիական համագործակցության գործառույթը:** Խնդիրն է այլ պետությունների հետ գիտամշակութային, տեղեկատվական կապերի զարգացումը. այլ պետություններում գտնվող հայ պատմամշակութային արժեքների պահպանությանը նպաստելը. հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդումը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը նպաստելը. երկրագնդի էկոլոգիական անվտանգության և մաքրության ապահովումը:

**Համաշխարհային իրավակարգի պահպանության գործառույթը:** Խնդիրն է մասնակցությունը միջպետական և ազգամիջյան բախումների կարգավորմանը. պայքարը միջազգային հանցավորության դեմ. զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ պայքարը:

**Մտորումներ:** Որոշ մրաժողներ արտաքին գործառույթ են համարում ուրիշի փառաձքների նվաճումը և ազդեցության գործիքների ընդլայնումը: Պատմաբանների հաշվարկով վերջին 5000 տարվա ընթացքում մարդկությունը 4700 տարի անընդհատ պայտերազմել է: Ճիշտ է, արդի ժամանակաշրջանում ուղղակի ազդեսխան արգելված է, սակայն չի վերացել այլ երկրների բնական ռեսուրսների նկատմամբ վերահսկողությունը, տնտեսական շահագործումը: Ի՞նչ էք մրաժում այս մասին:

#### 4. ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ

Ռազմական անվտանգության ապահովման ազգային երաշխիքը մարտունակ, արդիական սպառազինությամբ զինված, մարտական ու բարոյահոգեբանական բարձր պատրաստվածությամբ, ռազմական անվտանգության սպառնալիքների կանխմանն ու չեզոքացմանը պատրաստ զինված ուժերն են:

Սահմանադրությունը սահմանում է, որ «զինված ուժերն ապահովում են ՀՀ անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը: Չինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո»: Չինված ուժերն այլ նպատակով օգտագործվել չեն կարող: Դա քաղաքական կայունության, ժողովրդավարական զարգացման կարևոր նախապայմաններից է:

**Չինված ուժերի քաղաքական չեզոքության սկզբունքը:** Չինված ուժերը պարտավոր են չմասնակցել քաղաքականությանը, չմիջամտել քաղաքական գործընթացներին, քաղաքական հարցերում պահպանել չեզոքություն: Նմանապես պետական մարմինները և քաղաքական ուժերը պարտավոր են զինված ուժերը չներքաշել քաղաքական գործընթացներում: Չինված ուժերի չեզոքության սկզբունքի երաշխիքը նրա **ապաքաղաքականացումն է:** Դրա նպատակն է զինված ուժերը դուրս բերել այս կամ այն կուսակցության ազդեցությունից: Արգելվում է զինված ուժերում քաղաքական կազմակերպությունների գործունեությունը, վերջիններիս կառույցների ստեղծումը, ցանկացած քաղաքական քարոզչություն, այդ թվում՝ նաև ընտրական:

**Չինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքը:** Չինված ուժերը փակ, ստորակարգությամբ կազմակերպված պետական ծառայողների զինված ամբողջություն է: Պատմական փորձը վկայում է, որ զինված ուժերը կարիք ունեն քաղաքացիական վերահսկողության, քանի որ նրանք զենքը կարող են օգտագործել իշխանությունը նվաճելու կամ քաղաքական ուժերին օժանդակելու նպատակով: Արդի աշխարհում գործում է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ազատական մոդելը: Այն խարսխված է քաղաքական համակարգի սուբյեկտների և զինված ուժերի լիազորությունների կոչտ սահմանազատման վրա: Հասարակության մեջ հաստատված է փոխհամաձայնություն, ըստ որի «**քաղաքականությունը զինվորականների զբաղմունքը չէ**»:

#### Հարցեր

1. Ի՞նչ է արտաքին քաղաքականությունը, և ինչպե՞ս է չհավորվում այն:
2. Որո՞նք են ՀՀ արտաքին քաղաքականության սահմանադրական նպատակները:
3. Որո՞նք են ՀՀ արտաքին քաղաքականության ելակետային հիմնադրույթները:
4. Որո՞նք են պետության արտաքին գործառույթները:
5. Ի՞նչ է երկրի պաշտպանության գործառույթը:
6. Ո՞րն է զինված ուժերի սահմանադրական առաքելությունը:
7. Ի՞նչ է զինված ուժերի քաղաքական չեզոքության սկզբունքը:
8. Ի՞նչո՞ւ է անհրաժեշտ զինված ուժերի քաղաքացիական վերահսկողությունը:

## **ԳԱՍ 53. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

### **1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ**

**Միջազգային իրավունքն իրավական նորմերի համակարգ է, որը ստեղծվում է պետությունների կողմից իրենց կամաարտահայտության համաձայնեցման միջոցով և կարգավորում է պետությունների, ինչպես նաև միջազգային իրավունքի այլ սուբյեկտների միջև հարաբերությունները:**

Միջազգային իրավունքը տարբերվում է ներպետական իրավունքից: Ներպետական իրավունքը կարգավորում է տվյալ պետության տարածքում գոյություն ունեցող հարաբերությունները, այնինչ միջազգային իրավունքի կողմից կարգավորվող հարաբերությունները դուրս են ինչպես տվյալ պետության իրավասության ոլորտից, այնպես էլ նրա տարածքային սահմաններից: Միջազգային իրավունքը՝ որպես համակարգ, մեկն է, իսկ ներպետական իրավունքի համակարգերը բազմաթիվ են. որքան պետություն աշխարհում, այնքան էլ ազգային իրավունքի համակարգեր:

Միջազգային իրավունքը ներպետականից տարբերվում է իր մասնակիցներով: Ներպետական իրավունքի հիմնական աղբյուրներ են նորմատիվ ակտերը, իսկ միջազգային իրավունքի հիմնական աղբյուրներ են միջազգային պայմանագրերը:

Միջազգային իրավունքի ձևավորմանը սկսվեց դրա հետադարձ ներգործությունն ազգային իրավական համակարգերի վրա՝ պարտավորեցնելով պետություններին իրենց ներքին օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային իրավունքին: Այսպես՝ ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է. Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Դրանք ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:

**Միջազգային իրավունքի սուբյեկտներն ինքնուրույն կազմավորումներ են, որոնք մասնակցում են միջազգային հարաբերություններին, միջազգային նորմերի ստեղծմանը և կենսագործմանը:**

**Միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտն ինքնիշխան պետությունն է:** Պետությունն ինքնիշխան քաղաքական կազմակերպություն է, որն իր հատուկ լիազորությունների ուժով միջազգային հարաբերությունների ամենից հզոր և կազմակերպված սուբյեկտն է: Պետությունները համարվում են համընդհանուր սուբյեկտներ. նրանք իրավունք ունեն մասնակցելու ցանկացած միջազգային իրավական հարաբերության: Միջազգային իրավունքի սուբյեկտ է բուն պետությունը, այլ ոչ թե նրան ներկայացնող մարմինները և պաշտոնատար անձինք, հետևաբար՝ պետությունը պատասխանատու է իր մարմինների գործողության համար:

Միջազգային իրավունքի այլ սուբյեկտներն ամանցված են պետությունից, ինչը նշանակում է, որ այլ սուբյեկտներն իրենց կարգավիճակը ձեռք են բերում պետու-

թյան շնորհիվ: Բացի այդ, պետությունը վերահսկում է միջազգային հարաբերությունների այլ մասնակիցների գործունեությունը:

**Միջազգային իրավունքի սուբյեկտ են նաև միջազգային կազմակերպությունները:** Դրանք պետությունների՝ պայմանագրով հիմնադրված միավորումներ են՝ որոշակի ոլորտներում համագործակցություն իրականացնելու համար: Միջազգային կազմակերպություններից պետք է տարբերել միջազգային ոչ կառավարական կազմակերպությունները, որոնք ստեղծվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից: Օրինակ՝ Միջազգային ամնիստիա, Բժիշկներ առանց սահմանի և այլն: Սրանք միջազգային իրավունքի սուբյեկտ չեն:

Միջազգային կազմակերպությունների կարգավիճակը բխում է այն լիազորություններից, որոնցով նրանց օժտել են պետությունները: Այդ կարգավիճակը որոշված է տվյալ կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակներով և լիազորություններով: Միջազգային կազմակերպությունների գոյության և գործունեության իրավական հիմքը դրանց հիմնադիր փաստաթղթերն են, օրինակ՝ ՄԱԿ-ի կանոնադրությունը: Այն հատուկ միջազգային պայմանագիր է:

**Միջազգային իրավունքի սուբյեկտ են նաև անկախության համար պայքարող ազգերը:** Նրանք ստեղծում են հատուկ մարմիններ, որոնք կազմակերպում են այդ պայքարը և ճանաչվում են միջազգային հանրության կողմից մինչև պետության ստեղծումը: Դրանով իսկ այդ ազգերը դառնում են միջազգային իրավունքի սուբյեկտ: Ընդհանուր միջազգային կազմակերպությունում նրանք ունեն դիտորդի կարգավիճակ:

**Միջազգային իրավունքի սուբյեկտ են պետականակերպ կազմավորումները:** Այդպիսիք են Վատիկանը և ազատ քաղաքները: Վատիկանը քաղաք-պետություն է, որը համարվում է կաթոլիկ եկեղեցու միջազգային կենտրոնի նստավայրը: Վատիկանը դիվանագիտական կապեր ունի ավելի քան 80 երկրների հետ: ՄԱԿ-ում այն ունի դիտորդի կարգավիճակ: Ազատ քաղաքի միջազգային իրավական կարգավիճակ ունեյ, օրինակ, Արևմտյան Բեռլինը մինչև 1990 թ.: Ներկայումս ազատ քաղաքներ չկան:

## 2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Միջազգային վեճերը ՄԱԿ-ի կանոնադրությունը բաժանում է երկու տեսակի՝ **առանձնապես վտանգավոր**, որոնց շարունակումը կարող է սպառնալ միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը, և **ցանկացած այլ վեճեր:**

Միջազգային իրավունքի հրամայական սկզբունքներից է միջազգային վեճերի խաղաղ լուծման պահանջը: Յուրաքանչյուր պետություն պարտավոր է առաջացած միջազգային վեճերը լուծել խաղաղ միջոցներով այնպես, որ չվտանգի միջազգային խաղաղությունը: Միջազգային իրավունքի սուբյեկտներն ունեն վեճերի խաղաղ լուծման միջոցների ազատ ընտրության իրավունք:

Պետությունների միջազգային վեճերի լուծման գործում գլխավոր դերը խաղում

են համաձայնեցնող, հաշտեցնող միջոցները: Այդ միջոցների էությունն այն է, որ վեճը լուծվում է կողմերի ուղղակի շփման արդյունքում:

**Միջազգային բանակցությունը:** Այն վեճի լուծման ամենաշարժուն և արդյունավետ միջոցն է: Դրանց ընթացքում պետությունները կամ միջազգային կազմակերպությունները կարող են ընդունել վիճելի հարցի լուծման զանազան տարբերակներ:

**Խորհրդատվություն:** Բանակցությունների տարատեսակ է: Լինում է երկու տեսակի՝ մեկանգամյա հանդիպում, առանց հատուկ ձևականությունների, ինչպես նաև կանոնավոր ու պարբերական ձևով հանդիպումներ ու շփումներ, որի նպատակն է վերահսկել ինչ-որ համաձայնության կատարման ընթացքը:

**Բարի ծառայություն:** Երրորդ կողմի գործունեությունն է վիճող կողմերի միջև անմիջական շփումներ հաստատելու համար: Բարի ծառայություն կարող է մատուցել պետությունը, միջազգային կազմակերպությունը կամ նույնիսկ հեղինակավոր մասնավոր անձը: Բարի ծառայություն մատուցելու համաձայնություն պետք է տան վեճի բոլոր կողմերը:



**Միջնորդություն:** Երրորդ կողմն անմիջականորեն մասնակցում է բանակցություններին փոխադարձ պահանջների համաձայնեցման և կողմերի համար ընդունելի որոշման կայացման համար: Միջնորդներ կարող են լինել ինչպես պետությունները, այնպես էլ միջազգային կազմակերպությունները և մասնավոր անձինք:

**Փաստերի հաստատում:** Սրանք քննչական ընթացակարգեր են, որոնք կիրառվում են վեճերի հիմքում ընկած փաստերի հաստատման համար: Որպես կանոն, ստեղծվում են խառը հանձնաժողովներ՝ կազմված կողմերի հավասար թվով ներկայացուցիչներից: Երբեմն հանձնաժողով են ընդգրկում նաև երրորդ անձանց: Այդպիսի ընթացակարգի արդյունքը կողմերին տրվող զեկույցն է:

**Հաշտեցում:** Ներառում է փաստերի հաստատման և միջնորդության տարրեր և, որպես կանոն, իրականացվում է հաշտեցուցիչ հանձնաժողովի կողմից:

**Վեճերի լուծման դատական միջոցները:** Դատական քննության նպատակն իրավական նորմերի որոնումն է, որը պետք է կիրառվի դատական մարմինների կողմից վեճի լուծման համար, այլ ոչ թե փոխադարձորեն ընդունելի որոշման կայացումը: Հաշտեցման ընթացակարգերում վերջնական որոշումը կայացնում են կողմերը, իսկ դատականի դեպքում՝ միջազգային դատական մարմինը: Նրա որոշումն իրավաբանորեն պարտադիր է կողմերի համար:

### 3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՄԵԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Միջազգային իրավական պատասխանատվությունն իրավական հետևանքներն են, որ վրա են հասնում միջազգային իրավունքի նորմերը խախտած սուբյեկտի համար: Դրա հիմքը միջազգային իրավախախտումն է: Միջազգային իրավական պատասխանատվությունը լինում է **քաղաքական** և **նյութական**:

**Միջազգային իրավական քաղաքական պատասխանատվությունը** հարկադրական միջոցների կիրառումն է իրավախախտ պետության նկատմամբ: Օրինակ՝ միջազգային կազմակերպություններից հեռացնելը, անդամության կասեցումը, ազրեստրին ուժով ճնշելը: Դրա ամենից տարածված ձևերն են.

**1) ռեստրսիա.** մի պետության սահմանափակող բնույթի միջոցներն են՝ ուղղված այլ պետության դեմ, որը խախտել է առաջինի շահերը: Օրինակ՝ խախտող պետության քաղաքացիների իրավունքների սահմանափակումը, մաքսային տուրքերի բարձրացումն այդ պետության ապրանքների համար,

**2) ռեպրեսալիա.** բառացիորեն նշանակում է չզինված: Դրանք կիրառվում են ի պատասխան այլ պետության ոչ իրավաչափ գործողությունների, խախտված իրավունքները վերականգնելու նպատակով: Օրինակ՝ դիվանագիտական կապերի խզում, իրավախախտ պետությունից ապրանքների ներկրման արգելք (էմբարգո),

**3) սատիսֆակցիա.** այն բավարարումը, որ տալիս է իրավախախտ պետությունը տուժած պետության պատվին և արժանապատվությանը հասցված վնասի համար: Օրինակ՝ պաշտոնական ներողություն խնդրելը,

**4) ռեստորացիա.** ենթադրում է իրավախախտ պետության կողմից ինչ-որ նյութական օբյեկտի նախկին վիճակի վերականգնում: Օրինակ՝ ջրի որակի և մաքրության վերականգնում, որ կեղտոտվել էր իր մեղքով:

**Միջազգային իրավական նյութական պատասխանատվությունը** վրա է հասնում պետության կողմից միջազգային իրավական պարտավորությունների խախտման հետևանքով, որոնք կապված են նյութական վնասների պատճառման հետ: Դրա տեսակներն են՝

**1) ռեպարացիա.** նյութական վնասի հատուցումն է դրամական ձևով, ապրանքներով և ծառայություններով: Օրինակ՝ Դրիմի խորհրդակցության որոշմամբ Գերմանիայի ռեպարացիաները (1945 թ.) կազմել են 20 մլրդ. դոլար,

**2) ռեստիտուցիա.** պատերազմող պետությունների կողմից հակառակորդ պետության տարածքից ապօրինի վերցված և արտահանված գույքը բնեղենով վերադարձնելը: Օրինակ՝ արվեստի կամ մշակութային գործերը,

**3) սուբստիտուցիա.** ռեստիտուցիայի տարատեսակ է: Դրանք իրենցից ներկայացնում են անիրավաչափ ոչնչացված կամ վնասված գույքի, շինության, տրանսպորտային միջոցի, գեղարվեստական արժեքի և այլնի փոխարինումը:

### Հարցեր

1. Ի՞նչ հատկանիշներով են տարբերվում ազգային և միջազգային իրավունքը:
2. Ի՞նչ դեր են խաղում միջազգային պայմանագրերը մեր իրավական համակարգում:
3. Որո՞նք են միջազգային իրավունքի սուբյեկտները:
4. Որո՞նք են միջազգային վեճերի լուծման հաշտեցուցիչ միջոցները:
5. Որո՞նք են միջազգային վեճերի լուծման դատական միջոցների հատկությունները:
6. Ի՞նչ է միջազգային իրավական պատասխանատվությունը:
7. Որո՞նք են միջազգային քաղաքական պատասխանատվության տեսակները:
8. Որո՞նք են միջազգային նյութական պատասխանատվության տեսակները:

### ԳԱՍ 54. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ


#### 1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՉԵՎԵՐԸ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Միջազգային իրավունքի նորմերը ձևավորվում են հատուկ կարգով: Միջազգային իրավունքը կարգավորում է միջազգային հարաբերությունները, որոնցում չկա ոչ մի բարձրագույն օրենսդիր կամ այլ իշխանության մարմին: Աշխարհի պետություններն իրենք են ստեղծում միջազգային իրավական նորմերը: Այդպիսով, միջազգային իրավունքի նորմերը ստեղծվում են անմիջապես միջազգային իրավունքի սուբյեկտների կողմից և ամենից առաջ՝ պետությունների: Դա տեղի է ունենում պետությունների ազատ կամքը համաձայնեցնելու միջոցով և այդ կամքը նրանց միջև կնքվող պայմանագրերում ամրագրելով:

Միջազգային իրավունքի նորմերը ստեղծելու, այսինքն՝ սուբյեկտների կամքի համաձայնեցման գործընթացը կատարվում է տարբեր ձևերով: Այդ ձևերը կոչվում են միջազգային իրավունքի աղբյուրներ: Արդի միջազգային իրավունքի աղբյուրների շրջանակը ներառում է **համընդհանուր (կամ հիմնական), հատուկ, օժանդակ աղբյուրները**: Միջազգային իրավունքի համընդհանուր աղբյուրներ են միջազգային պայմանագիրը և սովորույթը:

**Միջազգային պայմանագրեր:** Միջազգային պայմանագիրը միջազգային իրավունքի նորմի գոյության գրավոր ձևն է: Դրանք միջազգային իրավունքի հիմնական աղբյուրներն են, որոնց կնքումով համաձայնագրող իրավական արժեքները և սկզբունքները դարձան համաշխարհային իրավական արժեք, վերաժվեցին իրավական չափանիշների, որոնց պետք է ձգտեն բոլոր պետությունները: Ըստ գործողության տարածքի միջազգային պայմանագրերը լինում են համաշխարհային, տարածաշրջանային, երկկողմանի (երկու պետությունների միջև կնքված):

#### Միջազգային պայմանագրերն ըստ գործողության տարածքի



**Միջազգային իրավունքի համընդհանուր աղբյուր է նաև սովորույթը:** Սովորույթը միջազգային իրավունքում որպես իրավական նորմ ընդունված ընդհանուր

պրակտիկան է: Միջազգային իրավական սովորույթները պրակտիկայում ձևավորված չգրված կանոններ են, որոնք ունեն իրավաբանական ուժ: Որոշակի պահից դրանք կարող են նաև իրավաբանորեն ամրագրվել: Օրինակ՝ դիվանագիտական անձեռնմխելիությունը հազարամյակներ գործում էր որպես սովորութային կանոն:

**Միջազգային իրավունքի հատուկ աղբյուր են միջազգային կազմակերպությունների որոշումները:** Այդ կազմակերպությունների իրավունքը՝ ստեղծել միջազգային նորմեր, որոշվում է դրանք ստեղծող պետությունների կողմից և ձևակերպվում է այդ միջազգային կազմակերպության հիմնադիր փաստաթղթում: Օրինակ՝ ՄԱԿ-ի կանոնադրության մեջ շարադրված են նրա լիազորությունների ընդհանուր շրջանակը և նորմեր ստեղծելու նրա իրավունքների կոնկրետ սահմանները:

**Միջազգային իրավունքի օժանդակ աղբյուրները:** Որպես օժանդակ աղբյուր են ծառայում **իրավունքի ընդհանուր սկզբունքները**, որոնք գործում են ցանկացած իրավական համակարգում: Օրինակ՝ արդարություն, բարեխղճություն և այլն:

Օժանդակ աղբյուր են նաև **միջազգային կազմակերպությունների բանաձևերը և**



**որոշումները**, որոնք չունեն պարտադիր իրավական ուժ: Դրանցում սահմանվում են սկզբունքներ և նորմեր, որոնք կենսագործվում են հետագայում կնքված պայմանագրերում: Այսպես, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևերը մեծ դեր են խաղացել մարդու իրավունքների մասին միջազգային պայմանագրերի կնքման համար:

Միջազգային իրավունքի օժանդակ աղբյուր են նաև **միջազգային դատարանների ու արբիտրաժների որոշումները:** Դրանք պարտադիր են այն վիճող կողմերի համար, ում վերաբերյալ կայացվել են: Դրանք չեն ստեղծում նախադեպեր, սակայն, օրինակ՝ ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումները սովորաբար հաշվի են առնվում նոր նորմեր ստեղծելուց, իսկ դատարանի հիմնավորումները հաճախ օգտագործվում են նման վեճերում կողմերի դիրքորոշումները հիմնավորելու համար:

## 2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԵՐՈՒՆՔՆԵՐԸ

Միջազգային իրավունքի սկզբունքները միջպետական իրավունքի ելակետային, ղեկավար նշանակության կանոններն են, որոնցում խտացված կերպով արտահայտված է միջազգային իրավունքի հիմնական բովանդակությունը: Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներն ամրագրված են ՄԱԿ-ի կանոնադրության մեջ: Դրանց բովանդակությունը բացվում է Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում, որն ընդունվել է 1970 թ. Գլխավոր ասամբլեայի կողմից:

**Ինքնիշխան հավասարության սկզբունքը:** Պետությունները պարտավոր են հարգել միմյանց ինքնիշխան հավասարությունը և յուրօրինակությունը, ինչպես նաև ինքնիշխանությունից բխող իրավունքները (*վերին շեշտը 38-րդ դասը*): Բոլոր պե-

տություններն ունեն հավասար հիմնական իրավունքներ ու պարտականություններ, իսկ միջազգային համաժողովներում և կազմակերպություններում ամեն պետություն ունի մեկ ձայն: Պետություններն իրավունք ունեն ազատորեն ընտրել և զարգացնել իրենց քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային համակարգերը: Նրանք հավասարապես իրավունք ունեն մասնակցել միջազգային կազմակերպություններին, իրենց շահերը շոշափող միջազգային հարցերի լուծմանը:

**Պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը:** Ներքին ոլորտում պետությունը չունի պարտավորություններ իր գործընկեր պետությունների և միջազգային կազմակերպությունների նկատմամբ: Չմիջամտելու սկզբունքից բխում են հետևյալ գործողությունների արգելքը. զինված ներխուժման և միջամտության բոլոր ձևերը, որոնք ուղղված են պետության ինքնիշխանության դեմ. միջոցառումների կիրառումը՝ այլ պետությանն իրեն ենթարկելու և նրա իրավունքների իրականացումը սահմանափակելու նպատակով. բռնության միջոցով այլ պետության կարգերի փոփոխմանն ուղղված գործունեության կազմակերպումը. այլ պետությունում ընթացող ներքին պայքարին չխառնվելը:

**Ուժի և ուժի սպառնալիքի կիրառման սկզբունքը:** ՄԱԿ-ի կանոնադրությունը թույլ է տալիս կիրառել ուժ կամ սպառնալ դրա կիրառմամբ երկու դեպքում՝ ա) ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմամբ՝ խաղաղությանը սպառնալու կամ ագրեսիայի ակտի դեպքում, բ) զինված հարձակման դեպքում՝ ինքնապաշտպանության կարգով: Այդպիսով՝ ագրեսիվ պատերազմը և դրա քարոզչությունն արգելվում են: Ուժ կիրառելու ձևեր են պետության զինված ուժերի ներխուժումը կամ հարձակումն այլ պետության տարածքի վրա, կամ ռազմական օկուպացիան, ուրիշ պետության ռմբակոծումը, այլ պետության նավահանգիստների կամ ավերի զինված շրջափակումը, զինված խմբեր կամ վարձկաններ ուղարկելը և այլն:

**Վեճերի խաղաղ լուծման սկզբունքը:** Վեճի կողմերն իրավունք չունեն իրաժարվելու խաղաղ կարգավորումից. նրանք ազատ են իրենց վեճերը լուծելու միջոցների ընտրության հարցում: Եթե խաղաղ միջոցների կիրառումը չի հանգեցրել վեճի լուծմանը, ապա պետությունները պետք է փնտրեն այլ խաղաղ միջոցներ:

**Միջազգային իրավունքից բխող պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքը:** Պետությունը պարտավոր է բարեխիղճորեն կատարել միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներից, միջազգային պայմանագրերից բխող իր պարտավորությունները: Ներպետական ոլորտում ևս ամեն մի պետություն պարտավոր է կատարել իր միջազգային պարտավորությունները:

**Տարածքային ամբողջականության սկզբունքը:** Տարածքը չի կարող դառնալ ձեռքբերման օբյեկտ այլ պետության կողմից ուժով կամ դրա կիրառման սպառնալիքի հետևանքով: Պետությունները պարտավոր են ձեռնպահ մնալ ուրիշ պետության տարածքային անձեռնմխելիությունը և քաղաքական անկախությունը ուղղակի կամ անուղղակի վտանգող գործողություններից: Արգելվում է կատարել գործո-

դուքյուններ, որոնք նպատակ ունեն մասնակիորեն կամ ամբողջովին քայքայել այլ պետության տարածքային ամբողջականությունը:

ԼՂՀ-ի անկախության հռչակումը ոչ թե Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքի խախտում է, այլ ինքնորոշման սկզբունքի իրականացում: Տարածքային ամբողջականության սկզբունքը կարգավորում է պետությունների միջև հարաբերությունները և չի վերաբերում այն դեպքերին, երբ ժողովուրդն ինքնորոշվելով՝ ստեղծում է իր պետությունը:

**Իրավահավասարության և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը:** Բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն ազատորեն որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը և իրականացնելու իրենց զարգացումը: Պետությունները պարտավոր են ձեռնպահ մնալ ցանկացած բռնի գործողությունից, որը ժողովուրդներին գրկում է ինքնորոշման և անկախության իրավունքից: Իրենց անկախության համար մղվող պայքարում ժողովուրդները կարող են օգտագործել բոլոր անհրաժեշտ միջոցները: Ժողովուրդն իրավունք ունի ազատ ընտրել անկախ պետություն ստեղծելու ուղին:

**Համագործակցության սկզբունքը:** Պետությունները պարտավոր են համագործակցել միմյանց հետ միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման, միջազգային համագործակցության զարգացման նպատակով, անկախ նրանց քաղաքական, տնտեսական, սոցիալական համակարգերից:

**Մարդու իրավունքների հարգման սկզբունքը:** Բոլոր պետությունները պետք է հարգեն իրենց տարածքում բնակվող բոլոր անձանց հիմնական իրավունքներն ու ազատությունները: Պետությունները պարտավոր են թույլ չտալ խտրականություն, աջակցել մարդու հիմնական իրավունքների համընդհանուր հարգմանը և համագործակցել այդ նպատակին հասնելու գործում:

**Սահմանների անխախտելիության սկզբունքը:** Յուրաքանչյուր պետություն պարտավոր է ձեռնպահ մնալ այլ պետության՝ սահմանների խախտման նպատակով ուժ և ուժի սպառնալիք կիրառելուց:

Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների մեկնաբանման և կիրառման ժամանակ պետք է հաշվի առնել, որ դրանք բոլորը փոխկապակցված են, և յուրաքանչյուրը պետք է դիտարկվի մյուս բոլոր սկզբունքների համատեքստում:

### Հարցեր

1. Ինչպե՞ս են ստեղծվում միջազգային իրավունքի նորմերը:
2. Որո՞նք են միջազգային իրավունքի աղբյուրների տեսակները:
3. Ի՞նչ են միջազգային պայմանագրերը:
4. Ի՞նչ են միջազգային իրավունքի հսկուի աղբյուրները:
5. Որո՞նք են միջազգային իրավունքի օժանդակ աղբյուրները:
6. Ի՞նչ է նշանակում ինքնիշխան հավասարության սկզբունքը:
7. Արդյո՞ք բացարձակ է ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը:
8. Որո՞նք են ուժ և ուժի սպառնալիք կիրառելու չները:
9. Ի՞նչ է տարածքային ամբողջականության սկզբունքը:
10. Ի՞նչ է ժողովուրդների ինքնորոշման իրավունքը:

## ԳԱՍ 55. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

### 1. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազգային ժողովի մասնակցությունն արտաքին քաղաքականության կառավարմանը էական է: Խորհրդարանի օրենքները կարող են վերաբերվել նաև արտաքին քաղաքականությանը, դրա կարգավորմանը: Ընդ որում՝ բացառապես օրենքներով են կարգավորվում միջազգային պայմանագրերի կնքման, չեղյալ համարելու կարգը և պայմանները: Իսկ օրենքները գերակայություն ունեն այլ մարմինների ակտերի նկատմամբ:

**Արտաքին քաղաքականության նկատմամբ Ազգային ժողովն իրականացնում է խորհրդարանական վերահսկողություն:** Այն ենթադրում է նախ բյուջետային վերահսկողություն: Ազգային ժողովը հաստատում է պետական բյուջեն: Բյուջեում նախատեսված են նաև արտաքին քաղաքականության համար հատկացվող գումարները: Միաժամանակ նա վերահսկում է պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ:

Ազգային ժողովն իրավունք ունի անվստահություն հայտնել կառավարությանը, որի համար կարող են առիթ դառնալ նաև արտաքին քաղաքական հարցերը:

Ազգային ժողովի պատգամավորները, խմբակցությունները և խմբերն իրենց լիազորությունները կարող են օգտագործել արտաքին քաղաքական հիմնախնդիրների պարզաբանման և լուծման համար: Ազգային ժողովում գործում է արտաքին քաղաքականության հարցերով մշտական հանձնաժողով: Այն ստեղծվում է ոլորտի օրենսդրական ակտերի նախագծերի և այլ հարցերի նախնական քննարկման, դրանց վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացություններ ներկայացնելու համար:

Ազգային ժողովը վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է համարում միջազգային պայմանագրերը հանրապետության նախագահի առաջարկությամբ:

**Ստորումներ:** *Կարդացեք Սահմանադրության 81-րդ հոդվածը և դո՛ւրս գրեք միջազգային պայմանագրերի այն շրջանակը, որը ենթակա է վավերացման խորհրդարանում: Ինչո՞ւ է այդ պայմանագրերի համար սահմանված խորհրդարանական վավերացում: Ո՞ր պայմանագրերը կներառեիք այդ շրջանակում:*

### 2. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

**Արտաքին քաղաքականության ընդհանուր դեկավարումն իրականացնում է հանրապետության նախագահը:** Նախագահը՝ որպես պետության գլուխ, ներկայացնում է հանրապետությունը միջազգային հարաբերություններում, կնքում է միջազգային պայմանագրեր, Ազգային ժողովի վավերացմանն է ներկայացնում միջազգային պայմանագրերը և ստորագրում դրանց վավերագրերը, հաստատում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացում չպահանջող միջազգային

պայմանագրերը: Նախագահը նշանակում և հետ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններին առընթեր ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչներին, ընդունում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերը: Նախագահին օրենքով սահմանված կարգով լուծում է քաղաքական ապաստան տալու հետ կապված հարցը:

**Կառավարության իրավասությունն արտաքին քաղաքականության ոլորտում:**

Կրելով գործադիր իշխանության իրականացման առաքելությունը, կառավարությունն օժտված է որոշակի իրավասությամբ նաև արտաքին քաղաքականության ոլորտում: Քանի որ արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարությունն իրականացնում է նախագահը, ապա կառավարությունն այն մշակում և իրականացնում է նախագահի հետ համատեղ: Ընդ որում՝ արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով կառավարության նիստ կարող է հրավիրել և վարել նաև նախագահը:

**Արտաքին գործերի նախարարությունը:** Արտաքին քաղաքականության անմիջական կառավարումն իրականացնում է արտաքին գործերի նախարարությունը (ԱԳՆ): Այն միանձնյա ղեկավարում է ԱԳ նախարարը, որը պատասխանատու է ԱԳՆ-ի խնդիրների կատարման համար: ԱԳՆ-ն մշակում է արտաքին քաղաքականության ծրագրերը և դրանք ներկայացնում կառավարության քննարկմանը: Այն կառավարությանն իրազեկ է պահում երկրի արտաքին դրության և առանձին պետությունների հետ ծագող խնդիրների մասին: ԱԳՆ-ն ամենօրյա կապի մեջ է երկրում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցիչների հետ, ընդունում է պաշտոնական պատվիրակություններ և բանակցություններ վարում նրանց հետ: Նրա կարևորագույն խնդիրներից է միջպետական պայմանագրերի և համաձայնագրերի նախապատրաստումը և դրանք կառավարության քննարկմանը ներկայացնելը: ԱԳՆ-ի պարտականություններից է նաև արտասահմանում դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարումն ու դրանց վերահսկումը:

ԱԳՆ-ի համակարգի մեջ մտնում են ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները, հյուպատոսությունները, ներկայացուցչությունները միջազգային կազմակերպություններում, ԱԳՆ կենտրոնական ապարատը:

### 3. ԳԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆԸ

**«Գիվանագիտություն» հասկացությունը:** Արտաքին քաղաքականությունն իրականացվում է համապատասխան կառուցակարգերի միջոցով: Դրանցից ամենակարևորը դիվանագիտությունն է: **Գիվանագիտությունը պետության հատուկ մարմինների գործունեությունն է, որի նպատակը խաղաղ միջոցներով պետության արտաքին քաղաքականության ծրագրերի և խնդիրների իրագործումն է:**

Գիվանագիտությունը պաշտոնապես իրականացվում է մի քանի ձևերով՝ անձնական շփումներով, նամակագրությամբ, զանազան նոտաներով, հուշագրերով,

հայտարարություններով և այլն: Նոտաները կարող են լինել թե՛ գրավոր, թե՛ բանավոր: Դրանք արտահայտում են երկրի դիրքորոշումը միջազգային կարևոր հարցերի վերաբերյալ կամ միջպետական պաշտոնական հաղորդակցության միջոց են: Ոչ պակաս կարևոր է միջազգային երկկողմանի ու բազմակողմանի պայմանագրերի և այլ փաստաթղթերի նախապատրաստումն ու ստորագրումը: Դիվանագիտությունն ընդգրկում է նաև տարբեր մակարդակների միջազգային համաժողովների և հանդիպումների նախապատրաստումը, կազմակերպումն ու անցկացումը, մասնակցությունը միջազգային կազմակերպությունների աշխատանքներին:

**Դիվանագիտությունն ունի բազում խնդիրներ:** Դիվանագետի առաջնահերթ խնդիրն է ներկայացնել հավատարմագրող պետությունը դեսպանընկալ պետությունում, այսինքն՝ այն երկրում, որտեղ նա լիազորված է աշխատել: Մասնենօրյա աշխատանք է և պահանջում է մշտական կապ պահպանել երկրի ԱԳՆ-ի հետ: Դիվանագետն առաջին հերթին կոչված է պաշտպանելու հավատարմագրող պետության քաղաքական շահերը դեսպանընկալ երկրում: Նրա առաքելության մեջ է մտնում նաև երկու պետությունների միջև բարենպաստ մթնոլորտ ստեղծելը, մշակույթի, գիտության և այլ ոլորտների համագործակցությանը, երկկողմ առևտրի զարգացմանը, տեղեկատվության փոխանակմանը նպաստելը:



**Դիվանագիտական կապերի հաստատումը և դիվանագետների նշանակման կարգը:** Պետությունների միջև մշտական դիվանագիտական ներկայացուցչություն չի կարող հաստատվել, քանի դեռ չի կայացել մի պետության կողմից մեկ այլ պետության ճանաչումը, և նրանց միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին համաձայնություն չի ձեռք բերվել: Ճանաչման հարցը բարձրանում է, երբ միջազգային ասպարեզում ի հայտ է գալիս նոր պետություն: Պետությանը որպես միջազգային իրավունքի սուբեյկտ ճանաչելը թույլ է տալիս ճանաչված երկրին լինել միջազգային հարաբերությունների լիիրավ անդամ:

Դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար նշանակվելու համար պահանջվում է համաձայնություն՝ **ազրեման:** Հավատարմագրող կողմն իր ԱԳՆ-ի միջոցով ընդունող կողմին է դիմում՝ խնդրելով ազրեման այդ պաշտոնին առաջադրվող թեկնածուի համար: Ներկայացվում են թեկնածուի կենսագրությունը, կրթությունը և այլ տեղեկություններ: Ազրեման ստանալուց հետո այդ անձը մեկնում է հավատարմագրված երկիր և նրա ղեկավարին հանձնում հավատարմագիրը:

**Դեսպանը** նշանակվում է իր երկրի կողմից և համարվում է հավատարմագրող երկրի ներկայացուցիչն ու լիազորված անձը դեսպանընկալ երկրում: Դեսպանը կարող է ունենալ խորհրդակցականներ կամ կցորդներ՝ տնտեսական, քաղաքական, առևտրի, ռազմական, վարչական, հանրային գործերով և այլն:

Գիվանագիտական ներկայացուցիչները գործում են այնքան ժամանակ, քանի դեռ երկու երկրների միջև գործում են գիվանագիտական հարաբերություններ: Սակայն դրանք կարող են խզվել պատերազմի, ոչ բարյացակամ վերաբերմունքի հետևանքով: Միջպետական կապերի խզման մասին պաշտոնապես հայտարարում է խզող կողմը՝ հետ կանչելով իր գիվանագիտական ներկայացուցիչներին:

**Գիվանագիտական անձեռնմխելիությունը:** Դեսպանը նկալ երկրի իշխանություններն իրավունք չունեն առանց դեսպանի կամ լիազորված անձի թույլտվության մտնել դեսպանության տարածքը՝ ծառայողական շենք, օժանդակ շինություններ, բակ և այլն: Գիվանագիտական արտոնությունների իրավունքը ենթադրում է նաև արխիվների անձեռնմխելիությունը, հարկերից ազատվելը և իր երկրի հետ կապի ազատություն ունենալը:

Դեսպանը նկալ երկիրն իրավունք չունի գիվանագետներին պատժել իրավախախտումների և նույնիսկ հանցանքների համար: Նրանք դրանց համար պատասխանատու են միայն իրենց երկրին: Սակայն լինում են դեպքեր, երբ գիվանագետի հավատարմագրող պետությունը գրկում է նրան անձեռնմխելիության իրավունքից և թույլ է տալիս, որ դեսպանը նկալ երկիրը նրան պատասխանատվության ենթարկի:

**Հյուպատոսությունը:** Դեսպանատանը կից կամ նրանից անկախ գործում է տվյալ երկրի հյուպատոսությունը: Հյուպատոսի իրավասությունը սահմանափակ է: Օրինակ՝ հյուպատոսն իրավունք չունի իր երկիրը ներկայացնելու միջազգային հարաբերությունների բոլոր ոլորտներում: Հյուպատոսը գործում է սահմանափակ տարածքային մարզում, քաղաքում կամ շրջանում, որն էլ համարվում է նրա հյուպատոսական շրջանը: Հյուպատոսական շրջան կարող է հանդիսանալ նաև երկրի ամբողջ տարածքը: Հյուպատոսը տրամադրում է իր երկրի մուտքի անցագիր, պաշտպանում է իր երկրի և քաղաքացիների շահերը: Նա կատարում է տվյալ պետությունում իր երկրի՝ ժամանակավոր և մշտական բնակություն հաստատած քաղաքացիների հաշվառում, անձնագրերի տրամադրում, ամուսնության, ժառանգության գրանցում, զանազան փաստաթղթերի նոտարական հաստատում և օժանդակում է իր երկրից ժամանած քաղաքացիներին:

### Հարցեր

1. Որո՞նք են խորհրդարանի լիազորություններն արտաքին ոլորտում:
2. Որո՞նք են նախագահի լիազորություններն արտաքին ոլորտում:
3. Որո՞նք են կառավարության լիազորություններն արտաքին ոլորտում:
4. Ի՞նչ է արտաքին գործերի նախարարությունը, և որո՞նք են նրա խնդիրները:
5. Ի՞նչ է գիվանագիտությունը, և որո՞նք են դրա խնդիրները:
6. Ո՞րն է գիվանագետների նշանակման կարգը:
7. Ինչի՞ վրա է փարսժվում գիվանագիտական անձեռնմխելիությունը:
8. Ի՞նչ է հյուպատոսությունը, և որո՞նք են դրա խնդիրները:

## ԳՒԱՍ 56. ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐ

*Անգլիական շունի հավերժական բարեկամներ և շունի  
հավերժական թշնամիներ, այլ ունի միայն հավերժական շահեր:  
Լորդ Հենրի Պալմերստոն, Անգլիայի վարչապետ 1855-1865 թթ.*

### 1. «ԱԶԳ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

Մամուլում, քաղաքական գործիչների ելույթներում, ամօրյա խոսակցության մեջ հաճախ գործածվող արտահայտություն է «ազգային շահը»: Այդ հասկացության իմաստը հասկանալու համար նախ պարզաբանենք դրա առաջին բաղադրիչը՝ **ազգը**:

«Ազգ» հասկացության որոշ հատկանիշներ հաճախ հասարակական-քաղաքական հնչեղություն են ստանում: Անդրադառնանք դրանցից մեկ-երկուսին:

Առաջինն այդ շարքում, բնականաբար, **լեզուն** է: Համարվելով ազգի, ժողովրդի համար **մայրենի**՝ լեզուն միավորիչ հզոր գործոնի դեր է ստանձնում տվյալ ազգի համար ոչ միայն որպես էթնիկ, լեզվացեղային միություն, այլև որպես վարչատարածքային, պետական-քաղաքական միավոր ստեղծող, կառուցող ուժ:

Խոսելով Արտաշես I-ի կողմից հայկական տարածքների վերամիավորման մասին՝ Ստրաբոնը հավաստում է. «Հայաստանը ... աճել է Արտաշեսի ջանքերով... և ուստի այստեղ բոլորը միավելու են»: Ստրաբոնը սխալվում էր՝ հայկական տարածքների բնակչության հայալեզու լինելը համարելով Արտաշես արքայի գործունեության հետևանք. իրականում այդ տարածքները վաղուց արդեն հայաբնակ էին, ինչը և Արտաշեսի միավորիչ գործունեությանը նպաստող կարևոր հանգամանք էր: Ի դեպ, Ստրաբոնի տեսակետը, եթե ճիշտ չէր տվյալ դեպքի համար, ապա անհիմն չէր պատմական զարգացման տրամաբանության առումով: Այսպես՝ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների արդյունքում ձևավորված հելլենիստական աշխարհին բնորոշ էր հունարենի տարածումը ոչ միայն Ալեքսանդրի տերության ողջ տարածքում, այլև հետագայում՝ տերության տրոհման արդյունքում ստեղծված հելլենիստական պետություններում: Ավելի ուշ՝ VII դարից սկսած, արաբական արշավանքների և Արաբական աշխարհակալ խալիֆայության ստեղծմանը հաջորդեց արաբերենի տարածումը Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի բազմաթիվ երկրներում: Նոր ժամանակներում, աշխարհում եվրոպական պետությունների ազդեցության մեծացմանը, գաղութային պետությունների ստեղծմանը զուգահեռ, ընդարձակվում էին անգլերենի, ֆրանսերենի, իսպաներենի, պորտուգալերենի և եվրոպական այլ լեզուների տարածման սահմանները:

Ռուսերենը, ռուսական պետության ընդարձակման և քաղաքական ազդեցության մեծացման հետ մեկտեղ, տարածում է գտել ոչ միայն ռուսական կայսրության, ավելի ուշ՝ Խորհրդային Միության ժողովուրդների մեջ, այլև սոցիալիստական համակարգի երկրներում, որոնք սփռված էին Արևելյան Եվրոպայում, Ասիայում, Լատինական Ամերիկայում:

«Ազգ» հասկացության հաջորդ կարևոր հատկանիշը, որը նույնպես, որպես կանոն, քաղաքական հնչերանգ է ստանում, **կրոնն է** (դավանանքը): Կրոնական ուղղության ընտրությունն արդեն քաղաքական կողմնորոշման ակտ է: Այդպիսի մի քայլ էր, օրինակ, 988 թ. քրիստոնեության ընդունումը Հին Ռուսիայի կողմից, որով

Կիևյան իշխանությունը Վլադիմիր իշխանի գլխավորությամբ ցանկանում էր սերտացնել իր հարաբերությունները քրիստոնյա Բյուզանդիայի հետ: Պատմական նույն ժամանակաշրջանում քրիստոնեություն ընդունեցին նաև լեհերը, չեխերն ու հունգարացիները, սակայն կաթոլիկ ծեսով, քանի որ նրանց ձգտումներն ուղղված էին դեպի արևմուտք՝ Արևմտյան Եվրոպա, որի գաղափարական առաջնորդը հռոմեական կաթոլիկ եկեղեցին էր: Կրոնական գործոնը կարող է դառնալ նաև ազգի քաղաքական մասնատվածության պատճառ, ինչպես դա եղավ Ֆրանսիայում, երբ կաթոլիկների ու հուգենոտների (քողոքականների) միջև պայքարը վերաճեց զինված հակամարտության: Դրա բարձրակետը դարձավ Բարդուղիմեոսյան արյունալի գիշերը (1572 թ. օգոստոսի 24): Այսօր էլ կրոնական դրոշի տակ մղվող զինված պայքարը բազմաթիվ մարդկային կյանքեր է խլում Իրաքում, Աֆղանստանում, Սուդանում, Հյուսիսային Իռլանդիայում և այլ երկրներում:

«Ազգ» հասկացության այլ հատկանիշներ ևս քաղաքական իմաստ են ստանում: Այդպիսին է ազգի, էթնոսի **ձևավորման տարածքը**, որը տվյալ ազգի ներկայացուցիչների գիտակցության մեջ ձևակերպում է որպես **պատմական հայրենիք** և



Արցախյան շարժման հանրահավաքներից, 1988 թ.

շարունակում իր պատմաքաղաքական դերը՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի փոփոխություններ են կրել ազգային պետության կամ ժողովրդի բնակեցման վարչատարածքային սահմանները:

## 2. «ԱԶԳԱՅԻՆ ՇԱԿ» ՀԱՍԿԱԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

«Ազգային շահ» հասկացությունը գիտական շրջանառության մեջ է մտել ոչ վաղ անցյալում: Միայն 1935 թ. այն տեղ գտավ սոցիալական գիտությունների օբսֆորդյան հանրագիտարանի մեջ: Երկրորդ աշխարհամարտից հետո հիմնահարցը ծավալուն կերպով ներկայացրեց ամերիկացի քաղաքական գործիչ, դիվանագետ Հենրի Մորգենթաուն իր «Ի պաշտպանություն ազգային շահի» (1948 թ.) գրքում: «Շահ» բառը կարելի է մեկնաբանել որպես օգտակար, լավագույն: **Այսպիսով՝ «ազգային շահ» հասկացությունը ցույց է տալիս, թե ինչն է օգտակար և լավագույն որևէ երկրի (ժողովրդի) համար և՛ երկրի ներսում, և՛ մյուս պետությունների հետ ունեցած հարաբերություններում:**

Հետևաբար, ազգային շահն ինքնին վերացական և սուբյեկտիվ կատեգորիա է, քանզի դրա հիմնական բնութագրիչները որոշվում են տվյալ հասարակության ու պետության մեջ տիրապետող **արժեքային համակարգով**: Ազգային շահն իրականում արտահայտվում է դրա գործադրման ընթացքում: Այդ տեսակետից քա-

ղաքականությունը կարելի է դիտարկել որպես ազգային շահերի իրականացման կարևորագույն միջոց:

Ազգային շահերի ձևավորումը պատմական երկարատև գործընթացի արդյունք է, որի վրա ազդում են տնտեսական, սոցիալական, ռազմական, քաղաքական և այլ գործոններ: Գրանց բոլորի հանրագումարն էլ որոշում է տվյալ ժողովրդի, երկրի ազգային պատմական փորձի բովանդակությունն ու բնույթը: Ազգային շահերը, հետևաբար, հասարակական-պատմական երևույթ են և փոփոխություններ են կրում պատմական հանգամանքների փոխվելուն գուցահեռ:

Ազգային-պետական շահերը ձևավորվում են պետության աշխարհաքաղաքական բնութագրիչներին (պարամետրերին) և ռեսուրսային հնարավորություններին համապատասխան: Այդ շահերի ձևավորման վրա նշանակալի ազդեցություն են ունենում երկրի տնտեսական զարգացման մակարդակը, նրա տեղն ու դերը համաշխարհային հանրության մեջ, աշխարհագրական դիրքը, ազգային ավանդույթները, այլ գործոններ:

Պակաս նշանակություն չունեն նաև ներքաղաքական շահերը, հիմնական քաղաքական ուժերի դիրքորոշումները:

**Մտորումներ:** Երբեմն պետական շահերը հակադրում են ազգային և հասարակական (քաղաքացիական հասարակության) շահերին: Համաձայն եք արդյոք այդպիսի հակադրությանը: Հիմնավորե՞ք ձեր կարծիքը:

Ազգային-պետական իրական շահերը, որոնք առնչվում են պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, ներքին գործերին չմիջամտելու սկզբունքներին, պետությունների արտաքին քաղաքական գործունեության և միջազգային հարաբերությունների իրականացման գլխավոր շարժիչ ուժերն են:

Ազգային իրական շահերի բախումը հակամարտություններ է ծնում, բայց միջազգային ասպարեզում հակամարտություններ կարող են ծնունդ առնել նաև թյուրըմբռնված, իրականությանն անհամարժեք ձևակերպված ազգային շահերից կամ ազգային անվտանգության նկատառումներից: Այդպես Միացյալ Նահանգները պատերազմ սկսեցին Վիետնամում 1960-ական թվականներին, իսկ Խորհրդային Միության գորքերը 1979 թ. դեկտեմբերին մտան Աֆղանստան: Երկու դեպքում էլ պետությունների ղեկավարները չկարողացան տարբերել իրենց երկրների երկարաժամկետ ռազմավարական շահերը այսրոպեական ձգտումներից և ներքաշեցին իրենց ժողովուրդներին շատ թանկ արժեցող, նախապես արդեն ամոթալի պարտության դատապարտված արկածախնդրության մեջ:

Ցանկացած պետության արտաքին քաղաքականությունը կարող է իրատեսական համարվել այն չափով, որքանով այն կառուցված է միջազգային հարաբերությունների համակարգում ընդգրկված մյուս կողմերի շահերը հաշվի առնելով: Դա առանձնակի նշանակություն է ստանում ժամանակակից աշխարհում, որտեղ ցանկացած պետության ազգային շահերն անպայման պարտադրում են ոչ միայն ուրիշ պետությունների, այլև ողջ համաշխարհային հանրության շահերը հաշվի առնելը:

### 3. ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ազգային շահերը, բնականաբար, տարբերվում են իրենց նշանակությամբ: Այսպես՝ դրանք կարող են լինել՝

- կենսականորեն կարևոր (կամ գլխավոր) և երկրորդական,
- երկարատև և ժամանակավոր:

Գլխավոր, մշտական ազգային շահերը որոշվում են կարևորագույն աշխարհաքաղաքական բնութագրիչներով. դրանք են՝ տվյալ պետության տեղն ու դերը միջպետական հարաբերությունների համակարգում, նրա վարկանիշը, ռազմական հզորությունը, իր ինքնիշխանությունը պաշտպանելու և դաշնակիցների անվտանգությունը երաշխավորելու կարողությունները և այլն: Յուրաքանչյուր պետություն ինքն է գնահատում, թե որոնք են իր առջև դրված նպատակներից առավել կարևորները: Պետությունն իր շահերն ապահովում է իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով, այդ թվում՝ քաղաքական, գաղափարական, տնտեսական, դիվանագիտական, ռազմական: Վերջինի դեպքում պետության ձեռքում մնում է ուժ կամ ուժի սպառնալիք գործադրելը, ընդհուպ մինչև պատերազմ հայտարարելը: Երկրորդական շահերն ամանցված են կարևոր, առաջնային շահերից: Դրանք փոփոխվելով արտաքին քաղաքական գործոնների ազդեցության տակ՝ կարող են սակարկության առարկա դառնալ պետության գլխավոր, մշտական շահերի իրագործման համար:

**Մտորումներ:** Ի՞նչ հիմնավորումներով է հնարավոր ազգային շահերը բաժանել երկարատևի և ժամանակավորի: Բերե՞ք օրինակներ:

Հաճախ պետությունն իր անվտանգության ու քաղաքական անկախության հետ կապված հիմնարար ազգային շահերը չի կարողանում իրագործել միայնակ, առանց այլ երկրների հետ դաշինք կնքելու: Ո՛չ Ռուսաստանը, ո՛չ Անգլիան միայնակ ի վիճակի չէին հաղթանակ տանելու նապոլեոնյան Ֆրանսիայի դեմ, որը XIX դարի սկզբում իր գերիշխանությունն էր հաստատել Եվրոպայում: Նույնը վերաբերում է նաև Խորհրդային Միությանը, ԱՄՆ-ին և Մեծ Բրիտանիային, որոնք Երկրորդ համաշխարհային պատերազմում, չնայած գաղափարախոսական հսկայական տարածայնություններին, կարողացան ստեղծել հակահիտլերական կոալիցիա ընդհանուր թշնամուն ջախջախելու համար:

#### Հարցեր և առաջադրանքներ

1. Փորձե՞ք բնորոշել «ազգային շահ» հասկացությունը: Ե՞րբ է այն գիտական շրջանառության մեջ մտել:
2. Ի՞նչ գործոններ են ազդում ազգային շահերի շեղվորման վրա:
3. Ինչո՞վ են պարբերվում իրական և կեղծ (կամ խեղաթյուրված) ազգային շահերը: Բերե՞ք օրինակներ:
4. Ի՞նչ խնդրի են բաժանվում ազգային շահերն ըստ իրենց նշանակության: Ազգային ո՞ր շահերն են անվանում գլխավոր կամ հիմնական:

## ԳԱՍ 57. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքներն են անկախությունը, պետության և ժողովրդի պաշտպանվածությունը, խաղաղությունը և միջազգային համագործակցությունը, հայապահպանությունը, բարեկեցությունը:*

*ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունից, 2007 թ.*

Ազգային անվտանգության հիմնահարցը, ինչպես և ազգային շահերի խնդիրը քաղաքագիտության մեջ բազմաթիվ տարակարծություններ ու բանավեճեր են առաջացնում: Մասնագետներն առանձնացնում են անձի, հանրության և պետական անվտանգությունը: Տարբերում են նաև անվտանգության տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, քաղաքական, ռազմական և այլ կողմեր: Լայն իմաստով **անվտանգությունը պետության բոլոր քաղաքացիների համար գործունեության բնականոն պայմաններ ապահովելն է, նրանց կյանքի, ազատության և սեփականության պաշտպանությունը:**

Պետության ինքնիշխանության և անկախության պաշտպանության հիմնական բնութագրիչներն ամփոփված են **ազգային կամ պետական անվտանգության հայեցակարգում:** Ազգային անվտանգության հայեցակարգը կառուցվում է՝ նկատի առնելով աշխարհաքաղաքական այն գործոնները, որոնք այս կամ այն կերպ ազդում են ազգային նպատակների իրականացման ուղիների, ձևերի և միջոցների վրա: Այստեղ հաշվի են առնվում պետությանը սպառնացող ինչպես արտաքին, այնպես էլ ներքին վտանգները: «Ազգային անվտանգություն» հասկացությունն ընդգրկում է հետևյալ բնութագրիչները. արտաքին և ներքին վտանգներից պետության տարածքային անձեռնմխելիությունն ու ամբողջականությունն ապահովելու կարողությունը, պետության ներքին գործերին արտաքին ուժերի չմիջամտելու երաշխիքների ապահովումը, հավանական և չնախատեսված սպառնալիքների, ինչպես նաև բնակչության բուն կենսակերպի դեմ ուղղված սպառնալիքների կանխարգելումը:

Յուրաքանչյուր պետություն յուրովի է գնահատում իր հետապնդած նպատակների կարևորությունը: Պետության համար դրանցից յուրաքանչյուրի կարևորությունն ու դրանք իրագործելու կարողությունը բազմաթիվ գործոններով են պայմանավորված. նրա աշխարհաքաղաքական դիրքի, պատմության, մշակույթի, քաղա-



*ՀՀ Սահմանադրության համաձայն՝  
ՀՀ նախագահը կազմավորում է Ազգային անվտանգության խորհուրդը և նախագահում այն*

քական համակարգի, դեկավարության, այլ պետությունների հետ հարաբերությունների և այլն: Ամբողջությամբ վերցրած՝ պետությունը չի կարող լիովին իրագործել իր առջև դրված բոլոր նպատակները, ինչը հարկադրում է երբեմն կրճատել կամ սահմանափակել այս կամ այն ծրագիրը հանուն ավելի կարևոր, հիմնարար նպատակների իրագործման:

**Մտորումներ:** Ի՞նչը կարող է այդպիսի հիմնարար, կարևոր նպատակ լինել: Հանուն դրա իրագործման ինչպիսի՞ ծրագրերից կարելի է ժամանակավորապես հրաժարվել:

**Ազգային շահի գլխավոր բաղադրիչը պետության ինքնապահպանության հրամայականն է:** Հետևաբար, միջազգային ասպարեզում պետության առաջնահերթ նպատակներից գլխավորը երկրի անվտանգության, նույնն է թե՛ ազգային անվտանգության ապահովումն է իր բոլոր կողմերով:

Ազգային անվտանգության բնագավառը, անշուշտ, ընդգրկում է այն միջոցները, ձևերը և մեթոդները, որոնց օգնությամբ որևէ պետություն պլանավորում և ուղեգծում է իր արտաքին քաղաքական ռազմավարությունը: Ապահովելով իր անվտանգությունը՝ ազգը չի կարող գոհաբերել իր օրինական շահերը, և եթե դրանք վտանգված են, հարկադրված է պաշտպանել իր շահերը պատերազմի միջոցով:

Պետությունը միջազգային համակարգի մյուս սուբյեկտների վրա ազդելու տարբեր միջոցների է տիրապետում: Ի դեպ, մյուս պետությունները նույնպես կարող են կիրառել իրենց ձեռքի տակ եղած միջոցները սեփական նպատակների իրագործման համար: Ինչպես հայտնի է, ամենաակնառու միջոցներից է ուժ կամ ուժի սպառնալիք գործադրելը: Այդ գործառույթի իրականացման գլխավոր պատասխանատվությունը դրվում է երկրի զինված ուժերի վրա:



Հայ մարտիկները Հայոց երկրի վերահաստատման սահմանագծին

Պետությունների միջև հարաբերություններին մշտապես հատուկ են հակասություններն ու հակամարտությունը: Այդ առումով պատերազմը, պետությունների ագրեսիվ գործողությունները միմյանց նկատմամբ հակամարտությունների հաղթահարման միջոց են դառնում: Վերջին շուրջ երեք հարյուրամյակի ընթացքում պետությունների արևմտյան համակարգը ցույց է տվել ազգային պետությունների անկախ գոյությունն ապահովելու իր արդյունավետությունը: Այն հանդես է բերել բավականաչափ ճկունություն՝ հնարավոր դարձնելով իրականացնել ազգային անկախության հասնելու ձգտումները: Այդ ամենը, սակայն, ձեռք է բերվել բազմաթիվ, այդ թվում՝ համընդհանուր, գրեթե ողջ աշխարհն ընդգրկած պատերազմների գնով (բավական է հիշել XX դարի երկու համաշխարհային պատերազմները):

**Մտորումներ:** Արդյո՞ք հնարավոր չէ հաղթահարել միջպետական հակամարտություններն առանց ռազմական միջամտության: Չեր կարծիքով՝ ինչպե՞ս պետք է վարվեն այդ նպատակին հասնելու համար աշխարհի պետություններն ու ժողովուրդները:

Խաղաղության և միջազգային անվտանգության հիմնական սկզբունքները ձևակերպված են Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ և այլ փաստաթղթերում: Այդ սկզբունքները մասնավորապես նախատեսում են՝ համատեղ ջանքերի գործադրումը խաղաղության սպառնալիքը կանխելու և վերացնելու համար, ագրեսիայի գործողության ճնշումը, միջազգային վեճերում ուժ չգործադրելը և այլն: ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն՝ խաղաղության և միջազգային անվտանգության համար գլխավոր պատասխանատվությունը դրված է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի վրա: Կարևոր նշանակություն ունեցավ այդ առումով 1974 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 29-րդ նստաշրջանում «ագրեսիա» հասկացության սահմանումը: Նստաշրջանում ընդունված բանաձևի համաձայն՝ ագրեսիա է համարվում պետության կողմից զինված ուժի կիրառումն այլ պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, քաղաքական անկախության դեմ կամ ՄԱԿ-ի կանոնադրության հետ անհամատեղելի որևէ այլ ձևով:

#### Հարցեր և առաջադրանքներ

1. «Անվտանգություն» ասելով՝ ի՞նչ եք հասկանում ընդհանրապես և քաղաքագիտական առումով՝ մասնավորապես:
2. Ի՞նչ բնութագրիչներ է ընդգրկում «ազգային անվտանգություն» հասկացությունը: Ո՞րն է, չէր կարծիքով, դրանցից առաջնայինը: Ի՞նչն է:
3. Թվարկե՛ք խաղաղության և միջազգային անվտանգության հիմնական սկզբունքները: Ի՞նչ փաստաթղթերում են դրանք չեղակերպված: Արդյո՞ք պետությունները մշտապես դրանցով են առաջնորդվում: Ի՞նչն՞վ եք դա բացատրում:

**Գործնական աշխատանք:** Խմբային եղանակով քննարկե՛ք ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունից ստորև բերվող նյութը և առանձնացրե՛ք ձեր կարծիքով հինգ առավել կարևոր գործողությունները:

**Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը** պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգ է:

Ազգային անվտանգության հիմնարար արժեքներին ծառայող գործոններն ու գործողություններն են՝

#### Անկախության ոլորտում.

- սահմանադրական կարգի, պետականության բոլոր քաղաքատարրերի, պետական կառավարման համակարգի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովումը,
- ժողովրդավարական համակարգի զարգացումը և պաշտպանությունը,
- մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովումը,
- Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների լիարժեք իմտեզրումը և պաշտպանվածությունը,
- շուկայական հարաբերությունների խորացումն ու արմատավորումը, տնտեսության գիտատար, ինովացիոն, արտահանմանն ուղղված ճյուղերի խթանումը,

● Լներգետիկայի, տրանսպորտի և կապի ենթակառուցվածքների հուսալի գործունեության ապահովումն ու պաշտպանությունը:

#### **Պետության և ժողովրդի անվտանգության ոլորտում.**

● զինված ուժերի մարտունակության, անվտանգության և իրավապահ մարմինների գործունեության արդիականացումն ու արդյունավետության բարձրացումը,

● մասնակցությունը վերազգային հանցագործությունների, այդ թվում՝ միջազգային ահաբեկչության, զանգվածային ոչնչացման զենքի ու դրա բաղադրամասերի, թմրանյութերի ու կեղծված դեղորայքի տարածման, մարդկանց առևտրի, անորակ սննդամթերքի արտադրության և ներմուծման դեմ միջազգային պայքարին,

● ներկա և գալիք սերունդների կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորումը,

● բնական պաշարների պահպանումն ու արդյունավետ օգտագործումը, բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավումը,

● բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների՝ ժամանակակից մոնիտորինգով և կանխարգելմամբ զբաղվող միջազգային կառույցներում ներգրավումը, բնական և տեխնածին վտանգների հուսալի կանխատեսումը, կանխարգելումն ու չեզոքացումը, քաղաքաշինական համակարգերի անվտանգության, հուսալիության և կայունության ապահովումը:

#### **Խաղաղության և միջազգային անվտանգության ոլորտում.**

● Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության ամրապնդումը, տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատումը, երկրի միջազգային ներգրավվածության աստիճանի բարձրացումը, այդ թվում՝ խաղաղության և անվտանգության պահպանման միջազգային ջանքերին, խաղաղապահ գործողություններին մասնակցելու միջոցով:

#### **Հայապահպանության ոլորտում.**

● Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունների համապարփակ հայեցակարգի մշակումն ու իրականացումը, Սփյուռքի ներուժի համակողմանի համախմբումը,

● հայագիտական ճյուղերի՝ հայոց լեզվի, գրականության, պատմության ու մշակույթի՝ որպես ազգային հոգևոր ժառանգության հարատևությունն ապահովող և ազգային ինքնությունը մարմնավորող գործոնների զարգացումը,

● ազգային մշակույթի համակողմանի զարգացումն ինքնատիպության հիմքերի պահպանմամբ և համամարդկային մշակութային արժեքների ու նվաճումների յուրացմամբ, արտերկրում հայկական մշակութային ժառանգության ու նվաճումների արդյունավետ ներկայացումը:

#### **Բարեկեցության ոլորտում.**

● աղքատության հաղթահարումը,

● խոցելի խմբերի պաշտպանվածությունն ապահովող սոցիալական քաղաքականության իրագործումը,

● արդյունավետ և մրցունակ գիտակրթական քաղաքականության մշակումն ու կենսագործումը՝ հատկապես նորարարական զարգացման ուղղությամբ,

● առողջապահության համընդգրկուն ու արդյունավետ համակարգի զարգացումը միջազգային բարձրագույն չափանիշներին համապատասխան,

● ամիսատի և հասարակության հոգևոր-մշակութային զարգացման պայմանների ապահովումը:

## ԳԱՍ 58. ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

### 1. «ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ\*

Աշխարհաքաղականությունը քաղաքագիտության այն մասն է, որում կարևորագույն դեր է հատկացվում տարածքային գործոնին: Դա վերաբերում է ոչ միայն առանձին երկրի, պետության բնատարածքի (տերիտորիայի) մեծությանը, աշխարհագրական դիրքին, բնական ռեսուրսներով ապահովվածությանը, այլև տարածքային գործոնի նշանակությանը սահմանակից երկրների հետ առնչությունների, տարածաշրջանային և միջազգային այլ մեծ ու փոքր հիմնախնդիրների առումով: Դրանով է բացատրվում նաև «աշխարհաքաղականություն» բառի օտարալեզու հունանիշը («գեոպոլիտիկա». հունարեն գեո – երկիր, պոլիս – քաղաք-պետություն, որտեղից էլ՝ պոլիտիկա – քաղաքականություն):

Աշխարհաքաղաքականության նախապատմությունը սկիզբ է առնում անտիկ աշխարհի մեծ մտածողներից, որոնք մեծ կարևորություն էին տալիս աշխարհագրական գործոնների ազդեցությանը մարդկության պատմական զարգացման վրա: Այդ տեսակետները առկա էին նաև միջնադարյան մտածողների, քաղաքական գործիչների և ճանապարհորդների աշխատություններում: Նոր ժամանակներում մեծ տարածում ստացավ **աշխարհագրական դետերմինիզմի տեսությունը**:

Ֆրանսիացի քաղաքական գործիչ և մտածող **Ժան Բոդենն** իր «Պատմության ուսումնասիրության դյուրին մեթոդը» (1566 թ.) աշխատության մեջ փորձում էր բացահայտել ժողովրդի, պետության, նրա քաղաքականության և բնական միջավայրի կապը: Բոդենը կլիմայի ազդեցությամբ էր հիմնավորում հյուսիսի ժողովուրդների ֆիզիկական առավելությունը հարավի ժողովուրդների և լեռնեցիների առավելությունը հարթավայրերի բնակիչների նկատմամբ:

Ֆրանսիացի փիլիսոփա **Շառլ Մոնտեսքիոն** Հին հռոմեական պետությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ հանգեց այն եզրակացության, որ Հռոմեական կայսրության կործանման գլխավոր պատճառներից էին պետության աշխարհագրական դիրքը և սահմանների չափազանց մեծ ձգվածությունը, որոնք խանգարել են պետության համախմբմանն ու իշխանության կենտրոնացմանը: Իր «Օրենքների ոգու մասին» (1748 թ.) աշխատության մեջ Մոնտեսքիոն քննարկում է պետության կառավարման ձևի վրա աշխարհագրական գործոնների ազդեցությունը: Մեծ նշանակություն տալով կլիմայական գործոնին՝ նա համարում էր, որ շոգ կլիման ծնում է ծուլություն, սպանում քաղաքացիական արիությունը, բռնակալական կառավարման պատճառ դառնում:

XIX դարի վերջերին աշխարհագրական դետերմինիզմի գաղափարները տիրապետող դարձան: Այդ գաղափարների զարգացման մեջ մեծ դեր ունեցավ գերմանացի նշանավոր մտածող **Ֆրիդրիխ Ռաուցելը**: Նա հանգեց այն հետևության, որ

\* Քաղաքագիտություն բաժնի 49-50, 56-59, 63-66 դասերում օգտագործված են Կ. Գաջիևի, Ա. և Լ. Վալեսյանների, ինչպես նաև այլ հեղինակների աշխատություններում առկա նյութերը:


պետության ճակատագրի վրա ազդող աշխարհագրական գործոններից առաջնա-  
յինը նրա զբաղեցրած տարածքի մեծությունն է: «Տարածությունը» սուկ բնատա-  
րածք չէ, որ զբաղեցնում է պետությունը, տարածությունը քաղաքական ուժ է: Ռատ-  
ցելի տեսական դրույթները դարձան աշխարհաքաղաքականության, մասնավորա-  
պես՝ նրա գերմանական դպրոցի հիմքը, որից հետագայում սնվում էր գերմանական  
ֆաշիզմի արտաքին քաղաքականությունը:

**2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ**

Ժամանակակից աշխարհաքաղաքականության հիմնադիրներից է ազգությամբ  
շվեդ իրավաբան **Յուլիան Չելենը**: Նա հայտնի է առաջին հերթին որպես «գեոպո-  
լիտիկա» եզրույթի և «Պետությունը որպես կենսաձև» նշանավոր աշխատության  
հեղինակ: Չարգացնելով իր ուսուցչի՝ Ռատցելի տեսակետը, որ բնատարածքը, որ-  
տեղ գտնվում է պետությունը, վերջինիս անբաժանելի բաղադրիչն է, Չելենը հան-  
գեց այն հետևությանը, որ այդպիսի բաղադրիչներ են մասն մշակույթը, ազգաբնակ-  
չությունը, տնտեսությունը, կառավարման ձևը և այլ տարրեր: Չելենի մշակած այս  
հայեցակարգը հանգեցրեց աշխարհաքաղաքականության գլխավոր դրույթի վերա-  
նայմանը: Նախկին աշխարհագրական միջավայր – արտաքին քաղաքականու-  
թյուն դրույթին փոխարինեց աշխարհագրական միջավայր – մարդ, ժողովուրդ –  
արտաքին քաղաքականություն դրույթը:

*Մտորումներ: Չելենը զարգացնում էր այն միտքը, որ փոքր երկրները դատապարտված  
են մեծ տերություններին ենթակա լինելու վիճակին, իսկ վերջիններս «պարտավոր են» միա-  
փորել առաջիններին աշխարհագրական-տնտեսական «խոշոր համալիրների» մեջ:  
Համաձայն էր Չելենի այդ մտտեցման հետ: Ներկայումս ինչպիսի՞ նման համալիրներ կան:*

Նոր ձևավորվող աշխարհաքաղաքական հայեցակարգերի շարքում հատուկ  
տեղ է զբաղեցնում «**ծովային ուժի հայեցակարգը**», որի հեղինակը ամերիկացի  
պատմաբան, նավատորմի ծովակալ **Ալֆրեդ Մեխենն** է: Հակառակ Ռատցելի և այլ  
հետազոտողների, որոնք պետության համար գլխավոր առավելություն համարում  
էին նրա մայրցամաքային կենտրոնական դիրքը, Մեխենը առավելությունը տալիս  
էր ծովային դիրքին: Նրա կարծիքով՝ խոշոր, համաշխարհային տերություն կարող  
է դառնալ այն պետությունը, որն ունի հարմարավետ ծովային (օվկիանոսային)



դիրք: Չարգացնելով իր տեսակետը՝  
Մեխենը դեռևս անցյալ դարի սկզբնե-  
րին կանխատեսում էր, որ ԱՄՆ-ը  
պետք է դառնա աշխարհի առաջա-  
տար ծովային տերությունը և ուղղոր-  
դի համաշխարհային զարգացումը:

Աշխարհաքաղաքականության՝  
որպես գիտական ուղղության  
ձևավորման մեջ իր որոշակի դերն է

ունեցել նաև ֆրանսիացի **Պոլ Վիդալ Բլաշը**: Եթե Ռատցելը վճռական նշանակությամբ էր տալիս պետության տարածքի մեծությանը, աշխարհագրական դիրքին, ռելիեֆին, «տարածության զգացողությանը», ապա Բլաշը, չմերժելով դրանց կարևորությունը, իր հայեցակարգի կենտրոնում դնում էր մարդուն, բնակչությունը՝ համարելով, որ բնական միջավայրից բացի, մարդը նույնպես վճռական գործոն է, որը գործում է ոչ թե այդ միջավայրից կտրված, այլ նրա հետ «բնական միասնական համալիրի կազմում»:

Մերժելով բնական գործոնի դերի գերազանահատումը՝ Վիդալ Բլաշը հանգեց «**պոսիփիլիզմի**» (լատիներեն **հնարավոր** բառից) հայեցակարգին, համաձայն որի պետության զարգացումն ունի երկու բաղադրիչ՝ տարածական և ժամանակային: Եթե տարածականը պայմանավորված է բնական պայմաններով, ապա ժամանակայինը՝ մարդկանցով, բնակչությամբ: Բնական պայմանները լոկ հնարավորություն են, որոնք կարող են իրողության վերածվել տվյալ տարածքը զբաղեցնող մարդկանց միջոցով միայն:

Ժամանակակից աշխարհաքաղաքագիտական մտքի հիմնադիր գործիչներ են նաև անգլիացի **Հելֆորդ Մաքինդերը** և գերմանացի **Կարլ Հաուսհոֆերը**:

Մաքինդերի տեսության հիմնական գաղափարները շարադրված են 1904 թ. Մեծ Բրիտանիայի թագավորական աշխարհագրական ընկերությանը ներկայացված «Պատմության աշխարհագրական առանցքը» զեկուցման մեջ: Ըստ Մաքինդերի ելակետային դրույթի՝ համաշխարհային պատմությունը պետք է դիտարկել որպես օվկիանոսային և մայրցամաքային տեղությունների հակամարտություն, որտեղ ուժերի հարաբերակցությունը փոխվում է հոգուտ մեկ կամ մյուս ուժային կենտրոնի: Աշխարհագրական մեծ հայտնագործությունների ժամանակաշրջանում տեղի ունեցավ «եվրոպական տարածքի» ընդարձակում և հաստատվեց եվրոպական ծովային տեղությունների համաշխարհային տիրապետությունը:

Մաքինդերի բոլոր դատողությունների ու տեսական դրույթների հիմքում ընկած էր իր հայրենիքի՝ Բրիտանական կայսրության պետական շահը: Մեծ Բրիտանիայի և ընդհանրապես օվկիանոսային պետությունների համար նա մեծագույն վտանգ էր համարում մայրցամաքային տեղությունների՝ Ռուսաստանի և Գերմանիայի միավորումը: Աշխարհի «մայրցամաքային կետում» Մաքինդերն առանձնացնում էր նրա կենտրոնական հատվածը, որը հետագայում կոչվեց «**տարածքային միջուկ**» (**Հարտլանդ**): Հարտլանդի սահմանների մեջ ընդգրկվում էր Ռուսաստանի մեծ մասը, Մոնղոլիան, Տիբեթը, Արևելյան ու Կենտրոնական Եվրոպան, Փոքր Ասիան, Հայաստանը: Մաքինդերի կարծիքով՝ աշխարհի կենտրոնը Եվրասիա մայրցամաքն է, իսկ նրա կենտրոնը՝ Հարտլանդը («աշխարհի սիրտը»), այսինքն՝ այն աշխարհագրական պլացդարմը, որտեղից կարելի է վերահսկել ամբողջ աշխարհը:


Գերմանացի պրոֆեսոր, զինվորական ու պետական գործիչ Կարլ Հաուսհոֆերի հայացքների



*Չունդունգմա (Եվերհայր) լեռը Հիմալայան լեռնաշղթայում*

ձևավորման համար ելակետային է Ռատցելի այն դրույթը, որ ամեն մի երկիր իր ազգային-պետական զարգացման համար բավարար տարածության կարիք ունի, և այդ տարածությունը նա կարող է ձեռք բերել միայն նվաճումների ճանապարհով: Խորացնելով այդ դրույթը՝ Հաուսհոֆերը հանգեց Մեծ տարածքների գաղափարին:

Անտիկ աշխարհում այդպիսի Մեծ տարածք է եղել Միջերկրածովյան շրջանը, որը ձգվում էր արևելք-արևմուտք ուղղությամբ: Այդ ուղղվածությամբ էքսպանսիա էին իրականացնում փյունիկեցիները, հույները, հռոմեացիները, հետագայում՝ արաբները: Այն իր գազաթնակետին հասավ աշխարհագրական մեծ հայտնագործությունների ժամանակաշրջանում, երբ թափ առավ Պորտուգալիայի, Իսպանիայի և Մեծ Բրիտանիայի էքսպանսիան այլ աշխարհամասերում:



*Նշված են Մեծ ութնյակի երկրները. այդպես է կոչվում աշխարհի յոթ առավել զարգացած արդյունաբերական երկրների և Ռուսաստանի սկումբը*

տաքրքրություն է ներկայացնում «Հինգ ծովերով եզրավորված ցամաքի» գաղափարը: Այս ցամաքը մերձավորարևելյան այն տարածաշրջանն է, որ շրջապատված է Սև, Միջերկրական, Կարմիր, Կասպից ծովերով և Պարսից ծոցով: Դա Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի հատման հատվածն է: Ակնհայտ է, որ այդ տարածքի կենտրոնական մասում են գտնվում Հայկական լեռնաշխարհն ու Միջագետքը:

**Մտադրումներ:** «Հինգ ծովերով եզրավորված ցամաքը» ինչպիսի՞ գործնական դրսևորում է ստանում ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների արտաքին քաղաքականության մեջ: Ի՞նչն է վկայում այդ մասին: Ուրիշ ի՞նչ պետություններ կարող եք նշել, որոնք նույնպես մեծ հետաքրքրություն են ցուցաբերում աշխարհի այդ կարևոր ռազմավարական շրջանի նկատմամբ:

### Հարցեր և առաջադրանքներ

1. *Ներկայացրե՛ք ժամանակակից աշխարհաքաղաքականության հիմնադիրների հայացքները: Նրանց ո՞ր գաղափարներն ու դրույթներն եք ուշագրավ համարում, ինչն այսօր էլ չեք կարծիքով չի կորցրել իր նշանակությունը:*
2. *Աշխարհագրական ո՞ր փարածքն էր ընդգրկում Մաքինդերը Հարվանդի սահմանների մեջ: Ինչո՞ւ էր Մաքինդերն այդքան մեծ նշանակություն փայխ Հարվանդին: XX դարի վերջերին համանման ի՞նչ փեսություն զարգացրեց Բժեզինսկին:*
3. *Քացափրե՛ք բարը, հասկացությունը. գեոպոլիտիկա, «Մեծ փարածքներ», «Հինգ ծովերով եզրավորված ցամաք»:*

## ԳԱՍ 59. ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

### 1. ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Աշխարհաքաղաքական գործոնների շարքում առաջնակարգ նշանակություն ունի տնտեսությունը, իսկ տնտեսության համար այդպիսի նշանակություն ունի բնական ռեսուրսներով ապահովվածությունը: Երկրագնդի վրա ռեսուրսները բաշխված են անհավասարաչափ, ուստի բնական ռեսուրսների քանակն ու որակը հաճախ դառնում են քաղաքական գործոն, ազդում պետությունների հարաբերությունների վրա և նույնիսկ պատերազմի պատճառ դառնում:

Այնպես է ստացվել, որ ռազմավարական նշանակության հումքի մի քանի տեսակներով ավելի լավ ապահովված են այն երկրները, որտեղ դրանց պահանջարկը մեծ չէ: Եվ հակառակը, ապահովված չեն այն երկրները, որոնք այդ տեսակների ավելի մեծ պահանջ ունեն:

Տնտեսության մեծ կախվածությունն արտաքին շուկայից չի կարող չազդել երկրների արտաքին քաղաքականության վրա: ԱՄՆ-ը, Րուսաստանը, Եվրամիության երկրները, համաշխարհային քաղաքական այլ ուժեր ձգտում են իրենց ազդեցության ոլորտում պահել այն տարածաշրջաններն ու երկրները, որոնք հանքային ռեսուրսներ են մատակարարում իրենց:

Արտաքին քաղաքականության ոլորտում հատկապես մեծ է նավթի, բնական գազի և քաղցրահամ ջրի դերը: Նավթի համաշխարհային պաշարների շուրջ երկու երրորդը կենտրոնացած է Մերձավոր և Միջին Արևելքում: Մյուս երկրներից աչքի են ընկնում Վենեսուելան, Մեքսիկան, Ռուսաստանը: Նավթի խոշոր պաշարներ են հայտնաբերվել Կասպից ծովի հատակում և ցամաքային ծանծաղուտում:

Աշխարհի նավթարդյունաբերության գլխավոր շրջանն առ այսօր մնում է Պարսից ծոցի ավազանն Արաբական թերակղզու հետ միասին, որոնց բաժին է ընկնում նավթի համաշխարհային առևտրի գրեթե կեսը: Նավթի և գազի վիթխարի պաշարների պատճառով է, որ այս տարածաշրջանը դարձել է համամոլորակային աշխարհաքաղաքական կիզակետերից մեկը, որտեղ բախվում են միջազգային նավթային ընկերությունների և բազմաթիվ պետությունների շահերը:

Դեռևս XIX դարի վերջերից այս տարածաշրջանում ուժեղ ազդեցություն էր ձեռք բերել Մեծ Բրիտանիան: Առաջին համաշխարհային պատերազմից և Օսմանյան կայսրության անկումից հետո աստիճանաբար իր դիրքերն ուժեղացրեց ԱՄՆ-ը: Այժմ ԱՄՆ-ն է այն գլխավոր ուժը, որը վճռական ազդեցություն ունի տարածաշրջանում ռազմաքաղաքական իրադրության զարգացման վրա: 2003 թ. ԱՄՆ-ի գորքերը ներխուժեցին Իրաք: Երկրում հաստատվեց նոր վարչակարգ: 2010 թ. օգոստոսին ԱՄՆ-ի զինված ուժերի հիմնական մասը դուրս է բերվել Իրաքից:

Կարևոր աշխարհաքաղաքական նշանակություն ունի նաև Կասպից ծովի ջրատարածքը (աքվատորիան), որի նավթային պաշարները բաշխված են Ադրբեյ-



*Սևանա լիճը՝  
քաղցրահամ ջրի խոշորագույն  
ջրավազանը տարածաշրջանում*

ջանի, Թուրքմենստանի, Ղազախստանի, Իրանի և Ռուսաստանի միջև:

Սեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական կարևոր գործոն է նաև քաղցրահամ ջուրը: Ջուրն այստեղ չի բավարարում ոչ միայն ոռոգման, այլև խմելու համար: Այդ առումով համեմատաբար նպաստավոր պայմաններում են այն երկրները, որոնք տիրապետում են տարածաշրջանի խոշոր գետերի ակունքներին: Այդպիսիք են Թուրքիան, Վրաստանը և Հայաստանը, որտեղից սկիզբ առնող կամ հոսող գետերը (Եփրատ, Տիգրիս, Արաքս, Կուր) սնում են Սիրիայի, Իրաքի և Ադրբեջանի մեծ մասը:

Ջրային պաշարների հիմնախնդրի պատճառով Մերձավոր Արևելքը հաճախ պայթյունավտանգ է դառնում: Իսրայելը, 1967 թ. գավթելով արաբական տարածքները, վերահսկողության տակ վերցրեց Հորդանան գետի ջրերը, որոնք նրա համար կենսական նշանակություն ունեն: Նույն վիճակն է Գոլանի բարձունքներում: Իսրայելը չի համաձայնում վերադարձնել դրանք Սիրիային դարձյալ ջրի պատճառով. այդտեղից է հոսում երկրում օգտագործվող ջրի գրեթե մեկ քառորդը: Ջրի պատճառով ժամանակ առ ժամանակ սրվում են Թուրքիայի և նրա հարավային հարևանների հարաբերությունները:

Մասնագետների կարծիքով՝ առաջիկա 15-20 տարում Մերձավոր Արևելքի երկրների բնակչության թիվը կկրկնապատկվի: Դա նշանակում է, որ այդքան էլ կավելանա ջրի պահանջարկը, ինչն անխուսափելիորեն կհանգեցնի միջպետական հարաբերությունների սրման և միջազգային ընդհանուր լարվածության մեծացման:

## **2. ՄԻՋՊԱՏՅՈՒՆ ՀԱՂՈՐԳԱԿՅՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ**

Աշխարհաքաղաքական կարևոր գործոններ են միջազգային հաղորդակցության առկա ուղիները, առաջին հերթին Համաաշխարհային օվկիանոսի միջազգային ջրերը միավորող նեղուցներն ու ջրանցքները: Աշխարհի «ուժեղները» մշտապես անհաշտ պայքարի մեջ են եղել միջազգային հաղորդակցության ուղիներին տիրանալու համար: Սեր օրերում ընդհանուր է այն ձգտումը, որպեսզի այդ ուղիների նկատմամբ որևէ առանձին պետություն մենաշնորհի չունենա, և դրանց օգտագործումը կարգավորվի միջազգային պայմանագրերի միջոցով:

Միջազգային նշանակության նեղուցներն ու ջրանցքները բավականին շատ են: Հատկապես մեծ է Պանամայի, Սուեզի ջրանցքների և Մալակկայի նեղուցի աշխարհաքաղաքական նշանակությունը:

**Պանամայի ջրանցք:** Հյուսիսային և Հարավային Ամերիկյան միացնող պարանոցի ամենանեղ մասով ջրանցք կառուցելու գաղափարը ծագել է դեռևս XVI դարում:

Գաղափարի իրագործումը, սակայն, հնարավոր դարձավ շատ ավելի ուշ՝ XX դարի սկզբներին:

Պանամայի ջրանցքը տնտեսական և ռազմաքաղաքական շատ մեծ նշանակություն ունի: Այն հազարավոր կմ-երով կրճատում է ճանապարհը Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսների ավերին գտնվող երկրների միջև: 2000 թ. ջրանցքը հանձնվեց Պանամա պետությանը: Ջրանցքի երկու ծայրերին, սակայն, շարունակում են մնալ ԱՄՆ-ի ռազմական հենակայանները:

**Սուեզի ջրանցքը:** Սուեզի ջրանցքը կառուցված է Եգիպտոսի տարածքում, այն միացնում է Միջերկրական և Կարմիր ծովերը: Դրա շնորհիվ հսկայական չափով կրճատվել է Ատլանտյան օվկիանոսի և Հնդկական օվկիանոսի նավահանգիստների միջև ջրային ճանապարհը, որն առաջ անցնում էր՝ շրջանցելով Աֆրիկա մայրցամաքը:



*Սուեզի ջրանցքը*

**Մալակկայի և այլ նեղուցներ:** Մալակկայի նեղուցն անջատում է Մալակկա թերակղզին Սումատրա կղզուց և միացնում է Հնդկական օվկիանոսի Անդամանյան ծովը Խաղաղ օվկիանոսի ավազանին պատկանող Հարավչինական ծովին: Նեղուցին հարում են Ինդոնեզիան, Մալայզիան և Սինգապուրը:

Անցնող նավերի քանակով և բեռների ծավալով Մալակկայի նեղուցն աշխարհում գրավում է երրորդ տեղը՝ զիջելով միայն Պանամայի և Սուեզի ջրանցքներին: Ջրանցքի նշանակությունը հատկապես մեծ է Ճապոնիայի համար, որն այդ միջազգային ուղիով ստանում է իր ներմուծվող նավթի ավելի քան 2/3-ը:

Աշխարհաքաղաքական հանգուցային դիրք է գրավում նաև **Ջիբրալթարի նեղուցը:** Ջիբրալթարի նեղուցն անցնում է Եվրոպայի ծայր հարավարևմտյան և Աֆրիկայի հյուսիսարևմտյան ժայռոտ ավերի միջով, որոնք հնում հայտնի են եղել Հերկուլեսյան դարպասներ անունով:

Մեր տարածաշրջանին առավել մոտ են և մեզ համար ուղղակի հետաքրքրություն են ներկայացնում **Բոսֆորը և Դարդանեղը**, որոնք Սև ծովի ավազանի երկրները, Հարավային Կովկասը և դրա կազմում էլ ՀՀ-ն կապում են Միջերկրականին և դրա միջոցով՝ համաշխարհային ծովային ուղիներին: Այսպիսով՝ Սև ծովի ու դրա նեղուցների նշանակությունը մեծ է նաև Հայաստանի համար, որն արտաքին աշխարհի հետ իր տնտեսական կապերի հիմնական մասն իրականացնում է Վրաստանի սևծովյան նավահանգիստներ Բաթումի և Փոթիի միջոցով:

**Միջազգային հաղորդակցության ուղիները և Հարավային Կովկասը:** Հասարակական կյանքի արդի գլոբալացման և նոր աշխարհակարգի



*Բոսֆորի նեղուցը*

ձևավորման պայմաններում Արևմուտք-Արևելք և Հյուսիս-Հարավ կապերն աշխարհաքաղաքական նոր նշանակություն են ձեռք բերում: Համաշխարհային ուժային կենտրոնների (Եվրամիություն, Ռուսաստան, ԱՄՆ, Չինաստան) հետ մեկտեղ մեծ շահագրգռվածություն են դրսևորում տարածաշրջանի առաջատար պետությունները (Թուրքիա, Իրան), բնականաբար, նաև միջազգային այդ ուղիների հատման խաչմերուկում գտնվող հարավկովկասյան երկրները:

**Փաստեր:** Արևմուտք-Արևելք միջանցքն ըստ էության կրկնում է միջնադարյան հռչակավոր «Մետաքսի ճանապարհի» գաղափարը: «Մետաքսի ճանապարհ» է կոչվել Չինաստանը Առաջավոր Ասիայով Եվրոպային կապող քարավանային մայրուղին: Սկիզբ առնելով Կենտրոնական Չինաստանից՝ այն անցել է Սամարղանդ, Մերվ, Բաղդադ քաղաքներով և դուրս եկել միջերկրածովյան Տյուրոս, Անտիոք նավահանգիստները: Մայրուղու հյուսիսային ճյուղավորությունը Հայաստանով հասել է Սև ծովի նավահանգիստներ: Տարբեր ժամանակներում Հռոմի, Պարթևստանի, Իրանի, Բյուզանդիայի, Արաբական խալիֆայության և այլ պետությունների միջև սուր պայքար է մղվել ճանապարհը և դրանով կատարվող առևտուրը վերահսկելու համար: Մայրուղին մեծապես նպաստել է Ասիայի և Եվրոպայի միջև տնտեսական ու մշակութային կապերի զարգացմանը: Մետաքսի ճանապարհին իր միջազգային նշանակությունը ուղ միջնադարում կորցրել է՝ շղիմամալով ծովագնացության մրցակցությանը:

Թուրքիան և Ադրբեջանն ամեն կերպ ձգտում են Արևմուտք-Արևելք և Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի ներկա, առավել ևս ապագա հնարավորություններն առավելագույնս սեփական շահերին ծառայեցնելու հետ մեկտեղ, մեկուսացնել Հայաստանի Հանրապետությունը, ուժեղացնել քաղաքական ու տնտեսական ճնշումը նրա վրա: Նրանք ջանում են, որ ձևավորվող ճանապարհային ցանցը շրջանցի Հայաստանը: Պետք է ենթադրել, որ միջազգային հանրության ճնշման տակ Թուրքիայի ու Ադրբեջանի այդ նկրտումները հաջողություն չեն ունենա:

#### Հարցեր և առաջադրանքներ

1. **Քննական ռեսուրսների քանակն ու որակը հաճախ դառնում են քաղաքական գործոն:** Որո՞նք են դրա պատճառները: Հարկապես ո՞ր ռեսուրսներն են այդպիսի նշանակություն ստանում:
2. **Աշխարհաքաղաքական կարևոր գործոն է նաև քաղցրահամ ջուրը:** Յո՞ւնց փվեք դա մեր տարածաշրջանի օրինակով: Տարածաշրջանի ո՞ր երկրները կարող են ջրային ռեսուրսները դարձնել քաղաքական ազդեցության միջոց:
3. **Միջազգային հաղորդակցության ուղիները մշտապես պայքարի առարկա են եղել:** Ինչո՞ւ: Մեր օրերում ինչպե՞ս է կարգավորվում այդ ուղիների օգտագործումը:
4. **Ո՞ր ջրանցքների և նեղուցների աշխարհաքաղաքական նշանակությունն է ավելի կարևոր:** Ներկայացրե՛ք դրանցից մեկ-երկուսը:
5. **Քացապրե՛ք բարը, հասկացությունը.**  
Ներկուլեխյան դարպասներ, «Մետաքսի ճանապարհ»:

## ԳԼՈՒԽ 10. ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### ԳԱՍ 60-61. ՊԱՏԵՐԱԶՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

*Էսպես հանգիստ, էսպես սիրով,  
Մեղրից անուշ լավ խոսքերով  
Մեղր են քաշում, մին էլ հանկարծ...  
Հ. Թումանյան, «Մի կաթիլ մեղրը»*

Բողոքիս է հայտնի այս պատմության շարունակությունը, թե ինչ է լինում, երբ հանկարծ մի կաթ մեղրը ծորում է ցած: Բաց թողնելով կատվի ու շան, խանութպանի ու «չորան ախպոր» պատմությունը՝ տեսնենք, թե ինչի վերածվեց հարևան գյուղերի միջև սկսված ընդհարումը:

*Ու դուրս եկան իրարու դեմ,  
Հա՛ գարկեցին ու գարկեցին,  
Կոպորեցին, կրրակեցին,  
Ինչքան ավել կոպորեցին,  
Էնքան ավել կարաղեցին,  
Ջարդեցին իրար,  
Ջրնջեցին իրար,  
Կորան, գրնացին  
Գեղնին համասար:*

**Մտադրումներ:** Վերընթերցեք Հ. Թումանյանի ստեղծագործությունը և պատասխանե՛ք՝ արդյո՞ք սկսված պատերազմի իրական պատճառը «մի կաթիլ մեղրն» էր:

Միջգյուղական արյունալի ընդհարումը վերաճում է մեծ պատերազմի, որին հետևում են սովն ու երկրի ամայացումը: Գուցե այս ամենը բանաստեղծի երևակայության արդյո՞ւնքն է: Ցավոք, դա այդպես չէ: Թումանյանն իր անմահ բալլադը գրել է 1909 թ.: Ընդամենը հինգ տարի հետո՝ 1914 թ. ամռանը, սկսվելու էր Առաջին աշխարհամարտը, պատերազմ, որն իր ընդգրկումով իսկապես համաշխարհային էր (պատերազմին մասնակցում էր 38 երկիր՝ ավելի քան 1 միլիարդ բնակչությամբ, ինչը կազմում էր մոլորակի բնակչության գրեթե 2/3-ը), իսկ զոհերի թվով (շուրջ 10 մլն մարդ)՝ աննախադեպ: Մարդկությունը դեռ չէր հասցրել ամոքել իր վերքերը, երբ ընդամենը երկու տասնամյակ հետո՝ 1939 թ., սկսվեց երբևէ տեղի ունեցած ամենաժանր, դաժան ու արյունալի պատերազմը՝ Երկրորդ համաշխարհայինը (միայն զոհվածների թիվը հասնում էր 60 միլիոնի):

## 1. ԽԱԿԱՔԱԳԻՏՈՒՆ ԵՎ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Պատերազմ և խաղաղություն. այս խնդիրը մշտապես մարդկանց ուշադրության կենտրոնում է եղել: Ո՞րն է պատերազմի պատճառը, ինչպե՞ս կարելի է խուսափել դրանից, հաղթահարել հակամարտությունը և հասնել բաղձալի խաղաղության: Տարբեր ժամանակների բազմաթիվ մեծ մտածողներ են խորհել մարդկության համար կենսականորեն կարևոր այս հարցերի շուրջ:

Հույն մեծ իմաստասեր **Պլատոնը**, օրինակ, գտնում էր, որ պատերազմները տեղի են ունենում հարստության պատճառով: Նոր ժամանակների անգլիացի փիլիսոփա **Թոմաս Հոբսը** պատերազմների պատճառ էր համարում մարդկանց բնական հավասարությունը, ինչը և հանգեցնում է բոլորի պատերազմին ընդդեմ բոլորի:

**Մտորումներ:** *Չեր կարծիքով՝ ի՞նչ կարելի է հասկանալ «մարդկանց բնական հավասարություն» ասելով: Չէ՞ որ մարդիկ ծնվում են տարբեր ֆիզիկական և մտավոր կարողություններով, բնական և սոցիալական տարբեր պայմաններում:*



*Գրյունվալդի ճակատամարտը (1410 թ.)  
հեղինակ՝ Յան Մապելդո*

Նոր ժամանակների ուրիշ մտածողներ, ի տարբերություն Հոբսի, այլ տեսակետներ ունեին: Ջարգացնելով բնական իրավունքի տեսությունը՝ նրանք համարում էին, որ հավասարության հետևանք պետք է լինի ոչ թե բոլորի պատերազմն ընդդեմ բոլորի, այլ խաղաղությունն ու բարեկամությունը: XVIII դարի ֆրանսիացի փիլիսոփա **Պոլ Հոլբախը** խստորեն դատապարտում էր պատերազմները՝ համարելով, որ դրանք միայն դժբախտություններ են բերում պատերազմող ժողովուրդներին: Հոլբախի կարծիքով՝ պատերազմ սկսողները տիրակալներն են, որոնք հանուն իրենց շահադիտական նպատակների պատրաստ են զոհաբերել ուրիշների կյանքը: Դատապարտելով պատերազմները՝ Հոլբախը, այնուամենայնիվ, չի մերժում արդարացի պատերազմները, որոնց նպատակը պետության, նրա ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պաշտպանությունն է: «Պատերազմն արդարացի է միայն այն ժամանակ, երբ այն անհրաժեշտ է. պատերազմն անհրաժեշտ է միայն այն ժամանակ, երբ ազգի բարեկեցությունն իսկապես վտանգված է: ...Պատերազմն օրինական և անհրաժեշտ է, երբ առանց դրա անհնարին է խաղաղության ապահովումը», – գրում է Հոլբախն իր «Պատերազմների մասին» աշխատության մեջ:

Պատերազմի և խաղաղության հարցերին մեծ ուշադրություն է դարձրել նաև գերմանացի նշանավոր մտածող **Իմանուիլ Կանտը**: 1795 թ. նա հրապարակեց «Հավերժական խաղաղության» իր ծրագիրը, որտեղ առաջ էին քաշվում ժողովուրդների միջև խաղաղ հարաբերությունների հաստատման հնարավոր ուղիներ ու միջոց-

ներ: Կանտը, մասնավորապես, կարծում էր, որ կառավարման հանրապետական ձևի տարածումը կնշանավորի միջազգային խաղաղության դարաշրջանի հաստատումը: Կանտը գտնում էր, որ պատերազմների հիմնական պատճառը պետությունների միջև նոր հարաբերություններ հաստատելու ձգտումն է: Որոշ ժամանակ հետո, սակայն, այդ հարաբերությունները փոփոխվելով կրկին հանգեցնում են զինված բախումների: Այդ պատճառով անհրաժեշտ է ստեղծել պետությունների միջազգային միություն, որում յուրաքանչյուր պետություն իրեն ազատ կզգար և միաժամանակ չէր խանգարի ուրիշների զարգացմանը: Հավերժական խաղաղության կանոնյան հայեցակարգն ուտոպիական բնույթ ուներ, սակայն կարևոր է գիտակցելը, որ գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիրը դատապարտում էր պատերազմը, հանդես էր գալիս հումանիզմի պաշտպանության և պետությունների միջև իսկապես խաղաղասիրական հարաբերությունների հաստատման օգտին:

Պատերազմի տեսության ստեղծողներից էր գերմանացի ռազմական տեսաբան և պատմաբան, «Պատերազմի մասին» եռահատոր աշխատության հեղինակ **Կարլ ֆոն Կլաուզեփցը** (1780-1831): Պատերազմը, գրում է նա, հանկարծակի չի առաջանում, այլ երկարատև նախապատրաստություն է ունենում որոշակի քաղաքականություն վարող կառավարությունների կողմից: **Պատերազմը քաղաքականության շարունակությունն է այլ միջոցներով:** Չպետք է մտածել, թե պատերազմ սկսվելուց հետո քաղաքական հարաբերությունները դադարում են, քանի որ պատերազմը, Կլաուզեփցի կարծիքով, քաղաքական հարաբերությունների ամբողջության մի մասն է: Հենց քաղաքականությունն է պատերազմ ծնում, ոչ թե հակառակը: Պատերազմ հայտարարած կառավարությունն այն սկսելուց առաջ որոշակի՝ իր շահերի բավարարմանն ուղղված քաղաքականություն է վարում, և երբ այդ քաղաքականությունը ցանկալի արդյունք չի տալիս, անցնում է քաղաքականության մյուս ձևին՝ պատերազմին: Դրա նպատակը հակառակորդի քաղաքականության տապալումն է ռազմական միջոցներով: Այսպիսով, **պատերազմը բռնության ակտ է, որի միջոցով պատերազմող կողմը փորձում է մյուսին պարտադրել իր կամքը:** Կլաուզեփցը, կարելի է ասել, տվեց պատերազմի՝ որպես սոցիալական երևույթի քաղաքագիտական-փիլիսոփայական բնութագիրը՝ սահմանելով այն որպես քաղաքականության շարունակություն բռնի մեթոդներով: Այդուհանդերձ, Կլաուզեփցին չհաջողվեց բացահայտել պատերազմի առաջացման պատճառները: Տարածված տեսակետներից մեկի համաձայն՝ այդ պատճառների բացահայտումը պահանջում է ուսումնասիրել առաջին հերթին մարդկանց կյանքի տնտեսական պայմանները: Պատերազմը բռնություն է, և բռնության քաղաքականության իրականացումը մեծապես կախված է պետության տնտեսական հզորությունից: Պատերազմ սկսող կամ, ինչպես ընդունված է ասել, ագրեսոր պետությունը ձգտում է ընդարձակել իր տնտեսական ազդեցության գոտին, օգտագործել պարտված կողմի հարստություններն իր շահերի օգտին: Պատերազմի նպատակները, իհարկե, դրանով չեն սահմանափակվում, քանի որ այն հետապնդում է ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական, գաղափարական և այլ շահեր:

**Պատերազմները դասակարգվում են ըստ դրանց սոցիալ-քաղաքական հատկանիշների:** Տարբերում են, մասնավորապես, **արդարացի** և **ոչ արդարացի** պատերազմներ: Արդարացի են համարում այն պատերազմները, որոնք մղվում են օտար ճնշումից ազատագրվելու, ազգային անկախության և հայրենիքն արտաքին ագրեսիայից պաշտպանելու համար:

Ամփոփելով վերը շարադրվածը և փորձելով բնութագրել պատերազմը՝ որպես յուրահատուկ սոցիալական երևույթ, կարելի է ասել, որ՝

- պատերազմը պետությունների և այլ քաղաքական կազմավորումների, դրանց զինված ուժերի միջև մարտական գործողությունների ձևով տեղի ունեցող հակամարտությունն է.
- պատերազմը որոշակի քաղաքական նպատակների իրագործմանն ուղղված կազմակերպված, զինված բռնություն է: Պատերազմի նպատակների իրագործման գլխավոր միջոցը բանակն է: Միաժամանակ դրան են ուղղվում նաև հակամարտող կողմերի տնտեսական, դիվանագիտական, գաղափարական, տեղեկատվական և այլ միջոցները.
- պատերազմը հանգեցնում է հասարակական կյանքի բոլոր ոլորտների վիճակի որակական փոփոխությունների և անխուսափելի դարձնում ռազմական պահանջներին դրանց համապատասխանեցումը.
- պատերազմը հանգեցնում է մեծաթիվ մարդկային զոհերի, նյութական և հոգևոր արժեքների կորստի, քայքայիչ ազդեցություն է ունենում ամբողջ հասարակության վրա:

## 2. ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Պատերազմները մարդկային պատմության մշտական ուղեկիցն են եղել: Մարդկության պատմության ընթացքում գրանցված պատերազմների թիվը հասնում է 15 հազարի: Վերջին հինգուկես հազար տարվա ընթացքում մարդկությունը միայն շուրջ 300 տարի է ապրել առանց պատերազմի՝ լիարժեք խաղաղության պայմաններում: Ընդ որում՝ նկատելի է հետևյալ օրինաչափությունը. ժամանակի ընթացքում պատերազմի հաճախականությունը նվազել է, բայց մեծացել է դրանց ընդգրկումը: Պատերազմները դարձել են ավելի կործանարար, դաժան ու արյունալի: Երբ Ալեքսանդր Մակեդոնացին, Ք. ա. 334 թ. Եվրոպայից անցնելով Փոքր Ասիա, սկսեց իր արևելյան արշավանքը, ուներ ընդամենը 35 հազարանոց զորք: Նապոլեոն Բոնապարտի՝ 1812 թ. Ռուսաստանի դեմ պատերազմ սկսելու համար նախապատրաստած «Մեծ բանակը» արդեն ուներ ավելի քան 600 հազար զինվոր: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զենքի էր կոչվել 74 մլն, Երկրորդ համաշխարհայինին՝ 110 մլն մարդ:

Սկզբում պատերազմներն ընթանում էին ցեղապետերի, այնուհետև՝ թագավորների միջև, իսկ ավելի ուշ՝ ազգային պետությունների ձևավորումից հետո, ժողովուրդների միջև: XX դարում արդեն, ինչպես ընդունված է ասել, պատերազմի մեջ

էին քաղաքական-գաղափարախոսական ուղղությունները (կոմունիզմ, ֆաշիզմ, լիբերալիզմ): Ներկայումս, տարածված տեսակետներից մեկի համաձայն, համաշխարհային հակասություններն առավել սրվում են **քաղաքակրթությունների միջև:**

1945 թ. ավարտվեց Երկրորդ աշխարհամարտը: Պատերազմի հանցագործները ստացան իրենց արժանի պատիժը: Հիմնադրվեց Միավորված ազգերի կազմակերպությունը, որն իր գլխավոր նպատակը հռչակեց խաղաղության պահպանումը և դատապարտեց պատերազմը՝ որպես միջազգային հարցերի լուծման միջոց:

«Պատերազմը ոչ այլ ինչ է, եթե ոչ քաղաքական հարաբերությունների շարունակություն այլ միջոցների ներմուծումով»: Ընդունելով հանդերձ Կլաուզիցի այս հիմնարար դրույթի նշանակությունը պատերազմի բնութագրման գործում՝ ասենք, որ այն լրացուցիչ, նորովի մեկնաբանության կարիք է զգում ժամանակակից՝ «միջուկային» դարաշրջանում: Միջուկային զենքի ստեղծումը էականորեն փոխեց պատերազմի և քաղաքականության հարաբերակցության՝ նախորդ դարաշրջանում ձևավորված հայեցակարգը: Նոր համաշխարհային պատերազմը, եթե այն սկիզբ առնի, անկասկած կլինի միջուկային պատերազմ, և դրա բոցերում կոչմանա մարդկային քաղաքակրթությունն ընդհանրապես: Մարդկությունը, թվում է, սնուցել է այն գիտակցությանը, որ **պատերազմը՝ որպես միջազգային հարցերի լուծման միջոց, պետք է բացառվի:**



*Նացիստական Գերմանիայի բարձրաստիճան գինկորական հանցագործների Նյուրնբերգյան դատավարությունը (1945-1946 թթ.)*

### Հարցեր և առաջադրանքներ

1. *Ի՞նչ տեսակետներ ունենին պատերազմի մասին Պլատոնը, Թ. Հորսը: Համաշա՞յն էր արդյոք Հորսի տեսակետներին: Եթե ոչ ինչո՞ւ:*
2. *Ո՞ր դեպքում է պատերազմն արդարացի՝ Հոլբախի կարծիքով: Փորձե՞ք մեկնաբանել այն:*
3. *Ինչպիսի՞ ծրագիր առաջադրեց Բ. Կանտը 1795թ.: Ինչո՞վ էր նա պայմանավորում միջազգային խաղաղության դարաշրջանի հաստատումը: Ի՞նչ էր առաջարկում սրեղծել Կանտը դրան հասնելու համար: Չեր կարծիքով՝ ներկայումս գործող ո՞ր միջազգային կազմակերպությանը կարելի է այն նմանեցնել:*
4. *Համառոտ ներկայացրե՞ք պատերազմի մասին Կ. Կլաուզիցի տեսակետները:*
5. *«Կլաուզիցի այդ հիմնարար դրույթը լրացուցիչ, նորովի մեկնաբանության կարիք է զգում ժամանակակից՝ «միջուկային» դարաշրջանում»: Ինչի՞ մասին է խոսքը: Ի՞նչն է մեզանից պահանջում նորովի մեկնաբանել այն: Հիմնավորե՞ք պատասխանը:*

**Գործնական աշխատանք:** Ընթերցե՛ք ստորև բերվող լրացուցիչ նյութերը և փորձե՛ք համեմատել տարբեր դարաշրջաններում տեղի ունեցած պատերազմները, ի՞նչ ընդհանուր հատկանիշներ և ի՞նչ տարբերություններ կարող եք մատնանշել:

### Ֆեդից դեպի պետություն

Նախնադարյան ժողովուրդների հանրային կազմակերպությունները նույն նպատակն էին հետապնդում, ինչ որ մեր կազմակերպությունները, այն է՝ ընտանիքի, համայնքի, ցեղի և ամբողջ ժողովրդի անվտանգության ու խաղաղության ապահովումը: Այնպիսի ցեղերի մոտ, ինչպիսիք էին ավստրալացիները, քառանցիները, բուշմենները, իրավական անձ հանդիսանում էր ոչ թե առանձին ընտանիքը կամ առանձին մարդը, այլ ամբողջ տեղական խումբը: Տվյալ խմբի կողմից «իրենը» համարվող տարածքի սահմանները ճշտորեն հայտնի էին ոչ միայն իրեն, այլև հարևաններին: Եվ եթե «օտարերկրացիների» ներխուժումը խախտում էր այդ խմբի տարածքային իրավունքները, ապա դա անհապաղ հակազդեցություն էր առաջացնում ամբողջ խմբի և ոչ թե առանձին անձնավորության կամ ընտանիքի մեջ:

Սահմանի խախտումը հավասարազոր էր պատերազմ հայտարարելուն: Բացի սահմանի խախտումից, տեղային խումբը պատերազմի էր դիմում սպանությունների կամ կանանց առևանգման դեպքերում: Բայց ինչպիսի իրավախախտումներ էլ որ լինեին, որպես մեղադրող հանդես էր գալիս ամբողջ խումբը, և հանցավորներին պատասխանատվության ենթարկելը երբեմն առանձին մարդու կամ ընտանիքի խնդիր չէր:

Սակայն պարզակենցաղ ժողովուրդների մոտ մարդու կյանքի նկատմամբ հոգատար վերաբերմունքի շնորհիվ նույնիսկ սահմաններ խախտելու դեպքերը չէին հանգում այնպիսի պատերազմների, որոնց նպատակը լիներ թշնամական խմբի գլխովին ոչնչացումը: Դրա փոխարեն տուժողները հակառակ կողմի հետ պայմանավորվում էին մարտիկների թվի մասին, որ պետք է ներկայացնեին երկու թշնամի կողմերը: Մեծ մասամբ վեճը լուծվում էր երկու տղամարդու մենամարտով, որոնցից յուրաքանչյուրը պայքարում էր իր խմբի հանձնարարությանը և նրա իրավունքների համար: Այս դեպքում ևս պարտադիր չէր, որ մենամարտը վերջանար մենամարտողներից մեկն ու մեկի մահով. հարցը լուծելու համար բավական էր, որ նրանցից մեկն ուժասպառ լիներ և գետին գլորվեր: Այնուամենայնիվ, երբեմն մենամարտը վեր էր ածվում ընդհանուր ծեծկռտոցի, որին մասնակցում էին նույնիսկ կանայք:

### *Յուլիուս Լիպս, «Իրերի ծագումը. մարդկության կուլտուրայի պատմությունից»*

#### Հայ-պարսկական պատերազմների մասին

Ապա Պարսից Շապուհ թագավորը զորք է հավաքում... սրանք Մերուժանին առաջնորդ բռնելով՝ ... ասպատակեցին Հայոց աշխարհը: ...

Կրակի ու ավերածի էին մատնում երկիրը, անթիվ մարդիկ էին կոտորում...: Նրանք առան Տիգրանակերտ մեծ քաղաքը, որ Աղձնիք գավառում էր... և այնտեղից քառասուն հազար ընտանիք անմիջապես գերի բռնելով՝ իրենք արշավեցին Մեծ Ճովք գավառը: Այնտեղ էլ կային բերդեր, որոնց մի մասը գրավեցին, իսկ մի մասը չկարողացան առնել: Այնտեղից եկան պաշարեցին Անգեղ ամուր բերդը Անգեղ տան գավառում, որովհետև այնտեղ կային Հայոց շատ Արշակունի թագավորների գերեզմաններ և վաղուցվանից ի վեր այնտեղ ամրացված էին շատ զանձեր: Գնացին պաշարեցին բերդը և երբ տեղի ամրության պատճառով չկարողացան առնել, թողին ու գնացին: Շատ բերդեր էլ թողին անցան, որովհետև չէին կարողանում այն ամրոցների հետ կռվել: Նրանց ձեռքն անցավ միայն Անի բերդը Դարանաղի գավառում...: Բաց էին անում Հայոց նախկին թագավորների, քաջ Արշակունիների գերեզմանները և թագավորների ոսկորները գերի էին տանում: ...

Երբ այս ամենը կատարվում էր, գուժկան եկավ Արշակ թագավորի մոտ. նրան հայտնեցին, թե՛ «Դու այդտեղ Ատրպատականում մտած՝ թշնամուն սպասում ես դիմացից, իսկ թշնամիները քո թիկունքն անցնելով երկիրը կոտորեցին և հիմա գալիս են քեզ

վրա»։ Երբ այս լսեցին Հայոց Արշակ թագավորը և նրա Վասակ գորավարը, գորահանդես կազմեցին։ Վասակ գորավարի ձեռքի տակ այդ ժամանակ պատրաստ գտնվեց պատերազմական գործի պիտանի մոտ վաթսուն հազար մարդ, ընտիր պատերազմողներ, որոնք միաքան, միասիրտ, հոժարակամ գնում էին պատերազմի, որպեսզի հասնեն ու պատերազմեն իրենց կանանց ու որդիների համար, իրենց կյանքը գոհեն երկրի համար, իրենց բնակած տեղերի համար, կովեն իրենց եկեղեցիների համար, ... իրենց բնիկ տերերի՝ Արշակունիների համար։ ...

Ապա Վասակ սպարապետն իր վաթսուն հազարով առաջ շարժվեց. իր ետևը թողեց Արշակ թագավորին սպասավորների հետ Մարաց աշխարհում մի ամուր տեղում, իսկ ինքը եկավ հասավ Հայաստանի միջնաշխարհը՝ Այրարատյան գավառը. այնտեղ գտնում է Պարսից զորքերը...։ Վասակը խլում է նրանցից Հայաստան աշխարհի բոլոր գերիները, իսկ թագավորների ոսկորները, որ նրանցից Վասակը խլեց, տալան, թաղեցին Աղձը կոչված ամուր գյուղում՝ Այրարատ գավառում, որ գտնվում է Արագած մեծ լեռան մեղ ու դժվարամուտ խորշերից մեկում։ ... Այնուհետև Արշակ թագավորը Վասակ գորավարի հետ պահպանում է երկիրը...։

Այս բոլորից հետո Մուշեղը՝ Վասակի որդին, հավաքեց բոլոր մարդկանց ազնվական գնդերից, որքան որ մնացել էին, և նրանց հետ միասին գնաց Հունաց թագավորի մոտ... և կայսրից խնդրեց Պապին՝ Արշակի որդուն, թագավոր դնել Հայոց աշխարհի վրա։ ...

Եկան հասան Հայոց աշխարհը. Մուշեղը դառնում է Հայոց գորավար-սպարապետ իր հոր՝ Վասակի փոխանակ։ ...

Եվ Հայոց գորավար ու սպարապետ Մուշեղն իր քառասուն հազարով գալիս հարձակվում է (Շապուհի) բանակի վրա ու կոտորում է բոլորին։ Պարսից Շապուհ թագավորը մի ձիով փախչելով ճողոպրում է, իսկ բանակի ամբողջ բազմությունը սրի է անցկացնում Մուշեղը Հայոց զորքով։ Շատերին կոտորեցին, Պարսից ավագներից շատերին ձեռքակալեցին, ավար առան Պարսից թագավորի զանձերը, բռնեցին նաև տիկնանց տիկնոջը՝ մյուս կանանց հետ միասին։ ... Բայց Պարսից Շապուհ թագավորի կանանց որևէ անարգանք հասցնել թույլ չտվեց Հայոց Մուշեղ գորավարը, այլ ... նրանց բոլորին ազատ արձակեց իրենց ամուսնու՝ Շապուհ թագավորի ետևից։ Պարսիկներից էլ մարդիկ արձակեց, որ ողջ և անարատ գնան Պարսից Շապուհ թագավորի մոտ, իսկ Պարսից թագավորը զարմացավ Մուշեղի բարության, քաջության և ազնվության վրա, որ իրեն ոչ մի անարգանք չհասցրեց կանանց վերաբերմամբ։

*Փափազոս Բուզանդ, «Հայոց պատմություն»*

### **Մոնղոլների մասին**

Այնտեղ պետք էր տեսնել, թե ինչպես սրերն անխնա կոտորում են տղամարդկանց ու կանանց, երիտասարդներին ու մանուկներին, ծերերին ու պառավներին, եպիսկոպոսներին ու քահանաներին, սարկավագներին ու դպիրներին։ Ծծկեր մանուկները քարի էին խփվում, և գեղեցիկ կույսերը խառնակվում ու գերվում էին։ Ահավոր էր նրանց կերպարանքի տեսքը, և անգութ էին նրանց որովայնի աղիքները։ ... Ուրախությամբ էին դիմում սպանության, կարծես գնում էին հարսանիք կամ գինարբուք։

Ամբողջ երկիրը լցվեց մեռելների դիակներով, և չկար մեկը, որ թաղեր դրանք։ Միրեյիների աչքերի արտասուքը սպառվել էր, և չկար մեկը, որ անօրենների ահից ընկածներին ողբար։

Սուգ հազավ եկեղեցին, և նրա գեղեցկության պայծառությունը վերացավ։

*Կիրակոս Գանձակեցի, «Հայոց պատմություն»*

## ԴԱՍ 62. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

### 1. ՄԱՐԳԱՏԻՐԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Միջազգային մարդասիրական իրավունքը, որը երբեմն անվանում են նաև «պատերազմի իրավունք», նոր ժամանակների ծնունդ է: Սակայն մինչ այդ էլ պատերազմների ժամանակ դրսևորվող մարդասիրության ու գթասրտության բազմաթիվ օրինակներ են եղել:

**Փաստեր:** Շումերների մոտ պատերազմն արդեն որոշակիորեն կարգավորված էր, որ ներառում էր պատերազմի հայտարարությունը, զինադադարի հնարավորությունները, բանագնացների անձեռնմխելիությունը և խաղաղության պայմանագիրը: Այս շրջանում պատանդներին ազատ էին արձակում փրկագնի դիմաց:

«Իլիականում» Հոմերոսի նկարագրած պատերազմն արդեն զուրկ չէ ազնվության տարրերից. այստեղ պահպանվում է զինադադարը և հարգանքով են վերաբերում զոհված հակառակորդի աճյունին: Սրա կողքին, սակայն, ինչպիսի վայրագություններով է ուղեկցվում Տրոյայի կողոպուտը:

Ալեքսանդր Մակեդոնացին մարդասիրաբար է վարվում պարտվածների հետ, նա խնայում է Դարեհի ընտանիքի անդամների կյանքը և հրամայում հարգանքով վերաբերել կանանց: Սակայն Հին Հունաստանում պարտված կամ զերեվարված թշնամին հաղթողի սեփականությունն էր դառնում, և վերջինս նրա հետ կարող էր վարվել ինչպես կամենար, կարող էր սպանել կամ ստրուկ դարձնել:

Միջնադարյան ասպետական կանոններն ինչ-որ չափով իրենց լուսնաներդրեցին միջազգային իրավունքի զարգացման մեջ: Պատերազմ հայտարարելը, բանագնացների անձեռնմխելիությունը, զենքի որոշ տեսակների արգելքը ժառանգել ենք այս շրջանից: Ասպետականությանն ենք պարտական այն գիտակցության համար, որ պատերազմը, ինչպես շախմատը, իր կանոններն ունի, և ոչ ոք չի շահի՝ խաղատախտակը շուռ տալով:

Մոտ 1280 թ. գրված «Վիքայաթը» պատերազմի օրենքների իսկական ժողովածու է, որ ստեղծվել է Իսպանիայում մավրերի իշխանության ծաղկման շրջանում: Այն թույլ չի տալիս սպանել կանանց, երեխաներին, ծերերին, հոգեկան հիվանդներին, հաշմանդամներին և բանագնացներին:



*XIV դարի եվրոպացի ասպետների հանդերձանքն ու սպառազինությունը (ժամանակակից նկար)*

Լուսավորության դարաշրջանում փիլիսոփաները գտան, որ մարդիկ իրավահավասար են, և նրանց իրավունքները պետք է հարգվեն ու պահպանվեն պետությունների կողմից: Եվրոպայում պատերազմն աստիճանաբար ավելի մարդկային բնույթ էր կրում: Բանակների հրամանատարների միջև նախապես համաձայնագրեր էին կնքվում տուժածների վերաբերյալ, որոնք հաճախ ողջախոհության և չափավորության մնուշներ էին:

**Փաստեր:** Այս համաձայնագրերից ամենանշանակալից Ֆրիդրիխ Մեծի և Բենջամին Ֆրանկլինի միջև կնքված «Բարեկամության և խաղաղության» պայմանագիրն է: Առաջին անգամ պայմանավորվող կողմերը «փոխադարձաբար պարտավորություն են ստանձնում աշխարհի առջև»՝ հավաստելով, թե պետությունների միջև կնքված պայմանագրի նպատակը մարդու պաշտպանությունն է:

1762 թ. Ժան-Ժակ Ռուսոն իր «Հասարակական դաշինքում» գրում էր. «Պատերազմը ոչ թե մարդկանց, այլ պետությունների միջև հարաբերություն է...: Քանի դեռ պատերազմի նպատակը թշնամի պետության ոչնչացումն է, ուրեմն մյուս կողմն իրավունք ունի սպանելու այդ պետության պաշտպաններին այնքան ժամանակ, քանի դեռ նրանք զենք են կրում: Սակայն հենց որ նրանք վայր դնեն այդ զենքն ու հանձնվեն, դադարում են թշնամի... լինելուց և դառնում են նորից սովորական մարդիկ, որոնց այլևս չի կարելի կյանքից զրկել»:

1859 թ. հունիսին ավստրիական և ֆրանս-իտալական բանակները բախվեցին **Սուլֆերինոյում** (Հյուսիսային Իտալիա): Սա պատմության ամենաարյունալի ճակատամարտերից մեկն էր, որից հետո 6000 սպանված և 36000 վիրավոր մնացին ռազմի դաշտում: Դակատամարտի հաջորդ օրը Սուլֆերինո հասավ **Անրի Դյունանը** (Ժնևցի երիտասարդ գործարար): Երկար ժամանակ Դյունանին հանգիստ չէին տալիս այն պատկերները, որոնց ականատես էր եղել ինքը: Նման արհավիրքների կրկնությունը բացառելու բռուն ցանկությամբ տոգորված էլ նա գրեց իր հուզիչ «**Հուշեր Սուլֆերինոյի մասին**» գրքույկը, որտեղ, ականատեսի իր վկայությունները ներկայացնելուց բացի, երկու առաջարկություն էր անում.

- որ ամեն երկիր ստեղծի օգնության կամավոր մի կազմակերպություն, ընդ որում՝ դեռ խաղաղ պայմաններում, որը պատերազմի ժամանակ պատրաստ լինի օգնելու բժշկական կազմավորումներին,
- որպեսզի պետություններն ընդունեն «անխախտելի միջազգային սկզբունքներ», որոնք կերաշխավորեն ռազմական հոսսայիտալների և բուժանձնակազմի իրավական պաշտպանությունը:

Առաջին առաջարկությունից ծնվեց Կարմիր խաչը, իսկ երկրորդը հիմք դրեց Ժնևյան իրավունքին. այս երկուսն անխզելիորեն կապված են իրար:

## 2. ՊԱՏԵՐԱԶՄ ՎԱՐԵԼՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

**Պատերազմը և միջազգային իրավունքը:** Միջազգային մարդասիրական իրավունքը չի արգելում, բայց և չի խրախուսում պատերազմը: Այդ հարցում մարդասիրական իրավունքը հենվում է միջազգային իրավունքի այն դրույթների վրա, որոնք շարադրված են ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ: ՄԱԿ-ի Կանոնադրությունը, ինչպես



*Անրի Դյունան, շվեյցարացի գործարար, ԿԽՄԿ-ի հիմնադիր գործիչ, Խաղաղության Նոբելյան մրցանակի 1-ին դափնեկիրը (1901 թ.)*

հայտնի է, արգելում է պատերազմը: Պետությունները պարտավոր են բոլոր դեպքերում տարածայնությունները լուծել խաղաղ ճանապարհով: Պետությունը, որն իր նպատակներին հասնելու համար փորձում է ուժ գործադրել այլ պետության նկատմամբ, ոտնահարում է միջազգային իրավունքը և ագրեսիա կատարում, եթե նույնիսկ դա արդարացված է:

Միջազգային մարդասիրական իրավունքի գործունեության ասպարեզն այլ է. այն սկսում է գործել, երբ զինված ընդհարումը փաստորեն սկսվել է, անկախ դրա պատճառներից: Այլ խոսքով՝ մարդասիրական իրավունքը գործի է դրվում այն բանից հետո, երբ պատերազմը, չնայած ուժի կիրառման արգելքին, արդեն սկսվել է, և անկախ այն բանից՝ պատերազմն արդարացի է, թե ոչ:

### Միջազգային մարդասիրական իրավունքը բաժանվում է երկու ճյուղի՝

- «Ժնևի իրավունք», որի նպատակն է պաշտպանել զինված ուժերի կազմից այն անձանց, ովքեր դադարել են ռազմական գործողություններին մասնակցելուց, և այն անձանց, որոնք անմիջականորեն չեն մասնակցում ռազմական գործողություններին, այսինքն՝ քաղաքացիական բնակչությանը.
- «Հաագայի իրավունք», որը սահմանում է զինված ընդհարման մեջ գտնվող կողմերի իրավունքները և պարտականությունները ռազմական գործողությունների ընթացքում և սահմանափակում հակառակորդին վնաս պատճառելու հնարավոր միջոցները:

Մարդասիրական իրավունքի ճյուղերի անվանումները ծագել են այն քաղաքների անուններից, որտեղ կնքվել են համապատասխան միջազգային պայմանագրերը: 1977 թ. հետո, երբ ընդունվեցին իրավունքի այս երկու ճյուղերի նորմերը միավորող Լրացուցիչ արձանագրությունները, վերը նշված տարանջատումն արդեն զուտ պատմական և ուսուցողական նշանակություն ստացավ:

1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևի չորս համաձայնագրերը միջազգային մարդասիրական իրավունքի հիմնական աղբյուր են: Գրանք են՝

- Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին համաձայնագիր (Ժնևի I համաձայնագիր),




ԿԽՄԿ-ի գլխադասային գրասենյակը Ժնևում  
(Շվեյցարիա)

- Ծովում զինված ուժերի կազմից վիրավորների, հիվանդների և նավաբեկյալների վիճակի բարելավման մասին համաձայնագիր (Ժնևի II համաձայնագիր),
  - Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին համաձայնագիր (Ժնևի III համաձայնագիր),
  - Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին համաձայնագիր (Ժնևի IV համաձայնագիր):
- Ժնևի համաձայնագրերը 1977 թ. հունի-

սի 8-ին համալրվեցին երկու լրացուցիչ արձանագրություններով.

- Միջազգային զինված ընդհարումների գոհերի պաշտպանության մասին 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևի համաձայնագրերին կից Լրացուցիչ արձանագրություն (Արձանագրություն I),
- Միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների գոհերի պաշտպանության մասին 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևի համաձայնագրին կից Լրացուցիչ արձանագրություն (Արձանագրություն II):

Հայաստանի Հանրապետությունը միացել է նշված համաձայնագրերին և կից Լրացուցիչ արձանագրություններին 1993 թ. մարտի 31-ին:



*ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը խնդրում է Կոնգրեսի համաչափությունը Գերմանիային պարտերազմ հայտարարելու համար. Առաջին համաշխարհային պատերազմ, 1917թ.*

**Միջազգային մարդասիրական իրավունքը ճանաչում է զինված ընդհարումների երկու տեսակ՝ միջազգային բնույթի և ոչ միջազգային բնույթի ընդհարումներ:**

Այստեղ որպես տարբերակող հատկանիշ հանդես է գալիս պետական սահմանը: Միջազգային բնույթի զինված ընդհարումն ամբողջովն երկու պետությունների զինված ուժերի միջև բախումն է: Ազգային-ազատագրական պատերազմը նույնպես համարվում է միջազգային բնույթի զինված ընդհարում: Ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումը որևէ պետության տարածքում վերջինիս կանոնավոր զինված ուժերի և կազմակերպված զինված խմբի կամ կազմակերպված զինված խմբերի միջև բախումն է:

**Պատերազմելու մեթոդների և միջոցների սահմանափակումը:** Ժնևի համաձայնագրերի 1977 թ. Լրացուցիչ I արձանագրության մեջ ասված է. «Ցանկացած զինված ընդհարման դեպքում ընդհարման մեջ գտնվող կողմերի՝ պատերազմելու մեթոդների և միջոցների ընտրության իրավունքն անսահմանափակ չէ»:

Պատերազմելու արգելված միջոցներից է **ուխտադրժությունը:** Ուխտադրժություն է, երբ հարձակվում են սպիտակ դրոշ պարզաձև կամ ձևացնում են, թե շարքից դուրս են եկել՝ օգնության շտապող հակառակորդին ոչնչացնելու նպատակով: Մյուս կողմից՝ այնպիսի սովորական ռազմական խորամանկությունները, ինչպիսիք են քողարկումը, կեղծ ռազմական գործողությունները կամ ապատեղեկատվությունը, որոնց նպատակն է մոլորության մեջ գցել հակառակորդին, իհարկե, արգելված չեն:

Արձանագրություն I-ն արգելում է ոչ ընտրողական գործողություն ունեցող զենքի և զինամթերքի կիրառմամբ հարձակումները: Ռա նշանակում է, որ արգելված են այն զենքն ու զինամթերքը, որոնք ռազմական նշանակետին ճշգրիտ ուղղելու անհնարինության հետևանքով հարվածում են մաս քաղաքացիական անձանց և քաղաքացիական օբյեկտների (օրինակ՝ հրթիռները, որոնք դժվար է ճշգրիտ ուղղորդել):

Ցանկացած դեպքում արգելվում է ոչ մեկին չխնայելու հրաման տալը կամ ռազ-

մական գործողություններն այդ կերպ վարելը: Հակառակորդ բանակի այն զինվորին ոչնչացնելը, որն ակնհայտորեն զենքը վայր է դրել կամ շարքից դուրս է եկել, մարդասպանություն է:

Արգելվում են նաև այնպիսի զենքերի կամ արկերի օգտագործումը, որոնք «կարող են ավելորդ վնասներ կամ ավելորդ տառապանքներ պատճառել»: Անշուշտ, պատերազմն ինքնին դաժան երևույթ է: Այս կանոնով, սակայն, արգելվում է այնպիսի զենքի և զինամթերքի օգտագործումը, ինչը կարող է հետապնդվող ռազմական նպատակներին ոչ անհրաժեշտ վնասներ պատճառել, որոնք, հետևաբար, անտեղի են:

#### Հարցեր և առաջադրանքներ

1. *Անցյալի մարդասիրական մտքի ի՞նչ հուշարձաններ կարող եք նշել:*
2. *Պատերազմ վարելու ո՞ր շեղումն է ին անհարկ սապեփական կանոններին:*
3. *Ի՞նչ նյութերի է բաժանվում միջազգային մարդասիրական իրավունքը:*
4. *Թվարկե՛ք միջազգային մարդասիրական իրավունքով արգելված պատերազմելու մի քանի մեթոդներ և միջոցներ:*
5. *1977թ. Լրացուցիչ I արձանագրությունը հափուկ դրույթ է պարունակում, որով արգելվում է ռազմական գործողությունների ժամանակ փայրերանշանները, ինչպես, օրինակ Կարմիր խաչը կամ Կարմիր մահիկը օգտագործել ոչ իրենց նշանակությամբ: Տարբերանշանների չարաշահումը դադարադարձի է, որովհետև... (քննարկե՛ք և նշե՛ք առնվազն երկու պատճառ):*

**Ինքնուրույն աշխատանք:** Ուսուցչի բաշխմամբ պատրաստեք զեկուցումներ հետևյալ թեմաներով. «Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին համաձայնագիրը», «Ծովում զինված ուժերի կազմից վիրավորների, հիվանդների և նավաբեկյալների վիճակի բարելավման մասին համաձայնագիրը», «Բազմազերիների հետ վարվելակերպի մասին համաձայնագիրը», «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին համաձայնագիրը»:

## **ԳԱՍ 63-64. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **1. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Պատերազմների բովանդակությունը, դրանց նպատակները կարող են տարբեր լինել, բայց գլխավոր նպատակը եղել և մնում է պետական սահմանների փոփոխությունը, պետության զբաղեցրած աշխարհագրական տարածքի ընդարձակումը, նրա քաղաքական, ռազմական, տնտեսական ազդեցության մեծացումը: Այդպիսին էին և՛ երկու համաշխարհային պատերազմները, և՛ դրանից հետո սկսված «սառը պատերազմը», և՛ այսօր էլ շարունակվող «տաք» պատերազմները:

Ներկայումս աշխարհում հաշվվում է մոտ 300 վայր, որոնց շուրջ բոլորովն պայքարը կարող է բնութագրվել որպես տարածքային հակամարտություն: Դրանց մեկ երրորդը, այսպես կոչված, «թեժ կետերն» են, որտեղ հակամարտությունը զինված բախումների տեսք է ստացել:

Տարածքային հակամարտություններն ըստ իրենց բնույթի կարելի է բաժանել երկու խմբի.

- հակամարտություններ պետությունների միջև,
- հակամարտություններ պետությունների ներսում:

Հակամարտությունների մեծ մասը լուծվում է պատերազմի միջոցով, հաղթողի իրավունքով: Շատ դեպքերում վեճը դրանից հետո էլ իր լուծումը չի գտնում և տասնամյակներ, անգամ հարյուրամյակներ շարունակ փչացնում է հարևան ժողովուրդների ու պետությունների հարաբերությունները:

Եվրոպայում վիճելի տարածքներ են եղել Սաարի մարզը՝ Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև, Տրանսիլվանիան՝ Հունգարիայի և Ռումինիայի միջև, Մակեդոնիան՝ Բուլղարիայի, Հունաստանի ու Սերբիայի միջև, Սիլեզիան՝ Գերմանիայի և Լեհաստանի միջև և այլն:

Պատմությանը հայտնի են տարածքային վեճերի խաղաղ լուծման օրինակներ՝ բանակցությունների միջոցով կամ էլ Սիջազգային դատարանի վճռով:

Հետաքրքրական է, օրինակ, աֆրիկյան Լիբիա և Չադ պետությունների սահմանի վրա գտնվող Աուզու կոչվող տարածքի պատմությունը: ՀՀ տարածքի գրեթե քառապատիկը կազմող այդ տարածքն ընկած է Սահարայի անմարդաբնակ անապատում և ձգվում է ամբողջ պետական սահմանի երկայնքով: Որոշ տվյալներով՝ Աուզու գոտու ընդերքը հարուստ է նավթի և ուրանի պաշարներով: 1970-ական թթ. սկզբին Լիբիան օկուպացրեց այն: Կորցրած տարածքը վերադարձնելու Չադի բազմաթիվ փորձերը, այդ թվում՝ զինված ուժով, արդյունք չտվեցին: Ի վերջո հակամարտող կողմերը որոշեցին դիմել Հաագայի Սիջազգային դատարան՝ նախօրոք հայտարարելով, որ կընդունեն նրա ցանկացած վճիռը: 1994 թ. դատարանը վճռեց, որ Աուզուն պատկանում է Չադին: Լիբիան, միջազգային դատորդների հսկողությամբ, իր գործերը դուրս բերեց վիճելի գոտուց:

Եվրոպայում տարածքային վեճի խաղաղ լուծման օրինակ է Տրիեստը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Տրիեստին հավակնում էին Իտալիան և Հարավսլավիան: Երկարատև բանակցություններից հետո հակամարտող կողմերը համաձայնության եկան. որոշվեց բաժանել վիճելի տարածքը: Արևմտյան՝ փոքր մասը Տրիեստ նավահանգստով անցավ Իտալիային, իսկ արևելյան մեծ մասը՝ Հարավսլավիային (Հարավսլավիայի մասնատումից հետո՝ Սլովենիային և Խորվաթիային):

## 2. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՒԼԵՐԸ

Ներպետական տարածքային-ազգային հակամարտությունները ծավալվում են նույն օրինաչափություններով և անցնում զարգացման նույն փուլերը: Մասնագետները հակամարտությունների զարգացման չորս փուլ են առանձնացնում. **բարձրագույն, բացահայտ դրսևորման, ակտիվ ընթացքի և հետևանքների:**

Առաջին և երկրորդ փուլերում հակամարտությունը նոր է սկսում ձևավորվել ու դրսևորվել. երկրում իշխող դիրք գրավող, մեծամասնություն կազմող ազգը և այն ներկայացնող պետական իշխանությունն առաջժամ կարող են կանխարգելել հակամարտության հետագա ծավալումը, ընդունելով և իրականացնելով այնպիսի որոշումներ, որոնք միասնական, հավասար և լիակատար քաղաքացիության սկզբունքներ կապահովեն բոլոր ազգերի ներկայացուցիչների համար՝ թույլ չտալով որևէ խտրականություն ազգային, կրոնական կամ այլ հիմունքներով:

Ակտիվ ընթացքի փուլը հակամարտության բորբոքման վիճակն է, երբ մինչ այդ չի հաջողվել կարգավորել հակամարտությունը, և այն վերաճել է կազմակերպված մարտական գործողությունների: Այս փուլում սովորաբար հակամարտող կողմերին բացահայտ օժանդակություն են ցույց տալիս իրենց հայրենակիցներն արտասահմանից: Հաճախ հակամարտությունը «միջազգայնացվում է», այսինքն՝ դրա անմիջական մասնակիցները, ի վիճակի չլինելով սեփական ուժերով հաղթահարել այն, դիմում են միջազգային հանրության օժանդակությանը, որն էլ միջամտում է հակամարտությանը: Այնուհետև գլխավոր նպատակ է դառնում՝ ցանկացած միջոցներով դադարեցնել մարտական գործողությունները, հաստատել զինադադար և բանակցությունների միջոցով ձեռնամուխ լինել հակամարտության քաղաքական կարգավորմանը:

**Հակամարտության հետևանքները կարող են լինել երկու տեսակի:** Առաջին՝ վերադարձ հակամարտության ելակետային վիճակին և քաղաքական, տնտեսական և այլ բարեփոխումների անցկացում: Այդ բարեփոխումները պետք է ընդունելի լինեն հակամարտող կողմերի համար. դրանք կարող են նախատեսել նաև փոքրամասնություն կազմող ազգային համայնքին պետության ներսում քաղաքական ինքնորոշման իրավունք տրամադրելը կամ իրավունքների ընդլայնումը: Այսինքն՝ կարող է ստեղծվել նոր տարածքային քաղաքական միավոր՝ ինքնավար տարածք, կամ կարող է բարձրացվել արդեն եղած միավորի կարգավիճակը, ինչպես դա կա-

տարվեց Ռուսաստանի Դաշնությունում ԽՍՀՄ կազմալուծումից հետո: Այստեղ բոլոր նախկին ինքնավար հանրապետություններն ու ինքնավար մարզերը ստացան հանրապետության կարգավիճակ և դարձան դաշնության սուբյեկտներ:

**Երկրորդ՝** փոքրամասնություն կազմող ազգային համայնքի անջատումը մեծամասնության պետությունից և սեփական ինքնիշխան պետության ստեղծումը: Այդպիսի օրինակ են Նամիբիան և Էրիտրեան, որոնք, անջատվելով համապատասխանաբար Հարավաֆրիկյան Հանրապետությունից և Եթովպիայից, անկախություն ստացան, պաշտոնապես ճանաչվեցին միջազգային հանրության կողմից և դարձան ՄԱԿ-ի անդամ:

### 3. ՎՐԱՅ-ԱՐԽԱԶԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Վրացիների և աբխազների՝ կովկասյան այդ երկու տեղաբնիկ ժողովուրդների փոխադարձ շփումներն ու հարաբերությունները դարավոր պատմություն ունեն:

VIII-X դարերում վրացական պետության անմիջական հարևանությամբ գոյություն է ունեցել անկախ Աբխազական թագավորություն: Աբխազիան X-XIII դարերում Վրաստանի և Իմերեթիայի հետ կազմել է մեկ միասնական պետություն, XIII դարի վերջերին նվաճվել է մոնղոլների կողմից, իսկ XVI դարից սկսած գտնվել է Թուրքիայից կախյալ վիճակում: XIX դարի սկզբին այն մտել է Ռուսական կայսրության կազմի մեջ սկզբում որպես Աբխազական ինքնավար իշխանություն, իսկ ավելի ուշ՝ Սուխումի օկրուգ:

Հոկտեմբերյան հեղափոխությանը (1917 թ.) հաջորդած տարիներին Աբխազիան արյունալի կռիվների թատերաբեմ էր: Բախվում էին Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակը, սպիտակգվարդիական դեմոկրատական բանակը և Վրացական դեմոկրատական հանրապետության զինված ուժերը: 1921 թ. մարտին Աբխազիան հռչակվեց անկախ խորհրդային սոցիալիստական հանրապետություն, այնուհետև նույն թվականի դեկտեմբերին դաշնակցային պայմանագրով միավորվեց մինչ այդ խորհրդայնացված Վրաստանի հետ: Այդպիսի հավասար կարգավիճակում էլ Վրաստանը և Աբխազիան Հայաստանի ու Ադրբեջանի հետ միասին մտան նորաստեղծ Անդրկովկասի Խորհրդային Սոցիալիստական Դաշնային Հանրապետության (Անդրֆեդերացիայի) մեջ: Իրավիճակը, սակայն, փոխվեց 1931 թ., երբ Աբխազիան դարձավ ինքնավար հանրապետություն Վրաստանի կազմում:



*Սուխում քաղաքը*



*Արխազիան Վրաստանին կապող  
Կողորի կիրճը*

ժողովրդագրականը: Շարունակվում էր դեռևս ցարական իշխանության կողմից իրականացվող Արխազիայի բնակչության ազգային կազմի փոփոխության քաղաքականությունը: Դրա արդյունքում հակամարտության ակտիվ փուլի նախօրյակին՝ 1980-ական թթ. վերջերին, արխազները կազմում էին Արխազիայի բնակչության ընդամենը 17.5 տոկոսը:

Վրաց-արխազական հակամարտությունը զինված ընդհարումների բնույթ ստացավ, երբ 1990 թ. ակնհայտ դարձավ խորհրդային միասնական պետության ստատուս անկումը: Արխազական Ինքնավար ԽՍՀ Գերագույն խորհուրդը քվեարկեց Արխազիայի անկախության օգտին, իսկ 1992 թ. հուլիսին ընդունեց օրենք՝ անկախ Արխազիայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության 1925 թ. Սահմանադրությունը գործողության մեջ դնելու մասին: Անկախություն հռչակած Արխազիայի և Վրաստանի միջև լայնամասշտաբ ծագման գործողություններ սկսվեցին 1992 թ. օգոստոսին, երբ 2000-անոց վրացական զորախումբը ստավ Արխազիա: Սեպտեմբերին Մոսկվայում կայացած եռակողմ բանակցությունների (Արխազիա, Վրաստան, Ռուսաստան) արդյունքում արյունահեղությունը դադարեցվեց, հաստատվեց զինադադար, որը, սակայն, հետագայում բազմիցս խախտվեց:

Վրաց-արխազական հակամարտության կարգավորման խնդրով զբաղվել են մի շարք միջազգային կազմակերպություններ՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ), ՆԱՏՕ-ն: Հակամարտող կողմերի միջև խաղաղ բանակցությունների հիմնական միջնորդի պատասխանատվությունը դրված է ԵԱՀԿ-ի վրա, իսկ հակամարտության գոտում խաղաղարար գործողություններն իրականացնում են Ռուսաստանի Դաշնության զինված ուժերը: Հակամարտության կարգավորման հենանկարն առայժմ անորոշ է: Վրացական կողմը շարունակում է պնդել պետության տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքի վրա և պատրաստա-

Վրաստանի կազմում նոր, ենթակա կարգավիճակը և հատկապես Հայրենական մեծ պատերազմին հաջորդած տարիներն արխազներին «ճնշված ազգ» լինելու զգացողության խորացման նոր առիթներ տվեցին: 1945 թ. Վրաստանում ընդունվեցին կոասկցական որոշումներ, որոնք նրանց կողմից ընդունվեցին որպես արխազական ազգային դպրոցը վերացնելու և դրանով իսկ արխազներին մշակութային ուժացման (ասիմիլացիայի) ենթարկելու փորձ: Նոր նշանակություն ձեռք բերեց հակամարտության մյուս բաղադրիչը՝

կամություն է հայտնում Աբխազիայի հետ միավորվել դաշնակցային հիմունքներով: Աբխազական կողմը պնդում է ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչման սկզբունքի և Վրաստանի կողմից Աբխազիայի անկախությունը ճանաչելու վրա:

#### 4. ՎՐԱՅ-ՀԱՐԱՎՈՍԵԹԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Ներկա օտերի նախնիները՝ ալանները, սեփական պետություն են ունեցել դեռևս IX դարում: Մինչև XVIII դարի վերջը երկիրը Թուրքիայի տիրապետության տակ էր: Ռուսաստանին անցել է մաս առ մաս՝ 1774 թ. Հյուսիսային Օսեթիան, և 1801 թ.՝ Հարավային Օսեթիան:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ինչպես հյուսիսային, այնպես էլ հարավային օսերը չեն ճանաչել անկախացած Վրաստանի գերիշխանությունը և զինված պայքար են մղել նրա դեմ: Վրաստանի խորհրդայնացումից հետո Օսեթիան Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի միջամտությամբ Կովկասյան լեռնաշղթայի ջրբաժանով տրոհվել է երկու մասի: Հյուսիսում՝ Ռուսաստանի կազմում, ստեղծվել է Հյուսիսօսեթական Ինքնավար Մարզը (1936 թ.՝ Ինքնավար Հանրապետություն), իսկ հարավում՝ Վրաստանի կազմում՝ Հարավօսեթական Ինքնավար Մարզը (3.9 հազ. քառ. կմ տարածքով): Այդուհանդերձ, Օսեթիայի երկու մասի բաժանված լինելը բնակչության մեծ մասի մոտ ցավազին տրամադրություններ չէր ստեղծում: Բաժանարար գիծը՝ Ռուսաստանի և Վրաստանի միջև սահմանը, ըստ էության ձևական էր: Այն վարչական սահման էր և ժողովրդի երկու հատվածների միջև շփումների համար որևէ խոչընդոտ չէր հարուցում: 1980-ական թթ. վերջերին ԽՍՀՄ փլուզման և Վրաստանի անկախացման հեռանկարն արմատապես փոխեց իրավիճակը. բաժանարար գիծը կարող էր վերածվել պետական սահմանի՝ օտերի համար անցանկալի հետևանքներով: Միաժամանակ վրացիների մոտ տարածում էր ստանում այն մտայնությունը, որ Հարավային Օսեթիայի ինքնավարությունն անօրինական է և պետք է վերացվի: Հակառակ դրա Հարավային Օսեթիայի մարզային խորհուրդը 1989 թ. որոշում ընդունեց ինքնավար մարզը Վրաստանի կազմում ինքնավար հանրապետության վերակազմելու մասին: Մի քանի ամիս անց նոր հռչակված հանրապետության Գերագույն խորհրդի ընտրություններ անցկացվեցին: Ի պատասխան Վրաստանի Գերագույն խորհուրդը 1990 թ. դեկտեմբերի 10-ին ընդունեց օրենք Հարավօսեթական Ինքնավար Մարզը լուծարելու մասին: Մարզի տարածքի մի մասում մտցվեց արտակարգ դրություն: Այդ ամենին հաջորդեցին զինված բախումներ, եղան մեծաթիվ զոհեր, հազարավոր խաղաղ բնակիչներ դարձան փախստականներ ու բռնի վերաբնակներ: Ակնհայտ դարձավ Վրաստանի կազմից դուրս գալու և Ռու-





2008 թ. օգոստոսի 8-ին հակամարտությանը Հարավային Օսեթիայի կողմից պաշտոնապես միացավ Ռուսաստանը՝ վրացական կողմին «խաղաղության հարկադրելու գործողության» հիմնավորումով, իսկ հաջորդ օրը՝ օգոստոսի 9-ին, Աբխազիան՝ Չճանաչված պետությունների համագործակցության անդամների միջև ռազմական փոխօգնության պայմանագրի շրջանակներում: Օգոստոսի 12-ին և 13-ին Ռուսաստանը և Աբխազիան հաջորդաբար հայտարարեցին ռազմական գործողություններն ավարտելու մասին: Դրան հաջորդեց ռազմական գործողություններին մասնակից պետությունների ղեկավարների կողմից վրաց-հարավօսեթական հակամարտության խաղաղ կարգավորման՝ Ֆրանսիայի նախագահի միջնորդությամբ ձեռք բերված ծրագիրը:

2008 թ. օգոստոսի 26-ին Ռուսաստանը պաշտոնապես ճանաչեց Աբխազիայի և Հարավային Օսեթիայի անկախությունը: Ավելի ուշ դրան միացան նաև Նիկարագուան, Վենեսուելան, Նաուրու և Վանուատու հանրապետությունները (Խաղաղ օվկիանոսում գտնվող ոչ մեծ պետություններ):

Վրաց-աբխազական և վրաց-հարավօսեթական հակամարտությունն այսօր գերազանցապես քաղաքական և դիվանագիտական բնույթ է ստացել:

#### Հարցեր և առաջադրանքներ

1. *Ի՞նչ խնդրերի կարելի է բաժանել փարածքային հակամարտությունները: Ներկայումս աշխարհում հակամարտության բանի՞ օջախ կարելի է հաշվել, և դրանց ո՞ր մասն է համարվում «քեժ կեպ»:* Ինչո՞վ են վերջիններս առանջնանում մյուսներից:
2. *ԹՎարկե՞ք փարածքային հակամարտությունների չեզ հայտնի օրինակներ: Պատմությանը հայտնի՞ են փարածքային վեճերի խաղաղ լուծման օրինակներ: Ի՞նչ եղանակներով են դրանք լուծում սպացել:*
3. *Հակամարտությունների զարգացման ինչպիսի՞ փուլեր են սովորաբար առանջնացնում: Համատրասի բնութագրե՞ք դրանք:*
4. *Հաջորդաբար ներկայացրե՞ք վրաց-աբխազական և վրաց-հարավօսեթական հակամարտությունները.*
  - *դրանց պատմական արմատները,*
  - *ընթացքը խորհրդային իշխանության հաստատման շրջանում և հետագա տասնամյակներում,*
  - *իրավիճակը ԽՍՀՄ փլուզման նախօրեին և դրան հաջորդող տարիներին:*
5. *Լրացուցիչ աղբյուրներից փորձե՞ք պարզաբանել ինչո՞ւ Հայաստանը չի ճանաչել Աբխազիայի և Հարավային Օսեթիայի անկախությունը:*

**Գործնական աշխատանք:** Ստորև ներկայացվում են վրաց-հարավօսեթական հակամարտությանը ներգրավված կողմերի տեսակետները 2008 թ. օգոստոսյան պատերազմի շարժառիթների վերաբերյալ: Խմբային եղանակով քննարկե՞ք և փորձե՞ք մեկնաբանել կողմերի վարկածները:

### **Վրաստանի վարկածը**

Պատերազմի առաջին ժամերին Վրաստանի կառավարությունն իր գործողությունները պատճառաբանում էր այն բանով, որ «անջատողականները հարձակում էին ձեռնարկել Յիսինվալիի մերձակա գյուղերի վրա»՝ դա անելով ի պատասխան Վրաստանի կողմից կրակի միակողմանի դադարեցման: Օգոստոսի 9-ին Վրաստանի խորհրդարանը հաստատեց նախագահ Մ. Սահակաշվիլիի հրամանագիրը ռազմական դրություն մտցնելու և զորահավաք անցկացնելու վերաբերյալ:

Վրացական կողմի պաշտոնական հայտարարությունների համաձայն՝ Վրաստանի տարածքում գտնվող ռուսաստանյան խաղաղապահ ուժերը «իրականում օկուպացիոն գորքեր են, որոնց գլխավոր նպատակը ոչ թե հակամարտության կարգավորումն է, այլ վրացական տարածքների յուրացումը»: 2008 թ. նոյեմբերի 5-ին ՆԱՏՕ-ի հովանավորությամբ Ռիգայում կայացած մամուլի պաշտոնական ասուլիսում Վրաստանի նախագահ Մ. Սահակաշվիլին ներկայացրեց պատերազմի սկիզբ առնելու վերաբերյալ իր վարկածը, համաձայն որի՝ տվյալ պատերազմը Ռուսաստանի ագրեսիան է Վրաստանի նկատմամբ, որի սկիզբ պետք է համարել Ռուսաստանի Սևծովյան նավատորմի տեղաշարժը Սևաստոպոլից դեպի Վրաստանի ծովափնյա շրջաններ, ինչը տեղի է ունեցել Հարավային Օսիայում առաջին կրակոցներից առնվազն վեց օր առաջ:

### **Հարավային Օսեթիայի կառավարության դիրքորոշումը**

Հարավօսեթական մեկնաբանությամբ՝ պատերազմի պատճառը Վրաստանի՝ օլիմպիական խաղերի նախօրեին կատարած ագրեսիան էր Հարավային Օսեթիայի նկատմամբ: Հարավային Օսեթիայի նախագահ Է. Կոկոյտին հայտարարել է. «Վրացական բլիցկրիգի կողային անվանումը՝ «Մաքուր դաշտ», բացահայտում է Վրաստանի ծրագրերի էությունը՝ իրականացնել էթնիկ զտում, «մաքուր դաշտի» վերածել ողջ Հարավային Օսեթիան...»:

### **Ռուսաստանի վարկածը**

Ռուսաստանի արտգործնախարար Ս. Լավրովը հայտարարեց, որ հակամարտության գոտի ռուսաստանյան զորքեր մտցնելու պատճառները Վրաստանի ագրեսիան էր իրեն ոչ ենթակա տարածքի՝ Հարավային Օսեթիայի նկատմամբ և այդ ագրեսիայի հետևանքները. հումանիտար աղետը, տարածաշրջանից 20 հազար փախստականների դուրս գալը, ռուսաստանյան խաղաղապահների և Հարավային Օսեթիայի բազմաթիվ բնակիչների զոհվելը: Վրացական բանակի գործողությունները խաղաղ բնակչության նկատմամբ Լավրովը որակավորեց որպես ցեղասպանություն: Նա նշեց, որ Հարավային Օսեթիայի բնակչության մեծամասնությունը Ռուսաստանի քաղաքացի է, և որ «ոչ մի երկիր աշխարհում անտարբեր չէր լինի իր քաղաքացիների սպանությանն ու իրենց բնակարաններից վտարմանը»: Լավրովի կարծիքով՝ Ռուսաստանի զինված պատասխանը միանգամայն համարժեք էր Վրաստանի հարձակմանը:

### **Այլ կարծիքներ**

Հակամարտության պատճառների ուսումնասիրության համար Եվրոպական միության ղեկավարությամբ ստեղծված Անկախ ռազմական փորձագետների հանձնաժողովն իր զեկույցում պարզաբանել է, որ Ռուսաստանի սկզբնական պատասխանը Յիսինվալի վրա վրացական զորքերի հարձակմանը արդարացված էր պաշտպանության նպատակներով, սակայն, հանձնաժողովի կարծիքով, ռուսաստանյան զորքերի հետագա գործողությունները չափազանցված էին:

## ԳԱՍ 65. ԱՐՅԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

### 1. ԱՐՅԱԽՅԸ ՀԻՆ ԵՎ ՄԵՋԻՆ ԳԱՐԵՐՈՒՄ


Պատմական աղբյուրների վկայությամբ՝ Արևելյան Անդրկովկասի մեծագույն մասը, այդ թվում և ներկայիս Ղարաբաղ կոչվող աշխարհագրական տարածքն իր թե՛ լեռնային, թե՛ դաշտավայրային մասերով անհիշելի ժամանակներից ի վեր բնակեցված է եղել տեղաբնիկ հայերով և կազմել է հայկական պետական տարածքի, իսկ պետության բացակայության դեպքում՝ հայկական էթնոմշակութային տարածքի մի մասը: Ըստ «Աշխարհացույցի»՝ մեր թվարկության առաջին դարերից սկսած այն ընդգրկված է եղել Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգների սահմաններում:

**Արցախի** նախարարական տան նախահայրն է եղել Առանը, որի անունից էլ ծագել է հարստության Առանշահիկ անունը: V-VI դարերում Արցախը մտնում էր պարսկահպատակ Աղվանից մարզպանության մեջ: Օգտվելով պարսից արքունիքի զիջումներից՝ Արցախի Առանշահիկները V դարի վերջում Վաչագան Բարեպաշտի գլխավորությամբ ստեղծեցին թագավորություն, որի մեջ ընդգրկված էին նաև Ուտիքը և այլ տարածքներ: IX դարի վերջերին Արցախի իշխանական տան ճյուղերը Բագրատունյաց թագավորության ենթակայությամբ ստեղծեցին երկու փոքրիկ թագավորություն Դիզակում և Խաչենում: X դարից սկսած Արցախ անունը կորցնում է իր վարչաքաղաքական նշանակությունը և գործածվում որպես աշխարհագրական հասկացություն: Եվ քանի որ նահանգի մեծ մասն ընդգրկված էր Խաչենի իշխանության մեջ, Արցախ անվանը փոխարինում է **Խաչենը**, որին էլ XV դարում փոխարինում է **Ղարաբաղը**: Արցախ-Խաչենի իշխանությունները ուշ միջնադարում մանրացել, վեր էին ածվել գավառական վարչական միավորների, որոնք կոչվում էին մելիքություններ:

**Փաստեր:** 1736 թ. Պարսկաստանում գահ բարձրացավ Նադիր շահը՝ ինքնատիպ և տաղանդավոր պետական մի գործիչ: Գահ բարձրանալուց անմիջապես հետո Նադիր շահը հատուկ հրովարտակով Արցախի հինգ մելիքությունները միավորեց «Մահալե խամսե» (արաբերեն խամսա՝ հինգ) նահանգի մեջ: Նորաստեղծ նահանգը դուրս բերվեց Գանձակի խանի վերահսկողությունից և դարձավ ինքնուրույն վարչական միավոր: Խամսայում միավորվեցին Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի մելիքությունները: Գյուլիստանում իշխում էին Մելիք-Բեգլարյանները, Ջրաբերդում՝ Մելիք-Իսրայելյանները, Խաչենում՝ Հասան-Ջալալյանները, Վարանդայում՝ Մելիք-Շահնազարյանները, Դիզակում՝ Մելիք-Եզանյանները (Մելիք-Ավանյաններ): Խամսայի գերագահ (բեկլարբեկ) նշանակվեց Դիզակի մելիք Եզանը (իշխանանիստը՝ Տողավան): Նա ենթարկվում էր Ատրպատականի փոխարքային: Մելիք Եզանը նաև շահի պալատական խորհրդականն էր և, ինչպես վկայում են պարսկական սկզբնաղբյուրները, վայելում էր Նադիր շահի առանձնակի հարգանքն ու վստահությունը:

Նադիր շահի սպանությունից հետո (1747 թ.) Խամսայի մելիքների վիճակը փոխվում է. պարսից նոր տիրակալները վերացնում են Խամսայի շատ արտոնություններ: Իրա-

վիճակը վատթարանում էր մելիքական տների միջև սկիզբ առած երկպառակությունների ու եղբայրասպան կռիվների հետևանքով: Վարանդայի մելիք Հովսեփի դեմ ապստամբեց նրա կրտսեր եղբայր Շահնազարը, որը, սպանելով եղբորը, տիրացավ մելիքական աթոռին: Խամսայի մյուս չորս մելիքները միացյալ ուժերով դուրս եկան ինքնակույրի դեմ: Մելիք Շահնազարը 1752 թ. օգնություն խնդրեց երկրամասի արևելյան սահմանների մոտ ծվարած թուրք սարըջալու ցեղապետ Փանահից և նրան տրամադրեց հինավուրց Շոշ (Շուշի) ամրոցը: Այսպես Արցախի սրտում բնակություն հաստատեց մի օտար թուրքական ցեղ: Փանահը, արագորեն վերակառուցելով Շոշի բերդը, հաստատվեց այնտեղ: Շուտով շահը նրան շնորհեց խանական տիտղոս և հայ մելիքներին պարտադրեց ենթարկվել նրան: Այսպիսով՝ ստեղծվեց Ղարաբաղի խանությունը, որն իսկական չարիք դարձավ երկրամասի հայ բնակչության համար և հանդիսացավ Խամսայի թուլացման հիմնական պատճառներից մեկը:



*Փանշասարի վանքը՝  
Աղվանից կաթողիկոսության նստավայրն ու  
նոր ժամանակներում ազատագրական պայքարի  
կազմակերպական կենտրոնը*

Արցախի հոգևոր կենտրոնը **Պանձասարի** վանքն էր, որը Աղվանից (Պանձասարի) կաթողիկոսության նստավայրն էր: XIV դարից սկսած Պանձասարի կաթողիկոսական գահը ժառանգաբար գտնվում էր **Հասան-Չալալյանների** տոհմի կրտսեր ճյուղի ներկայացուցիչների ձեռքում: Այդ տոհմի ականավոր ներկայացուցիչն էր Եսայի Հասան-Չալալյանը:

Արցախի հայկական իշխանությունները գոյատևեցին մինչև նրա միացումը Ռուսաստանին, որը տեղի ունեցավ 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով: 1867 թ. ցարական հրովարտակով Անդրկովկասը բաժանվեց 5 նահանգի: Երևանի ու Նախիջևանի գավառները և Օրդուբադի մարզը միավորվեցին Երևանի նահանգի մեջ, իսկ Ղարաբաղն ու Ջանգեզուրը Գանձակի և այլ հարակից շրջանների հետ միասին կազմեցին Ելիզավետպոլի նահանգը, որտեղ Ղարաբաղի լեռնային հատվածում առանձնացվեց Շուշիի գավառը:

## 2. ԱՐՅԱՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆՈՒՄ

Ռուսական կայսրության փլուզումից հետո՝ 1918 թ. մայիսին, Անդրկովկասում ստեղծված երեք անկախ պետությունների՝ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանային վեճեր բռնկվեցին: Ղարաբաղի բնակչությունն իրեն հայտարարեց Հայաստանի Հանրապետության բաղկացուցիչ մաս: Ադրբեջանը փորձեց զենքի ուժով Ղարաբաղը ենթարկել իրեն: Ադրբեջանին պաշտպանում էին Թուրքիան և Անգլիան, որոնք այդ ժամանակ Անդրկովկասում գործեր ունեին: Սակայն Ղարաբաղցիներին ծնկի բերել չհաջողվեց: Հակամարտությունը միջազգային

հարաբերությունների ոլորտ մտավ և դարձավ Ազգերի լիգայի քննարկման նյութ: Ազգերի լիգան Լեռնային Ղարաբաղը հայտարարեց «վիճելի տարածք», որի հարցը պետք է լուծեր հասուկ ստեղծվելիք հանձնաժողովը:

**Ադրբեջանի խորհրդայնացումը և Արցախի հիմնախնդիրները:** 1920 թ. ապրիլին 11-րդ Կարմիր բանակի օգնությամբ Ադրբեջանում հաստատվում է խորհրդային իշխանություն, և Լեռնային Ղարաբաղի խնդրով սկսում են զբաղվել Խորհրդային Ռուսաստանի ու բոլշևիկյան կուսակցության ղեկավարությունը: Դրա արդյունքում Լեռնային Ղարաբաղը հանձնվում է Խորհրդային Ադրբեջանին, որի կազմում էլ **1923 թ.** հայաբնակ տարածքի մի մասում ստեղծվում է **Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ):**

**Փաստեր:** Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու որոշումը սովորաբար կապվում է Ի. Ստալինի անվան հետ: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ դա շարունակությունն է քննադական Թուրքիայի նկատմամբ Խորհրդային Ռուսաստանի այն քաղաքականության, որի արդյունքում, հանուն Անդրկովկասում Թուրքիային դաշնակից ունենալու, նրան զիջեց նախկինում Ռուսական կայսրության կազմում գտնվող Կարսի, Սարիղամիշի, Կադավանի, Իգդիրի շրջանները, իսկ Նախիջևանը հանձնեց Ադրբեջանին: Խորհրդային ղեկավարության մեջ կային մահ հակառակ տեսակետի կողմնակիցներ (այդ թվում՝ Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Չիչերինը), որոնք գտնում էին, որ Անդրկովկասի պետական սահմանազատումը պետք է կատարվի ոչ թե «քաղաքական նպատակահարմարության», այլ պետական սահմանների և ազգությունների բնակության աշխարհագրական սահմանների համապատասխանության սկզբունքով: Այնուհայտ է, որ այդ սկզբունքի կիրառման դեպքում Լեռնային Ղարաբաղն իր տեղաբնիկ հայ բնակչությանը միացված կլիներ Խորհրդային Հայաստանին:

Խորհրդային իշխանության 70 տարիների ընթացքում արցախյան հակամարտության ակնհայտ սրում տեղի չունեցավ. այն գտնվում էր սառեցված վիճակում: Դա չի նշանակում, իհարկե, թե գտնված էր հակամարտության լուծման ճշմարիտ ուղին: Հակամարտության պատճառները շարունակում էին գոյություն ունենալ: Հակամարտության ազգային, սոցիալ-տնտեսական, մշակութային, վարչաքաղաքական և այլ բաղադրիչները խտացված կերպով արտահայտվում էին մեկ ընդհանուր ոլորտում: Դա ուղղաձիգ պետական կառավարման ամբողջատիրական ձևն էր, որն Ադրբեջանի գլխավոր, այսպես կոչված, «տիտղոսային» ազգի կողմից օգտագործվում էր ինքնահաստատման և փոքրամասնություն կազմող տեղաբնիկ ազգերին, այդ թվում և հայերին ճնշելու, բնակչության մեջ նրանց տեսակարար կշիռն իջեցնելու համար: Այդ քաղաքականությունը տալիս էր իր արդյունքը: Հայերին վերաբերող տվյալները հետևյալ պատկերն ունեին:

Լեռնային Ղարաբաղի այն հատվածում, որը տրամադրվեց նորաստեղծ ինքնավար մարզին, 1923 թ. տվյալներով բնակվում էր 158 հազ. մարդ, որի 94.4%-ը հայեր էին: Նշենք, որ մինչ այդ եղած վարչատարածքային բաժանումով Լեռնային Ղարաբաղի մեջ են եղել նաև ինքնավար մարզի սահմաններից դուրս թողնված այն

տարածքները, որտեղ ավելի ուշ ստեղծվել են Շահումյանի, Քելբաջարի և Լաչինի վարչական շրջանները:



*Ժողովրդական երթ՝ կոնկուսին ուղղված պատվարներով. 1988 թ.*

յուն ձևով նվազում էր հայերի և մյուս ազգային փոքրամասնությունների (հատկապես քրդերի, լեզգիների, թալիշների) տեսակարար կշիռը Ադրբեջանի բնակչության ընդհանուր թվում: Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների իրականացրած ազգային քաղաքականության շնորհիվ տեղաբնիկ հայ բնակչության բաժինը մարզի բնակչության ընդհանուր թվում հակամարտության ակտիվ փուլի նախօրյակին նվազել էր մինչև 75%-ը: Դրա հետագա զարգացումը չկանխելու դեպքում Լեռնային Ղարաբաղը կհայտնվեր հայաթափման վտանգի առջև և կկրկներ Նախիջևանի ճակատագիրը, որտեղ ժամանակին մեծամասնություն կազմող հայ բնակչության և ոչ մի ներկայացուցիչ այժմ այնտեղ չի ապրում: Այս հեռանկարն էր, որ Ղարաբաղի հայության մեջ մշտապես բարձր էր պահում օտարի ճնշումից ազատվելու, սեփական կյանքն ինքնուրույնաբար տնօրինելու և հարևան ժողովուրդների հետ իրավահավասարության պայմաններում ապրելու բնական ձգտումը:

### Հարցեր և առաջադրանքներ

1. **Համառոտ ներկայացրե՛ք արցախյան հակամարտության պատմական արմատները.**
  - միջնադարում,
  - նոր ժամանակներում:
2. **Նախարարական ո՞ր գոհմն էր իշխում Արցախում: Երրվանի՞ց են սկսել կիրառվել Խաչեն և Ղարաբաղ անունները:**
3. **Ի՞նչ է չեզ հայրնի մեխթորությունների մասին: ԹՎարկե՛ք Խամառայի մեխթորությունների և մեխթրական գոհմների անունները: Ե՞րբ վարքարացավ մեխթորությունների վիճակը, ինչի՞ հետ էր դա կապված: Մինչև և՞րբ գոյապահեցին մեխթորությունները:**
4. **Ե՞րբ արցախյան հակամարտությունը միջազգային հարաբերությունների ոլորտ մտավ: Միջազգային ո՞ր կազմակերպությունն այն քննարկման հարց դարձրեց:**
5. **Ի՞նչ ընթացք ունեցավ արցախյան հակամարտությունը խորհրդային իշխանության փոփոխումից: Ինչպե՞ս էր փորձում լուծել Ղարաբաղի հարցը Ադրբեջանը:**

## ԳԱՍ 66. ՂԱՐԱՔԱԿՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԼՂՀ-Ի ՀՈՉԱԿՈՒՄԸ

### 1. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՂԱՐԱՔԱԿՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Հայ-ադրբեջանական (ադրբեջանա-ղարաբաղյան) հակամարտության ակտիվ փուլի սկիզբ է համարվում **1988 թ. փետրվարի 20-ը**: Այդ օրը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց դիմել Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդներին՝ քննարկելու ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից դուրս գալու և Հայաստանին միանալու հարցը: Դա նշանակում է, որ Լեռնային Ղարաբաղի իշխանությունները ձգտում էին հարցը լուծել օրինական կարգով՝ հիմք ընդունելով ԽՍՀՄ Սահմանադրությունը:

Ի պատասխան այդ քաղաքական դիմումի՝ Ադրբեջանի իշխանությունները բռնություններ սկսեցին մարզի սահմաններից դուրս բնակվող հայ բնակչության նկատմամբ: Մարզային խորհրդի որոշումից ընդամենը յոթ օր անց Սումգայիթում սկսվեց հայերի կոտորածը: Ավելի ուշ հայ բնակչության զանգվածային ջարդեր կազմակերպվեցին Կիրովաբադում, Շամխորում, Բաքվում: Այդ իրադարձությունները տեղի էին ունենում ԽՍՀՄ կենտրոնական իշխանության լուռ համաձայնությամբ:

Ադրբեջանական իշխանությունների պաշտոնական պատասխանը ձևակերպվեց Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հունիսի 13-ի որոշումով, որով մերժվում էր ԼՂԻՄ մարզային խորհրդի դիմումը: Մինչ այդ նույն քվականի մարտի 23-ին մերժողական որոշում էր ընդունել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը:

Ադրբեջանական կողմի պաշտոնական մերժումից երկու օր անց՝ հունիսի 15-ին, Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում է համաձայնություն տալ ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի հետ միավորվելուն:

Այդ որոշումներին հաջորդեցին իրադարձություններ, որոնք հակամարտության զարգացման նոր փուլ նշանավորեցին: 1988 թ. սեպտեմբերի 21-ին միութենական իշխանությունը ԼՂԻՄ-ում հայտարարեց արտակարգ իրավիճակ և գործ մտցրեց Ստեփանակերտ: Դեկտեմբերի 1-ին Հայաստանում ձերբակալվեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները: Հաջորդ տարվա հունվարին ստեղծվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Հատուկ կոմիտե՝ ԼՂԻՄ տարածքում պետական վերահսկողության լայն իրավունքներով: Բաքվում նոր թափ առան հանրահավաքներն ու ցույցերը, սկսվեց Հայաստան և Արցախ եկող երկաթուղու և գազամուղի շրջափակումը: Ակնհայտ էր դառնում ինքնավար մարզի հայ բնակչությանը սպառնացող վտանգի ահագնացումը:

1989 թ. նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի՝ Լեռնային Ղարաբաղում իրադրության նորմալացմանն ուղղված որոշմամբ ԼՂԻՄ Հատուկ կոմիտեի գործունեությունը դադարեցվեց: Մարզը ղեկավարելու համար ստեղծվեց հանրապետական կազմկոմիտե: Նախատեսված էր նաև վերականգնել ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների խորհրդի և նրա գործադիր կոմիտեի գործունեությունը: Սա-

կայն վերջին պահանջն այդպես էլ չկատարվեց Ադրբեջանի իշխանությունների կողմից: Կազմկոմիտեի հիմնական նպատակը մարզի ժողովրդագրական իրավիճակը հոգուտ ադրբեջանցիների փոխելն էր:

Ելնելով դեպքերի նման ընթացքից՝ **1989 թ. դեկտեմբերի 1-ին** Հայաստանի Գերագույն խորհրդի և մինչ այդ ստեղծված Արցախի Ազգային խորհրդի համատեղ նիստը որոշում ընդունեց **Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին**: 1990 թ. հունվարի 10-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը չեղյալ հայտարարեց Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին որոշումը: Իսկ Լեռնային Ղարաբաղում իրավիճակը գնալով սրվում էր: Ադրբեջանի իշխանությունները Լեռնային Ղարաբաղի դեմ լայնածավալ ռազմական գործողություններ սկսեցին: Արցախի հայությունը զենքին զենքով պատասխանեց: Ղարաբաղի պայքարը կազմակերպված ինքնապաշտպանության բնույթ ստացավ:

## **2. ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՓԼՈՒՋՈՒՄԸ ԵՎ ԳԱՐԱԲԱՂԻ ԱՆԿԱՏՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ**

Այդպիսին էր իրավիճակը, երբ սկսվեց Խորհրդային Միության փլուզումը: 1991 թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանը հռչակեց իր անկախության վերականգնումը և դուրս եկավ ԽՍՀՄ կազմից: **1991 թ. սեպտեմբերի 2-ին** Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը, հենվելով ԽՍՀՄ օրենսդրության վրա, հռչակեց **Լեռնային Ղարաբաղի Հանրապետության** ծնունդը:

1990 թ. ապրիլի 3-ին ընդունվել էր «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի որոշման կարգի մասին» օրենքը: Այդ օրենքով կարգավորվում էր ԽՍՀՄ Սահմանադրության 70-րդ հոդվածով նախատեսված միութենական հանրապետության՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու իրավունքի իրագործումը: Օրենքը նախատեսում էր դուրս գալու հարցը լուծել հանրաքվեի միջոցով, ավելին՝ ինքնավար հանրապետություններում, ինքնավար մարզերում և ինքնավար օկրուգներում հանրաքվե պետք է անցկացվեր միութենական հանրապետությունից անկախ: Ադրբեջանը հռչակեց իր անկախությունն առանց հանրաքվեի: Նորաստեղծ **ԼՂՀ-ն իր պետական անկախությունը և ԽՍՀՄ կազմից դուրս գալը հռչակեց 1991 թ. դեկտեմբերի 10-ին անցկացված հանրաքվեի** հիման վրա:

Անկախացած Լեռնային Ղարաբաղի զինված ջոկատները, միավորվելով Արցախի պաշտպանական բանակի մեջ, կարողացան հակահարված տալ ադրբեջանական բանակին, դուրս մղել նրան նախկին ԼՂԻՄ-ի սահմաններից, ազատագրել պատմականորեն Ղարաբաղին պատկանող զգալի տարածքներ և ամրանալ իրենց համար առավել անվտանգ բնագծերում: Հատկապես կարևոր նշանակություն ունեցավ **1992 թ. մայիսի 9-ին** հայոց հինավուրց քաղաք **Շուշիի ազատագրումը**: Դրան հաջորդած ռազմական հաղթանակների շնորհիվ Լաչինի հատվածում բացվեց Ղարաբաղը մայր Հայաստանին կապող միջանցք, հայկական բանակը զբաղեցրեց

նան մարզից դեպի արևմուտք (մինչև Հայաստանի սահմանը) և հարավ (մինչև Իրանի սահմանը) ընկած տարածքները: Դրա շնորհիվ զգալիորեն կրճատվեց ռազմաճակատի գիծը, մեծացավ ինքնորոշված Արցախի տարածքը պաշտպանելու հնարավորությունը, նրա շուրջը ձևավորվեց ներկայիս անվտանգության գոտին:

### 3. ՂԱՐԱՔԱԳՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Մինչև Խորհրդային Միության փլուզումը (պաշտոնապես հռչակվեց 1991 թ. դեկտեմբերի 25-ին, երբ հրաժարական տվեց ԽՍՀՄ առաջին և վերջին նախագահ Մ. Գորբաչովը) Ղարաքաղի հարցը միևնույն պետության ներքին խնդիրն էր. ինքնավար մարզի կարգավիճակ ունեցող սուբյեկտը (ԼՂԽՄ) ձգտում էր սահմանադրական ճանապարհով, մնալով նույն պետության (ԽՍՀՄ) կազմում, դուրս գալ մեկ միութենական հանրապետության (Ադրբեջանական ԽՍՀ) կազմից և միավորվել մի այլ միութենական հանրապետության (Հայկական ԽՍՀ) հետ: Սակայն ԽՍՀՄ փլուզումով և Ադրբեջանի ու Հայաստանի անկախացումով հակամարտությունն ազգային-ազատագրական շարժման հատկանիշների հետ միասին միջազգային հանրության ընկալումով ձեռք բերեց նոր՝ միջպետական հակամարտության հատկանիշ: Ընդ որում՝ անտեսվեց այն հատկանիշը, որ Լեռնային Ղարաքաղը երբեք անկախ Ադրբեջանի կազմում չի եղել, և նրա անկախության հռչակումն իրավական առումով լիովին հիմնավորված էր: Հիմնախնդիրը միջազգայնացվեց, և նրա կարգավորման հարցով սկսեց զբաղվել այդ նպատակով միջազգային հատուկ մարմին՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Մինսկի խումբը:

ԵԱՀԿ-ի միջնորդությամբ և Ռուսաստանի հատուկ ջանքերի շնորհիվ հակամարտության կողմերը **1994 թ. մայիսի 12-ից** դադարեցրին ռազմական գործողությունները և **գինադադար** հաստատեցին: Ձինադադարը ստորագրեցին Ադրբեջանական Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաքաղի Հանրապետությունը:

Հրադադարից հետո անցած շուրջ երկու տասնամյակում ԵԱՀԿ աջակցությամբ շարունակվում են հակամարտության կարգավորման շուրջ տարվող երկկողմ ու բազմակողմ բանակցությունները: Սակայն դրանք առաջիմ որևէ շոշափելի արդյունք չեն տվել: Հակամարտության կողմերից յուրաքանչյուրը շարունակում է մնալ իր դիրքորոշման վրա:



ԼՂՀ Ազգային ժողովի շենքը

#### 4. ՀԻՄՆԱԽՆԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ



*Պասփիկն ու փափիկը.*

*Արցախի խորհրդանշաններից մեկը*

Ղարաբաղյան հակամարտությունն իր սկզբնական փուլում, ինչպես հայտնի է, զարգանում էր որպես ներպետական հակամարտություն Ադրբեջանական ԽՍՀ-ի և նրա մասը կազմող ԼՂԻՄ-ի միջև: Այն վերածվեց միջպետական հակամարտության խորհրդային միութենական պետության լուծարումից հետո. հակամարտող կողմերը՝ Ադրբեջանական Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի շահերը ներկայացնող Հայաստանի Հանրապետությունը, սկսեցին հանդես գալ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ: Դա նշանակում է, որ արմատապես փոխվեցին հակամարտության կարգավորման իրավական հիմքերը: Դրանք մտան միջազգային իրավունքի ոլորտ:

Միջազգային իրավունքն առայժմ չի մշակել այն սկզբունքներն ու կառուցակարգերը, որոնք կարող են միանշանակ և հստակ պատասխանել էթնոտարածքային հակամարտություններին վերաբերող հարցերին:

Արցախյան հիմնախնդրի շուրջ միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ շուրջ երկու տասնամյակ տևող բանակցություններն առայժմ փոխհամաձայնության չեն հանգեցրել: Միակ սկզբունքային փոխհամաձայնությունն այն է, որ **զինադադարը չպետք է խախտվի**, և հակամարտության քաղաքական կարգավորման ուղիների որոնումն ու դրա շուրջը տարվող **խաղաղ բանակցությունները պետք է շարունակվեն**:

##### **Հարցեր և առաջադրանքներ**

1. **Ներկայացրե՛ք ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության ակտիվ փուլը: Ո՞ր իրադարձությամբ սկսվեց այն: Ի՞նչ եղանակով էր փորձում հարցը լուծել Լեռնային Ղարաբաղը, և ինչպե՞ս՝ Ադրբեջանի իշխանությունները: Ինչպիսի՞ն էր ԽՍՀՄ կենտրոնական իշխանության դիրքորոշումը:**
2. **Կազմե՛ք արցախյան հակամարտության ակտիվ փուլի իրադարձությունների ժամանակագրական աղյուսակը:**
3. **Ո՞ր հարցի շուրջ են առայժմ համաչայնության եկել հակամարտության կողմերը:**

**Բանավեճ-քննարկում:** Դասանյութի և լրացուցիչ այլ աղբյուրների հիման վրա կազմակերպե՛ք բանավեճ-քննարկում: Ենթադրյալ Բարձր ատյանը «զտում է» ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կողմերի պաշտպանած սկզբունքներն ու հիմնավորումները: Բանավիճող «փորձագետները» ներկայացնում են կողմերի տեսակետները: Բարձր ատյանը ներկայացնող խումբը գնահատում է փորձագիտական խմբերի՝ հիմնախնդիրը ներկայացնելու կարողությունն ու բանավեճին օգտակար և բարեկիրք մասնակցությունը:

### Աղբբեջանի դիրքորոշումը ներկայացնող դրույթներ

1. Հակամարտության հիմքում ոչ թե Ղարաբաղի ինքնորոշման, այլ տարածքային հարցն է, որ ծագել է Հայաստանի և Աղբբեջանի միջև: Հայաստանն իրականացրել է ագրեսիա Աղբբեջանի նկատմամբ, հետևապես հարցը պետք է լուծվի գրավյալ շրջանները Աղբբեջանին վերադարձնելու միջոցով:

2. Հարցը խաղաղ ճանապարհով կարող է լուծվել ՄԱԿ-ի կողմից ընդունված պետությունների տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության սկզբունքի հիման վրա միայն:

3. Եթե Աղբբեջանի պահանջները չբավարարվեն, ռազմական գործողությունները կվերսկսեն:

4. Ժամանակն աշխատում է Աղբբեջանի օգտին: Ուժեղացնելով քարոզչական գործունեությունը՝ աղբբեջանական կողմը կկարողանա հակառակորդին ներկայացնել որպես «ագրեսոր», դա կարտացոլվի միջազգային կազմակերպությունների ընդունած տարբեր փաստաթղթերում, ինչը հայկական կողմին կստիպի զիջումների գնալ:

### Հայկական կողմի դիրքորոշումը պարզաբանող դրույթներ

1. Լեռնային Ղարաբաղն ինքնորոշման գործընթացը սկսեց այն ժամանակ գործող ԽՍՀՄ Սահմանադրությանը համապատասխան: Նա չի խախտել նաև միջազգային իրավունքի որևէ սկզբունք: Բացի այդ, երբ սկսվեց հակամարտության ակտիվ փուլը, ԼՂԻՄ-ի սահմաններից դուրս հայկական վերահսկողության տակ գտնվող տարածքներ չկային: Դրանք հայկական վերահսկողության տակ հայտնվեցին այն բանից հետո, երբ համաձայնություն ձեռք չբերվեց ԼՂԻՄ-ի՝ որպես ԽՍՀՄ քաղաքական տարածքային սուբյեկտի կարգավիճակի շուրջ: Աղբբեջանն ընդունեց օրենք ԼՂԻՄ-ի լուծարման մասին և պատերազմական գործողություններ սկսեց մարզը և հարակից շրջանները հայաթափելու նպատակով: Այդ իսկ պատճառով հակամարտության լուծումը Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի սահմանման մեջ է, իսկ ԼՂՀ սահմաններից դուրս վերոհիշյալ տարածքների վերահսկողությունն ապահովում է Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգությունը:

2. Տարածքային ամբողջականության սկզբունքը որևէ գերակայություն չունի ՄԱԿ-ի ընդունած մեկ ուրիշ կարևոր՝ ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքի նկատմամբ: Տվյալ դեպքում սկզբունքային նշանակություն ունեցող ևս մի կարևոր հանգամանք կա: Աղբբեջանը 1991 թ. ընդունած պետական անկախության մասին հռչակագրում ամրագրել է, որ ինքը 1918-1920 թթ. գոյություն ունեցած Աղբբեջանի Գեմոկրատական Հանրապետության, ոչ թե Աղբբեջանական ԽՍՀ-ի իրավահաջորդն է: Լեռնային Ղարաբաղը ոչ 1918-1920 թթ. ԱԳՀ, ոչ էլ 1991 թ. անկախություն հռչակած Աղբբեջանական Հանրապետության կազմում չի եղել: Հետևաբար, տարածքային ամբողջականության սկզբունքի խախտում տեղի չի ունեցել, և Աղբբեջանի նկատմամբ միջազգային իրավունքի այդ սկզբունքը տվյալ դեպքում կիրառելի չէ:

3. Հակամարտության վերջնական կարգավորումը հնարավոր է միայն խաղաղ ճանապարհով՝ փոխզիջումների հիման վրա:

4. Աղբբեջանա-ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորումը և տարածաշրջանում տնական խաղաղությունը պետք է հենվեն հետևյալ սկզբունքների վրա.

- Աղբբեջանին Լեռնային Ղարաբաղի ենթակայության անհնարինություն
- Լեռնային Ղարաբաղի անկլավային գոյության անհնարինություն (ՀՀ հետ ընդհանուր ցամաքային սահմանի առկայություն)
- պատերազմի չվերսկսման և հարևանների հետ ազատ ու իրավահավասար գոյակցության միջազգային հատուկ երաշխիքների ապահովում:

5. Հակամարտության ցանկացած լուծում կարող է վերջնական համարվել, եթե ստանա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հավանությունը:

## ԳԱՄ 67-68. ՔԱՂԱՔԱԿԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

**ՔՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ**

**ԳԼՈՒԽ 1. ԻՐԱՎՈՒՆՔ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԱԳՔՅՈՒՐՆԵՐԸ, ՀԱՄԱԿԱՐԳԸ**

ԳԱՍ 1. ԻՐԱՎՈՒՆՔ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ..... 3

ԳԱՍ 2. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐ..... 7

ԳԱՍ 3. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ՏԱՐԵՐԸ..... 11

ԳԱՍ 4. ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ..... 15

ԳԱՍ 5. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱԳՔՅՈՒՐՆԵՐԸ ..... 19

ԳԱՍ 6. ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏ ..... 23

ԳԱՍ 7. ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՏԸ ..... 27

ԳԱՍ 8. ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ..... 31

ԳԱՍ 9. ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶՔՈՒՆՔՆԵՐԸ ..... 35

**ԳԼՈՒԽ 2. ԳԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԳԱՐԱԳԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

ԳԱՍ 10. ԳԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ..... 39

ԳԱՍ 11. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԳԱՏԱՐԱՆՆԵՐ..... 44

ԳԱՍ 12. ՎԵՐԱՔՆՆԻՉ ԵՎ ՎՃՈՒՔԵՎ ԳԱՏԱՐԱՆՆԵՐԸ ..... 48

ԳԱՍ 13. ԱՐԳԱՐԱԳԱՏՈՒԹՅՈՒՆ..... 52

ԳԱՍ 14. ՓԱՏԱՔԱՆ ԵՎ ՓԱՏԱՔԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ..... 56

ԳԱՍ 15. ԳԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ..... 60

ԳԱՍ 16. ԳՈՐԾՆԱԿՆ ԱՇԽԱՏԱՆՔ..... 64

**ԳԱՍ 17. ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ**

ԳԱՍ 18. ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ (ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ)..... 68

ԳԱՍ 19. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ..... 73

ԳԱՍ 20. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 77

**ԳԼՈՒԽ 3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

ԳԱՍ 21. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ..... 81

ԳԱՍ 22. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ..... 86

ԳԱՍ 23. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 91

ԳԱՍ 24. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ..... 96

ԳԱՍ 25. ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԾԱԳԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 101

ԳԱՍ 26. ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ..... 106

**ԳԼՈՒԽ 4. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

ԳԱՍ 27. ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ ..... 111

ԳԱՍ 28. ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 116

**ԳԼՈՒԽ 5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

ԳԱՍ 29. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.  
     ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ, ԿՈՂՄԵՐԸ ..... 121

ԳԱՍ 30. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ..... 125

ԳԱՍ 31. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
     ՀԻՄՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑՆԵՐԸ..... 129

**ԳԼՈՒԽ 6. ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

ԳԱՍ 32. ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
     ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ..... 133

ԳԱՍ 33. ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆ ..... 137

ԳԱՍ 34. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

**Ք Ա Ղ Ա Ք Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**Գ.Լ.ՈՒԽ 7. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

ԴԱՍ 35. ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ..... 141

ԴԱՍ 36. ՄԱՍՆԱԳԵՏԻ ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՎ «ՈՒՆԵՑԻՐ ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄ» ԽԱՂ ..... 146

ԴԱՍ 37. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ..... 146

ԴԱՍ 38. ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ..... 149

ԴԱՍ 39. ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ..... 153

ԴԱՍ 40. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՁԵՎԵՐԸ ..... 157

ԴԱՍ 41. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ..... 161

ԴԱՍ 42. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԸ ..... 165

ԴԱՍ 43. ՊԵՏԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉԱՉԵՎԸ ..... 169

ԴԱՍ 44. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ..... 173

ԴԱՍ 45. ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ..... 177

ԴԱՍ 46. ԻՐԱՎԱԿԱՆ ՕՐԵՆՔ ..... 181

**Գ.Լ.ՈՒԽ 8. ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ**

ԴԱՍ 47. ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ..... 185

ԴԱՍ 48. ԶԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ..... 189

ԴԱՍ 49. ԱՐԴԻ ԳԱՂԱՓԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ.  
ԱԶԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 193

ԴԱՍ 50. ԱՐԴԻ ԳԱՂԱՓԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ.  
ՍՈՑԻԱԼ-ԺՌՈՎՐԴԻԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 197

**ԴԱՍ 51. ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ**

**Գ.Լ.ՈՒԽ 9. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

ԴԱՍ 52. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ..... 201

ԴԱՍ 53. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ..... 205

ԴԱՍ 54. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂՔՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՍԿԶՔՈՒՆՔՆԵՐԸ ..... 209

ԴԱՍ 55. ԱՐՏԱՔԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ..... 213

ԴԱՍ 56. ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐ ..... 217

ԴԱՍ 57. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ..... 221

ԴԱՍ 58. ԱՇԽԱՐԱՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ..... 225

ԴԱՍ 59. ԱՇԽԱՐԱՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ..... 229

**Գ.Լ.ՈՒԽ 10. ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

ԴԱՍ 60-61. ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ ..... 233

ԴԱՍ 62. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ..... 240

ԴԱՍ 63-64. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ:  
ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 245

ԴԱՍ 65. ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՆՆԵՐԸ ..... 253

ԴԱՍ 66. ՂԱՐԱՔԱՂՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԼՂՀ-Ի ՀՈՉԱԿՈՒՄԸ ..... 257

**ԴԱՍ 67-68 ԶԱՂԱՔԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՊԱՀՈՒՍԱՅԻՆ ԺԱՄ**

**ԳԱԳԻԿ ԴԱԶԻՆՅԱՆ, ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ,  
ԱՌԱՔԵԼ ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ**

# **ՀԱՄԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**11-րդ դասարան**

**ԳԱՍԱԳԻՐՔ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԳՊՐՈՑԻ  
ԲՈՒՈՐ ՀՈՍՔԵՐԻ ՀԱՄԱՐ**

**Մասնագիտական խմբագիր՝  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ. Ղազինյան**

Խմբագիր՝	Ա. Ոսկանյան
Սրբագրիչ՝	Ա. Պապյան
Շարվածքը՝	Ռ. Վաղարշյանի
Չնավորումը՝	Ն. Հայրապետյանի
Շապիկը՝	Ս. Գավիդյանի

Պատվեր՝ 1399: Տպաքանակ՝ 21560:

Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/16: 16.5 տպ. մամուլ:

Տառատեսակը՝ Dallak TimeNew:

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ տպարանում

